

9(47925
9-71

~~305~~

~~10502~~

1493

2011-08

9(47-925)

7-71 աշ. ԴՈՒՆԻ ԵՒ Ա. ԽԱՉ

19 AUG 2006

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հին ՀԱՅԵՐԻ



Պ Ր Ա Կ Ե Ր Բ Ռ Ո Ր Դ

Ա. Հայոց թագաւորութիւնը Արտաշիսեան հարս-
տութեան ժամանակ. Բ. Օտար տիրապետութիւնները.
Գ. Հին հայերի կրօնը. Դ. Հին հայերի քաղաքակրթու-
թիւնը. Ե. Քննադատութիւն հայ պատմագիրների:

5
1890
00
1

Ֆրանս. բնագր. Թարգմ.

Ու. ՔԱԶԲԵՐՈՒԽԵ




Թ Ի Ց Լ Ի Զ

ԵԼԵՅՏՐԱԿԱՐԴ ՏՏ. ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈՒԽԵ.

1910

ପାତ୍ରଚିନ୍ତିବସ୍ତୁ

THE USE OF



ԳԼՈՒԽ Ա

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՀՈՐՈՒԹԻՒՆՆ ԱՐՏԱՇԻՍԵՆ

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

I

Արբելայի ճակատամարտն Աքեմենիտների
համար անկում բերեց, որով Հայաստանը դարձաւ Աղէքսանդրի կայսրութեան մի նահանգ։ Այս նահանգը մտածեց անկախութիւն ձեռք բերել ամենից առաջ իւր սատրապների իշխանութեանն ոյժ տալով։ Աղէքսանդրը բացի այն նահանգներից, որոնց բաժանել էր իւր զօրափառների մէջ, մի քանի երկիրներ ևս յանձնեց սըրանց իշխանութեանը՝ սատրապութիւն անունով։ Նա անհրաժեշտ համարեց պարսկական այդ սիստեմը պահպանել՝ մտածելով, որ դա միակ միջոցն է իսկական վասսալութիւն ստեղծելու և միաժամանակ ազգային դիւրագրգիռ հակումները սիրաշահելու։ Սակայն՝ Աղէքսանդրն էլ իւր նախորդների պէս դրանով առիթ էր տալիս անջատական ձգտումներ առաջանալու, հէնց որ կեզրոնական իշխանութիւնը բաւականաչափ ոյժ չէր ունենայ։

Աղէքսանդրն իւր կենդանութեան ժամանակ
Հայաստանի վրայ սատրապ նշանակեց Միհրանին
(գուցէ 330-323): Այս դէպքից կարելի է են-
թադրել, որ Փոքր-Հայքն առանձին վերցրած ա-
ւելի կարևոր էր, քան թէ Մարդայի սատրապու-
թիւնը, որը սակայն՝ իշխում էր եգէեան ծովի
մօտ գտնւած ճանապարհի վրայ, որովհետև Ա-
ղէքսանդրն առաջ այս սատրապութիւնն էր տւել
Միհրանին՝ (334-ին) ի վարձատրութիւն նրա մա-
տուցած ծառայութեան—Միհրանն էր զրաւել
այն կարևոր բերդը, որի բարձունքից Մարդան դի-
մադրում էր պաշարողներին: Հաւանական է, որ
Աղէքսանդրի մահից յետոյ Հայաստանի սատրա-
պութիւնը կախում ունեցաւ այն թափաւորու-
թիւնից, որն Աղէքսանդրը յանձնել էր իւր տե-
ղակալ Սելևկոսին: Ամենից առաջ Սելևկոսը հան-
դէս է գալիս իրբեկ Բաբելոնի գերիշխան. սակայն՝
նա պէտք է իրաւունքներ ունենար նաև ուրիշ
նահանգների վրայ, որովհետև, առանց լուրջ մը-
ցակիցների պատահելու, նա կարողանում է շու-
տով իւր իշխանութիւնը տարածել Պարսկաստա-
նի, Փոքր-Ասիայի, Միջագետքի, Ասորիքի և վեր-
ջապէս Հայաստանի վրայ, որը շուտով այս թա-
գաւորութեան մէջ կազմում է մի առանձին սատ-
րապութիւն: Հայաստանի գրաւման պատճառը
հայերի անխոհեմ, անհնագանդ վարմունքն էր,

ինչպէս կտեսնենք յետագայ դէպքերի նկարա-
գրութիւնից: Հայերն սկզբներում ոչ մի նպաստաւոր պայ-
ման չունէին այս լուծը թօթափելու: Սելևկոսը
Հայաստանի վրայ սատրապ էր նշանակել յոյն
Նէօպլոտոլեմին (323), որը հաւանօքէն կառավա-
րում էր ամբողջ Հայաստանը: նա իւր շահերի
տեսակէտից յարմար չհամարեց վերահաստատել
Պարսից քաղաքականութեան շնորհիւ Հայաստա-
նում առաջացած ժառանգական սատրապների
հարսաւոթիւնը, որը, պարսիկ մեծ սենեօքների
ընտանիքի նման, բարձր գիրք էր գրաւել և հեշ-
տութեամբ ձուլել հայերի հետ, որպէսզի կա-
րողանայ ամբողջապէս ներկայացնել նրանց ազ-
գային բոլոր ձգտումները: Սակայն՝ Աղէքսանդրի
նման Սելևկոսն էլ ստիպւած էր վասար դժւարա-
մատչելի նահանգները, ինչպէս Հայաստանը,
պահպանել իսկական ինքնավար կառավարու-
թեամբ, փոխարքայական բեժիմով: Այս նահանգ-
ները բոլոր ովին ազատ էին իրենց վարմունքի
մէջ և պարտաւոր էին միմիշյն հնազանդւել գե-
րիշխանին, տարեկան տուքք վճարել նրան և զին-
ւորական ծառայութիւն մատուցանել: Հայերը
ընականաբար դժողութեամբ պէտք է կատարէին
այս պարտականութիւնները և անհամբերու-
թեամբ պէտք է ձգտէին ազատւել դրանցից: Ամե-
նից առաջ հայերը պէտք է աշխատէին իրենց ազ-

գային հայ սատրապներին նորից իշխանութեան
մէջ հաստատել. և այս բանը նրանց յաջողւում է։
317-ին Սելեկոսը, կամայ թէ ակամայ, հին հայ
իշխաններից մէկին՝ Հրահատին՝ նշանակում է
սատրապ։ Կարելի է ենթադրել, որ այս ազգա-
յին շէֆը մեծ ազատութիւն էր վայելում իւր վար-
մունքի մէջ, որովհետեւ նա մեռնում է Պոնտոսի
դէմ Հայաստանի ձեռնարկած պատերազմում։
Սրանից յետոյ Հայաստանն այնքան յանդուզն է
գառնում, որ այս միենոյն տոհմից սատրապ դար-
ձած եղւարդի օրով, 301 թւին, ապստամբու-
թեան դրօշակ է բարձրացնում։ Բայց արդէն շատ
ուշ էր, Սելեկոսը 311-ից սկսած վերջապէս կա-
րողացել էր իւր գերիշխանութիւնն աւելի ամ-
րապնդել, ուստի կարողանում է ազատազրու-
թեան այս առաջին փորձը ճնշել, իմեդել։

Կամաց - կամաց Հայաստանի սատրապու-
թիւնն սկսում է ժառանգական դառնալ. Երբորդ
դարում արդէն նորից կատարելապէս ժառանգա-
կան էր, Պէտք է կարծել, որ Սելեկոսի յաջորդնե-
րին յաջողւում է Հայաստանը լուռ և անշարժ
պահել իրենց իշխանութեան տակ, որովհետեւ այս
ազգասէր եղւարդի փորձն երկար ժամանակ այլ
կս ուժեղ չափով չի կրկնում, որպէսզի կարո-
ղանար պատմութեան մէջ յիշատակւել։ Սելե-
կեան թւականութեան սկսւելու ժամանակ՝ Հա-
յաստանն ստիպւած էր հպատակութեան նշան-

ներ ուղարկել Սելեկիա. այս քաղաքը շինել էր
տւել Սելեկոս իշխանն իւր անունով և գտնւում
էր Կաէզիֆօնի մօտ, Տիգրիսի ներքին հոսանքի
վրայ (Բաղդադի հիւսիսային կողմում)։ Սելեկոսն
և իւր յաջորդներն այստեղ գահակալեցին մինչև
որ պարթև Պրատէս Բ-ը 129 թւին գրաւեց
Միջագետքը. սրանից յետոյ Սելեկեանների ժա-
ռանգորդ Դեմիտրիոսն աթոռը փոխադրեց Ան-
տիոք, որից կախում ունեցաւ Հայաստանը Գ-րդ
դարուց սկսած մինչև Բ-րդ դարու սկիզբը։

Այս ժամանակամիջոցը հայոց պատմութեան
ամենամուժ շրջանն է. աւելի քան երկու հարիւր
տարւայ ընթացքում հազիւ կարելի է մի քանի
գէպքեր յիշատակել. միւս կողմից՝ սատրապների
ու իրենց երկրում թագաւորութիւն ձեռք բերած
թագաւորների ցանկը մեծ կամկածանքով կարե-
լի է կազմել, այն էլ առանց ժամանակագրական
մօտաւոր յաջորդականութիւնը պահպանելու։

Նախ մի շարք անուններ են գալիս, որոնք
իսկապէս Հայաստանին են վերաբերում, սակայն
շատ հեռաց, երկրորդական կերպով. յամենայն
դէպս հաստատ է, որ այդ անունները Մեծ-
Հայրի շէֆերի անունները չեն. ոչ մի փաստ չկայ
ենթադրելու, որ Եղւարդից յետոյ անմիջապէս
Սամէս կոչւածն է կառավարել, որը ցանկի առա-
ջին տեղն է բռնում և որի դէմքը շատ անորոշ է
այս անունների շարքում։ Ոմանք կարծում են,

որ սա Ասորիքում Կօմաֆենի կառավարիչն է եղել*), ուրիշները սրան համարում են հարաւային Հայաստանի իշխանը, եթէ միայն յաջորդ սատրապի՝ Արշամի (240) հայրն է սա **). Վերջինիս յաջորդը լինում է իւր որդի Արդիսարեսը. սակայն՝ Հայաստանում է եղել ուս: Շատ հեղինակներ ստիպւած են չընդունել այդ անունը, որովհետև աբդ արմատը սեմիտական է: Յայտնի է, որ սա իւր աթոռանիստը դարձրեց Արշամօշատա քաղաքը, որի անունը կազմւած է Արշամ բառից և շատ (շատ նշանակում է հանգստութեան տեղ) պարսկական ածանցից: Այժմ մընում է իմանալ թէ որտեղ էր գտնւում այս քաղաքը. Ըստունած է, որ դա Ծոփաց երկրի մայրաքաղաքն էր. ուրեմն չպէտք է շփոթել սրան Կօմաֆենի Սամօսատի հետ, որովհետև ոչ մի փաստ մեզ չի թոյլատրում կրճատելով ար առաջին վանկը և ասել, թէ այդ քաղաքն ևս կոչւել է Սամօսատ ու շփոթել իսկական Սամօսատի հետ. «աը»-ը նախածանց չէ, այլ՝ արշամ անւան մասն է կազմում: Կիպերտի Հոռմէտական կայսրութեան պատմական քարտիզում երկու քաղաքներն էլ որոշ, առանձին-առանձին նշանակւած են. այսպէս՝ Արսամօսատը, որ շինել է Ար-

շամը, հայկական է, իսկ Սամօսատը՝ Սամէսի շինածը, —սիրիական:

Այդ երկու քաղաքների յաղաթերութիւնները բաւականին սերտ պէտք է լինէին, որովհետեւ ոչ մի բնական արգելք չունին: Մի դօկումէնտ կայ, որից երևում է, որ Կօմաֆենի ինքնավար հարստութիւնը ինսամիական կապերով միացել, գաշնակցել էր Ծոփաց իշխանութեան հետ. այսպիսով սեմիտների և հայերի մէջ առաջ էր եկել ազգագրական և քաղաքական միաւորութիւն: Դէռ Աելեկեանների թագաւորութիւններն սկսեցին ճիւղաւորւել. այդ ճիւղերը կառավարուում էին իշրմնց նահանգի իշխաններով, որոնք միատեսակ աւատներ էին. սրանք խմբելով իրենց սատրապների շուրջը կազմում էին քիչ թէ շատ անկախութիւն վայելաղ թագաւորութիւններ: Այսպէս էր, որ հայկական Ծոփք գաւառի հարաւային կողմում, սիրիական Կօմաֆենի վրայ իբրև «Թագաւոր» իշխուում էր Միհրդատ կալինիկոսը Ք. ա. 69 թւին: Երբ կուկուլոս զօրպամարը հայոց Տիգրան թագաւորին յաղթեց և, ինչպէս յետոյ կտեսնենք, գրաւեց Տիգրանակերտ քաղաքը, այս իշխանի տիտղոսն ու ստացւածքները վերահաստատեց: Միհրդատը պարթևական ծագումից էր, ինչպէս այդ ցոյց է տալիս իւր անունը, նրա ընտանիքը խոր արմատներ էր ձգել Հայաստանի ներսերում:

*) Podyen IV. 17.

**) Լանկոււա, Numismatique de l' Arménie,

Եւ իրօք այդ ընտանիքը մեզ ծանօթ է այն կարևոր գերեզմանային դոկումէնտներից, որոնք գանւել են Վանայ լճի արևմտեան ափում կանգնած Նիմրուտ—Դաղլեռան մէջ. այստեղ երեան է եկել գետնի մէջ փորւած մի գերեզմաննոց, որը բաղկացած է անձանազրութիւններ կրող սենեակներից. այս գերեզմաննոցն ուղեցոյց է հանդիսացել միենոյն շրջանում ուրիշ նշխարժներ (relicues) ևս գտնելու: որոնցից դուրս են բերել Միհրդատ կալինիկոսի և իւր կնոջ ծննդաբանութիւնը: Միհրդատի իսկական նախնիքները երեմն այնպիսի անուններ են կրել, որոնց մենք տեսնում ենք հայկական հարստութեան մէջ. գալով թագուհու նախնիքներին՝ կարելի է նրանց նոյնացնել հէնց այս միենոյն հարստութեան հետ: Թագաւորի կողմից է Դարէհը, Քսերքսէսը, Արտասուրասի որդին՝ Արօանդէսը, որը Արտաքսէսի աղջիկ Խոդօկունի ամուսինն էր և Միհրդատ Ա-ի հայրը: Թագուհու կողմից է Դիմիտրիոս Նիկատօրը, Սամէսի կին՝ Իզիաս թագուհին և թագաւորի մայր Լաոդիսէն. ուրեմն՝ սովորութեան համաձայն, թագուհին պէտք է ամուսնացած լինէր իւր եղբօր հետ և մեզ թողած մօր գիծը, ինչպէս որ թագաւորը հօր զիծն է թողել, կամենալով իրքե հարազատ ժառանգորդ ճանաչւել: Սամէսից սկսած մենք նորից հանդիպում ենք հայկական հարստութեան. այս Սամէսը կարող

է Միհրդատի որդին՝ լինել, Միհրդատը՝ Քսերքսէսի որդին՝ կամ փեսան, Քսերքսէսը՝ Արդիսարէսի որդին, Արդիսարէսի Սամէսի, Սամէսը՝ մի ուրիշ Սամէսի *):

Վերոյիշեալ հայկական հարստութեան մէջ մենք տեսանք Արդիսարէսին, իրքե այդ հարստութեան վերջին թագաւոր. ինչպէս որ պատմաբաններն են մեզ ներկայացնում այդ հարստութիւնը, նաիրօք շարունակում է Արդիսարէսի որդի Քսերքսէսի միջոցով (215) **): Ահա այս իշխանների ժամանակն էր, որ սատրապութիւնը ժամանգական էր գարձել: Դժբաղդաբար ամբողջ այս շրջանում միայն մի հատիկ տեղեկութիւն ունինք Մեծ-Հայքի մասին. իսկ Փոքր-Հայքի համար այդ էլ չկայ: Այս իշխանները, որոնց ցոյց տւինք, իշխում էին մի միացւած նահանգի՝ Ծոփաց երկրի վրայ, որը գտնուում էր երկու եփրատների խառնարանից ներքեւ և որտեղ բազմաթիւ հայեր կային: Իսկական Հայաստանի մասին այսպանը միայն գիտենք, որ Գ-րդ գարում կառավարուում էր Արտաւազդ անունով մէկից, որին յոյներն անւանում էին Արտաբրզանէս. որա իշխանութիւնը տարածւում էր նաև գէպի արեւելք՝ Ատրպատականի վրայ (Ուրմիոյ լճի հովիտը): 220 թիւն սա խաղաղութեան դաշն է կապում Անտիոքոս Գ-րդ Մեծի հետ: Ուրեմն

*) Ֆ. Խւասի. Grandriss

**) Պլիք. VIII, 25.

յօգուշտ՝ սրան Հայաստանից մի մատ վերցրել,
միացրել էին պարսկական մի նահանգի հետ մի
առանձին սատրապութիւն կազմելու համար. այս
սատրապութեան սահմանները տարածւում էին
գետի հիւսիս՝ մինչև Թաղ գետը (Կողքիսի Ռիօնը):
Հայոց դարում է պարսկականապէս բաժանւում է երեք
անջատ, որոշ մասերի: Մեծ-Հայքում Արտաւազ-
դին յաջորդում է իւր որդի Արաւաշէնը 190—159:
Օտար պատմիչները (սրան Արտաքսիաս անունով
են ճանաչում. սա դաշնակցում է Զարէհի (Զարի-
ադրէս) հետ և երկուսը միասին՝ օգտւելով Աս-
տիոքոս Գլուխի Մազնեղիայի մօտ հոռմայեցիներից
կուած պարտութիւնից (190), վերջնականապէս
ազատում են իրենց երկրները, մէկը Մեծ-Հայքը,
իսկ միւսը՝ Ծոփաց աշխարհը: Այս Զարէհը հանդէս
է գալիս իբրև հայ իշխան՝ յաջորդելով նրանց,
որոնց մենք ընդունեցինք իբրև հարաւային Հա-
յաստանի Փրակցիայի ժառանգորդներ: Սա իւր
հիւսիսային դրացու նման ազատութիւն ձեռք
բերելով, երբէք շմտածեց եղբայրաբար միանալ
իւր դրացու հետ և մի ուժեղ թագուսորութիւն
կազմել. և մենք հէնց սկզբից տեսնում ենք
տեղական իշխանների այն նախանձը, որը ամբողջ
հայոց պատմութեան ընթացքում գլխաւոր պատ-
ճառ է դառնում այդ պետութեան կործանման,
այդ ազգի թշւառութեան: Զարէհը բոլորովին

անկախ կերպովի իշխեց Ծոփաց երկրում՝ մայրաքա-
ղաք ունենալով կարկաթիօսերտան (Տիգրիսի ձիւ-
ղերից մէկի վրայ իշխող բարձրութեան վրայ), ինչ-
պէս Մարտաքոնն է ասում. XI, 14, 15), իսկ Արտաշէ-
սը Մեծ-Հայքի թագաւորութիւնը հիմնեց, իւր ա-
նունը տւեց թագաւորական բնակավայրին՝ Ար-
տաշատինսկի իւր յաջորդներն էլ կազմեցին մի
հարստութիւն, որը Արտաշէսիանունով՝ Արտա-
շիսեան կոչւեց: Այս կարենը թագաւորութեան
կեղրոնը Արաքսի հովիտն էր, Արարատի չորս
կողմը, նաև ընդգրկում էր Կովկասի միա մասը,
Վանայ լճի հովիտը, արևելեան Եփրատի բարձրա-
գոյն հոսանքը և այնա ամբողջ բարձրաւանդակը,
որի միջով հոսում է արևմտեան Եփրատը. այս
բարձրաւանդակի արևմտեան կողմից ոկում էր
Փոքր-Հայքը, որը նոյնպէս բաժանւած էր միւս
երկուսից: Այս յամառ անջատումը միմիայն երկպառա-
կութիւնների գուռ կարող էր անել. կամ
այսաւերեք Հայաստանները պէտք է կուէին
կամ որանցից մէկն ու մէկը և դրացիները. ա-
մենառաժեղ հակառակորդը կուլ էր աալիս ամե-
նաթոյլին, մինչեւ որ հանգամանքները կյեղաշր-
ջէին դերերը, ոտկայն երբէք ինքնաբուղիս, ընդ-
հանութեաւ վերջնական համաձայնութիւն առաջ
չեկաւ: Բայց պարում արդէն կոիւներն սկսում
են. Հայաստանի երկու փոքր Փրակցիաները

յաջողւում են կուել աւելի մեծի հետ, բայց Ա. դարում ժամանակաւորապէս այն ճակատագրական եզրակացութեան յանդան, որ հարաւային ֆրակցիան միաւորւի Մեծ-Հայքի հետ, իսկ արևմտեանը՝ Պոնտոսի թագաւորութեան հետ:

Այս վերջինը՝ Փոքր-Հայքը, նոյնպէս ուզում էր իւր ազատ վարմունքը, իւր ազատ ընթացքըն ունենալ. նա զգում էր, որ ինքը հեռացել էր իւր կրտսեր քրոջից, որը աւելի հաստատուն էր իւր ձգտումների, իւր ցանկութիւնների մէջ, որոնք տարբեր էին Փոքր-Հայքի ձգտումներից, ցանկութիւններից: Ճիշտ է, Փոքր-Հայքի շահերը երբեմն թելագրում էին դաշնակցել Մեծ-Հայքի հետ, այդ կինէր բնական և մշտական, շնորհիւ երկուսի արիւնակցութեանը, սակայն շատ յաճախ նա գերադասում էր Պոնտոսի բարեկամութիւնը, աւելի անմիջական կերպով զգալով արևմուտքի և հիւսիսի ազդեցութիւնները և միւս կողմից՝ կամենալով ճանապարհ բաց անել իւր համար գէպի ծովը: Արա առաջին սատրապը մեզ ծանօթ Միհրդատ անունն էր կրում. սա հաւանօրէն Անտիոքոսի քրոջ կամ եղբօր որդին էր, կամ գուցէ ազգականը. յամենայն գէպս հաստատ է, որ Պոնտոսի թագաւոր Փարնասի դաշնակցն էր. իբրև այդպիսին նա պարտաւոր էր մասնակցել Հոռմի գէմ Պոնտոսի մղած պատերազմներին

183 ին:

Մեծ-Հայքն արդէն գերիշխանութիւն էր ձեռք բերել այս երկու ճիւղերից և գտնուում էր մի այնպիսի դրութեան մէջ, որի պատճառով ստիպւած էր ընդհարւել Արևմուտքի հետ: Եւ իրօք, մի քիչ յետոյ նա ընկնում է ամբողջ Ասիայի և Հոռմէական կայսրութեան մէջ առաջացած անխորսափելի բաղխման մէջ, և այդ՝ իւր Արտաշէս թագաւորի ժամանակ: Արտաշէսը, ինչպէս տեսանք, Փարնասին ժամանակակից էր. նա կարողացել էր զօրեղ հիմունքների վրայ հաստատած մի թագաւորութիւն թողնել իւր որդի Արտաւազդ Բ-ին (159—149): Թւում է թէ այս Արտաւազդի թագաւորութեան ժամանակն է, որ պարթևներն սկսել են Հայաստանում ընդլայնել իրենց ազգեցութեան շրջանը: Այսաեղ նորից ծննդաբանութիւնը խառնւում է. որպէսզի մենք կարողանանք պ. Իւստիի նման ընդունել հայկական աւանդութեան տւածէծնդաբանութեան իսկութիւնը. պէտք ամենից առաջ քննենք այդ ծննդաբանութիւնը տւող շատ ուշ ժամանակւայ պատմիչների արժէքը: Մենք այդ պատմագիրներին կըննադատենք, երբ կհասնենք այն ժամանակաշրջանին, երբ դրանք գրի են առել իրենց պատմութիւնները, որից կտեսնենք, որ շատ կէտերի վերաբերմամբ դրանց արժէքը զերօ է և յատկապէս այս կէտի վերաբերմամբ: Այդ պատմագրներն ասում են, որ Արտաւազդ Բ-ից

յետոյ Վաղարշակ անունով մէկը հիմնեց հայ Արշակեանների նոր հարստութիւնը։ Միայն Մովսէս Խորենացին է, որ Արշակունիներին հասցնում է մինչև այդ ժամանակ։ Այս ձգտումը բացարձակապէս անհնար է պաշտպանել, որովհետեւ քրիստոնէութիւնից յետոյ այլ ևս տեղ չի մնում այդ կարծեցեալ թագաւորական ընտանիքի անդամների համար։ Եւ իրօք՝ Արտաւազդ Բ-ը մեռնում է Ք. ա. 149-ին։ Հնայած, որ սրա անմիջական յաջորդների անունները կորած են, սակայն յայտնի է, որ դրանցից մէկը՝ Արտաւազդնէեղել, որը իշխել է 123-ից մինչև 95 թիւը և պատերազմ է մղել Պռնտոսի Միհրդատ Բ, թագաւորի դէմ։ Այս 26 տարիներում անհնարին է տեղաւորել, ներս խծկել Արշակունիներին։ Դրանք չեն կարող նաև Արտաւազդի և Տիգրան Մեծի միջև լինել, որին մենք շուտով կտեսնենք դան բարձրանալիս։

Այս մինսոյն դարում Փոքր-Հայքի մասին այս քանը միայն յայտնի է, որ 121 թւին երբ Փարնասի եղբայր և Միհրդատ Գ. րդ Եվերժէտին յաջորդող Մեհրդատ-Եւպատորը աքսորից վերադարձաւու ձեռք ձգեց Պռնտոսի իւր թագաւորութիւնը։ Նա առանձին մի երկիր էր, որի իշխաններն արդէն հնագանդեցրել, վերջացրել էին Փարնակիայի և Տրապիզոնի ժողովրդներին։ Սակայն Փոքր-Հայքի

այս բարգաւաճումը երկար չպէտք է տեսէր Միհրդատ Եւպատորի պատճառով։ Քսան տարեկան էր Միհրդատը, երբ վերադարձաւ ու պարսիկ սովորութեան համաձայն, պսակւելով իւր քրոջ Հաօտիսի հետ՝ դարձաւ թագաւոր, նախւը մօր—սա նոյնպէս Լաօտիս էր կոչւում և անշուշտ Լաօտիսէի (Լատիք) հիմնադիրն է—հալածանքներից ազատելու համար եօթ տարի աքսորի մէջ էր մնացել։ այդ ժամանակում ամրապնդել կըրթել էր իւր բնաւորութիւնն ու մկանունքները։ Այսպէս ամրապնդւած մի մարդ չէր կարող վասսալ մնալ իւր թոյլ, նորածիլ դրացուն։ Միհրդատը շուտով Փոքր-Հայքը միաւորում է իւր Պռնտոսեան թագաւորութեան հետ և անմիջապէս բաժանում հինգ գաւառների—Օբբալիսէն, Ետուլան, Երետիս, Օրմէն, Օրբիսէն (Պտղօմէ. V. 7. 1), իսկ այդ հինգ նահանգներն էլ հարիւր քսան ստրատեգիաների (Պլին. VI. 9, 27)։ Այս միացումը տեղի ունեցաւ 70 թւին Ք. ա. առանց մի կաթիլ արիւն թափելու։ Սրանից առաջ Միհրդատը արդէն մեն-մենակ կուել էր թէ Հռոմի դէմ և թէ Տաւրիկեան Խերսոնէսի (Խրիմ) ու Ասիայի բարբարոսների դէմ։ դրանով նամեծադղորդ հռչակ էր հանել, այնպէս որ երբ ձևացրեց թէ յարձակւելու է Փոքր-Հայքի վերայ, այդտեղի իշխանը՝ Սիսիսի որդի Անտիպատէը չհամարձակւեց անհաւասար կոիւ մղել, բայց

այդ հայերն էլ կամ շատ հեռու էին, կամ զբաղւած պարթևների յարձակումներին դիմադրելով, ուստի Անտիպատէրը զիջեց այդ երկիրը յօգուտիւր դրացուն» (Ստրաբոն, XII, 3, 28): Այս կերպ «Փոքր-Հայքը միաւորւելով Պոնտոսի հետ՝ շատ շուտով դարձաւ նրա անձնւէր, օրինապահ ճպատակը և Միհրդատին տւեց սքանչելի հեծելազօրք ու նշանաւոր նետաձիգներ» (Ապիկն):

Այստեղի իշխաններից շատերը ծագումով հայ չէին. Միհրդատ անունը, որ կրում էր թէ Պոնտոսի թագաւորը և թէ Փոքր-Հայքի առաջւայ թագաւորներից մէկը, պարսկական է և պարթևների միջոցով անցելայդտեղ. այդ անունը Միթրա անւան աղաւաղումն է: Միենոյն բանը կարելի է ասել հայ թագաւորների մասին, որոնք Տրդատ անունն են կրել. այդ անունը շուտով կտեսնենք Տիրիտ կամ Տիրիտատէս ձեռվի: Արշակ անունը նոյնպէս պարթևական է և Վաղարշակն էլ պարթևական կլինէր, եթէ իրօք գոյութիւն ունենար: Զնայած որ մենք անկարող ենք ճիշտ որոշել այս ծագումով օտար և հայացած թագաւորների առաջանալը — որանց անուններն են միայն մեզ հասել, — սակայն պէտք է ընդունել, որ Արտաւագդի և Արտաբանի մէջ ազգակցական կապ կայ. մենք ընդունում ենք, որ դա պարթէ էր, իսկ դրա նախորդները՝ Փրատափերնէս, Քսերքսէս, Զարիատրէս, պարսիկներ էին: Մենք

ցոյց տւինք, որ Արդիսարէսը սեմիտական նախածանց ունի: Ուրեմն էլ ի՞նչ է մնում զուտ հայկական. ահա առնւազը երեք նոր տարրեր են, որոնք խծկւում են հայոց բարձր իշխանական ընտանիքներում և շուտով դառնում գերիշխող: Սակայն, պէտք է նկատի ունենալ, որ այս օտարներն արագ կերպով ձուլւեցին հայերի հետ. մի հանգամանք, որը ցոյց է տալիս, թէ հայը ձուլելու ինչ հրաշալի յատկութիւն ունի: Այս իշխանները, ինչպէս երկում է, սօցիալապէս կազմում էին մի տեսակ ֆէոդալութիւն, սակայն չգիտենք թէ գաւառական փոքրիկ սինեօրները ինչ չափով աւտատառուներ էին, ինչ չափով հպատակ, որքան տուրք կամ զինւորական օւնութիւն էին հասցնում թագաւորին: Գիտենալով, որ մատառը կուլտուրան բոլորովին բացակայում էր՝ ուստի կարելի է ենթադրել, որ դրանք կազմում էին մի «կատաղի», լեռնական ազնւականութիւն, որը մոլութեան աստիճանին էր հասցնում որսորդութեան և ինձոյքների սէրը... Պոնտական Հայաստանը բաղաքներ չունէր, նրա գլխաւոր զբաղմունքը ձիեր և ոչխարներ պահելն էր». այսինչ, ընդհակառակը, բուն ծովային Պոնտոսը պէտք է առաջադէմ, աւելի բարձր կազմութիւն ունենար, շնորհիւ կատարելապէս հելլենացած պարսիկ ազնւականութեան աղդեցութեանը: Մենք գիտենք, որ

այդտեղ պարսիկ ազնւականութիւնը կազմում
էր սրի և գաճի արխստոկրատիան, իսկ հելլէն-
ները ներկայացնում էին քաղաքակրթւած բուր-
ժուագիան։ Սակայն և այնպէս «միայն պարսիկ
ազնւականութիւնը չէր, որ բացառապէս վարում
էր բարձր պաշտօնները, սրա կողքին մենք տես-
նում ենք ոչ միայն յոյներին, այլև պաֆլադո-
նացիներին և հայերին...»¹⁾։

Միայն այս հանգամանքը բաւական է նա-
խատեսնելու, որ Հռոմի դէմ Պոնտոսի և Հա-
յաստանի միացած կոիւներում ամենազեղեցիկ
դէրը կխաղայ Պոնտոսը։ Թէ Հայաստանը և թէ
Պոնտոսը նիւթապէս հաւասար չափով էին պատ-
րաստւել կռւելու։ Պատերազմի համար հաւա-
քած գանձերը, զէնքերը և պաշարեղէնները բա-
ժանւած, պահւած էին կազօֆիլասիներում,
որսնցից կարեորները թւով 75 էին. այս բոլո-
րը Միհրդատն էր շինել տւել Փոքր-Հայքում.
Կազօֆիլասիները մի-մի բերդեր էին՝ շինւած
կղզիացած ժայռերի վրայ, շրջապատւած փոսե-
րով և առատօրէն լցւած ջրով ու փայտով, այն-
պէս որ կարող էին երկարատև պաշարու մների
գիւմանալ» (Ատրաքոն, XII, պ. 28)։ Արանցից
մի քանիսը՝ «Հիդարա, Բասկիօղարիչա, Սինօ-
րիա, Դաստիրա, ուազմական ահապին նշանակու-

թիւն ունէին»։ Մենք առիթ կունենանք ցոյց
տալու, որ Մեծ-Հայքն էլ նոյն եղանակով ամ-
րացրւած էր. ապա ի՞նչն էր վերջինիս թուլու-
թեան պատճառը։— Մեծ-Հայքի թուլութեան
պատճառն այն էր, որ նրա մարդիկ չէին կըրթ-
ւել մեծ քաղաքակրթութեան դպրոցներում։
Մենք տեսնում ենք գործի ձեռնարկած մի ու-
ժեղ, զիմացկուն ցեղ, որը գեռ համարեա թէ
վայրենի է. այդ ցեղը ընտիր զինւորներ էր
տալիս օտար զօրավարներին, ինչպէս Միհրդա-
տին, որոնք կարողանում են օգտել նրանցից.
սակայն՝ իր հարազատ առաջնորդների ձեռքին
այդ զինւորները դառնում են մի զիւրաբեկ
գործիք։ Հայ զինւորների հարազատ առաջնորդ-
ներից զինաւորը Տիգրանն էր, որի բաղդաւո-
րութիւնը պէտք է պատահմունքներին, հանգա-
մանքներին վերագրել, իսկ դժբախտութիւնը,
անկումը՝ իւր բնաւորութեան թուլութեան, այն
թուլութեան, որ իզուր աշխատում էր նա թագցնել
արեւելեան շքեղ, ճոխ արտաքին փայլի տակ։

Վերջապէս ասենք և այն, որ Հայաստանի
երրորդ Փրակցիան՝ Ծոփաց երկիրը նախ ան-
կախ մնաց. Մեծ-Հայքի թագաւոր Արտաշէսը
(Արտաքսիաս) չկարողացաւ տիրել այդ մասին,
որովհետև նրա թագաւոր Զարիադրէսը կարողա-
ցել էր Կապակովկիայի թագաւոր Արիարաթ-
ե-ից օգնութիւն ստանալ. վերջինս իրեւ վար-

1) Թ. Բայնալի. Միհրդատ էջ 236։

ձատրութիւն ստացաւ Թօմիսսա կամուրջը, որը գտնւում էր Եփրատի ձախ ափին։ Արիարաթն այնտեղ հաստատւելով կտրել էր անցը։

Բայց այս դրութիւնը չէր կարող երկար տևել՝ առանց գրգռելու Տիգրանի փառասիրութիւնը։ Նա տիրելով այն կողմերին, ուր յետոյ իւր մայրաքաղաք Տիգրանակերտը շինեց, շտապեց յարձակւել Ծոփաց երկրի վրայ, որի թագաւորը Արտաշէսն էր և ոչ թէ Արտաս, ինչպէս Ետիկն Բիւզանդացին է ասում. «Կապադովկիան անկարող էր նոյնիսկ ինքն իրան պաշտպանել, ուստի իր նախկին պաշտպանեալին չկարողացաւ օգնութեան հասնել», բացի այդ՝ ինքն էլ ստիպւած եղաւ Թօմիսա բերդը նորից Ծոփաց երկրի վրայ ծախել և թոյլ տալ, որ 94-ին կամ 93-ին միացւի Մեծ-Հայքի հետ¹⁾։

||

Հայոց Տիգրան Մեծ թագաւորն (95—56) իւր համբաւը մասամբ պարտական է Պոնտոսի թագաւոր Միհրդատ Եւպատորին։ Որովհետեւ Տիգրան Մեծը դաշնակցել էր Պոնտոսի այս մեծ զօրավարի հետ Հռոմի դէմ մղւած պատերազմներում, ուստի հին մատենագիրները զբաղւում են նաև Հայաստանով և այս պատճառով միւս

¹⁾ Թ. Ռայնախ, Միհրդատ, էջ 103, 106, 260, 266։

բոլոր շրջաններից աւելի՝ այս շրջանի մասին են լրիւ տեղեկութիւններ տալիս։ Տիգրանի թագաւորութիւնը կազմում է հայ ժողովրդի պատմութեան ամենափառաւոր շրջանը։

Փոքր-Հայքը Պոնտոսի անբաժան մասն էր կազմում, ուստի Մեծ-Հայքի հետ էր, որ Միհրդատն ուզում էր համաձայնութեան գալ իւր դիտաւորութիւններն իրագործելու համար՝ ի վընաս հռոմայեցիների։ Այս նպատակով Միհրդատն ամենից առաջ, 94 թւին իւր Կորդիոս մինիստրին ուղարկեց Տիգրանի մօտ, յանձնարեկով դաշն կապել և իւր Կիլիոպատրա աղջկանը նրան կնութեան առաջարկել։ Տիգրանն սկզբում տատանւեց ընդունել այս առաջարկութիւնը, որովհետեւ ոչ մի առիթ չունէր հռոմայեցիներից դժգոհելու և բացի այդ՝ վախենում էր նրանց հետ կուի բռնւելուց։ Կորդիոսին յանձնարեկին համօգել Տիգրանին մի խաղով, այսինքն՝ ցոյց տալ, որ Կապադովկիայի սատրապ Արիոսպարանը թոյլ և անարժան է, որ Տիգրանը կարող է այդ երկիրը գրաւել. միւս կողմից՝ ինչպէս իւստին է ասում, Միհրդատն իւր այս ուղղմական նպատակները թագցնելու համար էր, որ իւր աղջկան տալիս էր Տիգրանին։ Անվորձ ու երիասարդ Տիգրանը զրաւում է և ընդունում առաջարկութիւնը, քշում Արիոսպարանին, որը իւր գանձերով փախչում է հռոմէական կայսրու-

թեան սահմանները և պաշտպանութիւն խնդրում Հռոմից։ Տիգրանն ու Միհրդատը դեռ չէին պայմանաւորւել, թէ ինչպէս պէտք է բաժանեն գրաւած երկրները՝ երբ հռոմայեցիները վճռեցին Արիոբարզանին հաստատել իւր իշխանութեան մէջ։ Այս երկու դաշնակից թագաւորները միասին դուրս են գալիս դիմադրելու, և պայմանաւորում են, որ գերիներն ու աւարը լինի Տիգրանին, իսկ տիրապետած երկրները՝ Միհրդատին *): Սրանց ձեռնարկութիւնը յաջողւում է. սրանք խելացի կերպով նկատել էին, որ Հայաստանի հեռաւորութեան ու գիրքի պատճառով հռոմայեցիներն լուրջ գործողութիւններ չեն սկսի իրանց գէմ։ Արիոբարզանի փոխարէն կապադովկիայում կօրդիոսն է հաստատուում։ Սակայն այս դաշնակիցները կարճ էին մտածել. թւում է, որ նրանք չէին կարողացել ճիշտ կերպով չափել արևմտեան կայսրութեան ոյժը և նախատեսնել, թէ նա ի՞նչպիսի հարւածներ կարող է տեղալ իւր թշնամիների գլխին։ Երիտասարդ զօրավար և. Կօրնելիոս Սուլլան, որը Մարիուսի հակառակորդն էր, գալիս է Կօրդիոսի բանակը խորտակելու. «յետոյ մի զունդ հայ զօրք հասնում է նրան օգնութեան, հալածում փա-

*) Իւստին ՀՀՀՎIII, 3.

խըստականներին ու կոտորում մինչև Եփրատ գետը *):

Այսպիսով սկսում է այն պատերազմը, որի ելևէ ջները պէտք է խլէին Տիգրանի ամբողջ կեանքը։ Տիգրանը շատ ուշ է գլխի ընկնում և զղում, որ ենթարկւել է իւր հանճարեղ աներոջ, այն աներոջ, որի նպատակն էր օգտւել իրանից և կապադովկիայի հետ միասին նաև Պաֆլագոնիան վերստին գրաւել. այս վերջին երկիրը Բիւթանիայի թագաւոր և Միհրդատի գաշնակից Նիկոմէտ թագաւորի գաւաճանութեան ջնորհիւ էր Հռոմի ձեռքն ընկել. 95 թւին Հռոմի սպառնալիքների տակ՝ Նիկոմէտը զիջել էր այդ երկիրը, Սակայն Տիգրանի ու Միհրդատի ախորժակը բացւել էր արդէն, նրանք անյագ տեսչ ունէին Արևելքին տիրելու և կարծում էին, որ իրանց այդ կյաջողուի։ Եւ իրօք հաւանական էր, որ այդպէս էլ լինէր, եթէ միայն Տիգրանն իւր դրացու անընկճելի բնաւորութիւնն ու լայն միտքն ունենար, վճռէր միշտ օգնել նրան և ոչ թէ ջլատել նրա ոյժերն իւր անտարբերութեամբ, անգործունէութեամբ ու կասկածներով։ Զի կարելի ասել, որ այս երկու թագաւորներու մէջ եղած կասկածը ծագել էր այն ժամանակւանից, երբ Փոքր-Հայքը միացրւեց Պանտոսի հետ։ Սր-

*) Թ. Ռայնախ. Միհրդատ Եւպատօր էջ 206.

դէն երկար ժամանակից ի վեր այս երկու քոյրերը՝ Մեծ-Հայքն ու Փոքր-Հայքը՝ նախանձոտ հակառակորդներ էին և վերջինիս թուլութիւնն ու նւաստացումը միայն, որը առաջ էր գալիս արտագաղթի պատճառով, կարող էր բաւականութիւն պատճառել իւր կրտսեր քրոջ, որն իւր բընակչութեան թիւը բազմացնում էր Փոքր-Հայքից Եկած գաղթականներով: Տիգրանի համար շատ լաւ էր, որ գաշնակից էր այդ փառասէր դրացու հետ, որովհետեւ ուզում էր խորտակել փոքրիկ թագաւորութիւնների այն շղթան, որով պարթեներն իրան շրջապատել էին. այդ փոքրիկ պետութիւններն էին Օսրօէնը, Կորդւաց աշխարհը, Աղիաբենը և Մետիական Ատրպատականը: Միւս կողմից՝ Միհրդատը տեսնելով, որ հայ բնակչութեամբ բազմամարդ Ծոփաց աշխարհի միացումով Տիգրանը շատ էր զօրացել՝ խիստ օգտակար համարեց նրան օգնել, որպէսզի ինքն էլ փոխադարձ օգնութիւն ստանայ Հռոմի դէմ: Այսպէս, մենք տեսնում ենք, որ այս գործում բարոյական հեղինակութիւնն ու դէպի ինքը գրաւելու ոյժը պատկանում է Միհրդատին, որը Տիգրանից մի քանի տարով փոքր էր *):

*) Որովհետեւ Տիգրանը մեռնում է 56 թւի փետրվարին, ինչպէս Կիկերոնն է ասում (Pro Sestio), Բատ Պլուտարքոսի (Կրասոս, 49) 54 թւին է մեռնում. իսկ

92-ին կամ 91-ին Հայաստանի ու Պոնտոսի այս առաջին դաշնադրութիւնը աւելի սերտացաւ, ու դարձաւ պաշտպանողական ու յարձակողական՝ հէնց որ Սուլլան մէջտեղից չքացաւ: Միթրօսս և Բակօսս զօրավարները, որոնք հաւանօրէն հայեր էին, երկրորդ անգամ գրաւեցին Կապադովկիան, այնտեղից քշեցին Արիոբարզանին, որը, ինչպէս երեք տարի առաջ, ընդդիմութիւն ցոյց չտւեց և Մազակայի գահը բարձրացրին Միհրդատի որդուն, որն իրան անւանում էր Արիարաթ Եւսեբոս Ֆիլօպատօր *): Սակայն Արիոբարզանը, որը հոռմայեցոց օգնութեամբ քշել էր Կորդիոսին և վերահաստատել իւր իշխանութեան մէջ, 90 թւին Բիւթանիայի թագաւոր Նիկոմետի հետ Հռոմ է գնում պաշտպանութիւն խնդրելու. այս պատճառով Միհրդատը վատ վերաբերեց դէպի Մանիուս Աքվիլուխի, Արիոբարզանին իւր իշխանութեան մէջ վերահաստատողի առաջարկութիւնները և երրորդ անգամ գահնկէց արեց Կապադովկիայի թոյլ թագաւորին՝ յօգուտ իւր որդի Արիարաթին.

ըստ Լուսիէնի (Macrob.) 85 տարեկան էր, որ մեռաւ ուրեմն պէտք է մօտ 140-ին ծնւած լինէր, այն ինչ Միհրդատը ծնւել էր 132-ին:

*) Թ. Ռայնախ. վեր. յիշ. էջ 115: Զպէտք է այս անձնաւորութիւնը շփոթել Արիարաթ Վ. Եւսեբոս Ֆիլօպատերի հետ, որը մեռել է 130-ին (Խւտի. 492):

այսպիսով հայերն ստիպւած եղան երկրորդ անգամ կռւել Հռոմի դէմ: Միհրդատն երկուսից երեք հարիւր հազար մարդ զինեց հռոմայեցոց դէմ, և իւր այս բանակը պաշտպանելու համար էլ երեք հարիւր նաւերից բաղկացած մի նաւատորմիդ պատրաստեց. այս ուժով նա դիմադրում էր 190 հազար հռոմայեցի զինւորների: Միհրդատի այս զօրքի մէջ հայերն ունէին 10,000 հեծեալներ, որոնց Արիարաթն էր հաւաքել ՓոքրՀայքից (Ապահեն. Միհրդատ, 17): «Հայոց այս գունդը չէր համարւում ազգային զօրքի թւում (Բատ Միմնօնի և Ապահենի), որանից կարելի է եզրակացնել, որ... Փոքր-Հայքը... այդ ժամանակ միացրւած էր Կապադովկիայի հետ»: Սա մի ենթադրութիւն է, որը սակայն կարելի է ապացուցանել նրանով, որ Արիարաթը մի տարուց իւեր (89) արդէն Կապադովկիայի թագաւորն էր և յանձն էր առել 10,000 ձի հաւաքել ՓոքրՀայքից. այս բանը անհաւանական կլինէր, եթէ Փոքր-Հայքը Պոնտոսի անբաժան մի նահանգը կազմէր: Արիարաթի զեկավարութեան տակ գըտնւած հեծելազօրքը դիմադրեց Բիւթանիայի հեծեալներին, որոնք թւով քիչ էին և 88 թւին Ամասիայի մօտ փախուստի դիմեցին: Քիչ յետոյ հռոմայեցիները Ամիսիասի մօտ (Ալիւսի ճիւղը) առաջին անգամ Պոնտոսի թագաւորին պատահելիս կատարեալ պարտութիւն կրեցին:

Միհրդատի բանակներում ոհետեակ նետաձիգները, որոնք գլխաւորապէս Փոքր-Հայքից էին հաւաքւում, ծովի և թէ ցամաքի վրայ աշքի ընկան իրենց ճարպիկութեամբ և բաջագործութեամբ: Սրանց աղեղները լաւ էին շինւած, այնպէս որ նետերը 180 մետրից աւելի էին կտրում: Օրխօմէնում (Միհրդատի երկրորդ պարտութիւնը Յունաստանում Սուլլայի դէմ կռւելիս) և Նիկոպոլսում (Տիգրանի որդի Արտաւազդ Բոկ վերջին պարտութիւնը Կիլիկիայում Սնտոնիոսի դէմ կռւելիս, ուր Պօմպէոսն հիմնել էր այդ բաղաքը) այս նետաձիգներն ուղղակի հերոսներ էին: Սուլլան այնքան գնահատեց սրանց արժանիքը, որ Դարտանի գանգադրութեան մէջ (Քերօնիայի և Օրխօմէնի ճակատամարտերից յետոյ, 85-ին) մի կէտ մացրեց, որով Միհրդատի յանձնած պատերազմնական նաւելը պէտք է իրենց նետաձիգներով միասին լինէին... Միհրդատի բանակի գլխաւոր ոյժը հեծելազօրքն էր կազմում... Այդ զօրքը ստացւում էր յատկապէս Փոքր-Հայքից և Դանուբի ու Թօնի միջև գտնւած բարբարոս ազգերից (Սարմատներ).... Սրա զէնքերն էին նիկոբրից (Սարմատներ).... Սրա զէնքերն էին նիկազակ և սուր: Գալով այն ծանրազրահ հեծելազակը զօրքին, որի թէ մարդիկը և թէ ձիերը ամբողջապէս ծածկւած էին երկաթեայ զրահներով, և որն այդ շրջանում գործ էին ածում թէ Հայերը, թէ Պարթևները և թէ Աղւանները Կատաֆ-

ըակտէս անունով, երևում է, որ Միհրդատը չի մտցրել իւր բանակում։ Այս գործունեայ գունդը կամաց կամաց գաղարեց գործածւելուց լուրջ ձերնարկութիւնների մէջ։ Հայաստանի պատերազմում, որը շուտով կընկարագրենք, այս գունդն անվաստակելի թեթև կոփւներ մղեց և այդպիսով մեծ ծառայութիւն մատուցեց լեգէոններին ցըրւ տալու գործում։ Հելլէն զօրավարների կողքին, ուրոնց զլխաւորներին Միհրդատն էր հրաւիրել, մենք տեսնում ենք նաև մի քանի հայ զօրավարներ, այս վերջինների թւում ենթադրւում է նաև Տաքսելը, որ մեծ ծառայութիւն մատուցեց Միհրդատին Յունաստանում։ Սուլլայի գէմ կուելիս. սա կառավարեց նաև Փոքր-Հայքի գունդը Պոմպէոսի բանակի դէմ (Ապակեն. Bell. Civil., II 7):

Սանատրուկի մահից յետոյ Ասկարօք Ակիւթացիները սրան բարձրացնում են պարթև Արշակունիների գահը-«հայերը ասպարէզ են իջնում փայլուն կերպով... Երբ Պոնտոսի թագաւորը հոռմայեցիների հետ ընդհարման մէջ էր՝ Տիգրանը մոռանալով իւր աներոջ արած խոստումները՝ օգտում է պարթևների թուլութիւնից՝ իւր հին անպատճեան վրէժը լուծելու համար։ Հայկան մի բանակ արշաւում է պարթևական սահմանների վրայ և հասնում մինչև Արքելա ու Նինուէ՝ ճանապարհի վրայ ամեն տեղ աւեր տարածելով։ Պարթևներն ստիպւեցին մի այսպիսի

խիստ կորստաբեր պայմանագրութիւն (traité) կապել. — տալ հայերին այն եօթանասուն հովիտները, որոնց 95. թ.-ին էին տիրացել և բացի այդ՝ հիւսիսային Միջագետքի երկու ծաղկած նահանգները՝ Մուկոնիսան և Օսրօէնը (Մարաքօն, XI, 14, 15). միաժամանակ մի առանձին դաշնադրութեամբ պարթևները յաղթողի տրամադրութեան տակ էին գնում հիւսիս-արևմտեան կողմում ունեցած իրենց բոլոր հին աւատառուներին (Իւստի, XI, 1): Ամենառուժեղ, ամենամեծ Սատրապը՝ Մեծ-Մարաստանի Սատրապ թագաւորը (հաւանօրէն Դարէնը, Ապակեն. Միհր. 106) տեսնում է թէ ինչպէս հայերը հասնում են Եկրագանի գաներին և այրում իր պալատը (Իսիդոր Կարաքսացի, 6): Այսպիսով Տիգրանի բոլոր դրացիներն ստիպւած ընդունում են նրա գերիշխանութիւնն աւելի կամ պակաս կորստաբեր պայմաններով։ Աղւանի և Իբերիայի (Կուր գետի և Կովկասի միջև), Մետիական Ատրպատականի (Ատրպատականի Միհրդատ թագաւորն ամուսնացաւ Տիգրանի աղջիկներից մէկի հետ։ Դիօն Կասիուս, XXXVI, 16) և Մեծ-Մեգիայի, Կորդւաց երկրի ու Աղիաբենի (Վերին Տիգրիսի վրայ) թագաւորները դարձան նոր՝ արքայից արքայի վասսալներ։ Սրանք խաղաղութեան ժամանակ հապատակութիւն էին ցոյց տալիս և տուրք վըճարում, իսկ պատերազմի ժամանակ տալիս էին

զօրք ու բանւորներ»։ Տիգրանը թագաւորների թագաւոր տիտղոսը կրելով՝ հետևեց արևելեան թագաւորների սովորութիւններին, իսկ Միհրդատը հեռու մնաց այդպիսի ձգտումներից, չնայած, որ Պոնտոսը դարձրել էր Ասիայի ամենից աչքի ընկնող մի կայսրութիւնը։

Տիգրանն այլևս վախ չունենալով հիւսիսից և արևելքից՝ «վերսկսւում է իւր հին ծրագրներն եփրատի արևմտեան կողմում գտնւած երկրների վերաբերմամբ. արդէն Օսրօէնն ու Կօմաժէնը գրաւելով, տէր էր դարձել Եփրատի անցքին և կարաւանների մեծ ճանապարհին. այն արաք ցեղերը, որոնց անապատից բերեց և նստակեաց դարձեց, ապրանքների տեղափոխութեան տուրքեր էին հաւաքում յօգուտ Տիգրանի *): Տիգրանին մնում էր այստեղից ձեռքը մեկնել և Ասորիքը վերցնել իրեւ մի հասունացած պտուղ։ Ասորիքի բնակիչները հրաւիրեցին Տիգրանին, բայց վերջին Սելեկեանները շատ անապաստան

*) Տիգրանը բաւականաչափ հրէաներ բերել տւեց վան (Սովուէս Խորէնացի, II, 19). Հայկական աւանդութիւնը հիմնուոր է, սակայն նա պատւաստել է Փանտաստիքական աւելորդ կրկնութիւնների մի ստոյգ տեղեկութեան վրայ։ Ենթադրւում էր, որ Կիւրոսից առաջ արդէն հրէաներ կային Հայաստանում. այստեղ մենք տեսնում ենք քրիստոնեայ դարձած հայերի փառասիրական մի ձգտում՝ իրենց Հին-Կտակարանի հետ կապե-

էին. նրանք չէին ուզում իրենց նախնիքների տեղակալներից սիրւած մարդու գերիշխանութիւնն ընդունել։ Սակայն դրանց խեղճուկ բանակն ի՞նչ կարող էր անել Տիգրանի՝ մօտ կէսմիլիօն ամբոխի առաջ (Յովսէփ, Ant. Iud. XIII, 16, 4): ՅՅ թւից սկսած Տիգրանը տէր դարձաւ ամբողջ վերին Ասորիքին, բացի Պերիական Ասորիքից՝ Անտիոքի դռնից։ Սելեկեան վերջին թագաւոր Փիլիպպոսը անշուշտ կուի մէջ է ընկնում, նրա որդի Փիլիպպոս Ա-ը ապաստանում է

լու։ Պատմական ճշմարտութիւնը մեզ կարծել է տալիս, որ հրէաների ներգաղթը առաջացել է վաճառականական նպատակներով, երբ Կիւրոսը Բարելոնն առնելուց յետոյ, այնտեղի հրէաներին ազատութիւն պարգևեց։ Մովսէս Խորենացին պատմում է, որ Տիգրան Մեծը Ասորիքը գրաւելու ժամանակ իւր զօրավար Բարզարանին ուղարկում է երրուսաղէմ՝ Հրէից քահանայապետների կոիւներին վերջ տալու համար. այս զօրավարը վերադառնում է բազմաթիւ աւար ու գերիներլ բերելով իւր հետ։ Մենք կտեսնենք, թէ այս Փիկցիանորքան համապատասխան է ճշմարտութեան։ Անշուշտ նամի արտացոլումն է Տիգրանի ընդհանուր քաղաքականութեան։ Տիգրանը կարիք էր զգում իւր պետութիւնը բազմամարդ դարձնելով՝ իւր հպատակներից աւելի քաղաքակրթւած օտարներով. նա բազմաթիւ յոյներ վերաբնակեցրեց իւր երկրում, ինչպէս նաև բոնի ուժով կամ յօժարութեամբ շատ սիրիացիների և հրէաների։ Այսպիսով ըլիստոնէութեան սկզբներում Հայաստանում հրէաների թիւը բազմացել էր։

Կիլիկիա. իսկ Եւսիբի որդի Անտիոքոսը թագըն-
ւում է հռոմէական Ասիայում (Եւգրոս, VI, 14):
Թագաւորների կանայքն ու աղջիկները յաղթողի
կանացն էին ստւարացնում (Պլուտարքոս, Լու-
կուլոս, 21): Անտիօքը դարձաւ Տիգրանի ա-
թոռանիստներից մէկը, որը նրա պատկերով փող
էր կտրում. այս թագաւորութիւնը կառավարում
էր Տիգրանի զօրավարներից մէկը՝ Մակադատիսը
իբրև Սատրապ (Ապահէն, Սուրիակա, 48 *):

Հին պատմաբաններն այս արագ յաղթու-
թիւնները բացատրել են երկու պատճառներով,
որոնք միաժամանակ են առաջացել: Նախ ժո-
ղովուրդը յոգնել էր Սելևեանների անընդհատ
կռիւներից, իշխաններն ուժասպառ էին անում
երկիրն իրենց փառասիրութեան պատճառով և
թուլացնում կառավարութիւնը թագաւորին ցոյց
տուած իրենց հակառակութիւններով. միւս կող-
մից՝ ժողովուրդը ուրիշ տիրապետող էր ուզում.
Նա Միհրդատ Եւպատօրին չդիմեց, որովհետև նա
չափանց զբաղւած էր Հռոմայեցոց դէմ կռւելով
ու չէր կարող գալ և Ասորիքին տէր դառնալ.
Նա Եգիպտոսի Պտղոմեաններին լսել անգամ չէր
ուզում, որովհետև իր թշնամիներն էին, ուստի
գերադաս համարեց Տիգրանին նրանով, որ նա
ուժեղ թագաւոր էր և Պարթևներին բարեկամ.
Այսպէս ուրեմն՝ Տիգրանին մնում էր միայն գալ

*) Թ. Ռայնախ, Միհրդատ Եւպատօր, էջ 312:

ու տիրել: Տիգրանը տէր դառնալով այս երկրին
չմտածեց այն միջոցների մասին, որոնք ան-
հրաժեշտ էին իւր թագաւորութիւնը հաստատուն
հիմունքների վրայ դնելու համար: Պատմում են,
որ Տիգրանն Ասորիք էր եկել 500,000 մարդ-
կանցից բաղկացած մի բանակով, այստեղ ա-
ռիթ չունենալով այդ բանակը գործադրել՝ մը-
տածեց Պաղեստինը գրաւել. այս բանը լսելով
հրէաններն ու Աղէքսանդրա թագուհին սաստիկ
վախենում են, որովհետև երբէք մի այդպիսի վը-
տանգի մասին չէին կարող մտածել, ինչպէս
պատմաբան Յովաէփն է ասում՝ Աղէքսանդրան
մեծամեծ ընծաներով գեսպան է ուղարկում Տիգ-
րանի մօտ՝ երբ նա զբաղւած էր Պտօլեմայիս
դրացի քաղաքը գրաւելով: Սելինէն, որը նոյն-
պէս կլէօպատրա էր կոչում և իշխում էր Ասո-
րիքի Ասորեստանցի բնակիչների վրայ, քաջու-
թեամբ հրաման արձակեց դիմադրել Տիգրանին:
Սակայն այս դիմադրութիւնից մեծ չարիքներ ծա-
գեցին՝ ինչպէս յետոյ կտեսնենք, այն ինչ Աղէք-
սանդրայի բռնած դիրքը յաջողութիւն ունեցաւ,
վերջինիս պատգամաւորներն իրենց բոլոր մի-
ջոցները գործադրեցին հայերի սէրը գրաւելու
համար. Տիգրանն այս պատգամաւորներին լաւ
ընդունելութիւն արաւ և յոյսեր տւեց: Յայտնի
չէ, թէ արդեօք Տիգրանը Պաղեստինին տիրեց
թէ ոչ: Յանկարծ Տիգրանը լսում է, որ Լուկու-

լոսը աւերում է Հայաստանը, ուստի ստիպւած է լինում յետ դառնալ *): Սակայն գեռ երկար ժամանակ նա իշխեց Ասորիքի վրայ. այն տասնհաջորդ տարիները, որ Տիգրանի իշխանութեան տակ անցկացրեց այդ երկիրը, խաղաղութեան տարիներ էին նրա համար. նա ոչ ոքի հետ պատերազմելու առիթ չունեցաւ և ոչ ոք էլ չըհամարձակւեց նրա վրայ յարձակել: Բայց և այնպէս կարելի է ենթադրել, որ պաշտօնազուրկիշխանները նորից դաւադրութիւններ էին սարքում: մի սոսկալի երկրաշարժ 170,000 մարդ է կոտորում. մոգերն այս երկոյթն երկնային մի նըշան են համարում իշխող հարստութիւնը փոխելու համար. երբ Տիգրան Հոռմից պարտութիւն է կրում, իշխանները այս հանգամանքից օգտում են և 69-ին Սելևկեանների ընտանիքից Անտիոքոս Սիլքէնին դարձեալ իշխան են դարձնում: Սակայն Պոմպէոսը սրան գահընկէց է անում՝ ասելով, որ ինքը այս գործում չի կարող ժողովրդի պահանջին բաւարարութիւն տալ որովհետեւ Տիգրանի իշխանութեան ժամանակ նա իրան թոյլ էր տւել թագնւել Կիլիկիայի մի անկիւնում. նա քաջութիւն չունենալով հայերից յետ լուել իւր հայրերի թագաւորութիւնը՝ այժմ իրաւունք չունի Հոռմայեցիների յաղթութիւնից օգտւելու:

*) Յովուէփ, Ant. Iud. XIII, 16, 4.

Վերոյիշեալ ժամանակաշրջանում Տիգրանը տեսնելով, որ Ասորիքում իւր իշխանութիւնը դիմադրութեան չի հանդիպում՝ սկսեց Սելևկեանների թագի վերջին շառաւիղին ևս ձեռք զայնել—լուել Իաշտային Կիլիկիան: Շատ քաղաքներ, ինչպէս նաև ծաղկած Սոլին կործանւեցին և բնակիչները Հայաստան քշեցին: Սրանից յետոյ, ինչպէս հաւաստիացնում են, Միհրդատի թելադրութեամբ հայերն երրորդ անգամ գրաւեցին Կապադովիկիան (Միհրդատը սրանով կամենում էր վրէժինդիր լինել Արիոբարզանից, որը դժւարութիւններ էր յարուցել Կապադովկիայի տիրապետութեան համար): Հայերը բըռնում են Արիոբարզանին և նրա մայրաքաղաքը գրաւում: Մազակայի և յունական միւս քաղաքների բնակիչները, թւով 300,000. 77 թւին Ք. ա. քշեցին գէպի թագաւորների թագաւորի նոր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտ: Հոռմի անտարբերութեամբ էր գիտում այս յեղաշրջումները, որովհետեւ Հայաստանից մեծ վտանգ չէր սպասում. սակայն շուտով նա ստիպւած եղաւ ջախջախել հայերին, որոնք դաշնակցել էին Պոնտոսի հետ:

Ճիշտն ասած Տիգրան քիչ էր հոգս անում հոռմայեցիների վրէժինդրութեան մասին. երբ Միհրդատ իւր երկրորդ պատերազմում՝ Սուչիքի առաջ և Եղէեան ծովի վրայ՝ պարտութիւն կրեց,

կոչ արեց իւր դաշնակիցներին Պոնտոսի տերիտորիան պաշտպանելու, սակայն բոլորն էլ, ինչպէս նաև Տիգրանը, լրեցին Միհրդատին, այսպիսով Պոնտական բանակը ոչնչանում է Պարիագրես լեռներում 72 թիւն, որից յետոյ Միհրդատը ապաստանում է Հայաստան իւր փեսի մօտ: Սրանից յետոյ Հայոց պատմութեան մէջ մի նոր շըջան է սկսւում:

Հայաստանի բարդաւաճութիւնը առաջ էր եկել այն հանգամանքից, որ լուրջ հակառակորդներ չէր ունեցել: Հոռմի դէմ նա արդէն անկարող է լինում իրան պաշտպանել. հանգամանքներն ստիպում են Լուկուլլոսին միանգամից վերջ դնել հայերի յանդզնութեանը. այդ պահանջում էր մի կողմից՝ Լուկուլլոսի զինւորական պատիւր, միւս կողմից՝ Հոռմի փառքը, որովհետեւ «իսկապէս քսանուհինդ տարուց ի վեր Տիգրանը յայտնի թէ թաքուն կերպով անընդհատ թշնամական դիրք էր բռնել Հոռմի դէմ. Կապագովկիայի վրայ կատարած յաճախակի յարձակումները, Ասորիքի և Դաշտային Կիլիկիայի միացումը իւր պետութեան հետ, ուղղակի անարդանքներ էին Հոռմի գերիշխանութեան հասցէին^{*)}): Հոռմը կարծում էր, որ Տիգրանի հետ կուելը մեծ վանդների հետ էր կապւած, մանաւանդ այն ժամանակ

^{*)} Թ. Ռայնախ. Վեր. յիշ. էջ 347:

(71), երբ հռոմէական ուժի մի մասն զբաղւած էր Պոնտոսի թագաւորութիւնն ընկնելով, որովհետեւ չնայած Միհրդատի պարտութեան՝ բերդերից և ոչ մէկը չէր ուզում անձնատուր լինել: Այսպէս՝ երբ Լուկուլլոսը Արաւիայում (Ամիսաս), Պոնտոսի մայրաքաղաքումն էր, շատ երկար ու բարակ մտածեց՝ նախ քան Տիգրանի դէմ պատերազմ յայտարարելը: Նա զգում էր, որ քիչ հեռու գտնւում է Տիգրան թագաւորը, «որը շատ զօրեղ է, որը Ասիան խլել է պարթևներից, Մարաստանը բնակեցրել է իւր տիրապետած հելլենական քաղաքների բնակիչներով (ինչպէս նաև Տիգրանակերտը), որ նա իշխում է Ասորիքի և Պաղեստինի վրայ, որ Սելևկեան երեք թագաւորներին մահւան դատապարտեց և նրանց կանանց ու աղջիկներին գերեց, և որը վերջապէս, Միհրդատի բարեկամն էր և փեսան»: և անշուշտ եթէ Միհրդատը դիմէր այս թագաւորին, վերջինս օգնութեան կհասնէր և Հոռմի դէմ սոսկալի կոիւ կը յայտարարէին: Այս նկատումով էր, որ Լուկուլլոսը չէր շտապում Միհրդատին կատարելապէս ընկնել, որպէսզի Տիգրանի բարկութիւնը չշարժի: Տիգրանն արդէն վաղուց առիթ էր որոնում յարձակելու Հոռմայեցոց վրայ և այդ բանը մի հրաշալի առիթ կդառնար Միհրդատի հետ միանալու^{**})»:

^{**)} ՊԼՈՒՄԱՐՔՈՒ, ԼՈՒԿՈՒԼՈՍ, 21.

Սակայն ընդհարումն անխուսափելի եղաւ Լուկուլոսի համար։ Միհրդատը փախաւ Տիգրանի մօտ, որով Լուկուլոսը տէր դարձաւ Պոնտոսի բոլոր քաղաքներին և շտապեց իւր տեղապահ Ապալիուսին ուղարկել Հայաստան՝ Միհրդատին յետ պահանջելու, իբրև պարտած թագաւորի։ Ապալիուսին բարբարուներն առաջնորդում և մոլորեցնում էին բարձրաւանդակների ծուռ ու մուռ ճանապարհներում։ Յյո բանն այն նպատակով էր արւում, որ հայերը ժամանակ վաստակեն, որովհետև Տիգրանն այդ ժամանակ զբաղւած էր Սելեկեանների վերջին քաղաքները գրաւելով։ Ապալիուսը մի Ասորեստանցուց իմացաւ, որ իրան մոլորեցրել են, որ Տիգրանը Անտիոքումն է գտնւում։ Իսկոյն ուղղակի դիմում է Անտիոք, կայծակի արագութեամբ՝ կտրելով Միջագետքն ու Եփրատը։ Անտիոքում Տիգրանը մարդ է ուղարկում Ապալիուսի մօտ ասելու, որ համբերի, մինչև որ Փիւնիկեան քաղաքների դէմ իւր սկսած գործողութիւնները կվերջացնի։ Տիգրանն ամբողջ ձմեռը մնաց Պտոլեմայիսի առաջ, չկարողացաւ ընկածել Սելինէ թագուհուն, որը Սելեկեան հարստութեան ամենափայլուն դէմքերից էր։ Վերջապէս Տիգրանին յաջողւում է բռնել թագուհուն և շղթայել։ Տիգրանը սխալում էր, կարծելով, որ այդ հեռաւոր մըցակցի հիշ առիջների թէ ուղարկուած էր կունենայ շփւելու։ Ժամանակից օդուտ է քաղում

Ապալիուսը և իր հետ միացնում զանազան գժգոհ իշխանների, մասնաւորապէս Կորդւաց իշխանին։ Բաւականաչափ նահանգներ, որոնց Տիգրանը բռնութեամբ էր ընկճել, գաղտնի դեսպաններ են ուղարկում Հռոմայեցու մօտ, վերջինս Լուկուլլոսի կողմից օգնութիւն է խոստանում և խորհուրդ տալիս մի փոքր սպասել, ցոյց տալով, որ վրէժխնդրութեան ժամանակն արդէն մօտ է։ Հելէններն էլ չէին կարող կոտրել իրենց գոռողութիւնը և մնալ հայերի լծի տակ, մանաւանդ Տիգրանի նման մի մարդու, «որը չափազանց հպարտացել էր իւր բախտաւոր աստղից, կարծում էր, որ ամեն բան իւր ձեռքումն է, կարող է ունենալ ոչ միայն այն, ինչ որ ցանկանում է, այլ նաև այն ամենը՝ ինչ մի մարդ կարող է ցանկալ. մի խօսքով՝ նա երևակայում էր, որ ամբողջ աշխարհն ստեղծւած է իր համար»։ Նա փոքր քայլերից էր սկսել, բայց վերջը շատ ազգերի տիեզերուց յետոյ՝ այնպիսի չարդ տւեց, այնպէս ընկճաց պարթիւններին, որ մինչև մեր օրերը, ասում է Պլուտարքոսը, «ոչ ոք չի կարողացել գերազանցել հայերին^{*)}։ Ահա այսպիսով Տիգրանն իւր վրայ էր կուտակել շատ ոխեր, որոնք վաղ թէ ուշ իր գլխին պէտք է թափւէին։ Տիգրանը այս յաղթութիւնների թւում՝ հե-

*) Պլուտարքոս, Լուկուլոս 30 և 31։

տաքրքիր մանրամասնութիւններ կան։ Տիգրանը կամենալով քաղաքակրթել Միջագետքն ու Մարաստանը՝ Հելլէն դադրականներով բազմամարդ դարձրեց և մտցրեց յունական կուլտուրան, ինտուսդրիան։ Նա նոյնիսկ արաք ցեղերին օգտագործեց յօդուտ ընդհանուր բարդաւաճութեան, նրանց ստիպեց Եփրատ գետն անցնել, դառնալ նստակեաց, զբաղւելով վաճառականութեամբ կամ Տիգրանակերտի վրայով անցկացող Մեծ ճանապարհից տուրքեր հաւաքելով։ Տիգրանի պալատում գահագուրկ շատ թագաւորներ պալատական պաշտօններ էին կատարում։

Չորս ամենամեծ ազնւականներ պէտք է Տիգրանի մօտ մնային իբրև թիկնապահներ։ Երբ նա ձիով մի տեղ էր գնում՝ սրանք ոտքով, մի հասարակ շապիկ հագած, պէտք է վազէին նրա առջեից։ Երբ գահ էր նստում՝ սրանք կանգնած էին մնում նրա առաջ և ի նշան ամենախոնարհ հնագանդութեան՝ ձեռները խաչած պահում, ռորով ցոյց էին տալիս, թէ իրենք կորցրել են ամեն մի ազատութիւն, իրենց անձը ամբողջապէս դրել են իրենց տիրոջ տրամադրութեան տակ, դարձել նրա ձեռքին մի կրաւորական գործիք^{*)}։ Տիգրանը բոլորից մեծ յարգանք էր պահանջում դէպի իւր անձը, իրան աստուծու տեղ էր գնում,

^{*)} Պլուտարքոս. Լուկուլլոս. 31.

Երբէք ժողովրդին չէր երեսում առանց սպիտակ ու կարմիր ծալքերով զոլաւորւած շապիկ հագնելու, որը ծածկում էր ծիրանի վերաբկուի երկայն ծալքերի տակ, և գլխին աստղազարդ բարձը թագը դնելու^{*)}։

Այս արտաքին փայլը, որ նախնական ժողովրդների վրայ ազդելու համար շատ լաւ միջոց էր, չկարողացաւ ոչ մի բանով շփոթել Ապպիուսին։ Տիգրանը մեծ շքով, մեծ փառահեղութեամբ ընդունեց այս Հռոմայեցուն, սակայն նա դարձեալ խօսեց շատ ազատ՝ յայտարարելով, ոք ինքն եկել է կամ Միհրդատին յետ տանելու, կամ պատերազմելու։ Տիգրանն աշխատեց թագցնել իւր բարկութիւնը. քսանուհինգ տարուց իվեր առաջին անգամն էր, որ այդպիսի յանդուգն խօսքեր էր լսում։ Նորին թագաւորական կամքը սովորել էր բոլորին իւր առաջ խոնարհած տեսնել։ Տիգրանը յայտնեց, որ Երբէք Միհրդատին չի յանձնի և, եթէ Հռոմայեցիներն են առաջին անգամ պատերազմի կոչ անողները, ինքը պատրաստ է կռւելու։ Նա ցոյց տւեց, որ շատ վշտացած է Լուկուլլոսի դէմ, որովհետև վերջինս իւր նամակում զլացել էր իրան թագաւորների թագաւոր տիազոսը տալ։ Սրա փոխարէն Տիգրանն էլ նամակ է գրում Լուկուլլոսին և նրան չի անւա-

^{*)} Դիոն Կասսիուս. XXXVI. 52.

նում իմպերատօր։ Զնայած այս բոլորին Տիգրանը հրամայում է Ապպիուսին թանկագին ընծաներ տալ, վերջինս մերժում է։ Թագաւորը կասկածելով, որ Ապպիուսը չի բաւականացել դրանով, աւելացնել է տալիս խիստ մեծ զին ունեցող իրեր։ Հռոմայեցին տեսնելով, որ այդքան պնդում են, չի ուզում արհամարհական դիրք բռնել, ընտրում է մի բաժակ և մնացածը յետ դարձնում։ Սրանից յետոյ Ապպիուսը միանում է Լուկուլոսի բանակին։

Այս ժամանակից սկսած արդէն պատերազմը գրգռւած էր, և Տիգրանը վերջապէս զգաց դրա ամբողջ ծանրութիւնը։ Տիգրանը փոխանակ իւր աներոջ տաղանդից ու փորձառութիւնից օգտվելու՝ այս անխուստիկելի վտանգի առաջն առնելու համար, ոչ միայն մինչև այդ ժամանակ այդ մասին չէր խօսում նրա հետ, այլև չէր թոյլ տալիս, որ իրան ներկայանայ։ Տիգրանն իւր դժբաղդ բարեկամի հետ վերաբերում էր յաղթողի արհամարհական եսասիրութեամբ։ Նա Միհրգատին ուղարկել էր մի ճահճային, վատառողջ գաւառ, ուր 20 ամիս շարունակ Հռոմի այդ հզօր հակառակորդը յուսահատութիւնից ինքն իրան կը ծոտում էր։ Տիգրանը զգաց իւր մեղքը միայն այն ժամանակ, երբ դեսպան Ապպիուսը նրանցոյց տըւեց Հռոմի ոյժը և ձգեց խիստ նեղ դրութեան մէջ։

Տիգրանը կանչեց Միհրգատին և մեծ շքով ընդունեց։

Նրանք պալատում պալատական ազնւականութեան ներկայութեամբ իրար հետ խօսելիս գտան, որ միմեանց մեղադրելու ոչ մի պատճառ չունեն, ամբողջ մեղքը կեղծ, սուաբարեկամերինն է, դրանք են եղել իրենց գժտութիւնների պատճառը։ Այս կեղծաւորներից գլխաւորը Մկեպսիացի (քաղաք Պոնտոսում) Մեղրօդօրոսն էր, մի գիտուն, ճարտասան մարդ, դա Տիգրանի հետ այնքան էր մտերմացել, որ հայոց պալատում ամենավստահելի մարդուն յատկացւած «Թագաւորի Հայր» տիտղոսն էր կրում։ Միհրգատը այս դաւաճանին պատերազմի սկզբին ուղարկել էր Տիգրանի մօտ իբրև պատգամաւոր օգնութիւն խընդրելու։ Սակայն Մեղրօդօրոսը, գուցէ իւր տիրոջ դէմ ունեցած ատելութիւնից կամ գուցէ Հայաստանի մեծութիւնից շլացած, այսպէս էր պատասխանում Տիգրանի հարցերին, «իբրև պատգամաւոր ձեզ յայտնում եմ, որ օգնէր իմ թագաւորին, իսկ իբրև խորհրդատու կարծում եմ, որ լաւ կլինի եթէ ձեռնպահ մնաք»։ Այսպէս երբ Տիգրանն ու Միհրգատը հաշտում են՝ Տիգրանը յայտնում է, որ ահա այդ է եղել գժտութեան, սառնութեան պատճառը։ Տիգրանն այս յայտնութիւնն անելով չէր կասկածում, թէ ինչպիսի վրէժինդրութիւն է գրգռում մի անազու

ըոյն ոգու մէջ։ Դեռ նոր էր պալատից դուրս եկել Միհրդատը, որ իսկոյն յարձակւում է Մեղրօգորոսի վրայ և սպանում նրան։ Լուր են տարածում, թէ զոհը վախենալով պատժից ինքն իրեն սպանել է։ Տիգրանը չափազանց զղաց իւր արած անզգուշութեան վրայ, շատ ուշ մըտաբերելով Միհրդատի նրա դէմ ունեցած հին ոխը. Միհրդատն արդէն կասկածում էր Մեղրօգորոսի վրայ։ Տիգրանը գոնէ նրա հոգին հաշտեցնելու համար, հրամայեց մեծ յուղարկաւորութիւն կատարել։ Թագուհի Կլէօպատրան էլ, որը շատ աւելի երիտասարդ էր քան թէ իւր ամուսինը և եռանդուտ մի անձնաւորութիւն լինելով՝ անշուշտ շատ էր աշխատել հաշտութեան համար, շուտով առիթ ունեցաւ նմանելու իւր ամուսնուն. նա ոչ պակաս փառաւոր յուղարկաւորութեամբ պատւեց պալատից հեռացած Ամֆիկրատէս հոետորի մահը։

Ինչպէս երկում է, Միհրդատն ու իր աղջիկն Հելլէնիզմի առաջին սահմիրաներն են եղել Հայաստանում. անշուշտ սրանց ազգեցութեան տակ էր, որ Տիգրանը աշխատում էր Հայաստանը յոյներով բազմամարդ դարձնել. Սակայն և այնպէս՝ բացի Հայաստանի հետ նոր միացրւած նահանգներից—Ասորիքը, Կիլիկիան, Մուկոնիան (Միջագետքի հիւսիսը, Տիգրիսի վրայ)՝ հայկական կայսրութիւնը բացառապէս տոգորւած էր պարսկական պրոտեցիաներով։ Հայաստանը պահում

էր իր բարբարոս աւատականութեան բնոյթը. «ազնւականութիւնը, որը պետութեան մէջ միակ դեր խաղացողն էր», ապրում էր որսորդութեան, պատերազմների և երկարատև քէֆերի, խնճոյքների համար... իշխանը պարոնների (barons) նման իւր օրերն անց էր կացնում որսորդութեամբ, արդարադատութեան գործերովն հարեմի հաճոյքներով, այն հարեմի, որը շատ բազմամարդ էր և թագաւորի ծերութեան ժամանակ տարօրինակ անակնկալներ էր պատրաստում։ Ինչպէս Արևելքում միշտ տեղի է ունենում, պալատի օրինակը ազգում էր երկրի վրայ և նըրան քաշում դէպի աւելի բարձր քաղաքակըրթութիւն, պալատը յունական թատրոնի ճաշակ ունէր... երիտասարդ հայ իշխանները կրթւում էին յունական ձեռվ. սրանցից մէկը՝ ապագայ Արտաւազդ թագաւորը՝ դարձաւ աչքի ընկնող նշանաւոր յունարէն գրող։ Եթէ հայոց կայսրութիւնը կանգուն մնար՝ կասկած չկայ, որ նա շատ շուտով կը հելլէնանար»*)։

Սակայն պէտք էր Լուկուլլոսին դիմադրել, Տիգրանը կարծում էր ինքը բաւականին գօրեղ է և կարող է մենակ նրան հալածել։ «Նրա կայսրութիւնը տարածում էր կուր գետից մինչև Յորդանանի ափերը, Մարաստանի լեռների փէ-

*) Թ. Ռայնախ վեր. յիշ. էջ 345.

շերից մինչև կիլիկեան Տաւրոսի ստորոտները. այս շէնքը, որ քսանուհինդ տարիների ընթացքում էր կառուցւել, ոչ մի համասեռ բան չունէր. դրացի պետութիւններից մի—մի բան խլել և իրար հետ վատ կերպով միացրել, շաղախել էին։ Նահանգներից շատերը մնացել էին կիսանկախ թագաւորութիւններ, որոնք կայսրութեան հետ կապւած էին միմիայն պայմանագրերով, որոնց հիման վրայ պէտք է զօրք տային գերիշխանին։ «Այս կայսրութիւնը հիմնւած էր մի բանակի վրայ, որը նոյնքան այլասեռ էր, որքան և ինքը։ Պարոնների կամ հայ մեծատունների տւած զօրքերը կազմում էին բանակի կորիզը, սրանցից էր կազմում ծանրաշէն հեծելազօրքը—Կատափրականները։ Կովկասի զանազան տեղերը, յատկապէս Աղւաններն ու Վրացիները տալիս էին այս միենայն տեսակի հեծելազօրքից. այն ինչ իբերները նիզակաւոր հեծեալներ էին տալիս։ Ատրպատական—Մարաստանի թագաւորը, որը իւր աղջիկը տւել էր Տիգրանի որդուն կնութեան, պարտական էր ուղարկել 40,000 հետեւակ և 10,000 հեծեալ^{*)}: Կային նաև ուրիշ նիզակաւոր հեծեալների գնդեր։ Մարտերից (Աւրմիոյ լճի և Կորդւաց լեռների միջև հաստատւած ժողովուրդը), Արաբ Բետուէններից և Կորդա-

*) Ստրաբոն XI, 14, 6.

ցիներից, որոնք ճարպիկ և հանձարեղ էին դիրքերը պահելու, ամրապնդելու և այդտեղից յարձակւելու և վերջապէս՝ բազմաթիւ Հելլէններ, որոնք հրաւիրւած էին իրեն վարձկան զինւորներ։ Տիգրանին միջոցներ չէին պակասում այս ահազին բանակը պահելու համար։ Միհրդատի պէս նա իւր երկիրը ծածկել էր ուժեղ և հարուստ կազօֆիլասիներով։ Սրանցից կարելի է յշել յատկապէս Օլանէն և Բաբուրոսն՝ Արտաշատի շրջականներում, որոնք հիւսիսում գործող զօրքին պէտք է պաշտը հասցնէին, ապա հարաւում՝ Եփրատի վրայ շինւած Արտագերսը։ Սրանցից զատ՝ Տիգրիսի վրայ գտնւած բերդերը—Մարեզա, Սատալկա, Պինակա՝ հայ գարնիզոնով լցրեց։ Գալով Պոնտոսի թագաւորին՝ նա ստացաւ 10,000 հեծեալից բաղկացած մի գունդ իւր թագաւորութիւնը նորից յետ խլելու համար։

Տիգրանը վստահ լինելով իւր այս ոյժի վըրայ, կարծում էր, որ եթէ Լիկայոնիան գրաւի, մեծ հարւած կը կարողանայ հասցնել, ուստի պատրաստում էր Կիլիկիայի վրայով մտնել այդտեղ։ Լուկուլլոսը շատ զարմացաւ, երբ լսեց այս որոշումը, որովհետեւ, ասում էր նա, եթէ հայերը ուզում էին հռոմի դէմ կռւել, ինչու Միհրդատին չօգնեցին այն ժամանակ, երբ նա դեռ ուժեղ էր, ինչու համար թողեցին, որ Միհրդատն ընկնի և յետոյ, ի՞նչպէս է լինում, որ սրանք

մտածում են իրենք իրենց գցել կորստեան անգունդը։ Զօրավարն այսպէս էր խօսում, որովհետև վստահ էր իւր յաղթութեան վրայ, մասւանդ որ Սինոպը ընկճելով (70 թ. Ք. ա.) տէր էր դարձել Պոնտոսին։ Առանց ժամանակ կորցնելու, նա 6,000 մարդ թողեց իւր տիրապետած երկիրները պաշտպանելու և մնացած ուժով դուրս եկաւ Տիգրանի առաջ՝ նրա ճանապարհը կտրելու համար, նա կտրում, անցնում է Կապաղովիան և հասնելով Եփրատին, Թոմիզաբերդը գրաւում է՝ տալիս Կապաղովիային։ Գետի ջուրը բարձր էր, բայց Լուկուլոսը չէր ուզում թռուցիկ կամուրջ շինել՝ ժամանակ չկորցնելու համար։ Երեկոյեան դէմ ջուրը նւազեց և գիշերն այսքան ցածրացաւ, որ գետի դաշտը փոքրիկ լճեր ու կղզիներ էր ներկայացնում*): Զօրքը այս երեսոյթը համարում էր մի բարեյաջող նշան զօրավարի յաջողութեան համար, որովհետև երբէք այս տեսակ երեսոյթ տեսած չլինելով, կարծում էր, որ գետը հնագանդում է նրան։ Զօրքը հեշտութեամբ անցնում է գետը և միւս ափին գտնում բազմաթիւ հորթեր, որոնք ազատ ճարակում էին։

*) Հայերը պնդում են, որ այս յանկարծակի փոխութիւնները յաճախակի են պատահում, անձրևներից կամ ձիւն հալւելուց այդ շրջանում գետերը յորդում են, լեռների վրայ երբ յանկարծ ցուրտ է լինում՝ գետերը ցամաքում են։

Այս կենդանիները, որ նւիրւած էին պարախիկ աստւածուհի Արտեմիսին, պաշտում էին նաև հայեցից։ Այս կենդանիներն վերոյիշեալ աստւածուհու կնիքով էին զարդարւած, որ մի կանթեղի պատկեր էր ներկայացնում։ Նրանք պէտք է զոհւէին այդ աստւածուհուն։ Արանք վարժւած լինելով մարդկանց յարգանքին՝ խոնարհաբար վղերնին երկարացնում էին, որպէսզի բոնեն։ Լուկուլոսը մի ցուլ է զոհում Եփրատին և հետեւեալ օրը բանակը վերցնում։ Այնուհետև անցնում է Ծոփաց աշխարհով. աշխատում է չնեղել ժողովրդին, որը հաճութեամբ հնագանդում է և հիւրասիրութիւն ցոյց տալիս։ Զինւորներն իրենց զօրավարից թոյլտութիւն են խնդրում կողոպտելու մօտակայ մի կազօֆիլասի, ուր կարծում էին թէ գանձեր կգտնեն, սակայն Լուկուլոսը թոյլ չի տալիս և հեռուում։ Տաւրոսը ցոյց տալով ասում է. «այնտեղ մի դղեակ կայ, այդ դղեակը պէտք է գրաւել, կազօֆիլոսին արդէն իրենց տիրապետած շրջանումն է գտնւում»։ Նա շտապում է շուտով Հայաստանի խորքերը մտնել. անցնում է Տիգրիսը՝ Տիգրանակերտի վրայ յարձակւելու համար։ Տիգրան բոլորովին չէր սպասում կայծակի արագութեամբ կատարւած մի այսպիսի շարժման։ այնպէս որ նա կատաղեց, երբ լսեց այդ բանը և անհասկանալի բարբարոսութիւններ գործեց։ Որպէսզի իւր դուրս գալուց յետոյ այլիս

ոչ մի վախ չունենայ Ասորիքից՝ Տիգրան Մելինէ թագուհուն հանում է իւր Զեվկմա բանտից և բանտարկում կամօժէնի Մելկիայում։ Առաջին մարդը, որ Տիգրանին լուր տւեց, թէ հոռմայեցիները գալիս են, կախաղանի արժանացաւ։ Սատարօրինակ միջոց էր տեղեկութիւններ հաւաքելու համար և ի հարկէ սրանից յետոյ այլիս ոչ ոք չէր համարձակւի նրան այդ մասին որևէ բան ասելու, այսպէս՝ Տիգրանը մասում էր անտեղեակ այն հրդեհից, որը բռնկւել էր իր շուրջը։ Տիգրանի պալատականները շողոքորդութեան տարափ էին տեղում իրանց թագաւորի գլխին, հաւատացնում էին նրան, որ Լուկուլլոսը չի համարձակւի այդ տեսակ մի քայլ անել. նրանք ասում էին, որ հերոս կլինի Լուկուլլոսը, եթէ մենակ կարողանայ երկրի միւս կողմում, էփիսում Տիգրանին սպասել. Լուկուլլոսն այդ յանդկնութիւնը չի ունենայ, մատածելով, որ հազարաւոր հայ մարտիկների կայծակը կճայթի իւր գլխին. Պլուտարքոսը, որը այս միջադէպը մէջ է բերում, նկատում է, որ յաջողութիւնից կուրացած մարդը չէր կարող իրականութիւնը տեսնել. Եա հետեալ կերպով է շարունակում իւր պատմութիւնը. Տիգրանի ամենասիրելի բարեկամը Միտրօբարզանը միայն համարձակութիւն է ունենում յայտնելու ճշմարտութիւնը, սա իւր յանդկնութեան համար հրաման է ստանում 3,000 հեծեալ-

ներով և բազմաթիւ հետեակ զօրքով թշնամու առաջը կտրել, կենդանի բռնել իմպերատօրին և նրա զօրքը ջարդել մինչև վերջին զինւորը. Եթէ այս յարձակումը եռանդով, կորովով առաջ տարւէր, գուցէ յաջողողութիւն ունենար, որովհետև հոռմայական զօրքի մի մասը բանակ էր դրել, իսկ միւս մասը ազատ էր թողնուած։ Ճանապարհի պահապանները լուր են բերում բարբարոսների գալու մասին, շէֆը մեծ ջանք է թափում իւր բանակը կարգի բերելու, որովհետև կարծում էր, որ գեռ իւր զօրքը կարգի չդրած՝ կարող է ամբողջապէս կոտորւել. Որպէսզի կարողանայ ժամանակ վաստակել, Սէքստիլիուսին 1,600 հեծեալով և մի փոքր հետեակ գնդով, իբրև առաջապահ, ուղարկում է թշնամու դէմ, պատիրելով թշնամուն առաջխաղացումը կանդնեցնել՝ մինչև ինքը իւր բանակը կարգի դնի, ամբացնի։ Սէքստիլիուսը ցանկանում է հեռւից կանգնեցնել հայերին, սակայն՝ ստիպում է ճակատ մրցել. Այստեղ ընկնում է Միտրօբարզանը, և նրա ամբողջ զօրքը թիկունք է դարձնում և յետոյ փախչում. փախուստի ժամանակ զօրքի մեծ մասը ոչնչանում է, շատ քչերն են ազատւում (69 թւի ամառը)։ Այլևս առանց երկար սպասելու Տիգրանը թողնում է իւր սիրելի մայրաքաղաք Տիգրանակերտը Մանսէոս անունով մէկի պաշտպանութեանը և ինքը բաշւում Տաւրոս լեռները,

ուր բոլոր նահանգներից իւր շուրջն է կենարունացնում ամբողջ ոյժը: Լուկուլոսն այնքան էլ ուշադրութիւն չէր դարձնում այն հանգամանքի վրայ, որ Տիգրանը կարող էր ժամանակ վաստակել. նա ուղարկում է Մուրենասին, որ Տիգրանինորակոչների ճանապարհը կտրի, իսկ Մէքստիլիուսին Արար հնծելազօրքը ջարդելու, որ արդէն ճանապարհ էր ընկել. վերջինս արաբների վրայ է հասնում այն ժամանակ, երբ նրանք զբաղւած էին իրենց վրանները կանգնեցնելով, սոսկալի ջարդ է տալիս և քշում նրանց, միւս կողմից՝ երբ Տիգրանը անցնում էր մի նեղ պարանոցով՝ Մուրենասը այս յարմար բոպէին յարձակւում է հայերի վրայ, շատ զօրք ջարդում, շատերին գերում, իսկ թագաւորը իւր ամբողջ ունեցածը թշնամու ձեռքը թողնելով՝ հաղիւ փախչում, աղատում է: Լուկուլոսը սրանից յետոյ հաւաքում է իւր զօրքը, ուղղակի Տիգրանակերտի վրայ է արշաւում և քաղաքը պաշարում: Թէ որտեղ է շինւած եղել Տիգրանի այս մայրաքաղաքը, որը հէնց իւր հիմնադրի կենդանութեան ժամանակ էլ կործանուեց, դեռ ճշգրիտ կերպով որոշւած չէ: Պ. Թ. Ռայնախը կարծում է, որ դա շինւած պէտք է լինի Մծբինի հիւսիս, հիւսիս-արևմտեան կողմում՝ Միտիյատի շրջականերում:

Սակայն յայտնի է, որ այդտեղը շատ լաւ էր ընտրւած, նա տիրապետում էր Միջագետքի-

հիւսիսային կողմի վրայ: «Տեղի այդ ընտրութիւնը քաղաքական և կուլտուրական տեսակէտներով էր եղել. հին մայրաքաղաք Արտաշատն այսուհետեւ արդէն շատ էր տարակենտրոն, Անտիոքում Սելևկեանները կարող էին ապստամբւել, միւս կողմից Տիգրանը կարող էր վտանգի ենթարկել իւր բարոյական և նիւթական յարաբերութիւնները ժառանգական այն նահանգների հետ, որոնցից ստանում էր իւր ամբողջ ոյժը: Տիգրանը ուղիղ մէջտեղն ընտրեց... Քաղսքի գիրքը ամեն կողմից յարմար էր, ամեն կողմից առաւելութիւններ ունէր. հիւսիսային կողմունն էր Տաւրոսի ճիւղ կազմող Մասիուս լեռը, մի ընդարձակ կրային պլատո, որի բլուրները նըմանւում էին քարացած մի ծովի ալեծուփ կոհակներին: Հարաւային կողմից տարածւում էին Միջագետքի միօրինակ, անսահման դաշտավայրերը. այս երկուսի միջև, անապատի և լեռան սահմաններում տարածւում էր մի արգաւանդգաւառ, որը ոռոգւում էր Տիգրիսի ճիւղերով և Եփրատի երկրորդական ճիւղերով. սրա միջով էր անցնում կարաւանների Մեծ ճանապարհը, որը Զեվկմայի, Եղեսիայի, Մծբինի, Արբելայի միջոցով անցնում էր և իրար հետ միացնում Ասորիքն ու Մարաստանը: Նոր մայրաքաղաքը՝ Տիգրանի քաղաքը՝ կարծէք մոգական գաւազանի ոյժով էր գետնից բուսել: Պետութեան առաջնակարգ ըն-

տանիքները իրենց ստացւածքներն յարքունիս
գրաւելու վախից, ստիպւած տեղափոխւեցին այս
նոր մայրաքաղաքը։ Ասորեստանցիները, Աղիա-
բէնները, Կորգւացիներն և շատ ուրիշներ, ուժով
այստեղ փոխադրւեցին, ընդամենը երեք հարիւր
հազար բնակիչները, գեռ չհաշւած կիլիկիայի և Կա-
պագովկիայի յոյներին, որոնց Տիգրանը թէ Տիգրա-
նակերտում էր բնակեցրել և թէ Մարաստանում։
«Տիգրանակերտը իսկապէս վերակենդանացումն
էր Ասորեստանեան և Բաբելական հին հսկայա-
կան քաղաքների։ Նայայտնի էր իր 50 բազկաչափ
բարձր աղիւսեայ պարիսպներով, որոնց հաստու-
թիւնը այնչափ էր, որ կարելի էր ախոռներ ու-
նենալ պատերի մէջ, իր անընկալի միջնաբեր-
դերով, պարիսպներից գուրս շինւած հրաշալի պա-
լառներով և ամբողջ շրջակայրում տարածւած
պարտէգներով, որսի համար պատրաստւած տեղե-
րով և շտեմարաններով» *): Քաղաքը չափազանց
հարուստ էր և զարդարւած ամեն տեսակ զար-
դանկարներով. բնակիչներն իրենց կարողութեան
չափով մըցում էին թագաւորական շքեղութեամբ
ապրելու մէջ և նախանձախնդիր էին մայրաքա-
ղաքը զարդարելու գործում։ Լուկուլլոսը մտա-
ծելով, որ Տիգրանը չէր կարող անտարբերու-
թեան մէջ մնալ և պէտք է վար իջնէր ճակատ
մղելու, ուստի պաշարման շղթան գնալով աւելի

*) Թ. Ռայնախ. վեր. յիշ. 345—346

էր նեղացնում։ Բայց քանի որ այս ճակատա-
մարտը Տիգրանակերտի պարիսպների տակ տե-
ղի չունեցաւ, ուստի գժւար է եղրակացնել թէ
այդ քաղաքի իսկական տեղը որտեղն է։
Այս դէպքերի պատճառով Տիգրանը կան-
չում է Միհրդատին, որը կըկին վերահաստատ-
ւել էր իւր թագաւորութեան մէջ։ Միհրդատը
ճանապարհ է ընկնում, բայց Տաքսիլին ուղար-
կում է խնդրելու թագաւորին, որ ոչինչ չանի
մինչև ինքը կը հասնի։ Նա մտածում էր, որ
լաւ կը լինի ժամանակ վաստակել և կուկուլոսի
պաշարը կտրել հեծելազօրքի միջոցով։ Տաքսի-
լին յանձնարարել էր թագաւորների թագաւո-
րին մտածել տալ հոսմայեցոց ոյժի մասին, որը
մինչև այդ ժամանակ անպարտելի էր մնացել։
Տիգրանը նախ հաւանութիւն է տալիս Տաքսիլի
ասածներին, բայց երբ իւր շուրջը հաւաքւած.
Է տեսնում հայոց ամբողջ զօրքը, Կորդւացինե-
րի, Մարաստանի և Աղիաբէնի զօրքը, Արաբ
հովիւների, «Բաբելոնեան ծովի» հեծելազօրքը,
կասպիացիների, վրացիների, աղւանների և վեր-
ջապէս՝ Արաբսի հովտի բազմաթիւ թագաւորնե-
րի գնդերը, նրա գոռողութիւնը յաղթանակում
է, նա ուզում է, որ գործի ամբողջ փառքը
ինքը միայն վաստակի, իսկ Միհրդատին ոչինչ
չը մնայ, նա վճռում է մենակ յարձակւել հոռ-
մայեցիների վրայ։ Բոլորը գւարճանում էին,

խորհուրդների ժամանակ կատարելապէս վստահութիւն էին յայտնում յաղթութեան համար, և ինչպէս միշտ՝ բարեարոսները սոսկալի սպառնալիքներ էին կարգում հոռմայեցոց։ Տաքսիլը յուսահատւած գերագոյն ձիգեր թափեց արշաւանքն ուշացնելու. որի համար դաւադրութիւն սարքեցին սպանելու Տաքսիլին՝ ենթադրելով, որ Միհրդատը նրա միջոցով ցանկանում է Տիգրանին վերապահւած փառքն ինքը խել։ Արտաքին երեսոյթներից դատելով, կարելի էր կասկածել Միհրդատի երկդիմի հաշիւների վրայ. ինչու համար Միհրդատն ուշանում էր առանց պատճառի, այն ինչ շատ աւելի հեռու տեղերից արդէն բաւականին զօրքել էին եկել և խմբւել հայոց թագաւորի շուրջը։ Սակայն՝ այստեղ կարելի է մի հնարապէտ, խորամանկ նպատակ տեսնել։ Միհրդատը շատ լաւ գիտէր, որ եթէ ինքը հասնի Հայաստան՝ այլ ևս անհնարին կը լինէր Տիգրանին սպասել տալ և չը թողնել շուտով ճակատամարտ մղել. նա յօյս ունէր Տիգրանին սպասել տալ իւր բացակայութեամբ. և նա այս անում էր, որպէսզի առանց ճակատամարտի Տիգրանակերտի առաջ կուկուլոսին նեղը լծի, չորս կողմից ճանապարհները կտրելով և ձմեռը քաղցից ընկածելով նրան։

Տիգրանը հեռու էր այս խոհեմ քայլից. նոր վստահ էր յաղթութեան վրայ. քանի որ տէր

էր 20,000 ազեղնաւորների և պարսաւորների, 55,000 հեծեալների—որոնցից 17,000 երկաթեայ զրահներով, 150,000 հետեակների, որոնց մի մասը փալանգներով էր շարժում, իսկ միւս մասը սիւներով, կոլոններով, որոնց առջնից էլ ընթանում էին 36,000 ռահվիրաներ։ 69 թւի ամառուայ վերջին այս ահազին մասսան ճանապարհ է ընկնում, անցնում է Տաւրոսը և նրա հարաւային փէշերի վրայ հանդիպում է հոռմայեցիներին, որոնք մայրաքաղաքն էին պաշարել. քաղաքի բնակիչները նկատում են Տիգրանի գորքի մօտենալը, ուրախանում, ծափահարում, պարում են, բարձրանում պարիսպների վրայ, սպառնում թշնամուն՝ ցոյց տալով հայոց բանակը*)։

Տիգրանն ամենից առաջ մտածում էր իւր հարեմի և գանձերի մասին, նա յաջողում է պաշարման շղթան կտրել տալ և գրանց ազատել։ Իսկապէս կուկուլոսը միայն մի կէտում ամուր գիրը ունէր. մի արւարձանի պալատում, որը ամենից առաջ Սեքստիլիուսն էր վերցրել։ Քաղաքի շուրջը բազմաթիւ անցքեր բաց էին մնացել. քարնիզոնը, որ մասսամբ վարձկան յոյներից էր բազկացած, ամեն տեղ յաջողութեամբ պաշտ-

*) Պլուտարքոս, Կուկուլոս, 39:

պանւում էր. յետ էր մղում հռոմայեցիների գրոհները նետերի մի տարափով և նրանց պաշարման մեքենաներն այրում՝ բոցավառ կուպը կոհակներով:

Լուկուլլոսը խորհուրդ է կազմում. պէտք է վճռէին Տիգրանի առաջ գնալ՝ թէ պաշարումը շարունակել: Զայները բաժանւում են, սակայն Լուկուլլոսը մի յանդուզն որոշումով համաձայնութիւն է կայացնում. որոշում է Միւրինասին 6,000 հետիոտն զինւորներով թողնել պաշարման տեղում, իսկինքն ստանում է 24 գումարտակներ, իր ամբողջ հեծելազօրքը, նոյնպէս 1,000 աղեղնաւոր և պարսաւորներ ու գնում բանակ դնում թշնամու դիմաց՝ մի ընդարձակ դաշտում, որի միջով հոսում էր գետը: Տիգրանը չի կարողանում զսպել իւր արհամարհնքը, տեսնելով հռոմայեցոց զօրքի փոքր քանակը:

Տիգրանին շըջապատող իշխանները նրա հետ միասին ծաղրական ակնարկներ էին անում հռոմայեցոց հասցէին, առաջուց աւարը վիճակ էին ձգում: Այդ իշխանները խնդրում էին թագաւորին, որ իրենց վստահանայ իւր զօրքերը և ինքը լեռան վրայ նստած հանդիսատես լինի միայն. ինքը թագաւորը յարմար բառեր էր գտնում զրութիւնը որոշելու. նա ասում է. «Եթէ այս օտարականները եկել են՝ ինձ մօտ մի պատգամաւորութիւն ուղարկելու՝ շատ-շատ են, իսկ եթէ եկել

են իմ դէմ կռւելու՝ շատ քիչ ենք: Սակայն՝ այս խօսքերում չի նկատած ամենաէականը՝ քաջութիւնը, յանդգնութիւնն ու տակտիկան: Հետեւալ օրը Լուկուլլոսը կարգի է դնում իւր լաւ կըրթւած բանակը, որի մաքուր զէնքերը փայլվում էին արեի տակ: Պէտք էլ գետը անցնել թշնամուն պատահելու համար. արեմտեան կողմում գետի մէջ մի հուն են գտնում և այդ կողմից առաջ են շարժւում: Տիգրանը տեսնելով այդ կողմից հռոմայեցիների առաջանալը՝ կանչում է Տաքսիլին և ասում. «Հետ տեսնում ինչպէս են փախչում, նրանք թիկունք են գարձրելու: Ճանապարհները ցոյց տալու մէջ ծերացած Տաքսիլը պատախանում է. «Ես շատ կը ցանկայի որ այդպէս լինէր, բայց երբէք հռոմայեցիներն այդպիսի փայլուն սպառազինութեամբ ճանապարհ չեն գնում. ճանապարհ գնալիս նրանց վահանները փայլ չեն արձակում, սաղաւարտները իրենց ամաններումն են, սրերը՝ իրենց կաշեայ պատեանում: Այս փայլը կռւելու դիտաւորութիւն է ցոյց տալիս, սակայն ահա նրանք մեր վրայ են ուղղւում»: Հազիւ այս խօսակցութիւնը վերջացել էր, երբ նկատում են, որ զօրքի ճակատի առաջին շարքերն արդէն գետն անցել են: Տիգրանն սթափւում է իր երազից. նա բացագանչում է. «իսկապէս սրանք մեր վրայ են գալիս»: Նա կարգի է բերում իւր փալան գները և

ինքը տեղաւորւում մէջտեղում. իւր աջկողմում կանգնեցնում է Մարերի թագաւորին, իսկ ձախ կողմում՝ Աղիաբէնի թագաւորին, այսուհետև բազմաթիւ ծանրազրան հեծեալներով էլ ամրանում ու սպասում է յարձակման:

Պաշտպանւող այս մասսան ազդում է հռոմայեցիների վրայ, որոնք կուկուլոսին նկատել են տալիս, թէ այդ օրը վատ է իրենց համար, ոքովինետե այդ միենոյն օրում կիմերները ջարդեցին Սկիպիոնին: Հռոմայեցի զօրավարը պատասխանում է. «Ես ուզում եմ այդ օրը Հռոմի համար տօնական օր դարձնել»: Այդ օրը 69 թւի Հոկտեմբերի 6-ն էր: Կուկուլոսն իւր հակառակորդի նման չի թագնուում. այլ հագնում է իւր փայլուն զրահները և ծիրանի վերաբկուն, սուրը դուրս քաշում պատեանից, արեի տակ փայլփլեցնում է և իւր մարդկանց առաջնորդում կուելու:

Հայերի այս զարհուրելի բազմութիւնը դիմագրում էր մի բլրի ստորոտում, որը չորս փարսախ տարածութիւն ունէր զառիվայրը հաշւելով և որի վրայ տարածում էր մի լայն փոքրիկ հովիտ: Լուկուլոսն իւր թրակիական և կալատեան հեծելազօրքին հրամայում է կողքից յարձակւել հայոց հեծելազօրքի վրայ, որպէս զի վերջինս ստիպւի դիրքը թողնել—հեռանալ, որից յետոյ

նոր սրով կոտորել: Հայ հեծելազօրքը դիմագրութեան մի ոյժ ունէր միայն—զրահներ՝ հարւածներին դիմանալու և տէգեր՝ հարւածներ տալու համար: Սրանից դուրս նա ոչինչ չէր կարող անել, ոչ ուրիշ միջոցով պաշտպանւել և ոչ էլ հարւածել. նրանց ահազին, ծանր զրահները կաշկանդել էին թէ մարդկանց և թէ ձիերին: Հռոմայեցի զօրավարն երկու լեգէօններով զրոհ է տալիս, որպէս զի ուղղակի Տիգրանի պահապան գունդը ճեղքի: Երբ Լուկուլոսն այնքան բարձրանում է զառիվեր, որ բոլորին տեսանելի է դառնում, սկսեց զոռալ. «Ով դուք, Հռոմի դաշնակիցներ, յաղթութիւնն արդէն տարել ենք»: Նա յետեկի կողմից հայոց հեծելազօրքին բռնում է և իւր հետևողներին հրամայում է նիզակ չը գործածել, այլ սրով հարւածել ձիերի ծնկների յետեկի կողմը, միակ մասը, որը զրահից ազատ էր մնացել. Աւելորդ էր այդ հրամանը. թշնամին երկար չի դիմանում, լեգէօնների զինուրները սողոսկում են ձիերի մէջ և խառնաշփոթութիւն ձգում, հայ զրահակիր հեծելալները ոչ մի հնարաւորութիւն չունէին իրենց նիզակները գործածելու: Սրանք սարսափի աղաղակներ են արձակում և նժոյգների սանձերն արձակած փախուստի են զիմում. ձիերը փախչում են, սակայն զրահներով ծանրաբեռնւած լինելով հայերը չեն կարող ազատւել. նրանք Թրակիացիներից և կալատէ ացիներից

սաստիկ ջարդ էին կրում: Տիգրանը շուտով սրանց օրինակին է հետևում. իւր խելակորոյս փախուստի ժամանակ պատահում է իւր որդուն, լալով նրա գլխին է դնում իւր թագը և խորհուրդ է տալիս ուրիշ ճանապարհով փախչել: Արդեօք այս բանը նրա համար էր, որ եթէ ինքը սպանւի կարողանայ յաջորդ ունենալ: Երիտասարդը չըհամարձակւեց կրել այդ թագը, գուցէ մասսամբ կէս յարգանքից, մասսամբ սպանւելու վախից. յետոյ յանձն առաւ, բայց չկարողացաւ խուսափել յաղթողների հետամտութիւնից. նա բոնւում է փախստականների խառնուրդի մէջ և յանձնուում կուկուլոսին, որը մի անգամից արդէն տէր է դառնում Հայաստանի թագին: Պլուտարքոսը, որին բայլ առ քայլ հետևում ենք, պատմում է, որ այս կուում 100,000-ից աւելի ոտաւոր զինւորներ են ընկնում և համարեա բոլոր այն հեծեալները, որոնք դրանց հետ միասին կուում էին, այն ինչ Հոռմայեցոց կողմից հարիւր վիրաւորւած են լինում և հինգ հոգի սպանւած: Այս լեգենտան ճշմարտութեան համապատասխան չէ. նա չի համապատասխանում նաև Հոռմայական այն աղբիւրներին, որոնց յետոյ ենք պատահում: Մեր այս հեղինակը մէջ է բերում Անտիոքոս Փիլիսոփայ կոչւած մէկի վկայութիւնը, որը իւր դիցաբանութեան գրքի մէջ ասում է, թէ արեն երբէք այդ տեսակ բան չէր տեսել:

Ստրաբոն արտասանել է հետեւեալ խօսքերը. «Հոռմայեցիներն իրենք իրենց անպատւեցին մի այսպիսի վախկոտ, ընկած զօրքի դէմ գործադրելով իրենց բանակը», իսկ Տիտ Լիվը «Հոռմայեցիներն երբէք այսպիսի ճակատամարտ չէին մղել այդքան քիչ զօրքով ահազին բազմութեան դէմ, որովհետեւ յաղթողները յաղթողների քսաներորդական մասն անգամ չէին կազմում»: Հոռմայեցի ամենանշանաւոր զօրավարներն ու ամենաճարպիկ ուազմագէտները գովում են Լուկուլլոսին, որը կարողացէր է տապալել երկու հզօր և յայտնի թագաւորների, Տիգրանին, որը կայծակի արագաշարժութիւն ունէր, և Միհրդատին, որը անընկճելիօրէն համբերատար էր:

Հոռմայեցիներն հետամտեցին փախչողներին մինչև 20 ըիլոմեթր տարածութիւն և երբ արդէն մութն ընկել էր, նոր Լուկուլլոսը հրամայում է կողոպուտն սկսել: Ասիական բանակը կորցրել էր 30,000 մարդ (*Օրոչ*, VI, 3, 6): Օրոչն ու Ֆրօնտին սխալւում են կարծելով, որ Միհրդատը այս պատերազմին ներկայ է եղել:

Սակայն մւր էր նա:

Միհրդատը չէր շտապել, որովհետեւ միշտ էլ Լուկուլլոսին տեսել էր դանդաղ գործելիս, ապա թէ ոչ շուտով կը կարողանար միանալ Տիգրանին. այսպէս՝ այս շւարած մնաց, երբ ճանապարհին պատահեց փախչող հայերին. նա իւր աչքերին չէր

հաւատում, և համոզւելու համար ինքը անձամբ ուղեց տեսնել մերկ վիրաւ որներին. կամաց-կամաց նա մանրամասնօրէն տեղեկանում է մեծ աղէտի բոլոր մանրամասնութիւնները, որից յետոյ շտապում է շուտով հասնել իւր աներոջ. այս հանգամանքն արդէն ցոյց է տալիս, որ Միհըրդատն անկեղծ էր իւր դիտաւորութիւնների մէջ։ Նա ծերունուն համարեա թէ մենակ է գանում, անձնատուր եղած մռայլ յուսահատութեան։ Որպէսզի նրան մի նոր հարւածով աւելի ևս չընկճի՝ ձիուց վար է իջնում, նրա հետ միասին լաց լինում, իւր թիկնապահներով նրան շրջապատում, ամեն միջոց գործ դնում նրան ոգի ներշնչելու, օգնում նորից զօրք հաւաքելու համար։ Սրանք յաջուռում են 40,000 հետեւակ զօրք հանել ինչպէս Պլէկօն Տրալացին է ասում (812), իսկ ըստ Ապպիէնի 105,000 հոգուց բազկացած մի բանակ են կազմում, որը կըթւում է Հռոմայական ուղղութեամբ։ «Աշխատում են պատերազմին կրօնական ու ազգային կուի բնաւորութիւն տալ, որպէսզի գրանով կարողանան արևելեան մոլեւանդութիւնը գրգռել. այս նորատակով լուր են տարածում թէ Լուկուլլոսի արշաւանքի վերջնական նպատակն է Ասիայի ամենահարուստ և ամենասիրելի տաճարներից մէկի կողոպտելը (Կիկերօն. Pro Lede Manilia. IX, 23, 14, հաւանօրէն Ստրաբոնի յիշած Բարիսի տաճարը XI, 14, Արտա-

շատից Եկբատան տանող ճանապարհի վրայ) .. Ոչ Տիգրանը, ոչ Էլ Լուկուլլոսը չկարողացան պարթեաներին չեզոքութիւնից դուրս բերել» *):

Տիգրանակերտում Հելէններն ու ամեն տեսակ ծագում ունեցող բարբարոսները կուի են բռնւում. Հելէնները լսելով իրենց բռնակալի պարտութիւնը, վրէժինդրութեան ոգով վառւում են. առանց այդ էլ այդ աքսորականների մէջ միշտ էլ կենդանի էր մնացել վրէժի ոգին. դաւագրութիւն են սարքում քաղաքի գոները թշնամու առաջ բաց անելու համար։ Լուկուլլոսը դրանցից գոները բաց անելու խոստումն է ստանում, իսկ ինքը խոստանում է այդ բանի համար բոլորին հայրենիք վերադարձնել. Յայդպիսով Լուկուլլոսը հեշտութեամբ տիրում է քաղաքին. վերցնում գանձերը, որի մէջ 8,000 արծաթ տաղանտ **) կարայդ փողը նա բաժանում է իւր զօրքի մէջ։ Իւրաքանչիւր օֆիցեր 800 դրախմ է ստանում։ Կողոպուտից յետոյ Լուկուլլոսին իմաց են տալիս, որ դերասանների մի մեծ խումբ են գերել. այդ խումբը քաղաքի պաշարումից առաջ էր եկել Բագոսի միստերիաները ներկայացնելու։ Տիգրանը սրանց ամեն կողմից հաւաքել էր իւր թատրոնը յունական ձևով կազմակերպելու համար։

*) Թ. Ռայնախ. Վեր. յիշ. 364—365.

**) (Մի արծաթ տաղանտն արժէ 5,600 ֆր. իսկ սուկին 56,000 քղ. մի դրախմ=70 սանդիմի)։

Լուկուլսս սրանց յանձնարարում է մի ներկայացում տալ ի պատիւ իւր յաղթութեան, յետոյ իւր խոստման համաձայն՝ Հելլէներին ուղարկում է իրանց հայրենիքը՝ ճանապարհի պաշար տալով նրանց։ Նա նոյնպէս այն բոլոր օտարականներին, որոնց Տիգրանը բերել էր իւր մայրաքաղքը բազմամարդ դարձնելու նպատակով, ուղարկում է իրենց տները։ Այս օտարականները խիստ երախտագէտ էին և Լուկուլսսին իրենց ազգի նոր հիմնադիրն էին անւանում։ Գալով տեղացի ազգաբնակութեան՝ տեսնում ենք, որ նա մտնում է Լուկուլսսի պաշտպանութեան տակ, Արաբների թագաւորը նրան է տալիս իւր բոլոր գանձերը, Ծոփաց երկրի բնակիչները մեծ պատիւներ են տալիս նրան, Կորդացիները նրան են յանձնում իրենց քաղաքները և զօրք տալիս։ Ապիւսն այս վերջինների թագաւոր՝ Զարքինէսի հետ դաշն էր կապել, որը չէր ուզում Տիգրանին հնագանդւել։ Տիգրանը սպանել էր տւել սրան իւր կնոջ և որդիների հետ միասին, երբ դեռ Հռոմայցիները Հայաստան չէին մտել։ Լուկուլսսն այս դէպքը յիշում էր և երբ այդ երկիրը մտաւ, առաջին գործն այն եղաւ, որ մի մեծ ու փառաւոր յուղարկաւորութիւն սարքեցի պատիւ զոհերի (69—68-ի ձմբան)։ Պարթևների թագաւորը սրան բարեկամութեան դաշն է առաջարկում։ սա ընդունում է և մարդիկ է

ուղարկում Պարթևների թագաւորի մօտ։ Լուկուլսսի մարդիկը թագաւորին գտնում են տատանւող վիճակում, որովհետեւ նա Տիգրանի հետ դաղանի դաշն էր կապել և նրանից ուզում էր Միջագետքն ստանալ իրու վարձատրութիւն Հռոմայեցիների դէմ իւր ցոյց տւած օգնութեան։ Այս լուրն ստանալով Լուկուլսսն իւր ոյժերը փորձում է Պարթևների վրայ դարձնել՝ Տիգրանին ու Միհրդատին արդէն յաղթւած համարելով։ Սակայն Լուկուլսսի լեկէօնները հրաժարում են այդ արկածախնդրութիւնից։ Նրանք ձմերում են Կորդաց երկրում և ամառը գալուն պէս ճանապարհ ընկնում դէպի Հայաստան։ Բայց ինչ մեծ զարմանք. Տաւրոսսի հարաւային կողմում հունձն արդէն հասել էր, իսկ հիւսիսային կողմում դեռ կանաչ էր։ Որպէսզի կարողանան սովի առաջն առնել, երկու թէ երեք անգամ յարձակուում են այն հայերի վրայ, որոնք ուզում էին նրանց ճանապարհը կտրել, փախցնում են այդ հայերին, կողոպտում և կործանում գիւղերը, տիրում Տիգրանի պատրաստած պաշարեղէնի շտեմարաններին, որից յետոյ արդէն կարող էին սպասել, մինչև որ բնութիւնը կհասցնէր իւր պըտուղները։ Միհրդատի խորհրդով հայերը խուսափում էին ճակատ մղելուց և ամրանալով լաւ պաշտպանւած մի բանակատեղում, սպասում էին ձմբան, երբ արդէն անհնարին կլինէր պատե-

բազմը։ Այս բանը նկատելով Լուկուլոսն իւր բոլոր ոյժերը հաւաքում է և դիմում՝ Արտաշատի վրայ, ուր փակւած էր Տիգրանն իւր որդիների և կանանց հետ։ Պատմում են, որ այս քաղաքի հիմնադիրը Անտիբալն է եղել։ Հոչակաւոր Կարթագինացին պարտութիւն կրելով՝ վախչում է Սելեկեանների պալատը։ սակայն՝ այնտեղ էլ իրան ապահով չիպում, որովհետեւ իւր ասպնջականը Անտիօքոս Գ. Ը Մագնեղիայի մօտ պարտութիւն էր կրել Հոռմայեցիներից, ուստի զնում է Հայաստանում գտնւած մի տեղ, որը կոչւում էր Արտաքսիաս *), այստեղ նա իբրև թէ շատ օգտակար բաներ է սովորեցրել բնակիչներին։ Անտիբալը խիստ գնահատելով այդ երկրի ռազմական լաւ դիրքը, մի հրաշալի դիրք է գտնում պաշտպանութեան համար։ այդ տեղը պատղաբեր էր, բայց անջրդի, այստեղ պէտք էր մի քաղաք չինել. և Անտիբալը կարողանում է համոզել Արտաշէսին, որ ձեռնարկի քաղաքի շինութեան, ցոյց տալով նրան բնութեան ներկայացրած բոլոր միջոցները։ Ասում են, որ թագաւորը գործն սկսում է և խնդրում Անտիբալին, որ աշխատանքը ղեկավարի. վերջինս յաջողում է շինել տալ մի մեծ և գեղեցիկ քաղաք, որը կոչւում է Արտաշէսի անունով։ Այս դիրքի վրայ վստահա-

*) Արաքսի վրայ, Արարատի հիւսիսային կողմում։

ցած՝ Տիգրանը փոխանակ պաշարումը համբերութեամբ տանելու՝ ուզում է թշնամու առաջխաղացութեան առաջն առնել։ իւր ամբողջ զօրքով դացութեան առաջն առնել։ իւր ամբողջ զօրքով դուրս է գալիս թշնամու առաջ և չորս օրւայ հեռաւորութեան վրայ պատահում էնրան։ Արածանի գետի մի կողմում Հայերն են կանգ առնում. իսկ միւսում՝ Հոռմայեցիները։ Լուկուլոսին յաջողուում է գետն անցնել և պատահել հայ հեծելազօրքին, որի առաջին շարքը քաջ նետածիկ Մետացիներն էին կազմում, իսկ երկրորդը՝ Վըրացիները, որոնք շատ քաջ էին և լաւ նիզակարացիները, վերջինների վրայ էր Տիգրանի ամբողջ ւորներ. վերջինների վրայ էր Տիգրանը ամբողջ յոյզը։ Սակայն այս բաջերը այդ օրը չըկարույցան դիմանալ լեզենների ոյժին և կարճ դիմադրութիւնից յետոյ վախուսակ դիմեցին, իւրենց յետեկից քաշելով մնացած բոլոր հեծեալները։ Բայց Տիգրանը թագնւած ուրիշ հեծելազօրք ունէր, որը շուտով դուրս է բերում. սրանք՝ մարդ և ձի՝ ծածկւած էին փայլուն զրահներով։ Լուկուլոսն իրան կորած է համարում. նա յետ է կանչում իւր հեծելազօրքին, որն ընկել էր է կանչում իւր հեծելազօրքի յետեկից. մի կատաղի կոիւ է տեղի ունենում հայ ազնւականութեան ամենառչակաւոր անձնաւորութիւնների և Հոռմայեցոց մէջ, որը վերջանում է դարձեալ Հոռմայեցոց մէջ, որը վերջանում է դարձեալ Հոռմէսական արծւի յաղթանակով։ Երեք թագահորները թուլամորթութեամբ վախուսակ դիմե-

ցին, առաջին օրինակ տւողն եղաւ Պոնտոսի հին առիւծը՝ Միհրդատը *), ինչպէս Պլուտարքոսն է վկայում, այնուհետև Տիգրանը նրա օրինակին հետեւց, և վերջապէս փախչում է նաև Մարերի թագաւորը: Երեսում է, որ Միհրդատը չէր կարող չուոմայեցոց քաջութեան դիմագրել: Լուկուլոսը մինչև գիշերը հալածում է փախչողներին, շատերին սպանում, մի մասը գերի բռնում և ահագին քանակութեամբ աւար ձեռք ձգում: Այս ամենամեծ յաղթանակը տարւած է 68 թւի Սեպտեմբերին: Բայտ Տիտ-Լիվի Տիգրանակերտի կը ուռում զօրքին սաստիկ ջարդ եղաւ, իսկ երկրորդ կուռում՝ շատ ազնւականներ գերի վերցւեցին: Թւում է, որ այս վերջին կուռում Հայերն իրենց նշանաւոր տակտիկան վերցրել էին Պարթևներից, սկզբում փախուստ ձեւացնել, ապա յանկարծ յետ դառնալ և ժանեալաք ու թունաւորւած նետեր տեղալ թշնամու վրայ ***):

Ամեն բան վերջացած չէր լինի եթէ յաղ-

*) Այս բանը հակասում է Միհրդատի սապետական բնաւորութեան, որը նկարագրել է Թ. Ռայնախ և որը ըստ Պլուտարքոսի կասկածի է ենթարկում: Ստակայն՝ պէտք է նկատել, որ յաճախ Պլուտարքոսը իւր պատմութեան մէջ չի պահպանում բացարձակ անկողմնապահութիւն.

***) Թ. Ռայնախը կարծում է, որ այս պատերազմը տեղի է ունեցել Մանագկերտի մօտ:

թւածները գոնէ կարողանային շարունակել դիմագրութիւնը. ինչպէս կարելի էր նախ քան ամառայ վերջը, Արտաշատ քաղաքը գրաւել, որը շատ կտրճ է լինում այդ բարձրաւանդակի վրայ, այն էլ մի բանակով, որը լիքն էր վիրաւորներով: Իսկապէս ձմեռը շատ շուտ վրայ հասաւ և ստիպեց շուտով Արտաշատը գրաւել. Լուկուլոսն ուզեց օգտւել մի արևոտ օրից, սակայն շատ ցուրտ էր այդ օրը. եղեամը, ձիւնը ծածկել էր երկիրը, ձիերը չէին խմում առւի սառած ջրից և երբ սառոյցը ջարդւում էր, նըրանց ոտքի տակ վէրքեր էր առաջացնում: Երկրի այդ կողմերը նպաստաւոր չէին առաջխաղացութեան, որպինետև ճանապարհները շատ նեղ էին և գաւառը անտառներով պատաժ *): Զափականց խոնաւ էր օդը և սոսկալի փոթորիկներ էին բարձրանում. այնպէս որ հազիւ կարելի էր բանակ դնել այդ ճահճոտ հողի վրայ: Մի քանի կայաններ այս դրութեամբ կտրելը բաւական եղաւ լեգէօններին յուսահատեցնելու: Նրանք հրաժարւեցին հետեւելու իրենց զօրավարին, որի մօտ ուզարկեցին իրենց հազարապետներին ինդրելու, որպէսզի գնացըը գագարեցնի, յատկապէս գիշերները նրանք խմբւում էին և բարձր ձայնով յայտնում իրենց տրատունջը: Լուկուլոսը մտածում էր

*) Այժմ մի ծառ անկամ չկայ այնտեղ:

ոտքի կանգնեցնել, ողեռել զօրքը՝ նկարագրելով
Արտաշատի, «Հայկական Կարթագինայի» մօտա-
լուտ գրաւումը։ Զուր ջանքեր. պէտք էր յետ
դառնալ. և այդպէս էլ լինում է, նրանք վանայ
լճի արևելեան ափերով վերագառնում են և Տաւ-
րոսն անցնելուց յետոյ, արդէն Մուկտօնիայի
պտղաւէտ գաւառումն էին, որն ունէր շատ բազ-
մամարդ քաղաքներ. այս գաւառի վրայ հսկում
էր Մծբինը, որին յոյներն անւանում էին Մուկ-
տօնիայի Անտիոք։ Տիգրանի եղբայր Գոռը այս-
տեղի կառավարիչն էր. նա ճարտարապետ յոյն
կալիմախօսի միջոցով՝ ճարպիկօրէն ամրացրել,
պաշտպանել էր իր երկիրը։ Ամառը մօտենում էր
իւր վախճանին, բայց դեռ պաշարումը չէր կարո-
ղացել ընկճել պարիսպները, առաջին անձրեները
կոտրում են պաշտպանողների արիութիւնը. Լու-
կուլլոսը դրանից օգտում է և տիրում առաջին
խրամին, սպանում քնած գիշերապահներին. այս-
տեղից փոսերը լեցնելով՝ կարողանում է տիրել երկ-
րորդ խրամին, որը աւելի թոյլ էր։ Գոռն ստիպ-
ուում է քաղաքը յանձնել. Լուկուլլոսը քաղաքը
գրաւելիս կատաղել էր յատկապէս յոյն Կալի-
մախօսի դէմ, որը տասնեւութ ամիս երկարացրել
էր Ամիսոս քաղաքի պաշարումը՝ յօդուտ Միհր-
դատի։ Զնայած որ Կալիմախօսը խոստացաւ ցոյց
տալ թագնւած գանձերը, սակայն Լուկուլլոսը
մնաց անդրդւելի, հրամայեց նրա ձեռներն ու

ոտները ջախջախել։ Ընդհակառակը Լուկուլլոսը
լաւ վերաբերւեց դէպի Գոռը, որը գուցէ ցոյց էր
տւել թաքցրած գանձարանը։ Այստեղ ևս աւա-
րըն այնքան շատ էր՝ որքան Տիգրանակերտում։
Այս քաղաքի անձնատուր լինելը տեղի ունեցաւ
68 թւի աշնանը։

Մինչև այժմ բաղկը շատ լաւ էր ժպտում
Լուկուլլոսին, սակայն շուտով նրա աստղը թեք-
ւում է. սկսւում են մի շարք անյաջողութիւն-
ներ. ամեն կողմից դժւարութիւններ են ծա-
գում, այնպէս որ Սենատը նրան յանդիմանու-
թիւններ է կարգում։ Հայերն սկսեցին յարձա-
կողական դիրք բռնել, 4,000 հայեր և 4,000 էլ
ուրիշ ասիացիներ՝ Միհրզատի զեկավարութեամբ՝
գնում են Պոնտոսը յետ խլելու։ Սրանց յաջող-
ւեց ամենից առաջ ՓոքրՀայքը գրաւել։ Տիգ-
րանը վերտնաստատել էր Տիգրիսի հիւսիսային
նահանգներում, ուր կարողանում է և. Ֆանիւսի
գօրքը նեղ տեղը ձգել։ Լուկուլլոսը սրան ազա-
տելու համար իւր զօրքի մեծ մասը թողեց Մծ-
բինում, մի սխալ քայլ, որը տեղի տւեց ապրս-
տամբութեան. Լուկուլլոսի զինւորների մի մեծ
մասն անհամբերութեամբ սպասում էր 67 թւին,
երբ 20 տարի ծառայելուց յետոյ, պէտք է ար-
ձակւէր հայրենիք վերադառնալու. այդ զինւոր-
ները հանդամանքից օգտւեցին և ապստամբու-
թիւն բարձրացնելով ուզում էին, որ իրենք իս-

կոյն արձակւեն առանց սպասելու այդ թւին։
Լուկուլլոսը սրանց շատ էր չարչարել. կաշւից
հանել, այսպէս որ ոչինչ չէր կարելի սպասել
դրանցից՝ եթէ Պոմպէոսը կամ մի ուրիշ զօրա-
վար չլինէր։ Հազիւ հազ յաջողւում են սրանց
Միհրդատի դէմ դուրս բերել, որը Թարիուսին
նոր էր ջարդել. սրանք կարողանում են միմի.
այն մասնակցել Տրիարիուսի աղէտին։ Տրիարի-
ուս զօրավարը Տիգրանի և Միհրդատի միացեալ
ոյժի առաջ կատարելապէս պարտութիւն կրեց
Ալիւսի հովտում։ Պատմագիրներն այս պատե-
րազմը յիշատակում են երեքն Կազիուրայի, եր-
բեքն էլ Զիւահի (արդի Զիւէն) ճակատամարտ
անոնով. աւելի շուտ այս կոխւը տեղի է ունե-
ցել վերջինիս մօտերքը։ Միհրդատը չնայած, որ
վաթսունամեայ էր և վիրաւոր, այնու ամենայնիւ
հետամտեց թշնամուն մինչև բանակը և 7,000-
ից աւելի մարդ ջարդեց։ Երեք տարուց յետոյ
նոր այս սպանւածները գերեզման ունեցան և
քսան տարուց յետոյ էլ նոր՝ Կեսարը կարողա-
ցաւ այս աղէտի վրէժը լուծել Թարնասի դէմ
պատերազմելով այս միենոյն դաշտում (67 թւի
գարնան Ք. ա.):

Այս կուից յետոյ արդէն Լուկուլլոսի անու-
նը կոտրած էր. նա ժամանակին չէր հասել
պաշտապանելու կազիուրայի զօրքը, որի աղէտը
ժողովրդի զրոյցներից էր լսել և ոչ թէ առան-

ձին ձեպընթացի միջոցով։ Միհրդատը Լուկուլ-
լոսին Տալաւրա լեռների բարձունքից պաշարւած
դրութեան մէջ է դնում, իսկ Մարական-Ատլը-
պատականի թագաւորը, որը Տիգրանի փեսան
էր, դրութիւնից օգտում է, ջարդում կապա-
գովկիայում ցրւած Հռոմէական զօրքը և երկիրը
աւերում։ Տիգրանը ազատ զգալով իրան, հեշտու-
թեամբ նորից ձեռք է ձգում Հայաստանը և պատ-
րաստում Եփրատն անցնել և միանալ իւր անե-
րոջն ու փեսային (Դիօն XVIII, 48)։ Այս լու-
րերը լսելով Հռոմի մի պլէիսիտ պաշտօնազուրկ
է անում Լուկուլլոսին և նրա տեղ նշանակում
Մ. Ասիլիուս Կաբրիոյին։ Ասիայի պրետօրի ջան-
քերով այս լուրը տարածեում է ամբողջ թերա-
կղում, և յաղթական թշնամիներին աւելի յոյս
ներշնչում, որով և անբացատրելի է մնում, թէ
լինչպէս Տիգրանի ծառայութեան մէջ գտնւած
հեծելազօրքի հոչակաւոր զօրավար Մենեմաքը
այս ժամանակումն է Տիգրանին թողել և անցել
Կիլիկիայում գտնւած Հռոմէական բանակը։ Լու-
կուլլոսը յամառում է և ուզում իր պաշտօնը
պահել. նա վերջին անգամ հրապուրում է իւր
զօրքին, որպէսզի Տիգրանի ճանապարհը կտրեն,
սակայն՝ կիսաճանապարհին արդէն թիկունք են
դարձնում։ Իզուր էր Լուկուլլոսը խնդրում այդ
զօրքին հաւատարիմ մնալ իրան և Հռոմի կատա-
րեալ խայտառակութեան առաջն առնել. իզուր

էր այդ զինւորների ձեռները համբուրում, խո-
նարհում նրանց առաջ և մէկիկ-մէկիկ ներս տա-
նում իրենց վրանները, դրանք ցոյց էին տալիս
իրենց դատարկ քսակները և յայտնում, որ մի
ուրիշ գօրավար միայն կարող կլինի լեցնել. դը-
րանք համաձայնւեցին մնալ հին գօրավարի դրօ-
շակի տակ մինչև նորի գալը, միայն այն պայ-
մանով, որ իրանց բացարձակապէս հանգիստ թող-
նեն ամբողջ ամառը (67 թւի): Այսպէս՝ Միհըր-
դատը ոչ մի արգելք չունէր նորից իւր թագա-
ւորութեան մէջ հաստատելու, նոյնպէս էլ Տիգ-
րանն ու իր փեսան վեցերորդ անգամ Արիոբար-
զանին Կապադովկիայից քշելու: Լուկուլլոսը Պոն-
տոսը գրաւելիս վեց կօմիսէրներ էր ուզել սե-
նատից՝ այդ երկիրը կազմակերպելու համար, և
այժմ երբ այդ վեց հոգին գալիս են ոչ մի թիզ
հող չեն գտնում Հռոմի իշխանութեան տակ:
Վալերիէնեան լեգէօնները արձակուրդ են ստա-
նում, որոնք 20 տարի ծառայել էին արգէն: Պոմպէոսն հասնում է և ղեկավարում պատե-
րազմը. 66 թւին նա արգելում է, որ Տիգրանի
գօրքերը միանան Միհըրդատի հետ. յաղթում է
վերջինիս Գայլ գետի մօտ այն տեղում, ուր յե-
տոյ պէտք է նիկօպօլիս քաղաքը կառուցւէր:

Տիգրանի համար նոյնպէս խիստ անկման մի
շրջան է սկսւում. ինչպէս արևելքի բոլոր ար-
քունիքները, ուր բազմակնութիւնը սպանում է

բնական զգացմունքները, այնպէս էլ հայաստանի
արքունիքը մատնւած էր ընտանեկան ողբեր-
գութեան: Տիգրանն երեք որդի ունեցաւ իւր նա-
խամեծար կնոջից Միհըրդատի աղջիկ կլէպատ-
րայից. սրանցից և ոչ մէկը չէր ուզում սպասել
իւր հօր մահւան գահը ժառանգելու. համար,
բայց՝ և ոչ մէկը մահը չտեսաւ: Անդրանիկ որ-
դին Զարիադրէսը Տիգրանից դժգոհ, մի քանի հայ
մեծամեծների հետ՝ դաւադրութիւն է կազմում.
գաւադիրները արևելեան սովորութեան համա-
ձայն աջ ձեռքերից արիւն են հանում, փոխա-
դարձաբար խմում՝ ինչան վճռականութեան: Սոս-
կալի ուխտ, արժանի միայն Կատելինային: Զա-
րիադրէսը մեռնում է կուփ դաշտում, բայց նրա
օրինակը չի վհատեցնում միւս եղբօրը: Մի օր
Տիգրանը որսի ժամանակ ձիուց վայր է ընկնում.
միջնակ որդին նրան թողնում է մահամերձ գե-
տին ընկած և իրան թագաւոր հրատարակում: Եր-
բորդ որդին՝ փոքր Տիգրանը մնում է վիրաւոր հօր
մօտ և նրան ցոյց է տալիս մեծ երախտագիտու-
թիւն: Երբ Տիգրանը ուշքի է գալիս, առողջա-
նում է ու լսում իւր որդիների վարմունքը,
հրամայում է գլխատել մէկին և թագաժառանդ
յայտարարում միւսին: Սակայն Տիգրանի փոքր
որդու մէջ ևս սկսում է եռ գալ իւր պապերի
կատաղի կրքերն ու սանձարձակ փառասիրու-
թիւնը, ինչպէս այդ բորբոքւել էր միւս որդի-

ների մէջ։ Սա երբ տեսնում է, որ իւր հայրը կապագովկիայի խորքերն է անցել, կեղծաւորութեան դիմակը դէն է ձգում և ապստամբում։ Այս լուրն առնելով Տիգրանն շտապում է իւր զօրքով յետ դառնալ. ապստամբը պարտւում է և ստիպում իւր գլխաւոր դաւադիրների հետ միասին փախչել պարթեաների թագաւորի մօտ, որի աղջկայ հետ ամուսնացել էր։ Տիգրանն այս բանի համար՝ իրաւացի թէ անիրաւ՝ կասկածում էր Պոնտոսի թագաւորի վրայ, կարծում էր, նա է այս ապստամբութեան կազմակերպողը, այդ պատճառով էլ նորից սառնութիւն առաջացաւ երկու միապետների մէջ (Ապակիէն Միհրդատ. 104. Դիօն. XXXVII, 51):

Այսպէս՝ երբ 66 թւին Միհրդատը Պոմպէոսից պարտւելով ապաստան է խնդրում Տիգրանից, վերջինը փոխանակնրան ընդունելու, նրա գլուխը գնահատում է 100 տաղանտ։ Այս ժամանակ կրտսեր Տիգրանը հանդէս է գալիս իբրև մի սոսկալի դաւադիր, որի նմանը պատմութեան մէջ իբրևիցէ գոյութիւն չի ունեցել, նա արդէն իւր մօր հօրը դաւաճանել էր գրգելով պարթեաներին մրցել նրա հետ *), այժմ էլ յաղթական Հռոմայեցիներին է շոյում, կեղծաւորում,

*) Թ. Ռայնախ, Վեր. յիշ. 382. Այդ ժամանակ Պարթեաների թագաւորն էր Պրատէս III, որին հայերն առնանում են Հրահատ։ Սա թագաւորում է 69—60:

որպէսզի կարողանայ իւր հարազատ հօրը գլխին մի մեծ հարւած ըերել և այդպիսով հասնել իւր նպատակին։ Նա մտածում էր երբեմն հռոմայեցոց և երբեմն պարթեաներին՝ այդ երկու թշնամիներին՝ գրգռել իւր հայրենիքի դէմ, որոնց միջոցով յոյն ունէր իւր հօր թագը խլել. մի թագ, որ շատ ուշ է ընկնում ծերունի թագաւորի գըլխից։ Դաւաճան որդին նախ պարթե զօրքերին է ուղարկում Հայաստան՝ Արտաշատը պաշարելու 66 թւին։ Պարթեաների թագաւոր Պրատէս Գ. (69—60), որը Սանատրուկի յաջորդն էր (այս Սանատրուկին Տիգրանը կողոպտել էր) մի լաւ առիթ է համարում այս հանգամանքը՝ վրէժխընդիր լինելու, և արշաւում է Հայաստանի վրայ։

Այս լուրն առնելիս ծերունի Տիգրանը փախչում է լեռները։ Պրատէսը Տիգրանի որդուն յանձնում է իւր զօրքի մի մասը, որպէսզի պաշարումը շարունակի, իսկ ինըը վերադառնում է իւր մայրաքաղաքը Կտէզիֆոն (Տիգրըն)։ Փախստական դարձած Տիգրանը չէր կարող տանել այս անարդարնքը. նա հաւաքում է իւր զօրքերը և յարձակւում դաւաճանի վրայ, որին և ստիպում է փախչել Միհրդատի մօտ։ Եւ այս հանգամանքը աւելի ևս կրկնապատկում է Տիգրանի կամկածը։ Թէ որևէ դաւադրութիւն սարքել են այս երկուսը՝ չի երկում, որովհետեւ հանգամանքները չեն ցոյց տալիս որևէ բան։ Ճանապարհին

դաւաճանը լսում է, որ իւր մօր հայրը պարտւել է հռոմայեցիներից և ինքն է կարօտ օգնութեան։ Ահա այս ժամանակն է, որ նա երկրորդ ստորութիւնն է գործում՝ գնալով Պօմպէոսի մօտ և առաջարկելով նրան զօրքն առաջնորդել Հայաստանի միջով հօր գահի վրայ յարձակւելու համար *): Միհրդատին յաղթող զօրավարը նախ՝ մինչև Կողքիս նրան հետևում է, բայց՝ յետոյ չուզենալով հասնել նրան Խերոնէսում, արդէն ազատ է զգում իրան հանգամանքներից օգտւելու համար։ Պօմպէոսն աւելի սպասնալից դարձաւ, երբ անսպասելի կերպով Արաքսի մօտ պատահեց դաւաճան որդուն, որը խոստացաւ առաջնորդել զօրքը։ Երկուսով սկսում են գրաւել Հայաստանը՝ ամենից առաջ ամրութիւնները խլելով։ Թշւառ, խեղճ թագաւորը կարծում էր թէ զոհ է եղել Միհրդդատի յիմար խորհրդին, այդ պատճառով էլ երբ վերջինիս դեսպանները գալիս են օգնութիւն խընդուելու հռոմայեցոց դէմ, նա շղթայում է դրանց և ուղարկում Պօմպէոսին ի նշան բարեկամութեան, միաժամանակ ուղարկում է իւր ներկայացուցիչներին՝ յանձնարարելով խաղաղութեան դաշն կապել։ Եւ անշուշտ Տիգրանը կը կարողանար խաղաղութեան դաշն կապել, եթէ իւր որդին չլինէր, խարդաւանանքներ լարելով չաշխատէր անբաւա-

*) Դիօն Կասիուս, XXXVI, 49—51

րար ներկայացնել առաջարկւած պայմանները։ Դաւաճան որդին այնպէս է անում, որ թշնամին համում է Արտաշատի պարիսպների մօտ, ծերունի միապետը պաշարւած մնալով իւր մայրաքաղաքում, զգում է, որ կորած է արդէն։

Տիգրանը վստահ լինելով Պօմպէոսի մեղմութեան, արդարասիրութեան վրայ, վերցնում է իւր պալատում գտնւած հռոմայեցի մի քանի զինւորներին ու իւր բոլոր բարեկամներին և ազգականներին ու գնում նրա մօտ։ Որպէսզի Տիգրանը լաւ ցոյց տայ, որ եկել է հպատակութիւն յայտնելու և յաղթողի զթութիւնը հայցելու՝ թագաւորական բոլոր նշանները մի կողմէ զնում, բացի թագաւորական թագից, որը պէտք է հանդիսաւոր կերպով Պօմպէոսի առաջը զնէր։ Սովորութեան համաձայն Տիգրանը ձիով էր զնում, որովհետեւ հսարակ մահկանացուներին չպէտք է հաւասարւէր թագաւորը, Պօմպէոսը տեսնելով, որ Տիգրանը ձիով է գալիս հրամայում է ձիուց իջնել։ Տիգրանը հնազանդում է, գալիս խոնարհում է և իւր թագը զնում հռոմայեցու ոտքերի առաջ։ Պօմպէոսը չափազանց գագացւում է ծերունու այս խոնարհութիւնից, շտապով վեր է կացնում նրան և թագը նորից զլիին զնում, ապա իւր կողքին նստացնում, միիթարում նրան՝ հաւատացնելով, որ իւր թագաւորութիւնը չի կորցրել և բացի այդ՝ դարձել է Հռոմի բարեկամը։

Զգւելի որդին, որը զօրավարի մօտն էր, նոյնախոկ չի վեր կենում հօրը պատւելու համար և իւր վրայ՝ գթալու կամ զղջման ոչ մի նշան չի ցոյց տալիս *): Սրանից յետոյ էլ երբ հրաւիրում են ի պատիւ նոր դաշնակցի տրւած խընճոյքին՝ հրաժարում է. թւում է, որ այդ զզւելի որդին զայրացել էր, տեսնելով թէ ինչպէս թագաւորը իւր գանձերը բաժանել էր օտարներին։ Նա յանդգնութիւնը, լրբութիւնը այն աստիճանին է հասցնում, որ յայտնում է Պոմպէոսին, թէ այլևս նրա պաշտպանութեան կարիք չունի, ինքը կարող է միշտ էլ մի որևէ հռոմայեցի գտնել իւրան օդնելու համար։ Պոմպէոսն արդէն խորին զըզւանք էր զգում դէպի այդ լսկիրշ երիտասարդը։ Հետեւեալ օրը լսելով թէ ինչպիսի կոշտութեամբ էր վիճում նա իւր հօր հետ' միանդամից հարցը վճռում է, Հայաստանը թողնում է Տիգրանին, իբրև միակ օրինաւոր ժառանգին՝ միայն Հայաստանի չորս կողմում գրաւած երկրները—Գամերը, Ասորիքը, Փիւնիկիան և Ծոփաց աշխարհը նրանից անջատում է։ Սրանից զատ՝ նա Տիգրանից պահանջեց նաև պատերազմական տուգանք վճարել փողով։ Կրտսեր Տիգրանը ստանում է Ծոփաց երկիրը իբրև մի աւելորդ ոսկոր, որը շան առաջ են ձգում. նա նոյնիսկ իրաւունք չունէր այդ

*) Դիոն Կասիոս վեր. յիշ.

նահանգում գտնւած կազօֆիլասիների մէջ պահւած թագաւորական գանձերին ձեռք տալու։ Այս երիտասարդի փառասիրական անյազութիւնը պէտք է նրան կորստի մատնէր։ Նա յամառութեամբ պէտք է, որ այդ տեղ գտնւած փողերը իրան տրւեն. նրան մերժում են, որովհետև պէտք էր պատերազմի տուգանքը վճարել, որը հասնում էր 60,000 տաղանդի։ Տիգրան կրտսերն ուզում էր խելել այդ գանձերը և փախչել, սակայն Պոմպէոսը գուշակում է նրա մտադրութիւնը, խիստ հսկողութեան տակ առնում, ապա՝ հրամայում բերդապահներին գանձերը յանձնել Հայաստանի թագաւորին։ Կազօֆիլասիների մարդիկ չեն ուզում լսել Պոմպէոսին առարկելով, որ իրենց վրայ ուրիշ թագաւոր են կարգել, թող նա հրամայի։ Տիգրան կրտսերն ստիպւած է լինում անձամբ գնալ և գանձերը դատարկել յօգուտ հոռմայեցիների։ Բերդապահները գարձեալ գիմազըսում են առարկելով, որ իրենց թագաւորը ազատ կերպով չի գործում. և այս թերեւս Տիգրան կրտսերի թելազըսութեամբ։ Վերջի վերջոյ Պոմպէոսը տեսնում է, որ ոչինչ չի կարելի անել այդ հաստագլուխի հետ, ուստի նրան շղթայում է և պահում իբրև նշան իւր յաղթութիւնների. ապա վերցնում է գանձերն ու յանձնում Տիգրան Մեծին։ Տիգրան կրտսերի աները՝ Պարթևների թագաւոր Պրատէսը միջնորդում է ազատելու իւր փեսին՝

առաջարկելով Եփրատ գետը իբրև սահման իւր
և հռոմայեցոց պետութեան միջնէ: Պոմպէոսը պա-
տասխանում է, թէ Տիգրան կրտսերն իւր անե-
րոջ պատկանելուց առաջ, պատկանում է իւր հօ-
րը, գալով սահմանների խնդրին՝ ինքը կառաջ-
նորդւի միմիայն ճշմարտութեան, արդարութեան
ցուցմունքով: Այս բոլորից յետոյ հոռմէական բա-
նակը երեք մասի բաժանւելով գնում է ձմեռե-
լու «Կուր գետի վրայ զտնւած Անահիտա նա-
հանգում*»): Հայաստանն այնքան ընկճւել էր,
որ աւելի վճարեց քան թէ պարտական էր: Վե-
րադարձին Պոմպէն հիտցած Տիգրանի բարութիւ-
նից, նրա համար ձեռք բերեց «Հոռմի ժողովրդի
բարեկամ և դաշնակից» անչափ ցանկալի մեծ
տիտղոսը: Գարնան նա Աֆրանիոս զօրավարին
թողնում է իւր գրաւած երկրների վրայ հսկելու,
ինքը քշում է Միհրդատին կողքիսից, անցնում
կասպիականի եղերքներով, ուր չի կարողանում
բնակւել բազմաթիւ թունաւոր կենդանիների
պատճառով, ապա վերադառնում Հայաստան (ան-
շուշտ ոչ «Փոքր-Հայք»), ինչպէս հին պատմա-
բանն է ասում. այդ նահանգը շատ հեռու էր և

* Դիօն Աստիու. Կուր գետի վրայ Անահիտին
նւիրւած նահանգ յայտնի չէ. կայ Հայաստանում մի-
միայն մի նահանգ ալդ անունով, որը զտնւում է Ասե-
լիպէնում և բաւականին բարեխառն կլիմա ունի, այն-
պէս որ այդտեղ կարելի էր ձմեռել:

ոչ մի կարևորութիւն չունէր), ուր ընդունում է
կլեմիտի (Շօշի կլեմիտները) և մարերի թագա-
ւորների պատիւները, որոնց պատասխանում է
վեհանձնութեամբ: Միմիայն պարթեների թագա-
ւորը շարունակում էր թշնամաբար վերաբերելու-
նա գրաւում է կորդւաց երկիրը, որը դեռ Տիգ-
րանից կախում ունէր, և մեծ վասներ հասցնում:
Պոմպէոսը հաւատարիմ մնալով իւր դաշնակցու-
թեան՝ մեծ զօրքով իւր զօրավար Աֆրանիոսին
ուղարկում է պարթեների թագաւորի դէմ՝ նրան
այդ երկրից գուրս քշելու: Աֆրանիոսը յաղթում
է Աբիքլիս կամ Աբիկլիս մեղ անծանօթ վայ-
րում (66 թւին Ք. ա.): Վերջապէս Պոմպէոսը
վերադառնում է Հոռմ, ուր իւր յաղթական մուտ-
քի ժամանակ, ցուցագրում է Տիգրան կրտսերին
ու նրա կնոջն և որդիներին, ինչպէս նաև Տիգրան
ծերունի թագաւորի կանանցից մէկին՝ Սօսեմին:

Այսպէս՝ Միհրդատի հերոսական արիութիւ-
նը նրան ընդ միշտ կործանեց, այնինչ Տիգրա-
նի խոհեմ խոնարհութիւնը թէ գահը փրկեց և թէ
ապահովութեան երաշխիք դարձաւ: Ապագան կա-
սի, թէ որ կողմն է փառքը և որ կողմը իմաս-
տութիւնը: Հայերը միշտ էլ կգնահատեն վերջի-
նը, նրանք անշուշտ անկախութեան ձգտում ու-
նեն, սակայն, մի քանի փորձեր կատարելուց յե-
տոյ, երբ տեսնում են, որ իրենք շատ թոյլ են,
ուստի լաւ են համարում ննազանդւել, քանի թէ

յամառել յուսահատ դիմադրութեան մէջ, որը
երբեմն փոքր ազգերին առաջին շարքերն է բարձ-
րացնում, բայց յաճախ էլ նրանց յաւիտենական
կորստեան պատճառը դառնում: Այս և սրա նը-
ման բոլոր դէպերումն էլ տեսնում ենք, որ մատ-
նութիւնը միշտ խորտակել է հայրենասիրութեան
բոլոր ճիգերը: Քանի որ Տիգրանի թագաւորու-
թեան պատմութիւնը ամփոփում է իւր մէջ միւս
բոլոր քաղաքական տարեշրջանների բնորոշ տի-
րապետող գծերը, ուստի Տիգրանի անձնաւորու-
թիւնն էլ կարող է մեզ ներկայանալ իւրեւ իւր
ազգի ամենաբնորոշ պատկերը: Նրա մէջ առա-
ւելութիւններն ու պակասութիւնները արտա-
յայտում են ծայրայեղ չափերով: Որոշ դատա-
ւորների աչքում պակասութիւնները շատ դէպ-
քերում գերակռում են. «նա միջակութիւն էր
ներկայանում, նեղ հայեացքների տէր և ան-
հեռատես էր: Անգութ էր և տոփասէր, եսասէր
էր ու ցինիկ. անհաստատ թէ իւր համակրանք-
ների և թէ իւր հակակրանքների մէջ: Տիգրանն
ուղղամտութեամբ չէր կարող կապւել ոչ իւր
գաշնակիցների հետ, ոչ իւր հպատակների և ոչ
նոյնիսկ իւր հարազատ զաւակների, մի խօսքով
ոչ ոքի հետ նա չէր կարողանում կապւած մը-
նալ: Նրա պահանակը գոռողութիւնն ու շուայլութիւնը,
նրա անսահման գոռողութիւնը նոյնիսկ Արևել-
յու դպացմունքներին կարող էր դպչել... իւր

փառքի, բախտաւորութեան ժամանակ ոչ մի ա-
զատ խօսք, ոչ մի ազատ վարմունք, ազատ գործ
չէր տեսնուում նրա շուրջը, դժբախտութեան ժա-
մանակ այնպէս արագ էր ընկնում և այնքան
ցած, որ նոյնիսկ նրա թշնամիները կարմրում,
ամաչում էին նրա ստորանալուց *): Մեզ թւում
է, որ այս դատապարտութիւնը, ուր ոչ մի գո-
վասանք չկայ, ծայրայեղութիւն է: Պէտք էր նը-
կատի ունենալ, որ ասիական համարեա բոլոր
թագաւորներն էլ միենոյն ձեռվ իրենց էին պա-
հում բացարձակ իրաւունքը. նրանց ժողովուրդ-
ները պէտք է իրենց թագաւորներից վախենա-
յին, նրանց պաշտէին, դա հնազանդութեան նը-
շան էր: Վերջապէս երեսում է, որ Տիգրանը նոյն-
իսկ իւր անկման, դժբախտութեան մէջ անգամ՝
կարողանում էր քաջութեամբ, մեծ հռանդով ու-
կանգնել, չնայած իւր ծերութեան. նրա ան-
քի կանգնել, անհոգութեան ըռպէներն առաջ-
էին գալիս այն սխալ կարծիքից և արհամարհան-
քից, որ նա ունէր իւր հեռաւոր թշնամու վե-
րաբերմամբ. Տիգրանը տեսնում էր, որ այդ թըշ-
նամին հեռակ գալիս է Ասիա իւր դէմ կուելու,
առանց որ և է յայտնի նեցուկի, օգնութեան:
Տիգրանի սրտաբեկութեան, ուժաթափութեան
ժամերը պէտք է բացատրել այն սարսափով, որ

*) Թ. Ռայնախ. Վեր. յիշ. 346, 347:

կարող է ամեն մի մարդ ունենալ, երբ իրան
յաղթւած է տեսնում մի ինչ որ խորհրդաւոր,
գաղտնի ուժից: Տիգրանը պէտք է պատրաստ
լինէր այդ ուժը հասկանալու և նրան դիմուգ-
րելու մի կրթութեամբ, որը քիչ ասիսկանու-
թիւն ունենար: Միհրդատը ճանաչում էր յոյն-
հոռմէական աշխարհը, ահա ինչու համար նա
անհրաժեշտ էր համարում միացեալ ուժեցով և
անմիջական կոիւ մղելը: Առանց ուրանալու Մի-
հրդատի բնաւորութեան առաւելութիւնները՝
պէտք է նկատի ունենալ և աշխարհագրական
դիրքի նպաստաւոր հանգամանքները: Պոնտոսն
ամբողջապէս հելենացել էր: Տիգրանի համար
առաւելութիւն է, որ զգաց օտար քաղաքակրթու-
թեան արժանիքը և աշխատեց մացնելիւր ժողո-
վրդի մէջ: Իւր այս գործում յաջողւելու համար
միմիայն ժամանակ էր պակասում նրան, հելենա-
կան ժողովուրդները, որոնց Տիգրանը բնակեց-
րել էր իւր քաղաքներում, մի սերունդ անցնե-
լուց յետոյ կմոռանային իրենց ոխը և կսկսէին վե-
րակազմել, վերանորոգել հասարակութիւնը, հոռ-
մայեցիներն արգելեցին այս պրօդրէնը: Վերջա-
պէս, հէնց ինքը՝ հայ ժողովուրդը մեր յիշատա-
կած դէպքերում հանդէս է դալիս նոյնքան լաւ
դէմքով, որքան Պոնտոսի ժողովուրդները: Այս
ժողովուրդը իւր թագաւորի և Միհրդատի պէս
փառասէր էր և ձգտում էր, որքան հնարաւոր է,

իւր տիրապետութիւնը տարածել աւելի ու ա-
ւելի հեռու, սակայն՝ այդ ժամանակներում դա-
բարոյական ամենամեծ արժանիքն էր համար-
ւում: Ասիական ամենամեծ անուններն եղել են
միմիայն յաղթութիւններ տանողների և մեծ շէն-
քեր կառուցանողների անունները, սակայն՝ պատ-
մութիւնը կը կարողանայ դրանց յարգել միայն
այն դէպքերում, եթէ դրանք աշխատել են կազ-
մակերպել իրենց պետութիւնը, աշխատանքը
խրախուսելու, կարգ ու կանոն հաստատելու տե-
սակէտից: Այս տեսակէտից Տիգրանը յետ չի մը-
նում ոչ Դարէնից, ոչ էլ Նաբուգոդոնոսորից,
պէտք է ցաւել սակայն՝ որ նա Քսերքսէսի ու
Սարտանապալի անհեռատեսութիւնը, մեղկու-
թիւնն ու յիմար կանխակալութիւնն ունեցաւ:

III

Հայոց թագաւորութիւնն այլևս այս տեսակ
բարգաւաճ դրութիւն չպէտք է տեսնէր: Տիգ-
րան Մեծին յաջորդում է իր կենդանի մնացած
վերջին որդին՝ Արտաւազդ Գ-ը (56—36), որը
դեռ հօրդ կենդանութեան ժամանակ, (6—54 թը-
ւին) արգէն մասնակցում էր թագաւորական դոր-
ծերին:

Սրա օրով պարսիկների վրայ թագաւորում
էր Պարթև Արշակունի Որոտէս թագաւորը, որը

իւր նախորդի՝ Տիգրանի դէմ պատերազմողի նման՝ թշնամի էր հայերին, Պարթևների Պրատաէսթագաւորը շատ էր զայրացած Պոմպէոսի դէմ, որովհետեւ վերջինս ոչ Տիգրան կրտսերն ազատեց, ոչ էլ Կորդւաց երկիրը տւեց նրան ի վարձատրութիւն իւր ծառայութիւնների, այս պատճառով էլ մեռնելիս կտակեց, որ իւր յաջորդը՝ Միհրդատ Գ-ը (60—56) վրէժխնդիր լինի։ Միհրդատ կարողանում է խլել Կորդւաց երկիրը. իսկ սրա յաջորդ Որոտէսը անշուշտ ուժով պէտք է պաշտպանէր իւր իրաւունքները հայերի պահանջների դէմ։

Այսպէս՝ 54 թւին, երբ Կրասոսը կուռում էր Պարթև Սուրէն զօրավարի դէմ Միջագետքը գըրաւելու համար, Որոտէսը մտնում է Հայաստան մտածելով, որ եթէ չկարողանայ Հայաստանը գրաւել, գոնէ կը կարողանայ Հոռմի գաշնակից Արտաւազին արգելել օգնութիւն ուղարկել Կրասոսին՝ Պարթև Սուրէնի դէմ *): Մէնք չգիտենք, թէ յետագայում ինչ պատահեց և ինչ պատճառով Որոտէսը Արտաւազի բարեկամը դարձաւ, երբոր Կրասոսը անցաւ Ասորիք։ Սակայն այսքանը յայտնի է, որ Արտաւազը պատճառ բըռնելով Որոտէսի յարձակումը, հրաժարում է Կրասոսին օգնութիւն ուղարկել, կատարել իւր պար-

*) Խստի. Հին պարսիկների պատմութիւնը. Էջ 148.

տականութիւնը՝ իբրև Հոռմի գաշնակից։ Արդեօք սա մի որագեյթ էր, թէ իրօք մի վտանգ էր սպառնում Արտաւազդին, Հայ թագաւորը խնդրում էր Հոռմայեցուն հրաժարուել Միջագետքից և իրան օգնութեան հասնել Որոտէսի դէմ։ Նա իւր նամակում աւելացնում էր, որ եթէ իւր առաջարկութիւնը չընդունւի, այն ժամանակ անակընկալից զերծ մնալու համար լեգէոնները չափազանց խոհեմութեամբ և լեռներին հետեւելով պէտք է առաջանան, որպէսզի կարողանան պարագաւ հեծելազօրքի առաջնաղացութիւնն արգելել։ Կրասոսը կատաղեց այս նամակի վրայ, հրաժարուեց պատասխան տալուց և իսկոյն յայտարարեց, որ ինքը շուտով կը գնայ Արտաւազդին պատժելու՝ իբրև դաւաճանի։ Այս դատապարտութիւնը գուցէ կանխահաս, սակայն հիմնաւորւած էր, ինչդէս յետոյ կերեայ, Հայաստանում կատարւած յեպէս յետոյ կերեայ։ Հոռմայեցի զօրավարը չի կատագայ անցքերից։ Հոռմայեցի զօրավարը չի կարողանում իրազործել իւր սպառնալիքը, որովհետեւ մի գաւաճանի առաջնորդութեամբ անառաջնելով՝ ջարդութիւն է Պարթև հեծելազօրպատ ընկնելով։ Ջարդութիւնը է Պարթև հեծելազօրպատ ընկնելով սպանւում։ Այս առթիւթից և գարան ընկնելով սպանւում։ Այս պատմումը է մի դէպք, որը ցոյց է Պլուտարքոս պատմում է մի դէպք, որը ցոյց է տալիս, թէ որքան ձիշտ են հայերին իբրև անհաշտ թշնամիներ ներկայացնելու ձգուումները։ հաշտ թշնամիներ նետեւեալն է. Կրասոսը ստիպւած է այդ դէպքը հետեւեալն է. Կրասոսը ստիպւած է իմնում խոստովանել, որ ինքը շատ զօրք է կորց-

բել, սակայն՝ արդարանում է նրանով, որ Լուկուլ-
լոսն ևս հռոմէական շատ արիւն է թափել Տիգ-
րանի դէմ կուելիս:

Յաղթող Սուրէնը կտրում է կրասոսի աջ
բազուկն ու գլուխը և ուղարկում Որոտէսին, միւս
կողմից՝ լուր է տարածում, որ ինքը կենդանի
է բռնել հռոմայեցոց զօրավարին և պէտք է բերի
Սելէկիա (Կտեղիֆոնի մօտ) ու ժողովրդին ցոյց
տայ այն կատակերգութիւնների ժամանակ, ո-
րոնցով պէտք է ծաղրի հռոմայեցոց: Ֆարսը ա-
ւելի անգութ եղաւ և վայել իսկական բարբա-
րոսների. նա ոչ թէ Սելէկիայում, այլ Արտա-
շատում տեղի ունեցաւ. Որոտէսը, որը յանկարծ
Արտաւազդի դաշնակիցն ու բարեկամն էր դար-
ձել, իւր որդի Բակուրոսին ամուսնացնում է հա-
յոց թագաւորի քրոջ հետ: Սրանց ամուսնութեան
առթիւ մեծ հանդէսներ են ոարքում, կազմւած
քէֆերից և յունարէն ներկայացումներից: Ար-
տաւազդն արդէն Պլուտարքոսի ժամանակ յայ-
տնի էր իրեն հեղինակ բազմաթիւ յունարէն զըր-
ւած ճառերի և պատմական զրոյցների. նա գե-
ղեցիկ գրականութեան ճաշակ ունէր: Մի բան-
կէտի ժամանակ, երբ գերասաններից մէկը (Հես-
տիոն) արտասանում էր Ակաւի արկածները թու-
քոս ողբերգութիւնից, բերում են կրասոսի ա-
րիւնաշաղախ անդամները: Հռոմայեցի զօրավարի
գլուխը բերող Սուլախէսը, լսելով Եւրիպիդի տո-

դերը՝ ոգեսորւում է, բարձրանում բեմը, ուր վե-
րոյիշեալ դրաման էին խաղում, գլուխ է տալիս
հանդիսականներին և նրանց է ձգում կրակոսի
գլուխը: Պարթևները ծափահարում են և Ժխորա-
գոյն, բարձրագոչ կայթիւնքով (օվացիաներով)
իրենց զգացմունքներն արտայայտում: Թագա-
իրինց զգացմունքներն Սուլախէսին սե-
ղան են նստացնում: Տրալլացի Եազօն դերասանը,
որին այսպէս ընդհատեցին, բոպէական ներշնչ-
մամբ իւր ուկնդիրների ճաշակին համապատաս-
խան մի բան է գտնում և բռնելով կրասոսի գան-
դը բերանի վրայ բացւած ճեղքւածքից— այդ գան-
գը ճեռքէ ճեռք ձգելով հասել էր դերասանին—
բարձրացնում է այնքան, որ բոլորին տեսանելի
լինի և երգում է «Լեռնից մեր տունն ենք բե-
րում մեր խիստ յաջող որսում սպանած այծեա-
րում»: Սա կատակերգութեան 1170—
է հեղիւրները»: Սա կատակերգութեան 1170—
է հեղիւրներն էին *): Հանդիսականները այս
1172-րդ տողերն էին **): Հանդիսականները այս
միջնադէպի վրայ շատ են ուրախանում և գլու-
խում, որ Եազօն շնորհքով դերասան է **):

Կրասոսի պարտութիւնից յետոյ, Անտոնիոսն
է հրապարակ իջնում. նա Աթէնքումն էր (42—
41 թ. ա.), որտեղից ուղարկեց Կանիտիոսին Հա-
յատանն ու Վրաստանը գրաւելու: Հայաստանը

*) Պոլիէն, 7, «Տուրենաս»ում:

**) Պլուտարքոս, կրասոս 43:

նորից ընկնում է հռոմայեցոց լծի տակ: Անտոնիոս
յանձնարարում է նաև Վենտիտիոսին, կանգ-
նեցնել պարթևների առաջխաղումը, որոնք ու-
զում էին Եփրատն անցնել ու գրաւել Ասորիքը:
Սուրէնին սպանել էր տռել Որոտէսը, որը չէր կա-
րող տանել նրա փառասիրութիւնը և պատերազ-
մական գործողութիւնները յանձնել էր իւր որդի
Բակուրոսին: Բակուրոսը Վենտիտիոսի գէմ եղած
կուռում սպանւում է, կորցնելով իւր ամբողջ բա-
նակը, որի մի մասը հաւանօրէն հայերն էին կազ-
մում: Անտոնիոսը, երբ եկել էր կուխն նեցուկ լի-
նելու, Միջագետք մտնելով շեղում է իւր ճանա-
պարհը, շուտով Եփրատի վրայ իջնում, որպէսզի
իւր ստորագրեալից խլի կատարեալ յաղթութեան
պատիւը: Բայց՝ Անտոնիոսը հրաժարւում է Պար-
թևներին աւելի ներսերը հալածելուց և նրանց
երկրի ներսերը մտնելու մտադրութիւնից, ո-
րովհետեւ այդ տեղերում դրանց սահմանները լաւ
պահպանւած էին: Անտոնիոսը հայոց Արտա-
ւագդ թագաւորի, իւր գաղտնի բարեկամի խոր-
հրդով վճռում է յարձակւել Մարերի վրայ: Հը-
ռոմի գաշնակիցները խմբւում են Անտոնիոսի
շուրջը, որոնցից ամենաուժեղը հայերն էին *):
Արտաւագդը խորհուրդ է տալիս իւր երկրի մի-
ջով անցնել Մարերին հանդիպելու համար, միւս

*) Պլուտարքոս, Անտոնիոս 38:

կողմից հռոմայեցի զօրավարի առաջնորդութեան
է յանձնում 7,000 հետևակ և 6,000 հեծեալզօրք:
Այս կերպ ուժեղացած տասներեք լեզունները
մտնում են Հայաստան Մարերի թագաւորին հա-
լածելու, որը նոյնպէս Արտաւագդ էր կոչւում:
Այս ժամանակում պարթևների թագաւոր Որո-
տէսին յաջորդել էր Պրատաէս Դ-ը, որը, իբրև
գերիշխան (սուլվերէն), եկել էր Մարերին օգնե-
լու: Հռոմայեցի զօրավարն ու հայոց թագաւո-
րը գնում են դէպի Եկեղաւան (արդի Համա-
տան): Պարթևները կարծելով, որ այդ մեծ քա-
ղաքը մենակ կարող է պաշտպանւել, առաջ են
գնում արշաւողներին հանդիպելու: Հռոմայեցի-
ները, որոնք այս օտարականների տակտիկային
այնքան էլ ծանօթ չէին, ճանապարհին երկու
վաշտ զօրք են կորցնում, բացի այդ՝ նրանց պա-
շարման բոլոր մեքենաներն ու ախր կամ ոչըն-
շացւում են կամ աւարի ենթարկւում: Հռոմա-
յեցիների այս պարտութեան պատճառը հայերի
դաւաճանութիւնն էր՝ նրանք առաջ էին ընկած
և երբէք կոխւներին չմասնակցեցին, դրանք շատ
զգոյշ էին վարւում, որպէսզի հռոմայեցիները
ոչ մի առիթ չունենան իրենց մեղադրելու: Ով
է իմանում, գուցէ այսպիսով հայերը պարթևնե-
նի հետ կազմակերպած իրենց գաղտնի ծրագիրն
էին իրագործում: Արտաւագդը տեսնելով, որ Ան-
տոնիոսն արդէն ընկճւել է, ճանապարհից յետ է

գառնում ու հանգիստ սրտով՝ Հայաստան մըտնում:

Այս պարտութիւնից յետոյ Անտոնիոսն ստիպւած է լինում հրաժարւել Եկեղեցականը պաշարելու դիտաւորութիւնից, որովհետև կորցրել էր իւր գլխաւոր ոյժը, հայ հեծելազօրքը, որը երկարատև փորձառութեամբ շատ լաւ կարողանում էր պարթևների հեծելազօրքի հնարներն ու խորամանկութիւններն ի գերեւ հանել։ Հռոմայեցիք նահանջի ժամանակ նոյնպէս մեծ կորուստներ են կրում, բայց վատ խաղին ստիպւած էին լաւ գէմք ցոյց տալ, որովհետև միակ հնարաւոր ապաստարանը Հայաստանն էր, ուստի Անտոնիոսը իրան այլտեղ է ձգում, թաքցնում իւր բարկութիւնը և շողոքորթում Արտաւազդին՝ ուտեստ ու հագուստեղէն ստանալու համար։ Անտոնիոսին յաջողւում է ստանալ այդ և նոյնիսկ իրաւունք է ձեռք բերում Հայաստանում ձմերելու։ Այսպիսով Արտաւազդը ժամանակաւորապէս ազատում է Հռոմէական վրէժինդրութեան հարւածից։ Անտոնիոսը ձեւացնում է, թէ ամեն ինչ մոռացել է ու զնում է Ասորիք, այնուհետև Եղիպառու, ուր սպասում է յարմար առթի Արտաւազդից վրէժինդիր լինելու համար։ Ճիշտն ասած, նա պատերազմական մեծ քաջութիւններով չէր, որ իւր վրէժը լուծեց, այլ՝ նենդութեամբ և երդմնազանցութեամբ։

Պրատէս Դը և Մարերի Արտաւազդ թագաւորը կուեցին՝ չկարողանալով համաձայնութեան գալ աւարը բաժանելիս։ Արտաւազդն ուղղում է գաջնակցել Անտոնիոսի հետ, նրան խորհուրդ է տալիս նախ՝ հայերին ջախջախել և ապա՝ պարթևներին։ Հռոմայեցի զօրավարը, որը մեղկութեան մէջ էր ընկել և չէր կարող թողնել իւր կախարդիչ սիրուհուն, աշխատում է խարդախութեան, խաբեբայութեան միջոցով համնել իւր սնափառ նպատակներին, երեք անգամ պատըրակներ է ստեղծում հայոց Արտաւազդ թագաւորին անպաշտպան իւր մօտ կանչելու և իբրև գաջնազրութեան դաւաճան կալանաւորելու, նախ՝ խնդրում է Արտաւազդից Եղիպառու գալ պարթևների գէմ կուելու համար համաձայնութեան գալու, երբ Արտաւազդը մերժում է այս առաջարկը, Անտոնիոսը նորից մարդիկ է ուղարկում նրան Աղէքսանդրէս բերելու՝ առաջարկելով՝ նրա աղջկանը կնութեան առնել իւր հարազատ որդու համար։ Արտաւազդը թակարդ չի ընկնում և կարողանում է խուսափել հոռմայեցնում էպիսկոպում կամաց կած պատժից։ Վերջապէս՝ Անտոնիոսը կարծելով, որ եթէ ինքը մօտիկ լինի՝ Արտաւազդը կլսի իրան, Կիլիկիա գնալիս գարձեալ խնդրում է կասկածոտ հայից, որ Կիլիկիա զայպարթևների գէմ արշաւելու համար դաշնակցելու. նոյն իսկ յայտնում է, որ մարերն եւ կը-

մտնեն այդ դաշնակցութեան մէջ։ Սակայն զուր
ջանքեր էին դրանք. Արտաւազդն իւր տեղից չե
շարժւում և պատախանում է քաղաքագէտ վար-
պետորդու պէս։ Այժմ արդէն Անտոնիոսը տես-
նում է, որ ուրիշ միջոց չկայ, պէտք է անձամբ
գնալ և բոնել որսը. 36 թւին նա իւր ամբողջ
բանակով մտնում է Հայաստանի խորքերը։ Այլ
ես ոչ մի պատճառով Արտաւազդը չէր կարող
դիմադրել. մի առ ժամանակ էլնա կարողանում
է ձգձգել իւր պատախանը Անտոնիոսի ուղար-
կած չորրորդ դեսպանին, որից յետոյ՝ Անտո-
նիոսն այլիս չի սպասում և աւելի առաջ գնում.
Երբ հայոց թագաւորը տեսնում է, որ Անտոնիոսը
բոլորովին մօտիկ է՝ ստիպւած է լինում գնալ
նրա բանակը։ Անտոնիոսն այլիս չի տատանւում,
շղթայում է Արտաւազդին և տանում այն բերդի
առաջ, ուր նրա գանձերն էին պահւած. այստեղ
Անտոնիոսն երդւում է, որ չի եկել թագաւորին
վնասելու, այլ՝ միայն տուրքը վերցնելու, որին
ինքը իրաւունք ունի։ Կազօֆիլասիի պահապան-
ները հրաժարում են դռները բաց անել. միւս
կողմից՝ հայերն այս խաբեբայութիւնից վիրա-
ւորւած ապստամբւում են։ Արտաւազդի որդին
Արտաշէսը՝ կարողանում է իրեւ թագաժառանգ-
իւր իրաւունքները ճանաչեցնել տալ, գորքը ուր-
բան հրաժարակում է թագաւոր իրեւ Արտաւազդի
որդի։ Այս Արտաշէսը հռոմայեցոց հետ կուելիւ

հէնց առաջին անգամից ջարդւում է և փախչում
Պարթևների մօտ, ուր Պըատէսից ընդունւում
է իրեւ հռոմայեցիների թշնամի։ Անտոնիոսը մա-
սամբ բարեկամական պատրւակով, մասամբ ու-
ժով գրաւում է ամբողջ Հայաստանը և չի մը-
տածում պարթևների մասին, որոնք իրան սպա-
սում էին, բայց՝ որոնց վրայ այլիս չի յարձակ-
ւում։ Սրանից յետոյ Արտաւազդի հետ միասին
վերադառնում է Եղիպտոս. նա տանում էր Ար-
տաւազդին արծաթէ շղթաներով՝ ի պատիւ նրա
թագաւորական աստիճանին, տանում էր նոյն-
պէս Արտաւազդի որդիներին ու կանանց։ Անտո-
նիոսն իւր ճարպիկ քաղաքականութեամբ կարո-
ղանում է միանգամից թէ պարթևներին կղզիաց-
նել և թէ Հայաստանը թուլացնել ու հաւատա-
րիմ մի խնամակալի յանձնել։ Զկարողանալով
իւր որդուն հայոց թագաւորական ընտանիքի հետ
ամուսնացնել՝ Մարերի թագաւոր Արտաւազդի
աղջկայ հետ է ամուսնացնում և յայտարարում
Հայաստանի թագաւոր։ Այս տղան գեռ փոքր
էր, ուստի թագաւորութեան խնամակալութիւնը
յանձնում է աներոջը. մինչև փեսան կմէ ծանար։
Այս բանը տեղի է ունենում միենոյն 36 թւի
վերջերին։

Աղէքսանդրիայում Անտոնիոսն իւր յաղթու-
թեան համար մի հանդէս է կազմակերպում. Ար-
տաւազդը, իրա կանայքն ու երեխաները և հայ

բարձր ազնւականութիւնը հանդէս էին բերւած այդտեղ։ Անշուշտ կէօպատրան յաղթական հանդէսի թագուհին էր։ Անտոնիոսը մտածում է պալատում մի խնճոյք կազմել ի պատիւ կէօպատրայի և նրան մի խիստ մեծ յարգանք մատուցանել։ Այս խնճոյքին բերել է տալիս հայերին և հրամայում խոնարհել թագուհու վսեմափայլութեան առաջնարան կոչելով թագուհիների Թագուհի։ սակայն՝ մի թագաւորների Թագաւորի համար դա ըմբոստացնող անպատւութիւն էր, ուստի չնայած, որ աղատութիւն էր խոստացւել Արտաւազդին, եթէ յանձն առնէր այդ բանը, այնուամենայնիւ նա հրաժարւեց։ Արտաւազդն ու իր բարեկամները մնացին կանգնած և լուռ։ սրանք յարգանքի միայն մի բառ են ասում, անւանելով կէօպատրային իւր իսկական անունով՝ առանց որևէ տիտղոսի։ Անտոնիոսը, որ դրանց արծաթեայ շղթաները ոսկի շղթաներով էր փոխարինել, հրամայում է բոլորին էլ բանտը ձգել Յ4 թւին։

Քիչ յետոյ գալիս է Օկտավիանոսը, որը իւր հոչակաւոր հակառակորդի դէմ քաղաքականութիւն բանեցնելու համար, հայերի հետ բարեկամանում է և ուզում է նրանց թագաւորին ազատել։ Անտոնիոսը մարական մի քանի գունդ գործի վրայ յենւած, ստիպւում է պատերազմել Օկտավիանոսի դէմ Ասկայում։ Պրատէստ և Արտաշէսը օգտառում են հանգամանքից, մարերեւագդին, իշխանութիւնից զրկում, որը դիմում է Անտոնիոսի օգնութեան։ Արտաւազդը չկարողանալով օգնութիւն ստանալ, յաղթւում է և այդպիսով Մարաստանը անցնում է պարթեների ձեռքը. իսկ Արտաշէսն էլ Հայաստանի թագաւորութիւնը ձեռք բերելով այնտեղ ֆնացած հոռմայեցի բոլոր զինւորներին կոտորում է *): Անտոնիոսը տեսնելով, որ ինքը կորած է՝ սպանել է տալիս բանտարկւած Արտաւազդին, որպէսզի Օկտավիանոսը չկարողանայ նրան ազատել և նորից Հայաստանի ազգային թագաւորութիւնը վերահաստատել **): Երբ Օկտավիանոսը Հայաստանը գրաւեց՝ Արտաւազդի որդիներին և կանանց տարաւ Հռոմ։

Արտաշէսը (30—20 թ. ա.), որը Հռոմի հետուրիշ կոիւներ չի ունեցել բացի այն փորձից, որով ուզում էր իւր հօրն ազատել, համարեա թէ անծանօթ է մնում մեզ։ Տակիտոսը հաւատացնում է, որ Արտաշէսը թշնամի լինելով հոռմայեցիներին՝ Տիբերիոս կավախոս Ներոնը—Օկտավիանոս Օգոստոսի որդեգիրը — տապալեց Հայաստանի այս թագաւորին և նրա փոխարէն թագաւոր նշանակեց նրա եղբօր՝ Տիգրան Բ-ին։ Այս փոփոխութիւնը հաստատում է նաև Սւետոնը, որի ասելով Տիբերիոսն Արեւելքում հոռմայեցի զօրքերով

*) Խւտին, 502

**) Ստրաբոն, XI, 15

գործել է և Տիգրանին իւր ներկայութեան թագաւոր պատկել։ Ուրիշ պատմիչներն այս դէպքին հետեւեալ բացատրութիւններն են տալիս։ Հստ Դիօն կասսիոսի՝ Մեծ-Հայքի բնակիչները գոհ չէին Արտաշէսի կառավարութիւնից և դրա համար էլ խնդրեցին, որ նրա փոխարէն իր Տիգրան եղբօրը թագաւորեցնեն։ Այս Տիգրանը գտնւում էր Հռովմում և լաւ կրթութիւն էր ստացել այդտեղ, ահա այս ժամանակ է, որ Օկտավիանոսն իբրև թէ ուղարկել է Տիգրանին Տիբերիոսի զօրքերի պաշտպանութեան տակ։ Տիգրանն ուշ է հասնում։ Արտաշէսն արդէն սպանւած էր, բայց այդ հանգամանքը արգելք չի լինում կարծել տալու, թէ Տիբերիոսն ինքն է Արտաշէսին գահընկէց արել, նոր թագաւորին գահ բարձրացրել և այդ առթիւ զոհեր մատուցել աստւածներին։ Այս լէգենդան ընդունում է առանց քննադատութեան հօրասը և Տիբերիոսին հայատանի տէրն է համարում։ Վիրագիլիոսն ակնարկում է, թէ Տիբերիոս զինուորական գործողութիւններ է կատարել հայաստանում, որի Արաքս գետը գժւար չէր անցնել հոռմէական կամուրջներով։ Նոյնպէս էլ այս գարու շատ մեղաներ ցոյց են տալիս, որ հայաստանը յաղթւած է Հռոմից, մեղալի վրայ նկարւած է մի կին, որ պըսակը գլխին ընկած է Օգոստոսի ոտքերի տռաջայսպիսի մակագրութեամբ «Cesar div. f. Ar-

menia Capta»։ Սակայն կարող է պատահել, որ ոչ մի յաղթանակ տեղի չի ունեցել և անհատապէ մի յաղթանքով կտրւել այդ մեղալը։ Կամ թէ հայերը յոպնած լինելով կռւելուց ուզում էին խաղաղ մնալ Հռոմի հետ։ Յովսէփի պատմիչն ևս ասում է, որ Արտաշէսը սպանւեց, տասը տարի թագաւորելուց յետոյ և աւելացնում է, որ ոճարագործները իւր հարազատ ազգականներն էին։ Այս Տիգրան Բ-ի թագաւորութեան մասին բացարձակապէս ոչինչ չգիտենք։

Արա յաջորդ Տիգրան Գ. րդ (6—5 Ք. ա.) միայն մի տարի թագաւորեց իւր քոյր Երատօմիասին։ Տիգրանն ամուսնացել էր իւր յի հետ միասին։ Տիգրանն ամուսնացել էր այդ ժամանակ ։ Տիգրան Գ. րդը՝ Տիգրան Բ. րդի որդին էր։ Արա մահից յետոյ Երատօն գահից հրաժարեց, բայց յետոյ նորից թագաւորում է։

Ոմանց ասելով այս Տիգրան Գ. րդը բարբարոսների (որ) դէմ մղած կռւում սպանւում է։ Ռուբիշների ասելով 5 թւին Օգոստոսը սրան գառնկէց է անում, որովհետև պարթիների Պրահընկէց է անում, որովհետև պարեկամական յարաբեատէս թագաւորի հետ բարեկամական յարաբեարութեան մէջ էր, իսկ այդ հոռմայեցիների հարութեան մէջ էր, իսկ այդ հոռմայեցիների համար վիրաւորական էր։ Յամենայն դէպս այս Տիգրանը թագաւորել է, որովհետև հետքեր է թո-

*) Տակիտոս, Տարեգրութիւնք, II, 3 և 4.

Պատերկուլոսն էլ է պատմում այս միենոյն բանը մի քանի մանրամասնութիւններով.—Կայոսն անխոհեմ զտնւեց, երբ այս երկիրը առանց դըժւարութեան գրաւելուց յետոյ՝ անզգոյշ կերպով մօտեցաւ Արտագերս բերդին. այստեղ նա վիրաւորւեց Աղդօն անունով մէկից։ Այս միջնադէպը աւելի մանրամասն պատմում է Դիոն Կաստոսը. Աղդօն իբր թէ խնդրել է Կայոսին խորհրդակցութեան գալ պարթեների մասին խօսելու, սակայն՝ Սեկատուս Բուֆուսը սրա մի ուրիշ փոփոխակն է պատմում, Դօմինոս (Աղդօն) եկել է փոխակն է պատմում, Դօմինոս (Աղդօն) եկել է կայոսի մօտ, ներկայացել նրան իբրև իւր թակայութիւն է մամակ է տւել նբան, գաւորից ուղարկւած և մի նամակ է տւել նբան, որի մէջ եղել է Հայաստանի գանձերի ցուցակը. Երբ զօրավարը այդ հետաքրքիր նամակն էր կարդում, Դօմինոսը յարձակւում է նրա վրայ և գաղույնի հարւածով վիրաւորում. Աղդօն իսկոյն հոռմայեցի օֆիցիէրներից. Իսկ Կաստովանւում է հոռմայեցի օֆիցիէրներից. Աղդօն իսկոյն իւր զօրքով գնում է Եգիպտոս, ուր և մեռնում է. Դիօն Կաստոսիուսը տալիս է Արտաւագդի անկման պատճառը, և չնայած, որ նա Տակիտոսի պէս ժամանակակից չի եղել այդ գէպքերին, սակայն՝ այն առաւելութիւնն ունի, որ աւելի մօտիկ է եղել այդ գէպքերի թատերաբերի մօտիկ է եղել այդ գէպքերի թատերաբերին. սրա ասելով, հայերը տեսնելով, որ Արտամին. սրա ասելով, հայերը տեսնելով, որ Արտաւագդը (ըստ այս հեղինակի Տիգրան Բ-ի եղբայրներագդը) նորից դաշնակցել է պարէ այս Արտաւագդը

թեների հետ և այդ դաշնակցութիւնը կարող էր հռոմայեցիների կողմից պատերազմ ծագեցնել, ուստի գահընկց են անում այս թագաւորին։ Այսպէս՝ երբ Կայիսուր գալիս է, հաւանօրէն ոչ մի առիթ չի ունենում ամբողջ ազգի դէմ կուելու, բացի մի քանի մարդկանցից, որոնք գահազուրկ եղած թագաւորի կուսակիցներն էին, ինչպէս այս Ադրօն էր, որը ամենայանդուգն արկածախնդրութիւնն էր յանձն առել։ Թագաւորի այս կուսակիցներն այնքան յանդուգն էին, որ Պրա-ատէսը շտապում է Հայաստանից պարթեներին դուրս բերել և Կայիսուի հետ խաղաղութեան դաշն կապել. սա այն ժամանակն էր, երբ վերջինս Ա-սորիքի կառավարիչն էր և չէր ցանկանում, որ այդ յուղումներն անպատիժ մնան։ Այսպիսով հաս-կանալի է դառնում, որ պարթեները պէտք է փորձէին գիմագրել Հայաստանի վրայ իշխող դար-ձած մարերին (Ք. ա. 2 թւին հռոմայեցիների օգնութեամբ մար Արիոբարզանն էր բարձրացել Հայաստանի գահը)։ Նրանք երկու տարի խանդա-րում են Արիոբարզանի թագաւորելը, մինչև որ Կայիսուր գտիս է և նրան հաստատում իւրիշ-խանութեան մէջ 1 թւականին։ Սակայն՝ սրա-նից յետոյ էլ Արիոբարզանը միայն մի տարի է իշխում, 2 թւին Օգոստոսը Սենատի համաձայ-նութեամբ իւր որդի Արտաւազդ Եղի Մետացուն է պակում թագաւոր (2—11 Ք. յ.) հայերի վը-

րայ։ Այս դէպքերի ժամանակագրութիւնը հեշ-տութեամբ չի վերականգնում։ Սէքստոս Բու-ֆուսը այդ դէպքերը դնում է Օգոստոս Օկտա-վիանոսի ժամանակ, որի թոռն էր Կայիսուը. հե-ղինակն ասում է, որ Հոռմը Հայաստանում ձեռք-բերած իւր մեծ հեղինակութեան, մեծ ոյժ ու-նենալու համբաւի շնորհիւ էր, որ կարողացաւ Հայաստանի յեղափոխութիւնը ճնշել և պարթե-ների հետ կապած դաշնագրութիւնը քանդել։ Այս պատմիչը հաւաստիացնում է, որ այդ ժա-մանակ Հայաստանը աւելի զօրեղ էր, քան թէ պարթեների երկիրը, և նա Կայիսուին էր, որ պա-տիւ արեց և ենթարկեց։

Երբ Արտաւազդ Մետացին այլևս չկար-յայտնի չէ թէ նա իր բնական մահով է մեռել թէ ոչ—Օգոստոսը յաջորդ է նշանակում Ար-տաւազդ անունով մէկի։ Այս Արտաւազդ Ա-ը միմիայն զահ է բարձրացել, որից զատ՝ ուրիշ ո-չինչ չի արել։ Սրանից յետոյ Տիգրան Դ.ն է ե-ղել (11—14 Ք. յ.): Այս թագաւորները նշա-նակում էին միշտ ժառանգական օրէնքի համա-ձան։ Օգոստոսը թագաւորական տան ժառան-գութեան իրաւունքները յարգում էր, միակ բա-ցառութիւնն իւր որդի Արտաւազդ Մետացին է կազմել, այն էլ քաղաքագիտական անհրաժեշ-տութիւնների պատճառով։ Այս յաջողութիւննե-րը հաստատում էն մի դոկումէնտով, որը «Օ-

գոստոս Օկտավիանոսի կտակ» անունով է յայտնի: Էնկիւրիում գտնւած այդ գոկումէնտում ասւած է, «Մեծ-Հայքը, իւր թագաւոր Արտաշէսի սպանութիւնից յետոյ, կարող էր դառնալ հռոմէական մի նահանգ եթէ ես ուղենայի. ես, իս նախնիքների օրինակին հետևելով, գերագաս համարեցի այդ երկիրը իմ որդեգիր Տիբերիոս ներսոնի ձեռքով տալ Արտաւազդի որդի Տիգրանին, որը Տիգրան Մեծի թոռն էր: Յետոյ երբ այսպզը ապստամբւեց Հռոմի դէմ, ուղարկեցի իմ որդի Կայիոսին և այդ թագաւորութիւնը յանձնեցի մարերի թագաւոր Արտաւազդի որդի Արեւարդանին, իսկ սրա մահից յետոյ, իւր Արտաւազդ որդուն: Երբ այս վերջինն սպանւեց, Տիգրանին ուղարկեցի Հայաստանի վրայ թագաւորելու. այս Տիգրանը Հայաստանի թագաւորական անից էր» *):

Պաշտօնական դոկումէնտների մէջ յիշատակութիւն չկայ Երատոյի մասին: Սակայն՝ Դիօն Կասսիւսին ասելով Տիգրան Դ ից յետոյ գահ է բարձրացել Երատօն: Եթէ այսպէս ընդունենք, այն ժամանակ այս երկուսի յաջորդական իշխանութիւնը պէտք է տեղաւորենք 11-ից մինչև 14 թւականը:

Այսպիսով վերջանում է Արտաշիսեան հայ հարստութեան շրջանը:

*) Գաթրճեան. Բնդհանուր պատմութիւն Բ. հ. էջ 97. Ծան. 2.

Բ. Գ Լ Ո Ւ Խ

ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երատօն գահից քշում է 13 թէ 14 թւին, բայց՝ յայտնի չէ թէ ումից և ինչ պատճառով *): Սրանից յետոյ հայերն ազգային իշխան չունենալով՝ չգիտէին թէ ինչ պէտք էր անել:

Այս ժամանակներում պարթեներն ապրստամբւում են իրենց թագաւորի՝ Պրատեէս Դ-ի որդի Վօնօնէս Ա. դէմ: Ապստամբութեան պատճառն այն էր, որ Վօնօնէսը կրթւել էր Հռոմում և այնպիսի սովորութիւնների էր հետևում, որոնք իր ժողովրդին հաճելի չէին. Այս միապետը, որը գահի էր ձգտում, Հայաստանում երևալուն պէս կարողացաւ իրան թագաւոր հրատարակել և երկու տարի իշխանութիւն վարել (14—16): Պէտք է որ այս թագաւորը բնաւորութեամբ թոյլ եղած լինէր և սրա ժամանակ Հայաստանը որոշ չափով ընկած, կորցրած իւր ոյժը, որով-

*) Տակիտոս. Տարեգրութիւնը, 11, 4.

հետև պարթեները իրենց ուղածի պէս կարողանում էին խաղալ թէ մէկի և թէ միւսի հետ։ Արտաւան Գ (12—42), որ Պարսկաստանում փռխարինեց Վօնօնէսին, ոխ էր պահել զերջինիս դէմ և ուղում էր նրան բոլորովին ոչնչացնել։ այս պատճառով Արտաւան Գ. խնդրում է Հոռմի Սենատին Վօնօնէսին հեռացնել Հայաստանից, հակառակ դէպքում սպառնում էր պատերազմ՝ յայտարարել հոռմի դէմ՝ գրաւելով այդ վասսալ թագաւորութիւնը։

Տիբերիոս կայսը չը կամենալով նոր արկածի մէջ ընկնել և յիշելով, թէ պարթեները ինչպիսի հարւածներ են տւել Կրասոսին ու Անտոնիոսին, համաձայնում է խորամանկութեամբ բաւարարութիւն տալ։ Կայսը հրամանով Ասորիքի կառավարիչ Կրետիկոս Սիլանոսը, իբրև բարեկամ, Վօնօնէսին հրաւիրում է իւր մօտ և շղթայում։ Սակայն՝ Արտահանը սրանով չի բաւականանում, նա Ասորիքը շատ մօտիկ է համարում, ուստի դարձեալ սպառնում։ այն ժամանակ բանտարկեալին տեղափոխում են Կիլիկիա։ և որովհետև Վօնօնէսը փորձում է փախչել, ուստի բռնում և նրան սպառնում են 19 թւականին *):

Հայերը տեսնելով, որ իրենց հետ այսպէս են վարւում ապստամբութեան որոշ նշաններ են

*) Տակիտոս. վերոյիշեալը. II 4, 58, 68.

ցոյց տալիս, այնպէս որ Տիբերիոսն ստիպւած է լինում մի բանակ ուղարկել Հայաստան Գերմանիկոսի առաջնորդութեամբ։ Տակիտոսը նկատում է, որ հայերի հպատակութիւնը, հաւատարմութիւնը հէնց սկզբից, երբեք անկեղծ չի եղել երկրի աշխարհագրական դիրքի պատճառով։ Հայաստանը կամած էր հոռմէական բազմաթիւ նահանգների և տարածում էր մինչև Մարաստանի խորքերը, այդպիսով նա հանդիսանում էր իբրև մի զսպանակ պարթեների և հոռմայեցոց միջի։ Հայերը քնիկ, ազգային իշխաններ չունենալով, օտարները նրանց աշքում հաւասար էին, ուստի Վօնօնէսի այս սպառնութիւնը չկարողացաւ առաջ բերել նրանց մէջ իշխատ վիրաւորանք, որ առաջ կգար, եթէ այդ անարգանքն ազգային մի իշխանական ընտանիքի համնէր։ այս պատճառով էլ Գերմանիկոսին մեծ նեղութիւն չպատճառեցին, միայն խնդրեցին, որ իրենց վրայ թագաւոր նշանակի Պոնտոսի թագաւոր Պոլեմոնի որդի Զենօնին։ Այս անձնաւորութիւնը հայերին գրաւել էր նրանով, որ երիտասարդ հասակից նրանց սովորութիւնների համաձայն էր ապրել, անձնատուր էր եղել որսի, մեծ-մեծ խնճոյքներ էր սարքել, խօսել և վարւել էր նրանց ճաշակով, նրանց տրամադրութիւններով։ Երևում է, որ հելլենիզմը հոռմէական քաղաքակրթութեան միջոցով գեռ չէր կարողացել թափան-

ցել ոչ հայերի և ոչ էլ յատկապէս պարթեների մէջ։ Գերմանիկոսը լաւ համարեց հայերի ցանկութեանը բաւարարութիւն տալ, ուստի գալիս է Արտաշատ Զենօնին թագաւոր պսակելու, որին հայ ազնւականութիւնն իւր յարգանքն է մատուցում և իբրև պատիւ նրան անւանում Արտաշէս Բ-ըդ։ Այս օտարականի իշխանութիւնը տեսեց 19-ից մինչև 34 թւականը։ Զնայած որ առանց որևէ պատերազմական գործողութիւնների, միայն բանակցութիւնների միջոցով էր գործը տարւել, այնուամենայնիւ Սենատը Գերմանիկոսին և Դրուսոսին հրաւիրում է Հռոմ վերադառնալ իբրև յաղթանակողներ։ Գերմանիկոսը Կիլիկիայից անցնելիս թունաւորուում է։

Պարթեները հեշտութեամբ չէին հաշտւի այս դրութեան հետ, որով իրենց ցանկութիւնները ի գերեւ էին ենում։ Զենօնի մահից յետոյ, նրանք ստիպմամբ Հայաստանին իրենց թագաւորական տնից մի իշխան տւին՝ Արտաւանի որդի Արշակին։ Արտահանը իր որդուն բռնի Հայաստանի գահը բարձրացրեց։ Տիբերիոսը աչք փակեց, իսկ Արտաւանն այնքան առաջ գնաց, որ Կապագով կիան էլ գրաւեց։ Հռոմը կամենալով խուսափել մի նոր պատերազմից՝ գտնում էր, որ վատանգը այնքան էլ թեթև ու ենթագրական չէր, ինչպէս այդ վերջին անգամ հայերի վերաբերմամբ էր, այլ իրական, որովհետև պարթեների հետ պէտք

է պատերազմէին, այդ պատճառով էլ աշխատեց և յաջողւեց քաղաքագիտական ճարպիկութիւններով նեղ գրութիւնից ազատւել։ Տիբերիոսը մի միջոց է գտնում. նա գրգռում է վրացիների փառասիրութիւնը. սրանց Փարսման թագաւորը կարծելով, որ հարկ եղած դէպքում կարող կը լինի Հռոմի օգնութեան դիմել, առիթից օգտառում է իւր իշխանութիւնը մեծացնելու համար. սրա եղբայր Միհրդատը բարձրանում է հայոց գահը։ Այս ինտրիգան իւր ցանկալի հետևանքն ունեցաւ. Արտաւանն ստիպւեցաւ Կապագովկիան թողնել և իւր որդուն օգնութեան համնել։ Արտաւանը կարծում էր, որ կարող է օգտւել Տիբերիոսի ծերութիւնից իւր ծրագիրը իրականացնելու համար, սակայն՝ նա մոռանում էր Հռոմի այդ եղակի վարպետ քաղաքագէտի դիւանագիտութիւնը։ Նա կարծում էր, որ մի արշաւանքով կարող կլինի Վօնօնէսի գանձերը պահանջել իւր համար, և արդէն իւր պատվիրակները թէ Կիլիկիայում և թէ Ասորիքում այդ պահանջը դըրել էին, սակայն գրանք զուր ջանքեր մնացին։ Զնայած որ Արտաւանին յաջողւեց Արշակը նորից գահ բարձրացնել, սակայն Հռոմն էլ այնքան վերջնականապէս տապալելու համար։

Ահա այսպէս առաջ են գալիս մի շարք

դէպքեր, որոնք շատ յաճախ են պատահում և շատ բնորոշ են արկելեան զանազան ազգերի պատմութեան մէջ։ Միհրդատն օգնում է իւր հօր՝ Արշակի պալատում դաւաճաններ գտնելու, որոնք Արշակին սպանում են, վրացիները գրաւում են Արտաշատը՝ Արտաւանն ուղարկում է իւր միւս որդուն՝ Օրօդէսին վրէժինդիր լինելու համար, ամբողջ երկիրը կրակի է մատնըւում։ Պարթևները մեծ քանակութեամբ վարձկան զինւորներ էին հաւաքել։ Փարսմանը կարողանում է իւր կողմը գրաւել Աղւաններին և զօրք է վերցնում Սարմատացիներից, այս վերջինները իրենց սովորութեան համաձայն այն կողմումն էին կռւում, որն աւելի էր վճարում։ Սրանցից մի մասը պարթևների հետ էր կռւում, միւս մասն էլ վրացիների։ Կովկասի Պատւարի շնորհիւ, հեշտ էր վրացիները համար բարեկամների զօրքը շուտով իւր հետ միացնելու, միւս կողմից՝ թոյլ չտալու, որ ուրիշ զօրք այդ անցքերից անցնի և գնայ միանայ պարթևների հետ։ Այսպիսով վրացիները թւով աւելի զօրք ունեցան։ Փարսմանը չսպասեց, որ հակառակորդը պատրաստի։ Նա յարձակւեց Օրադէսի բանակի վրայ, խեց ձիերի համար եղած պաշարը և մի քանի անգամ պաշարեց նրան։ Պարթևներն ստիպում են իրենց գլխաւորին պատերազմն սկըսել։ Նրանք ունէին լաւ հեծելազօրք, իսկ վրա-

ցիների հետևակն էր գերազանց, որովհետև վրացիներն ու աղւանները լեռնականներ էին և անտառների բնակիչներ, ուստի թէ աշխատանքի մէջ էին մխւել և թէ, շատ դիմացկուն էին. Երբ Օրօդէսը իւր պատրաստութիւնները վերջացնում է, նա հպարտութեամբ յայտարարում է, որ ինքը Արշակունի մեծ թագաւորների սերնդից է և չի ուզում վրացի անյայտ գոեհիկների պէս, առանց ամաշելու, վարձկան զօրքով պատերազմ մղել։ Սակայն՝ դա մի կեղծիք էր, որով ուզում էր իւր զայրոյթը թագցնել քիչ վարձկան զօրք ունենալու համար։ Փարսմանը հպարտութեամբ պատասխանում է, որ ինքը հայերի նման պարթևների լծի տակը չէ, որքան իսկ նման պատերազմը խիստ լինի՝ այնքան իւր փառը պատերազմը խիստ լինի՝ այնքան իւր փառը կամաշի։ Փարսմանայ, իսկ հակառակորդը կամաշի։ Փարսմանն իւր զօրքին հպացըրել էր երկաթէ զրահներ, իսկ թշնամու զրահները փայլում էին ոսկու գոյնով։ Շուտով կերեւայ թէ քաջութիւնը որ կողմն է *): Սկզբում վրացիներն ու աղւանները յաջողւում են խառնաշփոթութիւն ձգել պարթևների հեծելազօրքի և հետևակների մէջ պարթևների հեծելազօրքի շատերով։ Յետոյ՝ երենց շատ հեռու կտրող նետերով։ Յետոյ՝ երկու թագաւորները հանդիպում են իրար։ Փարսմանը մի սոսկալի հարւած է տալիս Օրօդէսին,

*) Տակիտոս. վեր. յիշ. VI, 34.

որը պաշտպանւում է իւր սաղավարտով և կարողանում է խուսափել իւր թիկնապահների օգնութեամբ. սակայն՝ իսկոյն ձայն է տարածւում, թէ նա ընկել է. պարթեներն սկսում են փախչել. Արտաւանը այս ամօթաբեր նահանջից դրդւած՝ կամենում է մի նոր ճակատամարտով Օրոդէսի վրէժը լուծել, սակայն՝ աղւաններից ջարդւում է: Այս պարտութիւնն էլ նրան չի յուսահատեցնում, նա ուզում է դարձեալ մտնել Հայաստան, սակայն Վետելիուսը լուր տարածելով, թէ ինքը պատրաստում է Միջագեաքի վրայ յարձակւել, Արտաւան հրաժարւում է իւր այդ մըտագրութիւնից *):

Ահա այդպէս Միհրդատ վրացին վերահաստատւում է Հայաստանի դահի վրայ: Նա իշխեց 39-ի մինչ 52 թւականը, սակայն՝ մի ընդհատումով. Կալիկուլայի ժամանակ (37—41) նա կանչւեց Հռոմ. պարթեների վախից Հռոմը Կայիս Կեսարին ևս յետ կանչեղ, որից յետոյ պարթեները շտապեցին Դիմօնաք անունով մէկին նշանակել տալ Հայաստանի կառավարիչ, որի ընտրութիւնը շատ լաւ էր, որովհետեւ բնիկ իշխան չէր և միայն կառավարիչ տիտղոսն էր կրում, որով ցոյց էին տալիս, թէ Հայաստանն այլևս Հռոմի վասսալը չէ, այլ՝ պարթեների:

*) Տակիտոս. ibid V, 36.

Հռոմը այս վճիռը չէր կարող երկար ժամանակով ընդունել. Կալիկուլայի մահից յետոյ, Կլոդիոս Կայսրը (41—53) նորից վերահաստատում է Միհրդատին՝ յոյս ունենալով, որ նրա հայրը կը հրդատին՝ յոյս ունենալով, որ նրա հայրը կը պաշտպանի իւր որդուն. և այս անում էր այն պատճառով, որ վրաց թագաւորը մի նամակ էր գրել և յայտնել, թէ պարթեները ներքին կոիւներ ունեն մի նոր թագաւոր ընտրելու առթիւ. այս նամակում յայտնած էր, որ պատրաստ է դէպքից օգտել: Հռոմէական մի բանակ դրւում է Միհրդատի արամադրութեան տակ, որով նա պարթենէ գրաւում, իսկ վրաց զօրքով էլ դաշտային տեղերն է սապատակում: Պէտք է ենթագրել ու հայերը նախամեծար էին համարում թագրել, որ հայերը նախամեծար էին համարում պարթեների իշխանութիւնը, քան թէ վրացինեպարթեները միացել էին Դիմօնաքի ըինը, որովհետեւ նրանք միացել էին Երեսուն հին թագաւորին՝ հետ և դիմագրում էին իրենց հին թագաւորին՝ Փարսմանի որդուն. սակայն՝ այս անգամ էլ, Կոտեղի են տալիս: Փոքր-Հայքի մի թագաւոր, Կոտեղի են տալիս անունով, մտածում էր հայերին պաշտիուս անունով, իւր երկարացնել վրացիների պանել և յօդուտ իւր երկարացնել վրացիների կոփիւները: Սակայն որովհետեւ նա գրաւումների կոփիւները: Սակայն որովհետեւ նա Հռոմի վասսալն էր, ուստի ստիպւած էլինում յետ կենալ՝ երբ Կլօդիոսից սպառնալից նամակ է ստանում: Այսպիսով Միհրդատին յաջողւում է ամ-

բողջ Հայաստանը ընկճել և նորից գահ բարձրաւալ *):

Կլոտիոսի թագաւորութեան ժամանակ հայերը ոչ թէ անհաւատարմութիւնից դրդւած, այլ մի փառասէրի ինտրիգներից, պատերազմի են դուրս գալիս վրացիների դէմ, և այս առիթ է դառնում նոր կուի պարթեների և հոռմայեցիների մէջ։ Պարթեների թագաւորն էր Վաղարշակը, որի գործերը մեր խնդրի հետ կապ չունեն, որովհետեւ դրա օրով պարթեներն ուղղակի ոչ մի ազգեցութիւն չեն ունեցել Հայաստանի վրայ։ Ահա այն դէպքերը, որոնց համար թատերաբեմ էր Հայաստանը, որքան որ Փարսմանը ծերանում էր, այնքան աւելի էր վախենում, թէ իւր կրակոտ, ամհամբեր գահին սպասող որդին, երիտասարդ Ռադամիզան իրան կը սպանի։ Փարսմանը լաւ է համարում այս փառասէր, անխիղճ մարդու ուշադրութիւնը դարձնել դէպի իւր հօրեղբայրը։ Անշուշտ Փարսմանը նրան խորհուրդ չէր տայ յայտնի կերպով, առանց պատճառի յարձակում գործելու, այլ նախ պատրրւակներ պէտք է գտնէր։ Մի լաւ միտք էր այդ. Ռադամիզաը գնում է Միհրդատի մօտ և նրան հաւատացնում, որ կուել է իւր հօր հետ և այլիս չի ուզում նրան տեսնել մինչև որ ան-

համաձայնութիւնը չի վերացւի։ Միհրդատը լաւ ընդունելութիւն է ցոյց տալիս իւր եղօրորդուն, որով Ռադամիզաը միջոց է ունենում իւր ասպնջականի դէմ գաւեր լարելու. Երբ Ռադամիզաը արդէն բաւականին կուսակիցներ ճարել էր, յայտնում է, որ ինքը հաշտւել է իւր հօր հետ և ուզում է վերադառնալ նրա մօտ։ Ռադամիզաը հայրը տեսնելով, որ նորից Թամոկլեան սուրը կախւել է իւր գլխին, եթէ չաշխատի իւրագործել այն յոյսերը, որ ինքն էր ծնեցրել, ուստի կուի պատճառ է որոնում Հայաստանի գահի վրայ իւր զօրքի շնորհիւ բազմած եղբօր դէմ։ Պատերազմը յայտարարւում է. Ռադամիզաը յարձակում է Միհրդատի վրայ և փախցնում նրան։ Միհրդատի ձեռքին մնում է միայն իր բերդերը. նա ապաստանում է այդ բերդերից մէկում Խորնիզում (գուցէ Գառնի, Երևանի մօտ), որը մեծ քաջութեամբ պաշտպանում էր հոռմայեցի մի հազարապետի՝ Կէօլիւս Պօլիօնի և հարիւրապետ կասպերիուսի շնորհիւ։ Դիրքը շատ լաւ էր. ինչպէս բոլոր բարեարուները, այնպէս էլ Ռադամիզաը վարժ չէր պաշարողական գործողութիւնների մէջ, ուստի շատ մարդ է կորցնում բերդի վրայ գրոհ տալու պատճառով. նա տեսնելով որ չի կարող ուժով ամրութիւնը գրաւել, աշխատում է կաշառը վընկճել։ Կասպերիս լսում ինդրում է Պօլիօնին, Հռոմի պաշտպա-

*) Տակիտոս. Անսալներ. XI, 9.

նած թագաւորին չվաճառել թշնամուն. Պոլիօնը կասպերիուսին ուղարկում է Փարսմանի մօտ խնդրելու, որ պատերազմը դադարեցնի և այդպիսով ազատում է այդ վատ խորհրդատուից: Այժմ ազատ լինելով իւր ցանկութեամբ գործելու աշխատում է Միհրդատին համոզել անձնատուր լինելու, իրենք թւով շատ չեն, միւս կողմից՝ չի կարելի հայերի վրայ յոյս դնել, վըստահանալ. թագաւորին մնում է միայն այս բերդը, որը երկար չպէտք է կարողանայ դիմադրել. ամենախելօք միջոցն է անձնատուր լինելը, իսկ Ռազմիզտը վճռել է ընկճել բերդը»: Վերջում Միհրդատը զիջում է. պաշարողների և պաշարւածների մէջ որոշումէ տեղը և ժամանակը իրարտեսնելու և անձնատուր լինելու պայմանների մասին խօսելու համար: Երբ Ռազմիզտը իւր հօրեղբօրը տեսաւ՝ իսկոյն գրկեց, փայփայեց և պատիւ տւեց անւանելով եղբայր և հայր (իրօք միաժամանակ նա թէ Միհրդատի փեսան էր և թէ եղբօր որդին), երգում անում, որ նրա կեանքի դէմ երբէք ոչ սրով և ոչ թոյնով չի գործի: Յետոյ տանում է նրան անտառ աստւածներին զոհ մատուցանելու: Նա դաշինքի մի առաջարկ է անում: և կատարում է ամենասրբազան ձեռվ: Այսպիսի դէպքում, ինչպէս սովորութիւն էր բարբարոս թագաւորների մէջ, երկու թագաւորները իրենց աջ ձեռքի բթամատերը պէտք է միացնէին, ա-

պա գոխադաբար ծակէին և արիւնը խմէին. Ռազմիզտի օֆիցէրներից մէկը մօտենում է այս արարողութիւնը կատարելու, և նախ քան բուժմատը բռնելը, խոնարհում է Միհրդատի առաջիրը թէ նրան պատիւ տալու համար, ձեռքով բռնում է նրա ծնկներից և գետին տապալում: Միհրդատին շղթայում են և դնում մի կառքի վըրայ. Ռազմիզտն իւր երդումը չի դրժում. նա ոչ սրով և ոչ էլ թոյնով է սպանում իւր բանտարկեալին, այլ՝ հրամայում է ջախջախել. միւս կողմից՝ որպէսզի Միհրդատի երեխաների աղիողորմ լացը լոեցնի, հրամայում է նրանց ևս խողիսողել:

Երբ այս դէպքերի լուրը և Հայտստանում Ռազմիզտի գահակալութեան յայտարարութիւնը հռոմ հասաւ՝ սենատն ու կայսրը յարմար համարեցին չմիջամտել, որովհետև իրենց քաղաքականութեան համար օգտակար էր, որ Ասիայի բարբարոսները միմեանց յոշոտելու, պատառուելու վրայ թափեն իրենց եռանդը: Պէտք էր միայն ձեսկանութիւնները լու կատարէին: Հռոմը խնդրում է Փարսմանին իւր որդուն յետ կանչել. սակայն նա ոչինչ չի անում: Հռոմը ուղարկում է մի բանակ Իլիուս Պելինիւսի առաջնորդութեամբ այդ բանում համոզելու. այս բանակը ընդհարւում է բարբարոսների հետ, որոնք ինչպէս միշտ՝ այժմ էլ թւով առաւել էին: Հռոմայեցի առաջնորդն

ստիպւած է լինում Ռադամիզտից օգնութիւն խնդրել, որը Հայաստանի թագաւորն էր, իլիուս Պելինիուսը շատ լաւ օգտում է դրութիւնից, նա կարողանում է Ռադամիզտի պալատում ասպարագանութիւն գտնել, այն Ռադամիզտի, որին իւր իշխանութեան մէջ հաստատուն պահելու համար էր եկել. նա համաձայն է Ռադամիզտին հանգիստ թողնել, որը մեծ փող էր խոստանում. վերջապէս խորհուրդ է տալիս նրան ոչ ոքից չվախենալ և գահն իրան պահել: Սակայն՝ սա Հռոմի մեծապատութեան խիստ հակառակ մի ընկրկումնէր: Ասորիքից մի աւելի եռանդու ագենտ է ուղարկում Հելվիդիուս Պրիսկուս անունով. սա անցնում է Տաւրոսը, համոզելով ամեն տեղ խաղաղութիւն է հաստատում. սակայն՝ պարթևներն ստիպում են որան յետ գառնալ Ասորիք, ուր պարթևներն օգտելով նրա բացակայութիւնից, մի նոր արշաւանք սկսելու փորձն էին ուզում անել:

Այս ժամանակւանից սկսում է Հայաստանը սեփականացնելու անվերջ ձգտու մների մի շրջան: Մինչև հայերի քրիստոնէութիւն ընդունելը՝ հռոմայեցիների և պարթևների մէջ անընդհատ կոհիւներ էին տեղի ունենում. վերջիններն ուզում էին տիրել Հայաստանին սեփականացնելով նրա գահը, նրա թագաւորութեան իրաւունքը. առաջիններն էլ վճռել էին այս երկ-

ըում իշխաններին ընդունել իբրև լոկ վասարներ. վերջի վերջոյ հռոմայեցիները տեսնելով, որ անհնարին կլինի այդ՝ սկսեցին աշխատել Հայաստանը հռոմէական մի նահանգ դարձնել. Հռոմները այս վճիռը կայացըեց, անիշխանութեան մէջ երբ այս վճիռը կարողացաւ Հայաստանը այդպէս պահել. նրա թուլութիւնից օգտեց Հայաստանն իւր անկախութիւնը վերականգնելու ձիշաւ այն ժամանակ, երբ նա պատշաճութիւննէութիւնը, որով վերը աստ էր ընդունել քրիստոնէութիւնը, մեր այս պատմութիւնը: Արեւելքի ու արևմուտքի, այդ երկու կայսրութիւնների կենդանի ուժի և խորամանկութիւնների ընդհարման պատմութիւններն այնքան էլ շահեկան չեն, սակայն դրանց մէջ կան բազմաթիւ բնորոշ մանրամասնութիւններ, որոնք հնարաւորութիւննեն տալիս դատելու այդ ժողովրդներին: Հռոմայեցիների մեծ հռչակը, որն այս ամբողջ շրջանում փայլում է, երբեմն տեղի է տալիս հակառակորդի առաջ, որովհետեւ իբրև նրանց յաղթութիւններն այնքան էլ նպաստաւոր չեն եղել ինչքան առանդութիւնն է ձգտում ցոյց տալ. նբանք երեւեմն յաղթել են առանց կաթիլ արիւն թափեւեմն էլ ժամանակաւորապէս ջտխջախուել են, սակայն՝ Հռոմի ոյժը անխոնջ կերպով ձգտում էր առաջ տանել իւր պահանջները մինձ չել որ քաօսի և գերմանական արշաւանքների մէջ

նսեմանում, խաւարում է։ Միւս կողմից՝ պարթեներն էլ պակաս յամառութեամբ չէին ձըգտում Հայաստանի գահին տիրապետելու, ոչ էլ յետ էին մնում իրենց ներքին քաղաքականութեամբ՝ ներքին երկառապետութիւններն էին, որ միջոց աւին հոռմայեցիներին վերջնականապէս դուրս քշել պարթեներին։ Հայաստանի գահին ձգտող պարթեները հանդէս չեն գալիս իբրև յանդուգն, կատաղի յափշտակիչներ, այլ նոյնիսկ ստորացուցիչ հպատակութիւն յանձն առնողներ, երբ տեսնում էին, որ չնայած մասնաւոր յաղթութիւններին՝ լատին թշնամու դէմ դարձեալ ստիպւած էին պատերազմը շարունակել։ Արանք աւելի շատ հնագանդում էին բարոյական ոյժի առաջ, քան թէ ֆիզիքական ուժից ընկճըւում. գալով հայերին՝ մարդ չի իմանում ինչ ասի նրանց բռնած դիրքի մասին, կարծէք հայրենասիրութեան ոգին ամբողջապէս մեռել է դրանց մէջ, օտարների ոչ մի անպատկառութեան հանդէպ չեն ըմբոստանում. մենք արդէն տեսանք, թէ ինչպիսի հլութեամբ ընդունեցին վրացիների լուծը և ինչպիսի անտարբերութեամբ հանդիսատես դարձան այն ստոր ու վայրենի ինտրիգներին, որոնցով ուզում էին Հայաստանի վրայ իշխելու իրաւունքն իրենց ձեռքին պահել։ Այժմ էլ թոյլ են տալիս, որ պարթեները ծածկեն հայոց թագաւորների թագը, անընդհատ

պատերազմներ գրգռեն հայոց լեռների վրայ և այդպիսով աւերածութիւնների պատճառ դառնալ, հայերը թոյլ են տալիս, որ Արևմտեան օտարականներն իրենց վրայ օրէնքներ դնեն, և այս բոլորը տանում էին առանց փորձելու տէր դառնալ իրենց երկրին, առանց մտածելու և Տիգրանի թագին հարազատ մի ժառանգը առաջ քաշշել և մաքրելու երկիրը օտարականներից. Նրանք շեն հրաժարւում զինտորական ծառայութիւն մատուցանելուց և ուրիշ անպատւաբեր պարտականութիւններ կատարելուց պարթև թագաւորների համար, որոնք յաւակնութիւն ունէին հայերին ամբողջապէս ձուլելու. մենք կարծում ենք, որ այս ժամանակաւոր զիջողութիւնը, որին քրիստոնէութիւնը վերջ է դնում հայերին ազգային ինքնագիտակցութեան բերելով, բացատրում է նրանով, որ այդ ազգը իւր քաղաքական կազմութեամբ բաժանւած էր ցըրեւ եկած ու միմեանց դէմ նախանձախնդիր ցեղերի։ Այս կտրտւած բարձրաւանդակի իւրաքանչիւր դաշտավայրը, իւրաքանչիւր հովիտն իւր շէֆն ունէր, որը չէր վասարի եթէ իւր դրացին ուժեղանար, բարձր դիրք գրաւէր։ Արանք բոլորն էլ հաւասարապէս թոյլ էին և բընական է, որ ոչ ոք չպէտք է կարողանար ընդհանուր շահերի մասին մտածել, հոգալ և բոլորին կոչ անել, ի մի խմբել։ Հայ ազգը վերակենդանանում է օտարների իշխանութեան ժակենդանանում է օտարների իշխանութեան ժա-

մանակ, այն օտարների, որոնց ընդունել և ձու-
ձել էր շնորհիւ իւրացնելու, ձուլելու այն հրաշա-
լի յատկութեանը, որով Ասիայի ամենաբազմա-
տարր տիպերից մէկը դարձաւ և շնորհիւ այդ
հանգամանքի՝ ամենակատարեալ և ամենադիմաց-
կուն ազգերից մէկը դառնալու բաղւն ունեցաւ:
Իջնելով հպատակութեան, հնազանդութեան ամե-
նացած աստիճանը՝ հայերը չըդադարեցին յամա-
որէն առաջ դիմելուց, բարգտւաճելուց. նրանք
խաղաղութիւն պահպանելու միջոցների դար-
գացման համար շատ աշխատեցին, այնպէս որ
վերջում մենք տեսնում ենք Հայաստանը ծած-
կւած պալատներով ու տաճարներով և հարուստ
բերքերով։ Հայաստանը յափշտակւող տարւող էր
նոր գաղափարներով և պատրաստ աշխարհում
առաջին երկիրը լինելու, ուր քրիստոնէութիւնը
ամենից առաջ է Պետական կրօն դառնում։ Այս
էվոլյուցիան բացատրելու համար, պէտք է նախ
արտաքին դէպքերի մանրամասնութեան հետեւ
և ապա կանգ առնել բարքերի և կազմակերպու-
թիւնների վրայ, որոնք հետեւեալ գլխում մենք
կուրւագծենք։

Պարթևների Վաղարշակ թագաւորը պատճառ
ըռնելով, որ իր նախնիքները Հայաստանին տի-
րած են եղել (մենք չգիտենք, թէ դա որքան
ճիշտ է), ուզում է սեփականեցնել այդ երկիրը,
բացի այդ՝ նա ցոյց է տալիս, որ Հայաստա-

նի վրայ այժմեան իշխողը մի յափշտակիչ է, —
և սա մի գեղեցիկ առիթ էր մի նոյնպիսի յա-
փշտակիչ էլ ինքը դառնալու, — ուստի մի լաւ
օր հաւաքում է իւր զօրքը, յարձակւում Հայաս-
տանի վրայ, որպէսզի իւր եղբայր Տրդատին դը-
նի այդ ինքնակոչի տեղը։ Նա ասում է, որ ինքը
չպէտք է ցաւի, թէ իւր ընտանիքի անդամներից
մէկն ու մէկը թագ չունի. Նա արդէն իւր եր-
բորդ եղբօր՝ Բակուրոսին էլ Մարերի վրայ էր
թագաւորեցրել։ Պարթևների մօտենալիս վրացի-
ները փախչում են. Արտաշատ մայրաքաղաքը և
Տիգրանակերտը, որը գեռ առաջին տեղն էր գը-
րաւում հարաւում, հպատակւում են։ Սակայն
մի խիստ ձմեռ, պաշարի պակասութիւնը և մի
վարակիչ հիւանդութիւն ստիպում են Վաղար-
շակին թողնել այդքան հեշտութեամբ գրաւած
Հայաստանը։ Խսկոյն Ծաղամիզտը մտնում է այդ-
տեղ խիստ կատաղած հայերի վրայ, որոնք ապս-
տամբել էին իր դէմ։ Տակիտոսը նկատում է,
որ չնայած հայերը վարժել էին հնազանդութեան,
սակայն՝ չէին ուզում Ծաղամիզտին, ուստի պա-
շարում են նրա պալատը. Ծաղամիզտը վճռում
է իւր և իւր յդի կնոջ կեանքը վրկել յոյսը դը-
նելով իւր ձիու արագավազութեան վրայ։ Դը-
րախտ Զենոբիան չկարողանալով դիմանալ թամ-
բի վրայ՝ խնդրում է իւր ամուսնուց կամ իրան
ազատել կամ սպանել թշնամու ձեռքը չընկնելու

համար. փախստական թագաւորը գրկում է իւր կնոջ, մխիթարում, բայց՝ կինը յայտնում է, որ այլևս ոչ մի կերպ չի կարող շարունակել ճանապարհը: Ռադամիզտը քաշում է սուրը, խփում իւր կնոջ և մեռած կարծելով քարշ է տալիս ձիուց վար և գետը ձգում, որպէսզի հայերը չըդգտնեն նրան: Զենոբիան մահից ազատում է, ջրի ալիքները նրան յետ են ձգում ափ, հովիւները պատահում են, տեսնում, որ նա դեռ շընչում է, ճանաչում են նրան, փաթաթում վէրքերը և տանում Արտաշատ, ուր Տրդատը նրան ընդունում է այն բոլոր յարգանքներով, որ վայել է մի թագուհու: իւր ամբողջ կեանքում Տըրդատը այսպէս է վարւում նրա հետ *):

Այս դէպքը կատարւում է Ք. յ. 53 թւին: Վաղարշակը դեռ հաւաստի չէր թէ իւր եղբայրը չայաստանի դահի վրայ հաստատուն է, ուստի նորից յարձակում է այդ երկրի վրայ այս միենայն 59 թւի ամառը: Ներոնը, որ այդ ժամանակ 17 տարեկան էր, բայց որի մէջ արդէն սկսել էր ծայր տալ փառասիրութիւնը, հրամայում է իւր շէֆին լէգէօնները պատրաստել և ուղարկել չայաստան: Ակրիպան և մի ուրիշ թագաւոր, Անտիոքոս անունով, պատւէր են ստանում իւ-

*) Այս ամբողջ պատմութիւնը վերցրած է Տակիսոսից, Տարեգրութիւն, XII, 50 և 51:

րենց գօրքերը պատրաստելու Միջագետքում Եփրատի վրայ մի կամուրջ չինելու համար, որպէսզի հոռմայեցիները կարողանան վրէժինդիր լինել այն անպատւութեան, որ պարթեները հասցրել էին դուրս քշելով Հռոմի պաշտպանած Ռադամիզտ թագաւորին: Ներոն նախ՝ Արիստօրուլին դարձնում է Փոքր-Հայքի գլխաւոր. իսկ Սօհեմուսին՝ Ծոփաց երկրին թագաւորական բոլոր պարագաներով. ապա՝ յետ է մղում Վաղարշակի որդի Վարդանին: Պարթեներն ստիպւած են լինում զիջել և սպասել մի յարմար ժամանակի վրէժինդիր լինելու համար *):

Ահա այս ժամանակն է, որ Դօմիտիուս Կօրբուլոնը հրապարակ է իջնում. նա Ասորիքումն էր և յանձնարարութիւն ունէր Հայաստանի գործերի վրայ հսկելու: Դեռ Ասորիքում եղած ժամանակ մի ուրիշ հազարապետի հետ բանակցում էր և երկուսով աշխատում էին համոզել Վաղարշակին: Արանք մարդ են ուղարկում պարթեների այս թագաւորի մօտ, խորհուրդ տալիս, որ խաղութիւնը գերազաս համարի պատերազմից և պատահներ տայ Հռոմին ինչպէս շատ անգամ իր նախնիքներն են արել: Վաղարշակն այս առթիւ շատ ուրախանում է տեսնելով որ կարող է ժամանակ վաստակել, ուստի պատանդ է ուղար-

*) Տակիսոս. XIII, 7.

կում իւր պալատի այն անձնաւորութիւններին, որոնցից ուզում էր ազատւել:

Չնայած սրան պատերազմը անխուսափելի դարձաւ, որը խիստ դժւար էր, երկարատև ու վերջիվերջոյ, մահաբեր: Վաղարշակը ոչ մի կերպ չէր ուզում իրեն անպատճած տեսնել թողնելով, որ իւր եղբայրը դահազուրկ լինի. բացի այդ՝ նրա հպարտ ոգին չէր կարող հաշտւել այն մտքի հետ թէ ինքը հոռմայեցոց տուչութիւնը (investiture) պէտք է ընդունի: Այսպէս ուրեմն սրանից յետոյ ինչ որ կատարւում է թւում է, որ փառասիլութեան ընդհարումներ են, սակայն հաւանական է, որ, ինչպէս ամեն տեղ, այստեղ ևս գրական իրաւունքներն էին պատճառը. Հռոմի կամ պարթևների գերիշխանը անշուշտ հայստանից կսահնար տուրք, զինւորական օգնութիւն, դեռ չը հաշւած այն ազդեցութիւնը, որը հայստանի դիրքի շնորհիւ կարող էր ձեռք բերել գրացի երկիրների վրայ: Բայց այս բոլորի մէջ մեծ տեղ են գրաւում անձնական փառասիլութիւնները: Լատին պատմաբանն ասում է, որ կորբուլոնը ուզում էր գրաւել հայստանն ինչպէս այդ արել էին Լուկուլլոսն ու Պոմպէոսը *): Հայերի վերաբերմամբ այս պատմաբանն ասում է, որ նրանք անվճռական և թոյլ

*) Տակիտոս.

էին ու ամենաուժեղի կողմն էին թեքւում, ուրով երբեմն հոռմէական և երբեմն էլ պարթևների զօրքի սարսափներին էին ենթարկում իւրենց երկիրը: Մրանը, նկատում է պատմաբանը, աւելի սովորել էին հնագանդութեան քան թէ ազատ կեանքի, իրենց սեփական ուժերով գործելուն, նրանք աւելի համակրում էին պարթևներին, որոնց հետ զրացի էին և ամուսնական բազմաթիւ կապերով կապւած:

Տրդատն իւր եղբօր նման մեծ եռանդ է գործ գնում, հաւաքում է իւր հայ զինւորներին, միացնում պարթևների թագաւոր Վաղարշակի զօրքի հետ և այդպիսով պատրաստում անձամբ Հայաստանը հնագանդեցնելու: Տրդատը այն ցեղից չէր, որ կարողանար միայն փախչելիս լաւ նետեր արձակել, նա ուրիշ տակտիկայի էր հետևում. այրում, ոչնչացնում էր նա Հռոմին հաւատարիմ մնացած քաղաքները, ապա յետ փախչում ճակատամարտից խուսափելու համար. նա յանկարծ այս ու այն կողմն էր յարձակւում, ամեն ինչ կործանում ու այդպիսով սարսափ տարածում. նրա անունից սարսափում էին, միքան, որին երբէք արժանի չէր եթէ ինկատի ունենանք նրա իսկական ոյժը, ինչպէս նոյն պատմաբանն է ասում: Իզուր կորբուլոնն աշխատում էր նրան ստիպել ճակատամարտելու. նա տեսնելով, որ չի յաջողում այդ բանում՝ ստիպւում է

անձեռնմխելի հակառակորդին պաշարել։ Նա իւր բանակը բաժանում է բազմաթիւ խմբերի և օֆիցիերներին պատշիրում հետեւ Տրդատին մինչև որ կարողանան բռնել նրան։ միաժամանակ Անտիոքոսին ուղարկում է Միջագետքը գրաւելու։

Այս դէպքերի վրայ վրացիները նորից հրապարակ են իջնում։ ծերունի Փարսման թագաւորը իւր որդի Ռադամիզտին սպանել էր, որովհետեւ վերջինս գործ չունենալով դաւադրութիւն էր սարքել իւր հօր դէմ։ Փարսմանը Հայաստանի վրայ սաստիկ չարացած էր, որովհետեւ կարծում էր, որ անուղղակի կերպով նա էր եղել այդ երիտասարդ աղմկարարի յանցագործութեան պատճառը։ Վրացիներն ու ինսիքիները (անշուշտ սրանք կովկասի բնակիչներն են), ուրոնք Հոռմի հին դաշնակիցներին, օդնութեան են հրաւիրում վերջիններիս կողմից։ Ինսիքիները գիտէին լեռների բռլոր գաղտնի անցքերն ու դժւարութիւնները, ուստի շատ լաւ առաջնորդներ կլինէին զօրքը դէպի Հայաստան առաջնորդելու համար։ Այս բոլոր կօմբիանացիները Տրդատին ստիպում են լաւ մտածել։ նա թէ իւր և թէ պարթևների կողմից խաղաղութեան պատգամ է ուղարկում հոռմայեցիներին ու պատգամաւորի բերանով յայտնում, որ ինքը զարմանում է տեսնելով հոռմայեցիներին իրան այդ-

պէս չարաչար հալածելիս։ «մենք շատ պատանիներ տւինք, մենք մեր բարեկամութեան դաշը վերանորոգեցինք, այլև ինչու համար Հռոմը հրաժարում է մեր իրաւունքները ճանաչելուց, ինչու համար չի ընդունում իմ իրաւունքները Հայաստանի վրայ, չէ՞ որ Հայաստանը իմ ժառանգութիւնն է։ քանի որ Վաղարշակը չի խառնում այս կռւում, ուստի պարթեական ըմբոստութիւն չկայ, արդարութիւնը պահանջում է, որ Հայաստանը տրւի նրա եղբօրը։ Սակայն՝ եթէ Հռոմը գարձեալ կը շարունակի հրաժարել, այն ժամանակ Արշակունիներին ոյժ պակասում այդ բանի համար, արդէն հռոմայեցիներին մեծ կորուստներ են պատճառել...»։ Կօրբուլոնը այդ լեզուից խաբուղը չէր. նա գիտէր, որ Վաղարշակը զբաղւած էր Հիւրկանիայով (Վրկանի), բայց չուղենալով գործը ծայրայեղութեան հասցնել՝ խորհուրդ է տալիս Տըրդատին յաջողեցնել կեսարի տուչութիւն ընդունելը։ Սա միակ միջոցն էր։ որով Տրդատը կարողանար Հայաստանի թագն ստանալ առանց կաթիլ արիւն թափելու։ Զօրավարն աւելացնում էր, որ ներկայ պայմաններում Վաղարշակի օգնութեան վրայ յոյս դնելլ ցնորք է միայն, արդեօք աւելի լաւ, աւելի արդարացի չէր լինի մի կողմ դնել պատիր յոյսերը և ճանաչել կայսեր գերիշխանութիւնը։

Քանի որ դժւար էր միջնորդների բերանով համաձայնութեան գալ՝ կորբուլոնը Տրդատին խորհրդի է հրաւիրում։ Տրդատն առաջարկում է, որ ինքը կը գայ 4,000 հեծեալներով, գալով այն մասին թէ իւր մըցակիցը որքան զօրքով պէտք է լինէր՝ չէր համարձակւէր մի բան առել, միայն իրեն պայման առաջարկել էր, որ հոռմէական բանակը պէտք է առանց զրահի ներկայանար։ Խարդախութիւնը շատ էր ակներև։ Տրդատի այս մտադրութիւնը կարող էր իրա համար ողբերգական մի դրութիւն ստեղծել։ Հոռմէական լէգէօններն իսկոյն հասկացան, որ խարդախների հետ գործ ունեն։ Կորբուլոնը, որը արդէն վարժել էր բարբարոսներին խաղացնելու գործում, յայտնում է թէ իր հետ եկողները աւելի էլ լինեն դարձեալ անկարող պիտի լինեն պաշտպանւել ճարպիկ նիզակ բանեցնող թըշնամու դէմ։ Առանց ցոյց տալու թէ ինքը հասկացել է Տրդատի մտադրութիւնը՝ յայտարարում է, որ լաւ կը լինի եթէ երկու բանակների ներկայութեան տեղի ունենայ բանակցութիւնը, ուրովինեաւ խնդիրը վերաբերում է երկու երկրների շահերին ևս։ Այսպէս ուրեմն ով որ ճարպիկ լինէր, նա էլ կխաբէր իւր հակառակորդին։ Հոռմայեցին շտապում է առաջ գնալ և բանակ դընել մի բլրի վրայ, որի շուրջը մի դաշտ էր տարածւում։ Նրա հետեակները տիրում էին դիր-

քին, իսկ հեծելազօրքը կարող էր ազատ գործել չորս կողմում։ Որոշւած օրը կորբուլոնը առաջինն էր այդ տեղում, նա իւր զօրքը բաժանում է երկու թերթի և կեղրոնը շրջապատում վեց լէգէօններով, որին աւելացնում է 3,000 մարդ ևս երրորդ լէգէօնից։ Դիշեր էր երբ նա իւրայս դիմաղրող բանակը կարգի բերեց և մի գնդի վահաններով այնպէս ծածկեց, որ կարծում էին թէ այդտեղ քիչ թէ շատ սեղմւած մի լէգէօն կայ միայն։ Ամբողջ օրը սպասում են, բայց՝ Տրդատը չի գալիս, երեկոյեան միայն նա երկում է։ Տրդատը բանակ է դնում այնքան հեռու, որտեղից ձայնը չէր հասնում հակառակորդի բանակը, բայց՝ վերջինից տեսնուում էր։ Անշուշտ այսպիսի նախազգութեան դէմ ոչինչ չէր կարելի անել։ Կորբուլոնը իւր զօրքը պատնէշների յետեւում ամրացրել էր, մի բան, որ անշուշտ աւելորդ զգուշութիւն էր, սակայն քաջ հոռմայեցին ուղում էր այդպիսով ամէն տեսակ պատահարների առաջն առնել։ Տրդատը մտածելով, որ իւր հակառակորդին խարդախութեամբ տապալելու գործում յետ էր մնացել՝ թողնում հեռանում է։ Որոշ պատմաբաններ կարծում են, որ նա հեռացել էր մի հարուստ կարաւան կողպատելու համար, որը Տրապիզոնից պաշար էր բերում հոռմայեցի զօրքերին։ Յամենայն գէպս Տրդատը յաջողութիւն չի ունենում. պաշարն

անցնում է այն լեռներով, որոնց վրայ հսկում էին հռոմայեցիները։ Կորբունը չուզենալով երկարացնել պատերազմը աշխատում է մի անգամից լաւ կերպով վերջացնել։ Արա համար ամենալաւ միջոցն է համարում հետևել իւր թշնամու դործելակերպին։ Նա յարձակում է բերդերի վրայ, կործանում է և ստիպում Տայերին պաշտպանւել։ Այս բերդերից ամենակարևորը Վօլանդն էր, ուր ինքը անձամբ է դալիս պաշարելու։ Միւս բերդերն ընկճելու համար էլ յանձնարարում է բանակի հազարապետ Ինստիտուտ կապիտոնուսին և իւր տեղապահ Կօրնելիուս Ֆլակկուսին։ Հռոմայեցի գօրավարը պատրաստելով իւր դօրքերն ու մեքենաները անձամբ գրոհ է տալիս։ Սրանց պաշարողական կատարելագործած մեքենաների շնորհիւ հէնց առաջին օրից յաղթութիւնն ապահով էր։ Ականը, պարսպաքանդ մեքենաները, կապարեայ գնդակները կազմում էին մի տեսակ պարսպի ճակատ։ Միւս կողմից ապաստանելով իրենց վահանաւորների յետիում վահանները պատաժ էին կրիայի պատեանով—համարեա ոչ մի բանից չէին վսասւում։ Վերջապէս գօրավարը հոգս էր տարել արտաքին յարաբերութիւնը կտրելու, որպէսզի արտաքին օգնութիւն չստացւի, ուստի վերելեակները, ջահերը, նիզակները հնարաւորութիւն են ստեղծում պարիսպը ծակելով ստիպել անձնատուր լինել։ Հէնց

երեկոյեան բերդը գրաւում են, զինւած դիմադրողներին որի անցկացնում, իսկ անպաշտպան բնակիչներին գերում իբրև ստրուկներ վաճառելու համար։ Աւարը բաժանում են զինւորների մէջ։ Միւս երկու գօրավարներն էլ այս միենոյն օրում երկու բերդեր են գրաւում, հայ բերդապահները այս բանը աեսնելով շտապում են յանձնել իրենց բերդերը, Կօրքուլոնը այլիս ոչնչից վախ չունենալով արշաւում է Արտաշատի վրայ։ Նա ուղիղ ճանապարհով չի գնում, որպէսզի կամուրջով չանցնի Արաքսը և մտնի քաղաք, որովհետեւ կարծում էր, որ այդ տեղում թշնամին կարող էր իր ճանապարհը կտրել։ ուստի նա անցնում է գետը նաւով, որը դուրս էր դալիս քաղաքի պարիսպներին շատ մօտ *): Տըդատը շատ նեղ գրութեան մէջ է ընկնում։ Նա վախենում է, նա ամաչում է, եթէ թոյլ տայ մայրաքաղաքը պաշարել, դա ցոյց կտայ իւր թուլութիւնը, եթէ գիմագրի կտարելապէս պարտութեան կըմատնի իրան։ Սակայն՝ մի ելք պէտք էր գտնել։ Գիշերը նա պատրաստում է թշնամուն յանկարծակի յարձակումներով թուլացնելու։ ամբողջ ցերեկը յարձակում է, թռչկոտում լէգէօնների չորս կողմը, և թւում է, որ բացի մի տաօնապետ սպանելուց ուրիշ ոչ մի վնաս չի կարողացել

*) Տակիտոս. Տարեգրութիւնք, XIII, 39.

հասցնել: Կորբուլօնն իւր բանակը հաստատում է դաշտի մէջ և այնտեղ թափում իւր ամբողջ ծանրոցները պաշարումն սկսելու համար: Նա կարծում էր, որ պէտք կլինի իւր բոլոր միջոցները գործադրել կարծելով, որ Տրդատը քաղաքում խիստ ուժեղ դիրք ունի: Յանկարծ Կորբուլօնի լրտեսներն իմաց են տալիս, որ Տրդատը փախել է և յայտնի չէ թէ Մարաստան է գնացել թէ աղւանների մօտ: Հետևեալ առաւօտը հրաման է տրւում խիստ կերպով պաշարումն սկսել: Իրենց գլխաւորից լցւած հարուստ քաղաքիները՝ տեսնելով որ կարող են հոռմայեցի զօրավարի, այդ վճռական մարդու խստութիւններին ենթարկւել, լաւ են համարում քաղաքի դրսները բաց անել, իրենց ունեցւածքը յաղթողին ընծայել, որպէսզի այդպիսով գոնէ իրենց կեանքը կարողանան ազատել: Եւ իրօք Կորբուլօնը մեղմ վերաբերեց դէպի քաղաքացիները, սակայն՝ քաղաքը հիմքից ի վեր կործանւեց: Այդ քաղաքը մեծ էր, ուրեմն կարելի էր ասել, որ հոռմէական լէգէօններն այնքան բազմաթիւ չէին, որ պէսզի կարողանային թէ այդ քաղաքը պաշտպանել և թէ դրսում պատերազմը շարունակել, իսկ եթէ պահէին քաղաքն առանց բաւականաչափ բերդապահ զօրքի, կնշանակէր վտանգի ենթարկել յաղթութեան ամբողջ օգուան ու փառքը: Վերջապէս երկնքից մի նշան էր երկացել, որով

աստւածները յայտնում էին թէ քաղաքը պէտք է այրւի. այս անգամ, առանց յոգնութեան, անողոք Տակիտոսն է պատմում թէ ինչպէս տեսնում էին քաղաքը խաւարի մէջ ընկղմած, իսկ վերեսում, երկնքում մի լոյս խիստ մեծ փայլով վառում էր: Այս յաղթանակի պատճառով Ներոնը հրատարակւեց կեսար, և Հռոմի ժողովուրդը մեծ զոհ մատուցեց իւր աստւածներին 64 թւականին *):

Կորբուլօնը տեսնելով հայերի սարսափը, ուզեց օգտել դրանից և հարաւային մայրաքաղաքը՝ Տիգրանակերտն ևս Սրտաշատի օրին ձըգել: Նա ճանապարհ է ընկնում ամենամեծ զգուշութեամբ, որովհետեւ այժմ գիտէր, ճանաչում էր սովորութիւնները, բարքերը հայ ազգի, որը, ինչպէս պատմաբանն է ասում, ոչ մի կերպ վըստահելի չէր: Բնակչութեան մի մասը դիմում է նրա առաջ և գթութիւն խնդրում. նա ներում է, լաւ վարւում, չկամենալով իւր յետեռում մնացած ժողովրդին ապստամբւելու առիթ տալ: Սակայն միւս բնակիչներն իրենց թանգագին ունեցւածքով փախչում են լեռների մէջ գտնւած այրեր և ստորերկեալ տեղեր: Զինւորները սրանց պաշարում, վայրենի կենդանիների պէս նեղ ձգում, չոր փայտ են հաւաքում այրերի դռների մօտ,

*) Տակիտոս. Վեր. յիշ. XIII, 41.

վառում են և ներսում գտնւած փախստական-ներին կենդանի խեղդում։ Միայն մարդերը կարողացան դիմանալ, երբ բանակն անցնում էր Ռւրմիոյ և Վանայ լճերի միջով, որոնք վարժած լինելով կողոպուտ անելով ապրելուն, միւս կողմից՝ իրենք ցից ցից լեռներով պաշտպանւած լինելով մեծ նեղութիւն պատճառեցին հոռմայեցիներին։ Հոռմայեցիները սրանց դէմ ուղարկում են վրացիների մի գունդ։ Ահա խելօք գործ, բացականչում է պատմիչը, վայրենի ապստամբներին պատժելու համար լաւ էր օտարների արիւնը թափել քան թէ հոռմայեցիների^{**})։ Հոռմէական լէգէօնները, որոնց այս խոհեմ պատերազմը չէր ընկճել, մեծապէս նեղում, տան ջւում էին յոգնութիւնից և քաղցից։ Իբրև ուտեստի պաշար միմիայն եղան լեզու կարող էին ներմուծել։ Խմելու ջուր չկար, ամառը խիստ շոք էր անում, գնացքը շատ երկար էր, ժայռոտ ու անճանապարհ տեղերով։ Վերջապէս՝ հասնում են մի տեղ, որը շատ լաւ մշակւած էր, բանակ են դնում այստեղ, հնձում հասած ցորենը, ալիւր դարձնում ու այդպիսով պաշար պատրաստում։ և կարծէք դրանց եռանգը վերականգնում է, ճանապարհին երկու բերդեր են խլում, որոնց մէջ գտնւած հայերը յաւակնութիւն ունեին սրանց

*) Տակետոս. Վեր. յիշ. XIV, 23.

անցքը փակել։ Մի երրորդ բերդ ևս պաշարում են, սակայն ժամանակագրի լուսութիւնը յաջողութեան մասին՝ կասկածելի է դարձնում այդ բերդի պարտութիւնը։ Վերջապէս հասնում են արևելեան Տաւրոսին. այստեղ Կորբիլօնը մահից ազատւեց իւր լաւ աստղի պատճառով. նըրա վրանի մօտ մի զինւած մարդու են բռնում, որը ցած դասակարգից չէր. սրան սկսում են տանջել, չարչարել. ցաւի տակ խոստովանում է, որ ինքը Կորբուլօնին սպանելու համար կազմակերպւած մի գաւադրութիւն է, նա յայտնում է իւր գաւակիցներին, որոնց բռնում և սպանում են։ Շուտով Տիգրանակերտից մի պատգամաւուրութիւն է գալիս յայտնելու, որ քաղաքի դըները բաց են զօրավարի առաջ և քաղաքացիները պատրաստ հնազանդութիւն ցոյց տալու։ Ի նշան յարգանքի պատգամաւուրութիւնը բերել էր մի ոսկի պսակ։ Կորբուլօնն ընդունում է այս գեսապահութիւնը մեծ պատւով և այս երկրորդ մայրաքաղաքը մտնելով իրեն պահում է իբրև հիւրուչ մի աւար չի վերցնում^{**})։ Միայն թագաւորական դղեակը, ուր խմբւած էին երիտասարդները, մի եռանգուն դիմադրութիւնից յետոյ է անձնատուր լինում. այդ կտրիչ և խենթ մարդիկները ոչինչի չէին յանդի, որովհետև հոռմա-

*) Տակետոս. Վեր. յիշ. XIV, 24.

յեցիզօրավարն ամէն կողմից ազատ էր իւր գործուղութիւնների մէջ։ Այս երիտասարդ հայրենասէլոները, որոնք շարւած էին միջնաբերդի պարիսպների առաջ, ստիպւած եղան ամէնից առաջ գրաւել այն պատմէջները, որոնք շինած էին պարսպի ոտների մօտերքը։ Քիչ յետոյ յետ են մղւում և կատարելապէս ջարդում։ Այս յաջողութիւնը, ինչպէս Տակիտոսն է խոստովանում, պէտք է վերադրել այն հանգամանքին, որ պարթեները չկարողացան պատերազմին մասնակցել հիւրկանացիները չէին թոյլ տալիս, որ պարթեները օդնութեան համնեն։ որանք կեսարի բարեկամութիւնը վաստակելու համար ամենալաւ միջոցն էին համարում թոյլ չտալ վաղարշակին Տիգրանակերտին օգնութեան համնել, որպէսզի կորբուլօնը կարողանայ Հայաստանն ընկճել *):

Սակայն՝ հոռմայեցիները չկարողացան արգելել Տրդատին մտնել այն երկիրը, որի թագաւորն էր համարում իրան։ նա այստեղ մտնելու համար անցաւ Մարաստանից, ուր թագաւորում էր եղբայրը։ Ուրեմն՝ Կորբուլօնը գեռ իւր գործը չէր վերջացրել։ Նա մի բանակ է յանձնում իւր տեղապահ Վերուլանոսին, որպէսզի Տրդատի առաջը կտրի։ իսկ ինքն էլ անձամբ լէգէօնների գլուխն անցած նրա յետելիցն է ընկնում։ Կոիւը երկար

*) Տակիտոս, Վեր. յիշ. XIV. 25.

չտեսեց։ Տրդատը յուսահատւած փախչում է։ այն բնակիչները, որոնք յանդգնել էին դիմադրել և օգնել իրենց թագաւորին, անողոք կերպով մորթութուեցին։ Ուրեմն Տրդատին գահազուրկ էին համարում, սակայն՝ այդ բանը լաւ հետևանք ներսնը չունեցաւ ինչպէս յետոյ կտեսնենք։ Ներսնը յարմար համարեց Տիգատի տեղ մի ուրիշի նըշանակել։ նա Տիգրան անունով մէկին թագաւոր տիտղոսով ուղարկում է Հայաստան։ Այս Տիգրանը կապագովկիայի թագաւորական ընտանիքից էր, Արքեղայոսի որդին, որը պատանդ էր չուոմում։ Տիգրանն երկար ժամանակ համարեաթէ ծառայի գրութեան մէջ էր ապրում Հոռմում, նա նւաստացած ընկած վիճակի մէջ էր այնպէս որ հայ ժողովուրդը նրան ատելով ատում էր։ Այսպէս՝ ամեն տեղ սա լաւ ընդունելութիւն չգտաւ Հայաստանում, հայերի մի կուսակցութիւն ուղում էր Արշակունիներին իշխող ունենալ։ Բայց հայ ժողովրդի իշխանների մեծամասնութիւնը ամեն տեսակ զիջումներ պատրաստ էր յանձն առնելու, միայն թէ իրան հանգիստ թողնէին իւր գործերով զբաղւելու։ նա վճռում է ընդունել կեսարի ծառային, մանաւանդ որ Պարթեների ուժիմից էլ յոգնել էին։ այդ ուժիմը անընդհատ պատերազմներ էր առաջնութեան Հայաստանի հողի վրայ։ Այս դրութեան անորոշութեան պատճառով ստիպւած էին նոր

թագաւորին մեծ ուժով ուղարկել. նա դալիս էր 1,000 լէգէօնականներով, երկու գունդ նիզակաւորներով և երկու գումարտակ հեծելազօրքով։ Վրաստանի սահմաններում գտնւած նահանգները պաշտպանելու համար էլ այդ երկրները յանձնւեցին Փարսմանին. համարեա նման դատողութեամբ Փռքը Հայքը արւեց Պոնտոսի թագաւոր Պոլէմօնին, Կապագովկիան՝ Արիստօբուլին, Ծոփաց աշխարհ՝ Ասորիքի Անտիքոսին։ Այսպէս Կորբուլոնը իրան արդէն դրութեան տէր համարելով վերադառնում է Ասորիք։

Պարթեների համար սա մի սոսկալի հարւած էր, որովհետև առանց կարեռութիւն տալու նրանց կայսրութեան, որը այս երկրների վերաբերմամբ մըցում, կուռում էր, և որը գեռ զօրեղ էր, չոռմայեցիները տիրեցին այդ օտար երկրին, իսկ այդ նշանակում էր, որ Հռոմի շատ լաւ տեղեակ էր իւր հակառակորդի թուլամորթութեան մասին։ Վաղարշակն իմանալով Կորբուլոնի արարքը՝ կատաղեց. ինչպէս թէ այդ օտարը, Կապագովկիայի այդ Տիգրանն իւր հարազատ եղրօր Տրդատի տեղը Հայաստանի վրայ թագաւոր լինի։ Սակայն շուտով այս գեղեցիկ բռնկումը տեղի է տալիս սառը դատողութեան առաջ։ Նա մտածում է Հռոմի ուժի մասին, որը այդքան հեռաւորութեան վրայ կարողանում է սոսկալի հարւածներ տեղալ. Բայց չէ որ եր-

կար ժամանակից ի վեր ինքը նրանց դաշնակիցն էր եղել. Հունկարացիներն են, որ իր մէջքը կոտրում են, արգելք են հանդիսանում։ Այսպէս՝ երբ նա մի կողմից իւր փառքի և միւս կողմից իւր շահերի մասին էր մտածում՝ յանկարծ տեղեկանում է, որ Տիգրանը Աղիաբեն է մտել և երկիրը կողոպտում է։ Այս երկրի իշխանները բողոքում են Վաղարշակին հարցնելով «մւմ դէմ պէտք է բողոք բարձրացնել, Հռոմի ձեռնարկութիւնների թէ այս երեխայ, պատանդ, սարուկ Տիգրանի, որին Հռոմի ուղարկել է իրեւ մի աւագակ»։ Աղիաբենցիների այս բողոքի զիսաւոր արտայայտողը Մանօբազն էր։ Սա ասում է Վաղարշակին դիտաւորեալ չափազանցութեամբ. «մենք միթէ Աղիաբենից յետոյ Պարթեներին պատկանող ուրիշ նահանգներն ևս պէտք է զոհ բերենք, եթէ նրանք են մեր տէրերը, ապա թող նրանք մեզ պաշտպանեն, վերջապէս Տրդատը գահից զրկւեց, նա փախստական դարձած թափառում է. և յետոյ թագաւորն ինքը իւր գահի վըրայ տատանում է. միապետները գոյութիւն են պահպանում միայն իրենց իրաւունքների զիջումներով. ինչ թուլամորթութիւն. ազատ ասպարէդ տալ օտարականներին։ Պէտք է զէնքի զիմել, իրաւունքը միշտ ուժեղի կողմն է եղել. մի թագաւոր, որ չի առաջ դիմում, նա յետ է գնում. թագաւորը չպէտք է բաւականանայ իւր ստաց-

ւածքները պահպանելով, նա պէտք է յաղթութիւններ կատարի իւր փառքի համար» *):

Լաւ ճառ էր սա. Վաղարշակը խորհուրդ է կանչում, Տրդատին նստեցնում իւր մօտ, մի լաւ ճառ է ասում և նրան պատկում, գործը շուտով հետեւում է վճռին: Կազմում են մի բանակ, որի հրամանատարութիւնը յանձնում Մօնէս զօրավարին, սրա զօրքին է միանում և Հայաստանից վերցրած զօրքը. Խաղաղութիւն են հաստատում հիւրկանացիների հետ և այլպիսով ամբողջ ոյժը կետրոնացնելով, դիմում Հայաստանի սահմանի վրայ:

Ահա վերջապէս մի տեսակ ազգային արթնացում այն երկրում, որը այն երկու կայսրութիւնների մրցակցութիւնների մէջ տարութերում էր. Հայաստանը շատ ծանր համարելով դըրացի պարթեների լուծը՝ կոչ է անում Հոռմին, որի տիրապետութիւնը աւելի տանելի էր հեռու լինելու պատճառով. Բայց՝ գեռ ևս նա չէր մտածում յոյսը իւր սեփական ուժերի վրայ դնելու: Նրան միշտ մի օտար խնամակալ էր հարկաւոր, կորբուլոնը չի սպասում, որ իրանից օգնութիւն խնդրեն Հայերը: Սա երկու բանակներ է ուղարկում վերուլանուս Սեվերի և մի ուրիշ տեղապահի առաջնորդութեամբ. որոնց պատւիրում է գործել խոհեմութեամբ և որքան հնարաւոր է

*) Տակիսոս, վեր. յիշ. XV, 2.

խուսափել ճակատամարտից: Այս երկու օֆիցերներին լիապէս չի վսահում կորբուլոնը, ուստի Ներոնից մի գլխաւոր էլ է խնդրում, որովհետեւ ինքը չէր կարող Ասորիքը թողնել: Սպասելով այս նոր գլխաւորի գալուն, որի վրայ պիտի գցէր պատասխանաւութիւնը, ինքը ժամանակ չի կորցնում, յաջողութեան համար ամեն ինչ պատրաստում է. Նա ուղարկում է իր լէգէօնները Եփրատի վրայ, զինում Միջագետցիները պաշտամնւելու համար *):

Մօնէսն իսկոյն իւր պարթեներով յարձակւում է Հայաստանի վրայ. Երիտասարդ, ցնդամիտ Տիգրանը բաւականին լաւ դասեր էր առել Հռոմում, նա սպատրաստել էր, նա հայերին վարժեցրել, կազմակերպել և արգէն գրաւել Տիգրանակերար, որը հրաշալի մի դիրք էր և այդ դիրքի շնորհիւ կարող էր Ասորիքից եկած հռոմէական օգնական զօրքի հետ միացնել իւր ուժերը: Զօրքը արգէն Տիգրանակերտը ուժեղացնում էր. այս քաղաքը վերջին դէպքերից ի վեր ամրացւած էր, այնպէս որ նա կարող էր նոյնքան սարսափելի լինել, որքան Տիգրան Մեծի ժամանակն էր, նա բարձր պարիսպներով գօտեւորւած էր և Նիկէֆօր գետով էլ շըջապատւած էր. Գետի ափերի վրայ խրամներ էին փորել, իսկ բաղաքը լեփ-լե-

*) Տակիսոս, վեր. յիշ. XV, 3.

ցուն էր հոռմէական զինւորներով։ Այսպէս՝ բուլոր գիրքերը լաւ բոնւած էին պաշտպանութեան համար, իսկ յարձակում անելու համար նոյնչափ լաւ պատրաստւած չէին, բայց՝ պարթեները պաշարողական գործողութիւնների մէջ այնքան էլ վարժւած չէին, նրանք սկսում են հեռւից նետեր արձակել. որքան ուզում են թող խմբերով յարձակւեն մի լեռան վրայ, ոչինչ չեն կարող անել. Ադիաբէնցիներն աւելի վարժ լինելով բերդեր պաշարելու մէջ՝ վերելեակները և ուրիշ մեքենաները մօտեցնում են պարիսպների վրայ բարձրանալու համար, սակայն՝ յետ են մղւում մեծ կորուստ տալով։

Կօրբուլոնը, որը երբ օգտակար էր համարում շատ խոհեմ, զգուշ էր լինում, և որը իւր անձնաւորութեան մէջ ամփոփում էր Հռոմի ամբողջ քաղաքականութիւնը, մնում է անդրդւելի դիմադրողների վերաբերմամբ և հանգիստնստում է Ասորիքում՝ վարելով իւր կառավարչի պաշտօնը. Նա չէր տեսնում նոր ծագող վտանգը: Նա մարդ է ուղարկում Վաղարշակի մօտ բողոքելու «ինչու համար պարթեները յարձակւել են հոռմէական նահանգի վրայ և հակառակել Հռոմին դաշնակից մի թագաւորի գահակալութեան. Եթէ պարթեները յետ չեն կենայ Տիգրանակերտի պաշարումից, այն ժամանակ ինքն էլ կգրաւի պարթեների տերիտորիան»:... Այդ դեսպանը հարիւ-

րապետ Գասպերիուսն էր, որը Վաղարշակին գտնում է Մծբինում, Տիգրանակերտից 37 մղոն հեռու (որ ուղղութեամբ): Վաղարշակը երկարաւեկ կոփւների միջոցին նկարել էր հէնց առաջին հայեացքից, որ այդ գիրքը անսպիկ է, Տիգրանն այդտեղ ուժեղ կերպով պաշտպանւած էր, նրան ոչ ուտեստ էր պակասում, ոչ էլ ուրիշ պաշարեղին. լէգէօնները Միջագետքից համնում էին այնտեղ, իսկ ինքը միայն յոզնած հեծելազօրք ունէր, որը միայն յոտ չէր գտնում, որովհետեւ մարախները բոլորը կերել էին: Վաղարշակն աշխատում է ծածկել իւր սարսափը և մի պատգամաւոր ուղարկում կեսարի մօտ խնդրելու, որ խաղաղութիւն հաստատի թէ իւր և թէ իւր Հայաստանի թագաւոր եղօր հետ. միաժամանակ հրաման է տալիս Մօնեսին պաշարումը վերցնել և տուն վերադառնալ: Սա խելօք վճիռ էր. և երկու կողմերն էլ բաւարարւեցին ու սպասեցին մինչև որ Վաղարշակի պատգամաւորները Հռոմից կվերադառնային: Սակայն՝ պատգամաւորներն անյաջողութեան են հանդիպում, կեսարն ու Սենատը յարատե անհնազանդութիւնից ձանձրացած վճռել էին մի մեծ հարւածով գործը միանգամ ընդ միշտ վերջացնել: Հռոմից նշանակում է մի մարդ, որը պէտք է զինւորական գործողութիւնները ղեկավարէր և միանգամ ընդմիշտ թէ հայերին և թէ պարթեներին լաւ ընկճէր.

այս մարդուն յանկարծ էին մեծ պատիւների արժանացրել, հաւանօրէն դա պալատի մի ռազմագէտ էր, որը Արևելքի վերաբերմամբ ոչինչ չզիտէր. թերեւ պալատի ինտրիգաններից մէկն էր. այդ մարդը կոչում էր Կեսեննիուս Պէտուս^{*)}:

Դժբաղտաբար այս Պէտուսը մի մարդ էր, որին ի վերջոյ ներօնը թուլամորթ անւանեց. նա իւր ստացած յանձնաբարութեան վրայ հըպարտացած անցնում է Տաւրոսը Տիգրանակերախ վրայ յարձակւելու համար, սակայն՝ փոխանակ ձեռքի մի շարժւածքով քաղաքը առնելու ինչպէս կարծում էր, պարիստների մօտ պարտութիւն է կրում Վաղարշակից, նա փախչում է Տաւրոս լեռների միջով և իրան ապահով է զգում այն ժամանակ միայն, երբ լեռան պարանոցն անցնում է և հասնում այդտեղ թողած իր բերդապահ զօրքին, սրանք ևս ընկճւել էին թշնամու հետախուզութիւնից. փոխանակ զիմագրելու Վաղարշակին նա զւարճանում է զղեակներ զրաւելով. բայց ինչին էին պէտք այդ զղեակ բերդերը. Այդ մարդը հետեղական խելք չունէր. նա աջ ու ձախ խփում էր, չէր կարողանում պահել իւր յարթած տեղերը, վատնում էր իւր պաշարը, այնպէս որ ձմեռը մօտենալիս նա անկարող եղաւ շարունակել կոխը. Սակայն նա կեսարին գրում էր, թէ

^{*)} Տակիտոս. վեր. յիշ. XV, 7.

արդէն յաղթութիւնը տարել է և այդ առթիւ ինքն իրան խիստ գովաբանում էր^{*)}:

Զնայած որ Կորբուլոնի ընկերը պարթեներին փակել էր Հայաստանում, այնուամենայնիւ բոլորից աւելի փորձւած Կորբուլոնը տեսնում էր, որ պարթեների ոյժը Միջազետքում գեռ չի ընկճւել. նա մտածում է շտապել այդ ոյժը ջարդել եփրատի ափին, որպէսզի յետոյ Ասորիքում կարողանայ նրանց հալածել, եթէ միայն վերջիններս աւելի առաջ չէին գնայ: Նա անհրաժեշտ էր համարում մեծ ջանք գործ դնել պարթեներին որքան կարելի է հեռու մղել. առնւազն տիրանալ Եփրատի երկու ափերին: Կորբուլոնը տեսնելով, որ պարթեները վճռել են իր անցքը վակել, ուստի մեծ լաստեր է շինել տալիս, զըրանց վրայ աշտարակներ կանգնեցնում, որոնց յետեկից նետաձիգները յետ էին մղում յարձակում գործողներին, արդէն վերջիններին նետերը չէին կարող վնասել աշտարակի մէջ գտնւած դիմագրողներին: Այսպէս թշնամին գետի հակուտկ կողմից յետ է մղում, ուր Կորբուլոնն է ամրացնում իւր գիրքը: Պարթեներն իրենց ամբողջ ուժով գիմում են դէպի Հայաստան: Պետուսը տեսնելով պարթեների մօտենալը — այդ ժամանակ ինքը այդ բարձրավանդակի խորքե-

^{*)} Տակիտոս. վեր. յիշ. XV, 8.

րում—չափազանց անհանգստանում է։ Նա առաջապահ գնդի զանազան յանկարծակի յարձակումներից թեթև պարտութիւն է կրում և ապաստիպում մի վճռական, խիստ ճակատ մղել, Պետուան իւր կնոջն և երեխաններին—որոնք եկել էին իր անկասկածելի յաղթանակը տեսնելու, փակում է Արշամօշատա (Խարբերդի մօտ) բերդում և հեծելագորք ուղարկում կտրելու այն անցքը, որից Վաղարշակը պէտք է անցնէր. միւս կողմից՝ երկրի չորս կողմում զօրք է ցրում: Կորբուլոնը մնում է անշարժ, անտարբեր, չի ուղում օգնել իւր ընկերոջ, որպէսզի իր փառքից նա էլ մաս չունենայ: Վաղարշակը կտրում անցնում է անցքը և հսումայեցի զօրքերին ջարդուփշուր անում: Պետուսը գլուխը կորցնում է, պաշտպանութեան բոլոր մի ջնջները ձեռնարկելուց յետոյ՝ մարդ է ուղարկում կորբուլոնի մօտ և օգնութիւն խնդրում ի պաշտպանութիւն հոռմէական դրօշի: Կորբուլոնն ուրախացած իւր ամօթաբեր ծրագրի յաջողութեան վրայ—իւր զօրքի մի մասով Ասորիքից անցնում է կօմաժէնը շտապով Հայաստան համելու համար: Նա պատահում է լէգէօններից փախչող զինւորներին, նրանց համոզում է և իւր դրոշի տակ առնում խոստանալով իրենց շէֆերից ներողութիւն խնդրել: Կորբուլոնի զինւորները վիրաւորուած Հոռմի պարտութիւնից, շտապում են զնալ, վրէժ-

խնդիր լինել իրենց եղբայրների համար: Մինչ այդ Վաղարշակը յարձակում է մի բերդի վրայ—որը թշնամին էր գրաւել—և այն պատճէշների, ուր զօրքի մեծ մասն էր ապաւինած: Պետուան իրան կորած է համարում, նա մեղադրանքի ձեռվ առաջարկում է պարթեներին խաղաղութեան դաշն կապել. սակայն՝ Վաղարշակը պատասխանում է, որ ինքը կսպասի մինչև իւր երկու եղբայրների՝ Պակուրոսի և Տրդատի հասնելը, այն ժամանակ նրանց խորհրդով կտնօրինի հոռմայեցոց բաղզը: Բանակցութիւնը ձգձգելու նպատակով եղած երկրորդ խնդիրքի առթիւ Վաղարշակն իւր զօրավար Վասակին յանձնարարում է բանակցել: Պետուսը սրան յիշեցնում է Լուկուլլոսի և Պօմպէոսի արարքը և պնդում, որ հոռմայեցոց քաղաքականութիւնը միշտ էլ Հայաստանը պարթեներին տալու քաղաքականութիւնն է եղել: Վասակը շատ լաւ պատասխանում է և հարցը կանոնաւոր կերպով գնում—Հոռմը երբեմն կարողացել է Հայաստանը գրաւել և յետ դարձնել, բայց՝ մենք վստահ չենք նրա ձգտութերի վրայ, այդ երկրի իսկական տերերը մենք ենք: Վճռում են համաձայնութեան գալու համար միջնորդ գատարանի դիմել. պարթեների կողմից ընտրւած Մօնօբազ Աղիարենցին յայտնում է, որ հոռմայեցիները կհեռանան Հայաստանից առանց մի բանի ձեռք տալու, Վա-

դարշակին կթողնեն բերգերն ու ուտեստի շտեմարանները. բացի այդ՝ ժամանակ կտան պարթեների թագաւորին ներոնի մօտ մի պատգամաւորութիւն ուղարկելու *): Այսպէս՝ բարբարոսները տեսնելով հանգերձ, որ լէզէռններն իրենց ձեռքին են, կարող են բոլորին էլ ջարդել, այսուամենայնիւ լաւ են համարում, առագան ի նկատի ունենալով, զիջումներ անել. սակայն՝ Վաղարշակը չկարողացաւ յետ կենալ հոռմայեցիներին ստորացնելու, խայտառակելու ցանկութիւնից, նա բանակցութեան ժամանակ պահանջեց և ստիպեց, որ հոռմայեցիները, որոնք արհեստների մէջ ճարպիկ էին, Արածանու վրայ—այս գետը հոսում էր պարթեների բանակատեղիի միջով—մի կամուրջ շինեն, չնայած որ այդ տեղում կամուրջի կարիք չկար, որովհետեւ պարթեները շատ հեշտութեամբ կարողանում էին գետն անցնել: Պէտուսն ստիպւած էր յանձն առնել այս խայտառակ աշխատանքը, ուրով իր զօրքերն ակնյայտնի կերպով թշնամուքահաճոյքին էին մատնում. և իրօք, երբ լէզէռնի զինւորները բանակից դուրս էին գալիս, պարթեները նրանց վիրաւորում, կողոպտում և նոյնիսկ շատերին սպանում էին. Պէտուսը գաղտնի տանջւում էր, բայց չէր համարձակուում պա-

տերազմ սկսել: Վաղարշակը տեսնելով լէզէռնների թշնամութիւնը, խղճում է և հրամայում հաւաքել հոռմայեցի զինւորների դիակներն ու զէնքերը: Նա իւր փոխ վրայ նստած և հեծեալ թիկնապահներով շրջապատած անցնում է կամուրջը, ման գտլիս տեսնում է, որ հոռմայեցիներն ուտեստի բազմաթիւ շտեմարաններ են թողել. հրամայում է այրել բոլորն էլ, որովհետեւ չգիտէր ինչի վրայ գործադրել. Պէտուսը բոլորվին սխալում էր կարծելով, որ այդ շտեմարանները յանձնելով կարող կլինի իւր պարտութիւնը պատճառաբանել. արդէն այդ շտեմարանները ցոյց էին տալիս, որ պաշարի պակասութիւնը չէր կարող պատճառ լինել անձնատուր լինելուն. բացի այդ՝ կորբուլոնն իմաց էր տւել Պէտուսին, որ շուտով կհամնի և կազատի իրանեթէ կարողանայ երեք օր էլ դիմանալ: Կորբուլոնի վկայութեամբ վախստական Պէտուսը համուկիսաւոր կերպով երդւել էր պարթեներին, որ հոռմայեցի զինւորներն երբէք չայտատան չեն մտնի մինչև որ վաղարշակի նամակը Հռոմ չի հասնի. գալով Պէտուսին՝ նա միայն իւր կեանք քը փրկելու մասին էր մտածում. նա օբական 40 մզօն ճանապարհ էր կարում կորբուլոնին համանելու համար: Երբ հասնում է՝ իսկոյն աշխատում է համոզել կորբուլոնին միասին Հայաստանի վրայ յարձակւելու հակառակ իւր արած

*) Տակիտոս. Տարեգրութիւնը, XV, 14.

խոստման, արդէն Վաղարշակը վստահանալով Պէտուսի խոստման հեռացել էր Հայաստանից, գնացել Պարսկաստան: Կորբուլոնը թաքցնում է իւր զգւանքը, անշուշտ նաև իւր ուրախութիւնը տեսնելով որ իւր մրցակիցներից մէկը այնքան ցած էր գլորւել, պատասխանում է, որ ինքը չի կարող Ասորիքը դատարկել: Պէտուսն այսպիսով մնում է մենակ և ձմեռում կապադովկիայում: Այսպէս՝ հեշտութեամբ յաղթանակ տանելով Վաղարշակը մարդ է ուղարկում Կորբուլոնի մօտ պահանջելու, որ Եփրատի արեելեան եղերքի վըրայ կառուցած բերդերը քանդի և Միջագետքը թողնի պարթեներին սահման ունենալով Եփրատ գետը: Թող այդպէս լինի—պատասխանում է Հռոմայեցին—բայց՝ միայն այն պայմանով, որ պարթեներն ընդ միշտ հեռանան Հայաստանից: Այս պայմանը երկու կողմերից էլ ընդունւում է և գործադրուում*): Այսպէս՝ Հայաստանը դարձեալ մնում է անգլուխ, որովհետև Տրդատն այլևս պաշտպանութիւն չէր կարող գտնել իւր եղբօրից: Այս համաձայնութիւնը, իրերի այս կարգաւորութիւնը Հռոմում ընդունւում է իբրև մի մեծ յաղթանակ **) :

Գարնան սկզբին (62 թւի⁸) Վաղարշակի դես-

*) Տակիտոս. Տարիգրութիւնք, XV, 17.

**) Տակիտոս. վեր. յիշ. XV, 18.

պահնները հասնում են Հռոմ. բացատրում թէ ինչպիսի մեղմութեամբ է վերաբերել իրենց թագաւորը Լէգէոնների հետ և հաստատում, որ նա արժանի է Հայաստանի վրայ թագաւորելու, որովհետև աստւածներն են յայտարարելնրա կարողութիւնը: Գալով Տրդատի վարմունքին, նա իրաւացի էր որ անձամբ չի եկել Հռոմ, որովհետև նրա կրօնը չէր թոյլատրում ծովի անցնել⁹): Այս տարօրինակ արգելքը բացատրուած է Պլինի մէջ. այստեղ ասւած է, որ Տրդատն իբրև մոզէր կարողնաւելալիքների վրայ, որովհետև սլարսկէր կարողնաւելալիքների վրայ և պղծել աղտեղութիւններ ձգելով այնտեղ. Տրդատն առաջարկում է, որ Լէգէոնները գան Հայաստան և նրանց ներկայութեան ինքը թագը կդնի կեսարի պատկերի առաջ ու նորից յետ կը վերցնի թագը, որով ցոյց կտայ թէ Հռոմից է ստանում այդ թագաւորութիւնը: Այս յայտարարութիւնը ոչ մի կերպ չի համապատասխանում Պէտուսի հաղորդածին, որովհետև վերջինս իւր նամակներում ասել էր, որ պարթեների և Հռոմի բանակները հաւասար ուժով գտնւում էին Հայաստանում: Հարցուփորձի են ենթարկում մի հարիւրապետի, որը ընկերակցել էր գեսպանութեանը. ուս յայտնում է, որ իրօք հռոմէական

*) Տակիտոս. վեր. յիշ. XV, 24.

ոչ մի զինւոր չի մնացել Հայաստանում։ Այդ ժամանակ Ներքնը կարծում է, որ պարթեներն իր վրայ ծիծաղում են առաջարկելով ստանալ այն՝ ինչ որ ստացել են արդէն։ Հարցը տարւում է Սենատ, որը վճռում է շարունակել պատերազմը. Կարբուլոնը նշանակւում է ընդհանուր շէֆ իրբե հակառակորդին ամենից լաւ ճանաչող։ Պատգամաւորները յետ են ուղարկւում առանց պատասխանի, սակայն՝ Տրդատի համար ընծաներ են տալիս, որպէսզի այդպիսով համոզեն, որ ինքը անձամբ հռոմ դնայ։

Հռոմէական բանակը կենդրոնանում է Մելիտէնում և պատրաստում եփրատն անցնելու, այս բանակն անցնում է Լուկուլլոսի անցած ճանապարհով և գետի ոլորւածքի մօտ Տաւրոսը անցնելու համար վերանորոգում է ճանապարհը։ Վաղարշակը, որը իւր յաջողութիւնը պարտական էր Պէտուսի թուլամորթութեան, սարսափում է տեսնելով թէ ինչպիսի մարդու հետ այժմ գործ ունի։ Նա իսկոյն մարդ է ուղարկում Կորբուլոնի մօտ և խաղաղութեան դաշն առաջարկում։ Կորբուլոնը միշտ գգուշ էր և խոհեմ՝ մեծ հարւածներ իջնելուց տռաջ։ Նա սկզբունքով ընդունում է այդ առաջարկութիւնը և յայտնում պարթեների թագաւորներին թէ երկը դրութիւնն այնքան էլ խիստ չէ, որով պատերազմը անխուսափելի դառնար, պէտք է միայն Տրդատը համա-

ձայնւի կեսարի ձեռքից թագ ստանալ թէ չի ցանկանայ, որ իր թագաւորութիւնը՝ Հայաստանը քար ու քանդ լինի. միւս կողմից՝ Վաղարշակը դառնալով հռոմի բարեկամը կարող է առանց որևէ արգելքի թագաւորել պարթեների վրայ, մանաւանդ որ բազմաթիւ վայրենի ժողովուրդներ կան իւր պետութեան մէջ, որոնք յաճախ ապստամբութիւններ են բարձրացնում։ Հռոմայեցին անշուշտ բաւարար պատասխան չստանալու պատճառով է, որ սկսում է կոիւը, ոչնչացնում հայ ազնւականութեան ամրոցներն ու ամեն կողմ սարսափ տարածում, սակայն՝ հայերն երկար ժամանակից ի վեր ճանաչում էին Կորբուլոնին իրեկ զիջող մարդու, իրեկ մեղմ վերաբերւողի դէպի հպատակութիւն յայտնող ժողովուրդները, նրան չեն համարում թշնամի, ուստի շատեր հպատակութիւն են յայտնում. ամբոցները կործանւելուց ազատելու համար Վաղարշակը զինադադար է առաջարկում, որպէսզի Տրդատը կարողանայ բանակցութեան մէջ մտնել Կորբուլոնի հետ։ Որոշած օրը Կորբուլոնն իւր լէգէօններով հասնում է այնտեղ, ուր միաժամանակ Պետուսն էր պաշարւել Վաղարշակից։ Կորբուլոնն այստեղն էր ընտրել այն դիտաւորութեամբ, որ իւր հակառակորդին սարսափեցնի. վերջինս էլ յանձն էր առել այդտեղ գալ ցոյց տալու; որ բախտը փոխւել է և անարգ-

ւած լէգէօնները իրենց անպատճութեան վրէժն
են լուծում միայն։ Պետուսի որդին, որը կա-
պիտէն էր, ուղարկուում է Հռոմի ընկած զին-
ւորների վրայ գերեզման շինելու։ Ժամադրւած
օրը երկու օֆիցերներ գալիս են Վաղարշակի բա-
նակն ապահովեցնելու, որ Տրդատը կարող է գնալ
Կորբուլոնի մօտ։ Տրդատը 20 հեծեալ զինւորնե-
րով գնում է Հռոմայեցու բանակը, առաջին ան-
գամ ինքը՝ Տրդատը ձիուց վար է իջնում, նոյնն
անում է և Կորբուլոնը, որոնք ձիերից վար իջ-
նելուց յետոյ իրար ձեռք են տալիս, Կորբուլոնը
Տրդատին մեծ կօմպլիմենտների է արժանաց-
նում։ յայտնելով, որ շատ լաւ է արել անկախ
թագուորելը գերադասելով պատերազմելուց, Տրդ-
դատը կամենալով թագնել իւր նւաստացումը,
սկսում է գովել իւր ազնւութիւնը և ապայայտ-
նել, որ ինքը խոստանում է գնալ Հռոմ և կայս-
րից թագ ստանալ, որով կայսեր փառքը կըազ-
մացնի, որովհետեւ Արշակունի թագաւորը Հռո-
մից է խնդրում թագ, չնայած որ պարթեները
չեն պարտւել։ Սրանից յետոյ սիմբոլիքական մի
ծիսակատարութիւն է տեղի ունենում, Տրդատն
իւր իսկական, անկեղծ հպատակութիւնը ցոյց
տալու համար իւր թագը դնում է կեսարի ար-
ձանի առաջ։ Այս պայմաններով երկու խօսա-
կիցները համաձայնւում են և նախ քան բաժան-
ւելը համբուրւում։ մի քանի օրից յետոյ երկու

քանակները խիստ մեծ շքով շարւում են իրար
դիմաց։ Այնտեղ, ուր սրանք այսպէս իրար պա-
տահեցին, կոչւում էր Թանգէա, այդտեղ հայե-
րը խառն էին պարթեների հետ *): Լէգէօնները
մի կիսաշրջան կազմելով շրջապատում են մի
տաճար, որի վրայ դրւած էր կեսարի աստւա-
ծային պատկերը, Տրդատը մօտենումէ, զոհ մա-
տուցանում և իւր թագը դնում կենդանագրի ոտ-
ների մօտ։ այս ըանը տեսնելով հռոմայեցիները
խիստյուզում են յիշելով իրենց ընկերների գիակ-
ները և Տրդատի ծառայական վիճակը։ Կորբու-
լոնը, որը, ինչպէս պատմիչն է հաւաստիացնում,
միշտ աշխատում էր իւր փառքը աւելի ու ա-
ւելի փայլուն դարձնել, մարդկութիւնից զրդւած
մեծ խնդոյքներ է սարքել առաջ։ Այստեղ Տրդ-
դատը մեծ հետաքրքրութեան առարկայ է դառ-
նում, որովհետեւ իրեն ամենահին սովորութիւն-
ները գործադրել է մանրակրկիտ կերպով։ Նախ
քան Հռոմի երկար ճանապարհն սկսելը Տրդ-
դատն ուզում է տեսնել իւր մօրն ու եղբայր-
ներին։ նա իւր աղջկան մի առանձին նամակով
թողնում է իբրև կայսեր պատանդ, գնում Մա-
րդաստան Բակուրոսին ողջունելու, և ապա անց-
նում ելքատան Վաղարշակին մնաս բարով ասե-
լու։ Վերջինս կասկածելով իրերի ելքի վրայ, նա-

*) Դիօն Կասիուս. LXII, 23.

մակ է գրում Կորբուլոնին և խնդրում, որ Տըրտարին պատիւներ տան և չնւաստացնեն, չվիրաւորեն, թողնեն, որ միշտ իր սուրբ վրան ունենայ, նահանգապետներին ողջունելիս համբուրելու իրաւունք ունենայ. որ իրենց դռների մօտ սպասեցնել չտան, որ Հռոմում միենոյն պատիւներին արժանանայ ինչոր կոնսուլները*):

Այսպէս էլ լինում է. Տըրտարի ճանապարհորդութիւնն ու Հռոմում ընդունւելը նկարագրել են ուրիշ տարեգրներ իբրև մի այնպիսի շքեղ, փառաւոր բան, որի նմանը մինչև այդ օրը ոչ ոչ չէր տեսել: Տըրտարն իւր ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում—ցամաքով Բօմֆօրն անցնելով է կատարւել այդ ճանապարհորդութիւնը—3,000 հայ և պարթեան հեծեալներով ու բազմաթիւ մոգերով էր շրջապատւած: Մոգերը նրա համար էին, որ Տըրտարը բացի թագաւոր լինելուց նաև մեծ կըօնապետ էր: Ճանապարհորդութիւնը դանդաղ էր և տեսք ինն ամիս: Այս ժողովրդները, որոնց միջով անցնում էին, շլացած էին մնում: Հռոմէական մի պահակ ուղեկցում էր երիտասարդ Արշակունուն իբրև պատիւ: Բոլոր ծախսերը, գրա վրայ աւելացած նաև այն կառքերինը, որոնցով խումբը ճանապարհորդեց իտալիայում, կայսերական գանձարանի հաշ-

*) Տակիսոս. Անալներ. XV. 30.

ւին էր *). օրական երկու միլիոն դրախմա ծախս էր լինում (9 ամիս 54 միլիոն ֆրանկ): Հրաշաւլի տեսարան էր դիտել այդ ոսկեզօծ սաղաւարտների շարքերը, որոնք շրջապատել էին Տըրտարի առաջին կնոջը, որը ոսկէ թագը գլուխն ձի էր նստած և շրջապատւած էր բազմաթիւ մանուկներով. այդ մանուկները ոչ միայն իւր երեխաներն էին, այլև Պակուրոսին, Վաղարշակին և Աղիաբենի թագաւոր Մանաւազին: Այս հեծելաճեմի ծաղիկը ինքը՝ Տըրտարն էր իւր ծաղիկ համար կը ծաղիկը կը գումար ոգով: Քաղաքնեսակում, գեղեցիկ և վարվուսն ոգով: Պէտք էր բողջ բնակչութիւնը ընդառաջ էր զնում: Պէտք էր մինչև Նապլը գնալ Ներոնին հանդիպելու համար: Տըրտարը ներկայանում է Ներոնին հրաւիրերը Տըրտարը կայսեր առաջ զնելու, նա հրաւում է իւր սուրը կայսեր առաջ զնելու, նա հրաժամարում է, բայց՝ մի ծունկը գետին է զնում և ձեռքարտում է, բայց՝ մի ծունկը գետին է զնում և ձեռքարտում է ու կեսարին տէր է անւաները կրծքին խաչում է ու կեսարին իբրև իւր աստնում: Կայսրը սրան արժանավայել կերպով ընդունում է և պատւի համար Պուտէլէոս ցիրկում ըմբիշների մի մենամարտութիւն է սարքել տալիս: Ամբողջ օրը բեմը լցւած էր եթովպացի գերասաններով: կին, երեխայ տղամարդ, և այն:

Տըրտարը իւր գահից վայրենի գաղաններ էր նետահարում. այս առթիւ անհաւատալի բաներ

*) Եւտրոպ, VII.

Են պատմում. իբր թէ Տրդատի նետերից մէկը մի զոյդ ցուլ է ճեղքել անցկացել։ Հէնց Նապում ի պատիւ այս երիտասարդ թագուռորի եղած ծախքը արդէն ահագին էր, սակայն Հռոմում արդէն չի կարելի երեակայել թէ ինչպիսի ծախքեր արին. ամբողջ քաղաքը ծաղկապսակ լապտերներով լուսաւորւած ողջունում էր օտարականին, որը այդքան հեռու տեղից եկել էր յարդանք մատուցանելու իրան. ամբոխը սպիտակ հագած լիքը լցւել էր Թորիումը. ամեն ոք զբասանգներով գարգարւել էր. բայց՝ յանկարծ եղանակը վատանում է, ուստի կարճ ժամանակով յետաձգւում արարողութիւնը. հէնց հետեւալ գեղեցիկ գիշերը այդ բոլոր պատրաստութիւնները նորից հանդէս են գալիս:

Առաւոտեան երեսում են գեղեցիկ կանոնաւոր շարքերով շարւած զինւորները իրենց փայլուն զէնքերսի, աերբասները այնպէս էին լիցւել պլեբէներով, որ ասեղ դցելու տեղ չկար. ահա այս զինւորների ու ամբոխի միջով անցնում է Ներոնը հագած սպիտակ պատմումանը, որը մեծ յաղթանակներ տանելու առթիւ էր հագնում. նա շըջապատւած էր սենատով և իւր թիկնապահներով։ Նա բաւականաչափ աստիճաններ բարձրանալուց յետոյ նստում է իւր գահի վրայ. մօտենում է Տրդատը և երկրպաղութիւն տալիս. այս բանը տեսնելով ամբոխը սոսկալի աղաղակ

է բարձրացնում ի պատիւ Տրդատի։ Սակայն վերջինս կարծում է թէ իրան անարգելու համար է, ուստի նա շւարուծ չորս կողմն է հայում. վերջապէս լուսութիւնը վերականգնում է. Տրդատը վեր է կենում և առում Ներոնին. «Կեսար, ես վեր էնիների որդին եմ, Պակուրոսի և Վալերշակունիների որդին եմ քեզ ծառայ եմ զարշակի եղբայրը, և ես ինձ քեզ ծառայ եմ զայտարարում։ Ես եկել եմ քո մօտ, իմ աստույայտարարում։ Ես եկել եմ պատմում եմ ինչպէս իմ Միթրա ասաւուծուն. քո հրամանը կատարելը ինձ համար մեծ բաղտաւորութիւն կլինի, որովհետեւ համար մեծ բաղտաւորութիւն կլինի, որովհետեւ գու ինձ համար և Բախտ ես և Պարիք»։ Այս ասագուն զինւորների առաջ կայսեր ճառը շատ բարձր էր, փակութեան առաջ կայսեր ճառը շատ բարձր էր, գայել իւր արտասանողին. «Գու շատ խելօք վարվագիկ, որ եկար ինձ յարդանք մատուցանելու, ուեցիր, որ եկար ինձ յարդանք մատուցանելու, որովհետեւ ես քեզ տալիս եմ մի թագաւորութիւն, որ ոչ զինւորից ես ստացել իբրև ժառանգութիւն որ ոչ եղբայրը քեզ տւեց՝ չկարողանալով պահել ոչ եղբայրը քեզ տւեց՝ չկարողանալով պահել իւր սեփական ուժով։ Ես քեզ հայտառապահնել իւր սեփական ուժով, որպէսպի թագաւոր եմ նշանակում, որպէսպի թէ նի վրայ թագաւոր եմ նշանակում, որպէսպի թէ նի վրայ թէ ուրիշներին ցոյց տամ, որ ես ոյժ ու քեզ և թէ ուրիշներին ցոյց տամ, որպէսպի թէ նի վրայ նեմ կայսրութիւններ բաժանելու և յետ վերցնելու»։ Այս ասելուց յետոյ հրամայեց Տրդատին, նելու»։ Այս ասելուց յետոյ հրամայեց Տրդատին, որ իւր մօտ բարձրանայ՝ իր համար պատրաստում է գերիշխանի ստների մօտ, վերջինս վերցնում է թագը և բաղմութեան աղաղակների տակ

դնում Տրդատի գլխին *): Այս արարողութիւնից առաջ Տրդատին վեր էր կացըել և համբուրել ի նշան անկեղծ բարեկամութեան։ Մի թարգման Տրդատի խօսքերը թարգմանում էր, որպէսզի ժողովուրդը հասկանայ։ Այս դաշնադրութիւնը նըւիրագործելու համար եղած տօնախմբութիւններն արժանի էին Հռոմի անկման շրջանի շույլութեան։ Թատրոնում Ներոնը Տրդատին նստեցնում է իւր աջ կողքին **). Պոմպէեան ցիրկումն էր, որ Սենատը վճռել էր կազմակերպել այս գւարճութիւնները. այստեղ մի ամբողջ ըեպերտուար են խաղում. բեմը, լօժաները, նստարանները փայլում էին ոսկեզօծ զարդարանքներով այնպէս որ այդ տօնը կոչւեց ոսկէօր։ Վարդագոյրները ծիրանի էին. Ներոնը լօժում փայլում էր ոսկեայ վերարկուի մէջ, անշուշտ ամէնից աւելի ուշագրաւեցւարձալին ինքը՝ Ներոնը պէտք է լինէր իւր կատակերգական և ձիավարժական քաջագործութիւններով. երբ Ներոնը իւր կառքն էր վարում, արւեստական մի լոյս աստղեր էր փայլեցնում նրա չորս կողմում. նա այդ ժամանակ հագաւծ ունէր լայն թերով մի կանաչքաղակ և գլխին դրել էր կառապանի զդակ։ Խընճոյքի ժամանակ, որով խաղերն ընդհատւեցին,

*) Դիոն Կասսիուս ԼXIII, 1—7.

**) Սուլիտոն. Ներոն. XIII.

նա քնար ածեց։ Այս բոլորը Տրդատն անվայել էր համարում մի կայսեր. նա նոյն իսկ խստ մութ ակնարկով վիրաւորեց Ներոնին գովաստնական խօսքեր ասելով Կորբուլոնի հասցէին։ Յետոյ Տրդատը վերջինիս խոստովանում է, որ իր յանցանքը Ներոնին ծառայելն է եղել միայն։ Սակայն՝ Ներոնն այդ ժամանակ չհասկացաւ վիրաւորական ակնարկութիւնը, որովհետև Տրդատը շատ զգուշութեամբ էր խօսում և խոնարհ, հլուշատ վայացնում իւր բողոքը, որ արտայայտեց մեղադրելով իրան Ներոնին հնագանդւելու համար։ Տրդատը Ներոնին մի «մոգական խնձոյք» էր տւել, որից յետոյ Ներոնը ցանկացաւ մոգութեան արարողութեան ժամանակ օրհնութիւն ստանալ. Տրդատը մերժեց, բայց՝ այս բացառութիւնը ոչ մի ստւեր չկարողացաւ ձգել երկուսի բարեկամութեան վրայ, որովհետև Տըրդատն անշուշտ իւր հիմնաւոր պատճառները կունենար հրաժարելու։ Ներոնը հիացած, շլացած լինելով իւր փառքից, Տրդատի գլխին թանգարին նւէրների մի անձրև է թափում, որի արժէքը 50 միլիոն դնիէի էր հասնում. յիմարաբար արւածայս ծախքը ուրիշ ծախքերի հետ համեմատած էր էր էր։ Այս բոլորից զատ՝ Տրդատին իրաւունք է տալիս վերանորոգել Արտաշարը, ուստի Երբ Տրդատը վերադարձաւ, բազմաթիւ ճարտարապետներ և աշխատանքը ղեկավարողներ բերապետներ և աշխատանքը ղեկավարողներ բեր-

ըեց, որոնց մի մասը կայսրը ինքնաբերաբար էր նւիրել: Կորբուլոնը միայն վերջիններիս է թոյլ տալիս Հայաստան մանել, և այս քայլը, ինչպէս պատմաբանն է ասում, կորբուլոնի համար մի պատւաբեր վարձունք էր, որով անուղղակի կերպով դատապարտում էր Ներոնի անհեռատեսութիւնը *):

Այժմ՝ այնպիսի զրամներ կան, որոնք կտրւել են կորբուլոնի յաղթութիւնների առթիւ. սրանցից մէկը վերաբերում է 58 թւին, Արտաշատի զրաւման տարուն. դա ներոնի quinarius-ներից է, որի մէջտեղումն է Armeniae. (Armeniac a victoria, կամ Armenia capta), հակառակ կողմում մի յաղթող քայլում է ձեռքին բռնած արմաւենուց մի պսակ:

Այս ժամանակւանից սկսած Տրդատն իշխում է Հայաստանի վրայ առանց հակառակորդի. սա յայտնի է դառնում Տրդատ-Արտաշէս **): անունով. սրա երկարատես թագաւորութիւնը 60-ից 107 թւականն է հասնում. հայերն իրենց կամ-

*) Դիոն Կաստուս. LXIII, 1—7.

**) Մենք յետոյ կանոննք, որ հէնց այս անձնաւորութիւնն է, որին Մովսէս Խորենացին Արտաշէս է անւանում նրա Տրդատ կամ Տիրիտ անւանը ծանօթ չլինելու պատճառով: Հայերը ամբողջապէս կորցրել են քրիստոնէութիւնից առաջ ունեցած իրենց պատմութեան աւանդութիւնները: Ս. Վերեր. Կաթ. Եկ. Հայ. էջ. 66:

ըով ընդունեցին այս օտարի թագաւորութիւնը չուզենալով նոր ձնշումների, նոր բռնութիւնների ենթարկել: Եւ այս խսկապէս խելօք վարւեցողութիւն էր. ամէն անգամ երբ ազգայնական զգացմունքը գերակշռել է, նրանք վնասւել են: Միթէ լաւ չէ, որ չկարողանալով դիմագրել զիջումներ արին այն տարրին, որը շատ քիչ էր տարբերում իրանցից. Նրանք ձուլեցին պարթեալ Արշակունիներին, ինչպէս ձուլել էին Դարէնի պարսիկներին, որոնց դարձրին իրենց ժառանգական սատրապները: Այսպէս է, որ այս զանազան տարբերից բաղադրւած ժողովուրդը կարողացաւ քիչքիչ ազաւել բարբարոսութիւնից, վայրենի վիճակից: Կարելի է ցաւել նրա բոպէական խոնարհման, անկման համար, սակայն ի՞նչ կարող էր անել նա այդ ուժեղ մրցակցութիւնների գէմ: Նա ամէնից էլ օգտւեց բաց պահելով իւր զըսները բարձր բաղաքակըթութեան առաջ:

Սակայն՝ այդքան զոհաբերութիւններից յետոյ երբ վայրենի բարբարոսների յարձակման ենթարկւեցին՝ և ոչ մի օգնութեան չարժանացան, որին շատ իրաւացի կերպով սպասում էին հայերը: Հռոմը չէր կարող օգնութիւն համանել, որովհետեւ զբաղւած էր զինուորական անհամար կրիզիսներով, որոնք առաջ էին գալիս ծիրանի ձեռք ձգելու պատճառով: 68—69 ին այսպիսի մի շարք կրիզիսներ էին առաջացել: Վերջապէս

Վեսպասիանոսը կեսարների գահն է բարձրանում (69—79): Սրա օրով Հայաստանը մնում է հաւատարիմ զասսալ, որովհետև լատին պատմաբանները նրա մասին չեն խօսում: Մակայն՝ Վեսպասիանոսը շատ էր զբաղւած ուրիշ երկրներով, յատկապէս Պաղեստինով, ուստի չկարողացաւ պաշտպանել Հայաստանը Ալանների յարձակումից:

Այս ժողովրդի ծագումը յայտնի չէ. սրանց մասին պատմում է միմիայն Յովսէփ պատմիչը, որի ասելով նրանք գալիս էին Դոնի (Տանայիսի) գետաբերանից. Ազով ծովի ափերի մօտ (Պալուս Մէօտիս). ալանները մտադրւած էին յարձակւել Մարերի վրայ, և շնորհիւ այս վերջիններիս թշնամի Հիւրկանացիների, որոնք զրաւել էին Կապից ծովի ամբողջ արևմտեան մասը մինչև Կովկասեան լեռների ճիւղերը, առանց վտանգի անցնում են ծովափի և լեռան միջև ընկած Բագւայ թերակղղին։ Պատմում են թէ հիւրկանացիները երկաթեայ գոներով փակել էին ճանապարհը։ Մտնելով Հայաստան բարբարոսներն սկզբում ոչ մի արգելքի չեն հանդիպում, կողոպտում են երկիրը, քշում տաւարը։ Մարաստանի Պակուրոսը վախենում է և ապաստանում լեռները, 100 տաղանդ վճարում իւր կնոջն ու հարճերին ազատելու համար։ Ասպատակողներն ամէն բան ոչնչացնում են Հայաստանի սահմանի վրայ։ սակագողական կարիքը դրդում է Տրդատ-Արտաշէսին

(մեր Տրդատը) դիմագրել։ Հազիւ Տրդատը պատահնել էր սրանց, որ ստիպւած եղաւ յետ փախ-
չել մի մեծ վտանգից ազաւելով. վայրենի ծի-
չեր որսացող ալանները Տրդատի վիզը պարան-
ելացաւ, սակայն՝ վերջինս հազիւ կա-
(լաշչօ) են ձգում, սակայն՝ վերջինս հազիւ կա-
րողանում է կտրել ու փախչել, և եթէ մի լո-
ւազանար, արդէն կորած էր։ Ալանները կա-
պէ ուշանար, արդէն կորած էր։ Ալանները թը-
տաղեցին աեսնելով որ իրանց որսը ձեռքից թը-
ռել է, ուստի աւելում են Հայաստանը որքան-
որ կարողանում են հեռու գնալ և բազմաթիւ
գերիներ ու անթիւ աւար վերցնում։

միայն մի միջոց էր դափնիներ վաստակելու .
նա զինում է իւր լէգէօններին, հասնում Աթէնք,
ուր Խոսրով թագաւորից մի պատգամաւորու-
թիւն է համարում խաղաղութիւն խնդրելու խիստ
մեծ ընծաներ առաջարկելով։ Տրայանոսը արհա-
մարհում է այս զիւրին, հեշտ հնագահութիւնը
և առաջ գնում։ Խոսրովը իմանալով այս՝ սար-
սափում է և յանձն առնում լքել Տրգատի յա-
ջորդին, որին այնքան մեծ ջանքերով Վաղար-
շակը հաստատել էր Հայաստանի գահի վրայ։
Խոսրովը խնդրում է յաղթանակների վարժ կե-
սարին Հայաստանի թագը տալ Պարթամազիրի-
սին, որին պատմիչները ներկայացնում են իբ-
րև Աքսիդարէսի եղբայր (կուզէն իմաստով), Այս
ընտանիքի ծննդաբանութիւնը թւում է թէ կա-
րելի է հետեւել կերպով վերականգնել։

Պակուրոս Բ. և իւր անյայտ եղբայրը

Պարթամազիրիս	Աքսիդարէս և իւր ան-
յայտ եղբայրը	

Խոսրով։

Խոսրովը յայտարարում է, որ Աքսիդարէ-
սը անվայել կերպով է վերաբերել դէպի Հռոմը և
արժանի չէ ոչ մի գթութեան։ Այսպէս՝ պար-
թէները սրան գահագուրկ են անում։ Տրայանոսը
որհ կմնար մի այսպիսի զզջումից եթէ միայն հա-

կառակորդի այսօրինակ թուլութիւնը նըան ան-
կասկած չդարձնէին յաղթանակը, նա աչքերը
փակում է, չտեսութեան է զնում և նոյնիսկ
քաղաքավարական մի խօսք անգամ չի ասում ի
պատասխան։ Գոռոզ թագաւորը այսքան միայն
յայտնում է, որ բարեկամութիւնը պետք է գոր-
ծից երեայ և ոչ թէ բողոքներից, նա Ասորիք
կմտնի, կանի այն՝ ինչոր արգարութիւնն իրան
կիթելադրի։ Նա անցնում է Փոքր-Ասիայով, Կի-
լիկիայի միջով, հասնում Սելևկիա. առանց կա-
թիւն արիւն թափելու բոլոր ժողովուրդների
հպատակեցնում։ Ճանապարհին, 113 թւին, յա-
ջորդաբար երկուաղերսազրեր է ստանում Պար-
թամազիրիսից։ Զնայած որ այս իշխանը իւր
առաջին նամակով խոնարհաբար խնդրում էր
Հայաստանի թագաւորութիւնն իրան տալ սա-
կայն այնուամենայնիւ մնաց առանց պատաս-
խանի. Երկրորդ նամակում նա արդէն չի ստո-
րագրում «Թագաւոր Հայաստանի», բայց՝ այս
նամակն էլ պակաս արհամարհանքի չի արժա-
նանում Տրայանոսի կողմից։ Միմիայն մի չնչին
բանում բաւարարութիւն են տալիս սրան—Աք-
սիդարէսը ուղում էր տեսնել կապագովկիայի նա-
հանգապետ իւնիսին իւր գործերը որա միջ-
նորդութեամբ կարգի գնելու համար, սակայն
որա փոխարէն առաջարկում են որա որդուն,
որին պատուիրած էր ոչինչ չզիջել։

Այս կօնֆերանսի ժամանակ Տրայանոսը շարունակում է իւր գնացքը, բարձրանում է Անտի-Տաւրոսը, ապա՝ Եփրատը մինչև Գայլ գետից թեքւելը, հասնում Սատարա անցքին։ Այստեղից նա բարձրավանդակի հարաւային կողմն է մագլցում՝ անցնելով մի նահանգի միջով, որը կոչւած էր Ելեֆէիա անունով. այստեղ համաձայնում է Պարթամազիրիսին ընդունել իւր ներկայութեան, իսկ այդ նրա համար, որ ցոյց տրւի թէ ոչ մի անդամ աղաջող չի եղել։ Կայսրը բանակից դուրս բազմել էր գահի վրայ և այնպէս էլ մնում է, չի վեր կենում ընդունելու Հայաստանի գահին ձգտող ստորացած իշխանին, Պարթամազիրիսն երկրպագութիւն է տալիս և Հայաստանի թագը կայսեր ոտների մօտ գնում ու կանգնած սպասում մինչև որ հրաման կստանար թագը յետ վերցնելու. բայց՝ այդ հրամանը չկար. զօրքը զարհուրելի աղաղակներ է բարձրացնում կարծելով, որ վերջնական յաղթանակը արդէն տարել է, որովհետեւ Պակուրոսի որդին, Խոսրովի քրոջ տղան մնացել էր այդտեղ իբրև գերի։ Դժբախտ Պարթամազիրիսն իրան կորած է համարում, յետ է դառնում փախչելու, բայց իրան շրջապատած է տեսնում լէդէօններով. նա ինդրում է գոնէ շնորհ անեն, որ ինքը այդ ամբոխի առաջ ստիպւած չլինի խօսել։ Տրայանոսը հրամայում է տանել իւր վրանն առանց

տուչութիւն տալու. Պարթ. այս տեղից դուրս է գալիս բարկութիւնից կատաղած։ Նրան տանում են հոռմէական բանակը. այստեղ կայսրը բազմում է մի տաճարում և հրամայում թագապահանջին բոլոր ժողովականների ներկայութեան ասել այն՝ ինչ որ ուզում է։ Կատաղութիւնից սկսում է անմիտ բաներ խօսել այս բարբարոսը. շատ անխոհեմութիւնների թւումն ասում է նաև, որ հոռմայեցիներն իրան չեն գերել ճակատամարտում, ինքն է եկել ինքնաբերաբար՝ կարծելով որ ոչ մի անարդարութիւն չի պատահելու. և վերջապէս ինքն իրաւունք ունի ստանալու Հայաստանի թագաւորութիւնը ինչպէս Տըրդատն էր նոյն թագաւորութիւնն ստացել ներոնից։ Տրայանոսն իրան զսպում է և կէտ առ կէտ պատասխանում սրա բոլոր ասածներին. գալով Հայաստանին՝ նա յայտնում է, որ չի կամենում ոչ ոքի տալ. Հայաստանը պիտի մնայ իբրև մի նահանգ և կառավարեի մի նահանգապետով։ Ի վերջոյ ազատ արձակում է Պարթ. և նրա հետ եղած պարթևներին, ուր որ ուզենան գնան, միայն զգուշութեան համար,—ձանապարհին ժողովրդին չգրգռելու նպատակով մի գունդ զօրք է դնում նրանց հետ։ Սրանից յետոյ հրաման է արձակում հայերին իրենց տեղում հանգիստ մնալու, այսուհետեւ ուղղակի հոռմից կախում կունենան։ Հայերն առանց ծպտուն հանելու հնագանդում

են քանի որ նրանց համար միևնույն էր այս թէ
այն կայսեր իշխանութիւնը։ Տրայանոսը մի քա-
նի բերդապահներ թողնելով Հայաստանում—ո-
րովհետեւ վստահ էր, որ այդտեղում հայրենասի-
րական ապստամբութիւն չի ծագի— հանգիստ
կերպով գնում է Եղեսա (Ուրֆա), Օսրօնի մայ-
րաքաղաքը, Արգարի հետ իւր գործը վերջաց-
նելու համար։ Սամօսատը գրաւելուց յետոյ նա
տիրում է նաև այդ երկրին, ապա Տիգրիսն անց-
նելով յարձակում է Մծբնի վրայ, որը գտնւում
էր Միջագետքի լոռքում։ Նա գրաւում է Կտե-
զիփոնը և այդպիսով պարթեներին ընկճելուց յե-
տոյ վերադառնում է Կիլիկիա, ուր և մեռնում
է 117 թւի օգոստոս 7-ին։ Թւում է, որ Պար-
թամ. ազատութիւն տալուց յետոյ նրան սպա-
նել է տւել։ Այս անխիղճ աշխարհակալը իւր
յատկութիւններով յետ չէր մնում այն զօրեղ
բնաւորութիւններից, որոնք կարողացան կանգուն
պահել Հռոմի կայսերական մեծութիւնը։ Նա շատ
արժանիքների հետ ունէր նաև ճարպկութիւն.
Նա ալանների վրայ թագաւոր նշանակեց, նա հը-
պատակեցրեց վրացիներին, քրդերին, մարտերին。
Հայաստանից զատ նա երկու ուրիշ նահանգներ
ևս ստեղծեց— Ասորիքը և Միջագետքը։ Նոյնիսկ
Արարիան նրա ոյժը տեսաւ։ Նրա մեղալներից
մէկի վրայ նկարւած է ինքը կանգնած Եփրատ
և Տիգրիս գետերի միջև նիզակը ձեռքին,

տիկի շորերը հագած, Հայաստանին տիրելիս, Հա-
յաստանը շղթայւած ընկած է իր ոտների տակ։
Այդ մեղալը կրում է հետևեալ մակազրութիւնը։
Armenia et Mesopotamia in potestatem Populi
Romani redactae։ Տրայանոսի արձանի վրայ տես-
նուում է Պարթամազերիսը կանգնած հոռմէա-
կան բանակի առաջ իւր ամբողջ միլութով, որը
պարթեներին յատուկ նշանն է։ Տրայանի ճար-
պիկ քաղաքականութիւնը բաւականաչափ բա-
ցարում է նրա յաջողութիւնները։ Երբ նա Կտե-
զիփոնի առաջ զբաղւած էր յանկարծ լսում է,
որ իւր յետելում գտնւած ժողովուրդը ապստամ-
բել է։ Միարօտատէսը և իւր եղբայր Խոսրովը
յարձակում են վերջիններիս վրայ։ Տրայանը
մտածելով, որ բաժանելը նշանակում է տիրել
ուստի առաջ է քաշում պարթեների գահին ձըգ-
տող մի ուրիշ անձնաւորութեան՝ Պարթամաս-
պարտի որդի Խոսրովին։ Այսպէս՝ նա կարողա-
կարպիկ կերպով շահագործել պարթենե-
րի գահին ձգտողին և նոր բարեկամներ վաստակել
ու այդպիսով ապահովել իւր հակառակորդների
նոր ըմբոստացումներից։
Արևելքում Հռոմի այս աստիճան բարգաւա-
ճելը վտանգաւոր երևաց Աղբիանոս կայսեր
(117—138). Նա վախեցաւ չինի թէ այդքան
ազգերը, որոնց երկրները վերածւել էին նա-
ազգերը, ապանց երկրները վերածւել էին նա-
ազգների, ապստամբւեն իրենց անկախութիւնը

ձեռք բերելու համար, միւս կողմից՝ նա մտածում էր, որ կարիք չկար ծանր ծախսերի տակը ընկնել յաղթութիւնը անորոշ պատերազմներ մը-դելով այդքան հեռաւորութեան վրայ, նա լաւ էր համարում դրանց բարեկամաբար իր հետ կապել բաւարարութիւն տալով ազգային եսասիրութեան։ Սակայն՝ Աղրիանոսը նախանձու մէր Տրայանոսին և ուզում էր ոչնչացնել վերջինիս բոլոր արածները, ուստի հրամայում է Հայաստանի, Միջազետքի, Ասորիքինահանգապետներին և բերդապահներին հեռանալ այդ տեղերից։ Այսուհետեւ Հոռոմի կայսրութեան սահմանը դառնում էր Եփրատգետը։ Բայց՝ ովքան Հայաստանի թագաւորը՝ Յայտնի չէ, գուցէ կարելի լինի եղբակացնել, որ Արշակունեաց ընտանիքից մէկն եղաւ։ Եւ իրօք՝ Աղրիանոսի քաղաքականութիւնը, որով աշխատում էր Արևելքի ժողովրդներին հաշտեցնել, պէտք է փաղաքէր այդ ազգերից ամենասուժեղին՝ պարթևներին, որոնց յետ մըդելու համար անչափ ջանքեր հարկաւորւեցին։ Մեզ յայտնի է, որ պարթևների բարեկամութիւնը ձեռք բերեց այն ժամանակ, երբ նոր կեսարը բաւարարութիւն տւեց նրանց եսասիրութեան գահընկեց անելով Խոսրովին, որին Տրայանոսն էր թագաւորեցըրել *): Այս միևնույն աղ-

*) Սպարտիանոս, Աղրիանոս. 13.

քիւրից գիտենք նոյնպէս, որ այս թագաւորը հաստատեց հայերի այն թագաւորին, որին իրենք էին իրենց վրայ թագաւորեցըրել երբ իրենց թշնամին մեռել էր, այն թշնամին, որի մղած պատերազմների պատճառով Հայաստանը Հոռոմի մի նահանգ էր դարձել։ Աղրիանոսը լաւ ըմբռնեց, որ միշտ էլ կարող էր պատերազմները կրկնել եթէ այդ թագաւորին չուզենար ճանաչել, հաւանօրէն այս թագաւորը պարթևներից պաշտպանւած մէկը պէտք է լինէր—Աքսիգարէսի որդին Պարթամասպարտը *):

Սրանից յետոյ կարելի է գնել Աքեմենիսիւն այն ցուցմունքների հիման վրայ, որոնք, իսկապէս ասած, այնքան էլ հաւաստի չեն։ Այս թագաւորը պէտք է իշխած լինի 140—159։ Անտոն Բարեպաշտի (138—161) մի մեղալ ցոյց է տալիս կայսրը կանգնած Հայաստանի մի թագաւորի պսակելիս։ Rex Armenia datus S. C. 140—143։ Սակայն՝ չի երևում թէ Աքեմենիսը պարթևներին համեմ անձնաւորութիւն է եղել։ Վաղարշակ Բ.-րդ (130—148), որն այդ ժամանակ իշխում էր, ցոյց տւեց, որ կյարձակւի Հայաստանի վրայ, որովհետև Աքեմենիսը (եթէ միայն սա է) թագաւորել էր ասանց իրանից հարցնելու։ Անտոնիոս Բարեպաշտի մի նամակից ե-

*) Աս կ. Կաթրճեանի կարծիքն է։

բեռւմ է, որ կայսրը խորհուրդ է տւել Վաղարշակին վերագառնալ իւր երկիրը. և յայտնի է, որ վերջինս հնագանդուում է:

Նա հնագանդւեց, բայց՝ գժկամակութեամբ. առաջին առիթը, որը մենք չգիտենք թէ ինչ է, նրան յարմար է թւում վրէժխնդիր լինելու համար: Աքեմենիսի յաջորդը պէտք է Սօհեմուը լի: լի^{*)}): Գուցէ սա էլ նոյնպէս պարթեների հաճութիւնը չէր ստացել թագաւորելու համար. այսպիսով պարթեների սպառնալիքները ստիպում են Հռոմին գուրս գալու իւր խաղաղ քաղաքականութիւնից: Մարկոս Աւրելիոսը (161—180), որը չնայած նստում էր Ասորիքում, բայց՝ կայսր էր արդէն, Լուկիոս կեսար զօրավարին, որը իւր մօմն էր այդ ժամանակ, յանձնում է մի բանակ պատերազմելու համար^{**)}:

Այս երկու կեսարների փոխադարձ վստահութիւնը, որով իրանց շատ բարձր էին համարում պարթեներին հարւածելու համար, շատ թանգ նստեց: Լուկիոս Վերոսը փոխանակ ինքը գնալուայդ յանձնարարութիւնը կատարելու, ուղարկում է մի տեղակալի Մեվերոս անունով, որը այդ յանձնարարութիւնը կատարելու համար ոչ մի արժանիք չունէր: Վաղարշակ Գ. րդ (148—181) գահից վար է բերում Հռոմի պաշտպա-

^{*)} Պ. Կաթրանեան, Քննակ. պատմութիւն, 175.

^{**)} Իւլիոս կապիտ. Մարկոս Ավրել.

նած Սօհեմոսին և նրա տեղը իւր որդի Պակուրոսին գնում, ապա՝ յարձակուում գործողներին կանգնեցնում, յետ քշում և մի անգամ էլ յաղթում լէգէօններին: Լէգէօններից մէկը փակւած մնալով Աղջնեաց բերդերից մէկում՝ մեծ մասմբ ոչնչանում է: Յաղթողները շարունակում են իրենց յաղթական գնացքը մինչև Ասորիքի մօսերքը: Արդէն Հռոմը պէտք է արթնանար. Ստատիոս Պրեսկոսը հռոմէական ուազմազիտու. թեան լաւ աւանդութիւններով ասպարէզ է իջնում. սա թերես գոհ էր, որ իւր տեղը ուղարկւած էր Մեվերոս վատ զօրավարը: Հռոմայեցիները իւլում են Ասորիքը և պարթեներին քշում մինչև կտեղիֆոն, որին և տիրում են: Սօհեմուն իսկոյն վերահաստատում է իւր զահի վըրայ Լուկիոսի Վերոսի իշխանութեամբ 169 թւին: Մարկոս Ավրիլոսը իւր մեղաններից մէկի վրայ, ուր իրան անւանում է Armeniacus Անտոն Բարեպաշտի նման, փորագրում է մի կին նստած Հռոմէական արծւի առաջ, խորը տիբրութեան մէջ ընկղմած, այս պատկերի տակին զըւած է. Armenia: Մի ուրիշը, 165 թւին պատրաստւած, ցոյց է տալիս Լուկիոս Վերոս կեսարին զահի վրայ նստած, իւր զինուորներով շրջապատւած, որոնց միջից երկում է Հայաստանի թագաւորը. կեսարը սրան պատկում է, և լէգէնդան ասում է. Rex Aremoniis datus: Վերջապէս մի ուրիշի

վրայ էլ նկարւած է այս կայսը նիզակը ձեռագին, որով սպառնում է մի հայի:

Մենք ստիպւած ենք անցնել 190 թւականին, որպէսզի հայոց պատմութեան հետքը գըտնենք, այս թւին է որ Հայաստանի թագաւոր Սահատրուկին հրաւիրում են օգնութեան հասնել կայսերական ծիրանու ձգտող բազմաթիւ մարդկանցից մէկին, որը նոր կեսար Նիկերն էր. սա կօմմօդի (180) և ուրիշ շատ յափշտակողների նման, որոնք սրան յաջորդեցին մինչև Սեպտիմ-Սեվերը, անհրաժեշտ համարեց, 190 թւին, գեապանութիւն ուղարկել Հայաստանի և պարթեների թագաւորների մօտ խնդրելու, որ իրան պաշտպանեն գահին ձգտող ուրիշ մարդկանց և յատկապէս Սեպտիմ-Սեվերոսի դէմ: Պարթեները հրաժարում են այդ գործին խառնւելուց, բայց խոստանում են. Եթէ Սեպտիմը Հայաստանին մօտենայ՝ իրենք կը հակառակեն: Այս բանին առիթ չեղաւ:

Վերջին թագաւորների ցանկը, որը պէտք է վերականգնենք, նոյնպէս հիմնում է անհաստատ տւեալների վրայ: Կարծում են, որ այստեղ կարելի է գնել մի ուրիշ պարթեալաղարշակ անունով, որին հայերը վաղարշ են կոչում. յետոյ գալիս են Տրդատ Բ. և վերջապէս Խոսրով Ա. որը թագաւորում է 222—252: Այս վերջին թագաւորն աւելի հաստատուն է, սակայն՝ սրա-

նից յետոյ եղած յաջորդութիւնը, որով փակւում է ցանկը, շատ աւելի անհաստատ է:

Ոչինչ յայտնի չէ Խոսրով Ա.ի մասին. բացի այն, որ նա կուել է Սասանեան նորածին հարստութեան դէմ և սպանւել է 252 թւին՝ այս նոր հարստութեան երկրորդ թագաւորի՝ Սապօր Ա.ի հրամանով: Այս թագաւորը իւր ոճիրների շնորհիւ տիրում է Հայաստանին և բռնի այնտեղ մի սատրապ նշանակում կառավարող: Այսպէս՝ Հայաստանը որոշ ժամանակով ընկնում է Սասանեան նոր հարստութեան իշխանութեան տակ: Սակայն՝ Հայաստանին նորից տիրում են հռոմայեցիները մօտաւորապէս 260 և 270-ի մեջերում: Այս արկածը, որը օգուտ չունենալուց զատ շատ երկար և շատ խառնակւած է, տեսում է մինչև 293 թիւը: Այս ժամանակամիջոցում մի թագաւոր երկու անգամ հանդէս է գալիս իբրև Հայաստանի թագաւոր, դա Տրդատն է, որը հազիւ կարողանում էր գիմանալ Սեպտիմ-Սեվերի և կալիկալայի վերջին հարւածներին, որոնք տեղում էին պարթեների գլխին: Սասանի թոռ Արտաշերը վերջապէս յաջողուում է վերականգնել Սասանեան հարստութիւնը: Այս ժամանակում հայերի յարաբերութիւնները այս հարստութեան հետ հակասական կերպով են ներկայացրած յոյն և լատին պատմիչների կողմից: Գալով հայկան լէգէնդային՝ նա կատարելապէս մթնացնում

է ինդիրը: Այսպէս՝ բոլոր դէպքերը ինչ որ պարսիկներին է վերաբերւում խմբել են Արտաշիրի շուրջը, չնայած որ հոռմայեցիները, հակառակում էին նրան Հայաստանը պաշտպանելու համար, համաձայն չէին յոյների հետ իրենց յարաբերութեան տեսակէտից: Նոյնպէս էլ Խոսրովի շուրջն են խմբում այն ամէնը՝ ինչ որ կատարւած է Հայաստանում, չնայած որ շատ դէպքեր նրա հետ կապ չունեն: Աղէքսանդր Սեվեր, միանալով հայերի հետ, կատարելապէս ջախջախում է Արտաշիրին. այդ ժամանակ պարսիկները 4 տարի զինագարար են խնդրում. կայսրը այս հաճգամանքից օգտուում է փառաւոր կերպով իւր յաղթութիւնը հոչակելու (231—233)՝ չնայած որ առաջին պատերազմը տեղի էր ունեցել 228-ին: Արտաշիրը մեռնում է 238-ին կամ 241-ին (?). և չի կարողանում Հայաստանի վրայ յարձակւել ինչպէս ցանկանում էր: Երա յաջորդը Սապօր Ան եղաւ, որն այդ ծրագիրն իրագործեց: Սա գրաւեց Միջագետքը և սպառնաց նոյնիսկ Անտիոքին: Հոռմում եանուսի տաճարը մի անգամ ևս պէտք է բացւէր: Կօրդիան լէգէօնների գլուխն է անցնում և գրաւում Մծբինն ու Կարհէ (Հարուան): Պարսիկները ստիպւում են անցնել Տիգրիսը բայց չեն կարողանում աւերել Հայաստանը, որովհետեւ հայերը քաջութեամբ նրանց յետ են մղում: 244 թւին Փիլիպոս Արտաշ

բեր մի դաշն է կապում պարսիկների հետ և Հայաստանը անօդնական թողնում: Երկրորդ՝ Սասանեանը Սապօր Ա-ը, չի կարողանում մի անգամից Հայաստանը գրաւել. քիչ յետոյ Փիլիպոսը գրգում է իւր դաշը և դարձեալ Հայաստանը իւր պաշտպանութեան տակն առնում: Այս տեղ Մովսէս Խորենացու տեղեկութիւնները համաձայնում են պատմութեան հետ, միայն Կալլոս կայսրն է, որ 252 թւին Խոսրովի մահւան տարում, գրաւում է Հայաստանը, չնայած որ ուրիշները այս դէպքը դնում են 14 տարի աւելի ուշ՝ 238-ին: Խոսրովը սպառնեց պարսիկների ձեռքով:

Այս ժամանակն է, որ երբ Խոսրովը սպառնում է, նրա որդի Տրդատը փախչում է հոռմայեցոց բանակը. Դեկիուսը մեռնում է չկարողանալով իւր ոյժը ցոյց տալ Արևելքին, որովհետեւ նա պաշտպանում էր Դանուբի անցքը Գօթերի դէմ. Գալլիուս այս բարբարոսների հետ ստիպւած եղաւ ամօթաբեր մի դաշն կապել: Վաղերիանոս եղաւ ամօթաբեր մի դաշն կապել: Վաղերիանոս չկարողանալով պաշտպանել Հայաստանը, որը նույնին էր պարսիկների իշխանութեան տակ, առաջին անգամ յարձակւեց պարսիկների վրայ, սակայն՝ սարսափելի հարւածի է ենթարկւում. նա գերի է ընկնում և բանտարկւում. կարծում են նոյնիսկ, որ նա մեռնում է կապանքների մէջ:

Այսպէս՝ պարսիկները տիրում են Ասորիքին և

հասնում մինչև կիլիկիա. սակայն՝ Օդէնաթոս
Պալմուրը յետ է մզում պարսիկներին Միջագետ-
քից և տիրում Հայաստանին: Նա իշխում է Ա-
րարատի շրջանում: Այսպիսով Պալմուրը դառ-
նում է միութեան գիծ հայերի և Հռոմի միջև.
Նա մեռնում է 267 կամ 271-ին: Սրա ամուսին
Զինոբիան որը յաջորդ դարձաւ, Հայաստանը պա-
հում էր իւր իշխանութեան տակ: Ավրելիանոսը
պատերազմ է յայտարարում սրա դէմ. սրանցից
ամէն մէկը ձգտում էր Հայաստանը իբրև դաշ-
նակից ունենալ: Հայերն իսկապէս բաժանւած
էին Երկու մասի, մի մասը Հռոմի կողմն էր, միւսը՝
Պալմուրի: Բայց սրանից առաջ Վաղերիանոսի
ժամանակ, ազգային մի թագաւոր յենուում էր
Հռոմի վրայ. դա Տրդատն էր, իսկ ընդհակառակն
Կալլիոպի և Կոօդիոս Բ. րդի ժամանակ (260—270)
Հայաստանում մի զօրեղ կուսակցութիւն կար
պարսիկների կողմը Խոսրովին յաջորդող թագա-
ւորի ժամանակ, թերեւս այդ թագաւորը Տրդատն
էր. ուրիշներն ասում են, որ պարսիկ Արտա-
ւազին էր, որը կուսակցութեան պարագլուխն էր,
կամ նոյն իսկ Վաբալատը, Զենօբիայի որդին:
Այս բոլոր բարդութիւններից պէտք է եղրակաց-
նել, որ Հայաստանը երկու թագաւորներ ունէր
իւրաքանչիւրը իւր կուսակցութեան գլուխը կանդ-
նած — Տրդատը և Արտաւազի, որոնք միաժա-
մանակ իշխում էին. բայց՝ յաճախ մէկը միւսին

հալածում էր նայած օգնութեան հասնող պար-
սիկ կամ հռոմայեցի զօրքերին: 252-ից սկսած
կարելի է Արտաւազին իբրև Հայաստանի թա-
գաւոր ընդունել, սակայն յայտնի չէ արդեօք
մինչև 270 թւականը դիմացաւ և գտնւում էր
այն գերիների շարքում, որոնց Օդէնաթոսը Հռոմ
ուղարկեց:

Կարծում են, որ Տրդատը նորից վերջնա-
կանապէս թագաւորեց, երբ Պալմուրը 273-ին
կամ 274-ին յաղթւեց Ավրելիանոսից. այդ ժա-
մանակ հռոմայեցիները նորից տէր էին դարձել
Հայաստանին: Եթէ պատմիչները չեն խօսում
Հայաստանի մասին, այդ նրա համար է, որ Կեսա-
րի իշխանութիւնն ընդունեց առանց պատերազ-
մի: Չի կարելի որոշել թէ որ թւին Խոսրովի հա-
րսուութիւնը, յանձին Տրդատի նորից վերա-
կանդնում է: Պալմուրի յաղթութիւնից յետոյ
պարսիկները կորցրին Սապօր Ա. ին 270-ին: Սը-
րանից յետոյ գալիս է Որմիզդ Ա. և մի տարի
յետոյ՝ Բահրամ Ա. ապա՝ 276-ին Բահրամ Բ.
այնուհետև Բահրամ Գ. որը 17 տարի յետոյ է
լինում: Սա պէտք է գահը թողնէր Սապօրի Ա.ի
որդի Ներսէսին: 283-ին Պարսկաստանում յեղա-
փոխութիւն է առաջ գալիս. այդ ժամանակ կամ
գուցէ 289-ին հռոմայեցի մի կայսր (Պրօբուս,
կարուս) բանակցում էր Ներսէսի հետ. ինչպէս
պատմիչներն են ասում: Սակայն՝ սա անուննե-

ըի մի սխալ է, որովհետև Ներսէ թագաւորել է 293-ից մինչև 302: Մենք այս բոլոր դէպքերը մէջ բերինք, որովհետև ուրիշ միջոց չունէ-ինք Տրդատի թւականը ստուգելու համար: Մենք կարող ենք ընդունել, որ Տրդատը Հայաստանի վրայ թագաւորում է 276 թւից ի վեր, սակայն այդ ժամանակ նա միայն Արևմտեան Հայաստանին էր տիրում: Կարուս և Կալերիան կայսրների օրով (282—284) նա Կորդւաց աշխարհը, Ծոփաց երկիրն ու Արքանեն էլ ստացաւ և այդպիսով ամբողջ Հայաստանի թագաւորը դարձաւ: Վերջապէս 293-ին Հայաստանը նորից ընկնում է Ներսէ պարսից թագաւորի ձեռքը և Տրդատ ստիպւած է լինում փախչել հոռմայեցոց մօտ: Կալերիանոսը, որը միայն կեսար էր Դիօկղետիանոսի օրով, վճռում է վըէժխնդիր լինել այս պարտութեան համար: Գալիս է 297-ին, պարսիկներին ջարդում ու դաշն կապում, որը տիրում է 40 տարի: Ահա այս ժամանակ է, որ Տրդատը նորից կատարեալ ապահովութեամբ դարձեալ թագաւորելով քրիստոնէութիւն է ընդունում հաւանօրէն 295 կամ 298-ին^{*)}:

^{*)} Վէրեր, կաթոլ. եկ. Հայաստանում, 127 երես.

Համեմատական ցուցակ հայ թագաւորների, պարթև թև թագաւորների և հոռմէական կայսրների.

Արևելեան Հայաստան.

Միթրանէս	330—323
Նէոպտօլէմ	323—
Փրատափերնէս	317—
Օրօնտէս կամ Երւանդ կամ Հրանդ	316—
Արդօատէս կամ Արտվարդ	301—
Արտաւազդ Ա.	239—220
Օրէնտէս կամ Երւանդ	190—159
Արտաւազդ կամ Արտաշէս Ա.	159—149
Արտաւազդ Բ.	94—56
Տիգրան Ա.	56—36
Արտաւազդ Գ	

Ծոփաց աշխարհ

Սամէս	?
Արսամէս	240—
Աբգիսարէս	200—
Քսերքսէս	?
Միտրօբարզանէս	?
Մեհրուժան	165—
Արտանէս	93—

Արտաշեան հարստութիւն

<i>Արտաշեան Բ.</i>	34—20
<i>Տիգրան Բ.</i>	20—6
<i>Տիգրան Գ. և Երասո</i>	6—5
<i>Արտաւազդ Դ.</i>	5—2
<i>Տիգրան Գ. վերադառնում է. 2. Ք. ա. 2. Ք. յ.</i>	

Օտար հարստութիւններ

<i>Արիօբարդան</i>	1—2
<i>Արտաւազդ Ե.</i>	—11
<i>Տիգրան Դ.</i>	11—14
<i>Վօնօնէս</i>	14—17
<i>Զենօն և Արտաշեան Փ.</i>	18—34
<i>Արշակ</i>	—35
<i>Միհրդատ</i>	35—52
<i>Դեմօնաք</i>	37—41
<i>Ռադամիզդ</i>	54—59

Հայաստանի Պարթև հարստութիւնը

<i>Տիրիտ Ա. կամ Տիրիդատ կամ Տրդատ</i>	58—59
<i>Տիգրան Ե.</i>	59—62
<i>Տիրիտ Ա. վերադառնում է</i>	62—107
<i>Եքսիդարէս</i>	107—114
<i>Պարթամազիրիս</i>	—115
<i>Աքեմենիս</i>	?

<i>Բակուրոս</i>	162—
<i>Սօհեմոս</i>	178—
<i>Սանատրուկ</i>	178—217
<i>Վաղարշակ</i>	217—227
<i>Խոսրով Ա.</i>	222—252
(Սասանէան սատրապ)	
<i>Տրդատ (Խոսրով Ա. որդին) փախստական</i>	
կամ	238-ին կամ 241-ին
(Արտաւազդ պարսիկ)	252—
(Օգենաթուս պալմուրցի, արևելեան Հայաստանի վրայ)	267 կամ 271
(Զենոբի)	?
<i>Տրդատ</i>	276—
<i>Տրդատ (ամբողջ Հայաստանի վրայ)</i>	282 կամ 284
<i>Տրդատ երկրորդ անգամ փախստական</i>	293—
<i>Տրդատ թագաւորում է վերջնապէս</i>	298—
<i>Մրա դարձը քրիստոնէութիւն</i>	

Պ ա ր թ և ն ե ր

<i>Արշակ</i>	250—248
<i>Տրդատ</i>	248—214
<i>Արտաբան Ա.</i>	214—196
<i>Պրիապիտէս</i>	196—181
<i>Փրաատէս Ա.</i>	181—174
<i>Միթրիդատ Ա.</i>	174—136
<i>Փրաատէս Բ.</i>	136—127
<i>Արտաբան Բ</i>	127—124

Միթրիդատ Բ.	Մհծ	124—87
Մենասկիրաս		87—76
Մանատըռուկ		76—67
Փրատէս Գ.		67—60
Միթրիդատ Գ.		60—56
Օրօղէս Դ.		56—37
Փրատէս Դ.		37—2
Փրատակէս Հ	ք. ա. 2. ք. յ.	4—8
Օրօղէս Բ.		8—11
Վօնօնէս Ա.		10—40
Ալտաբան Գ.		40—45
Վարդանէս կամ Վարդան		45—51
Կոտարսէս		50—51
Վօնօնէս Բ.		51—77
Վաղարշ Ա.		77—79
Վարշակ Բ.		77—79
Պակուր 77—93	յետոյ	93—110
Ալտաբան Գ.		81—93
Խոսրով		107—130
Վաղարշակ Բ.		130—148
Վաղարշակ Գ.		148—191
Վաղարշակ Դ.		191—208
Վաղարշակ Ե.		208—227
Ալտաբան Ե.		215—224
Ալտաւագդ կամ Արշակ	XXXI վերջին	
թագաւորը, բայց՝ միայն մի մա-		
սի վրայ		224—227

Մասանեան հարստութէւն

Արտաշէր		224—241
Սապօր Ա. կամ Սափար		241—270
Որմիզդ Ա.		272—273
Վահրամ Ա.		273—276
Վահրամ Բ.		276—293
Վահրամ Գ.		293—
Ներսէս		293—302

Հ Ա Օ Մ

Մագնեղիայի յաղթութիւնը Սելևկեան.	
ների դէմ	190
Ոռվլայի յաղթութիւնը Միհրդատ Եւ- պատօրի դէմ	84
Լուկովլոսի պատերազմը (սկիզբ)	73
Միհրդատ Եւպատօրի փախուստը Տիգ- րանի մօտ	72
Հռոմայեցոց պարտութիւնը Զելայի (Կա- ղիուրա) մօտ	67
Պոմպէի մուտքը Հայաստանում	66
Կրասոսի պատութիւնն ու մահը	53
Անտուանի կոփւը պարթևների դէմ	48
Անտուան Արտաւագդին շղթայում է	36
Օկտաւուղարկում է Տիգրանին Հայաս- տանի վրայ իշխելու	20

Օկտավ-Օգոստոս	31 Ք.	ա.	14 Ք.	յ.
Տիբերիոս			14—37	
Կալիկուլա			37—41	
Կլաւդիանոս			41—54	
Ներօն			54—68	
Կալբա, Օթօն և Վիտելիուս			68—69	
Վեսպասիանոս			69—79	
Տիտոս			79—81	
Դիմետիանոս			81—96	
Ներվա			96—98	
Տրայանոս			94—117	
Ազրիան			117—138	
Անտոն բարեպաշտ			138—161	
Մարկոս Ավրելիոս			161—180	
Կոմմոտ			180—193	
Սեպտեմ-Սեպեր			193—211	
Կարակալլա			211—217	
Մակրին և Հելիօզաբալ			217—222	
Ալէքսանդր Սեպեր			222—235	
Մաքսիմիանոս թրացի			235—238	
Գօրդիանոս Ա. և Գօրդիանա Բ.			238—244	
Փիլիպպոս Արաբացի			244—249	
Դեցիուս			249—251	
Գալլաուս և Վոլուգիանոս			251—253	
Վալերիանոս			253—260	
Գալլիէն			260—268	
Կլավդիանոս Բ.			268—370	

Ավրելիանոս			270—275
Տակիտոս			275—276
Պրօբուս			276—282
Կարուս և Գալերիան			282—284
Դիօկղետիանոս			284—305

Գ Լ Ա Խ Խ Ա Փ .

ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԸ

Հայոց հեթանոսական կրօնն երեք տարրերից էր բաղկացած. նրա հիմքը անշուշտ սեփական էր և ծագումով Հնդեւրոպական, այս հիմքի վրայ Ք. ա. VII դարում աւելացան պարսիկներից և ասորիքից վերցրած փոխառութիւնները. սրան պէտք է աւելացնել և այն, որ Ք. ա. I դարում այս ազգային կամ ազգայնացած գաղափարները պատահաբար աւելի կամ պակաս չափով հելլենական ձև ստացան:

Նախ քան օտար ու բարձր քաղաքակրթութիւնների հետ երկարատև շփում ունենալը՝ Հնդեւրոպական բոլոր ազգերի նման հայերն էլ իւրենց սեփական աստւածներն ունէին, որոնց բոլոր անունները մեզ չեն հասել. սակայն՝ այդ աստւածների բնաւորութիւնները երբեմն տրւել են ծագումով օտար աստւածների. օրինակ, Պարսից Որմիզդին հայերը պաշտում էին և անւանում Արամազդ. համաձայն յոյն-լատինական բարձրագոյն աստծու ըմբռնողութեան՝ հայերը սրան դարձրին աստւածների հայր, մի բան, որ պարսիկներն երբէք չէին կարող երևակայել. պար-

սիկները զրկել էին մի բարձրագոյն աստուծու գաղափարից. նոյնպէս էլ հայերի Անահիտը, որը Արամազդի աղջիկն էր և Ստրաբոնի նկարազրած տոփանքի տաճարի քրմուհին, պաշտում էր բոլորովին այլ բնաւորութիւն կրող ծիսակատարութիւններով, բան թէ պարսիկներն էին պաշտում իրենց այդ միկնոյն աստւածունուն. հայերի պաշտամունքը տարբերում էր պարսիկներից չնայելով որ այդ աստւածունուն հետ միաժամանակ որոշ ծիսակատարութիւններ ևս փոխէին առել *):

Մրանից զատ՝ հայերի քրիստոնէութիւն ընդունելու ամբողջ պատմութիւնը — Մովսէս Խորենացու պատմած — ցոյց է տալիս, որ հայերը նախ քան օտար տեղերից կուռքեր բերելը ունեցել են իրենց սեփական աստւածների կուռքեր, որոնց հեղինակները յայտնի չեն. Եթէ նոյնիսկ այս կերպ պատկերացնենք խնդիրը, դարձեալ չի երկում, որ այս աստւածութիւնները բնիկ են. Դրանք կարող են պատկանել երկու օտար աղբիւներից մէկն ու մէկին — պարսիկներին կամ ասորիներին: Եթէ իբրև իրողութիւն ընդունենք այն որ պատկերը յարմարացրւում է գաղափարին՝ այն ժամանակ կարելի է ասել, որ պատկերը օտարից էին վերցրել հայերը, բայց՝ զա-

*) Գելցեր «Zur armen. Götterlehre».

զափարը մեծ մասամբ ազգային էր մնում. նախնական կրօնի յիշողութիւնը, որը իւր էութեամբ հնդկա-եւրոպական էր—միշտ էլ կենդանի էր մնում. բացի այն բանից, որ հայերը իրենց սեփական աստւածների բնաւորութեան որոշ գըծերը դրել էին օտար, փոխ առած աստւածների վրայ, մենք տեսնում ենք, որ նոյնիսկ ազգային պաշտամունքը միշտ էլ իբրև կեղրոն ունեցելէ մի աստւած, որը չկայ յետագայում փոխ առած գիցաբանութեան մէջ, և սա հասկանալի է, որովհետև այդ աստւածը հայերի ժառանգական երեսկայութեան մէջ պատկերանում էր իւր էութեամբ բարձր միւս բոլոր աստւածներից։ Այս աստւածը, որը անմատչելի էր օտար ազդեցութիւնների, վանատուրն էր. սրան հայերն անւանում էին Վանատուր—Դիք (Դիք=աստւածներ, այս բառը միայն յոզնակի է գործածում, որովհետև դա վերաբերում էր բոլոր աստւածներին. Եղակի նշանակում է «դիակ»)։ Վանատուրի պաշտամունքը կատարւում էր տարւայ սկզբին (ամանոր=նոր տարի). իբրև Ամանոր նաև սկզբին (ամանոր=նոր տարի). իբրև Ամանոր նաև տարւայ աստւածն էր. հայերն ընդլայնելով այս իմաստը, սրան դարձրին Ամենաբեր, այսինքն՝ երկրին ամեն բան տւող. սա ուրեմն ժամանակի և եղանակների աստւածն էր (Ազաթանգեղոս էջ 623) գուցէ մէկի կամ միւսի։ Սրա գըլ-խաւոր մեհեանը գտնուում էր Բագրեանդ գաւա-

ռի Բագրաւան գիւղում (այժմեան Ալաշկերտ). մինչև քրիստոնէութեան ընդունելութիւնը, ամբողջ հայ ժողովրդի ուխտագնացութեան կեղրոնն էր. այս տաճարի տեղում Նպատակացային ստորառումն է շինուում Ս. Յովհաննէս հոչակաւոր վանքը (թուրքերէն իւչ-քիլիսէ=երեք եկեղեցի)։ Այս Բագրաւան անունը, որ պարթևական լեզով նշանակում է «աստւածների տեղ» (Բագ=աստւած, աւան=քաղաք, գիւղ), հայերը թարգմանել են Դից աւան (Դից=Դիք բառի սեռական հոլովը). այս հանգամանքը ցոյց է տալիս, որ Վանատուրը խոչոր աստւածների պաշտամունքի կեղրոնն էր։ Գրիգոր Լուսաւորիչը Ս. Յովհաննէս վանքում տեղաւորեց Ս. Յովհաննէս Մկրտչի մասունքները. սրանք տօնւում, պաշտում էին Նաւասարդին (տարւայ առաջին օրը), օգոստոսի 10-ին, Վանատուրի տօնի փոխարէն։ Այս տօնը նոյնպէս ծաղիկների տօն էր, որը մեծ ժողովրդականութիւն էր ստացել. Հայաստանի բոլոր վայրերում, ուր Վանատուրի համար մի տաճար է եղել, այդ տաճարին կից եղել է և մի տուն օտարներին, ուխտաւորներին հիւրընկալելու համար. ուր էլ որ մի այսպիսի տուն է եղել առանց տաճարի, դա նւիրւած է եղել Վանատուրին. Մաժան անունով մի քըմապետի գերեզմանի վրայ տաճարին կից շինել էին մի այսպիսի տուն (Մովսէս Խորենացի, էջ 166). հաւանական է, որ

այս Մաժանը սերւած լինի թագաւորական ընտառնիքից, որը աստւածացել էր և պաշտում էր Վանատուրի հետ միասին:

Հայերի նախնական պաշտամունքը ուղղւած էր նաև արեին ու լուսնին, որոնք ունեին իրենց կուռքերը, արձանները։ Այս արձանները ոչնչացրւեցին Ք. յ. 252 թւին, Պարսից Սասոր Ա. թագաւորի հրամանով, որովհետեւ պարսիկներն ևս պաշտում էին դրանց, բայց և ոչ մէկը նէւթական պատկերով չէին մարմնացնում։ VIII դարուց յետոյ (Ք. յ.) եկող գրողները շատ ուրիշ աստւածներ են ստեղծել կամ հայերին վերազրել օտար ազգերի աստւածներից։ Մենք Պ. Գելցերի նման ոչ բոլորովին կմերժենք, ոչ էլ հեշտութեամբ կընդունենք դրանց *):

Սրանցից զատ՝ Հայաստանում կային բարի և չար շատ ուգիներ. վերջինների համար հայոց լեզւի մէջ մնացել են որոշ բառեր, որոնք մի՛ միայն գաղափարներ են նշանակում, ուստի չըգիտենք թէ դրանք անձնաւորացել են թէ ոչ Դրոյժ նշանակում է խաբեքայութիւն, սուտ. Պարսկաստանում սա ստի ոգին էր, ջատու կամ ջատուք — Փեհլէվէից փոխ առած, նշանակում է կախարդ կանայք. Հայաստանում սրանք սոսկ կանայք են, իսկ Պարսկաստանում՝ չարութեան

ոգիներ. նիեւազ հայերէն նշանակում է սով, պակաս, իսկ վեհլվերէն՝ սովի ոգի։ Հայերէնի մէջ մնացել են իսկական ոգիներ, օր. Պարիզ, անտառների, մարգագետնի ոգի. Քաջք, լեռներում թափառող և վատ մարդկանց բռնող ու սահանքնեների մէջ խեղդող քաջութեան ոգի *):

Հայոց նախնական ազգային կրօնն ունէր նաև վիշպազոննք, «վիշապի որդիներ»։ սրանք ընակւում էին Մասիս լերան վրայ։ Հարք «հայրեր», աստւածացած նախնիքներ, որոնք ներկայանում են իրեն ցեղի առաջին հայրեր. սրանք պաշտուում էին Մանազկերտի շրջակայըում գտնւած Հարք զաւառում։ Վերջին հայ թագաւորները ձգտում էին իրանց Արամազդից սերւած համարել. նոյնպէս և քրմերը կարծում էին, որ իրենք աստւածներից են սերում. այս պատճառով է անշուշտ, որ Մաժան քրմի աճիւնը պաշտում էին **):

Հայերը եւրոպայից դուրս գալիս պաշտում էին մի քանի իսկական ոգիների. այս պաշտամունքը մի անիմբով էր նման նախնական բոլոր ցեղերի պաշտամունքին։ Այս ոգիների գլխաւոր կոչւում է Արալէզ (Արան Շամիրամի հակառակորդ հերոսն էր. Լէզ=լիզել, մի ոգի, որը

*) Մովսէս Խորենացի Բ. 61.

**) Վէրեր, կաթոլիկ եկ. Հայաստանում.

*) Ա. Վէրեր.

զինւորների վէրքերն էր լիզում). այս անունը ցոյց է տալիս, որ հայերը իրենց վերջնական հաստատւելուց յետոյ են ստեղծել այս Արալէզին: Մար Արբասի և Մովսէս Խորենացու գըրւածքներում ժողովրդական երգերի մի քանի բեկորներ ևս կան, որոնք կարող են որոշ տեղեկութիւն տալ հայերի նախնական պաշտամունքի մասին:

«Էշապէս հայկական աստւածութիւնները ծագումով իրանական են և զլխաւորապէս իրանական անուններ են կրում»*):

Պարսկական դիցաբանութեան մեծ ազդեցութիւնը, մանաւանդ արտաքինի, ձեի տեսակէտից, բացատրւում է պարսիկների երկարաւու տիրապետութեամբ. պարսիկների քաղաքակրթութիւնն անչափ բարձր էր բարբարոս հայերի քաղաքակրթութիւնից և չնորհիւ հայերի իւրացնելու զարմանալի յատկութեան, ինչպէս Հերոդոտն է նկատել (I, 135), պարսկական քաղաքակրթութիւնը հայաստանում արմատ ձգեց և զարգացաւ: Զնայած որ հայերին չէին բռնադատում պարսից պաշտամունքն ընդունելու, սակայն և այնպէս նրանք չէին կարող խուսափել քաղաքակրթութեան անդիմադրելի ազդեցութիւ-

*) Այս բանը հաստատում է Գելցերը. Ֆ. Իւստին ևս ընդունում է իւր «հիախներ և հայեր» գրւածքում:

նից. հայերը չէին կարող չենթարկւել յաղթող և մտաւոր զարգացումով բարձր ցեղի ազդեցութեան. սրանից զատ՝ պարսից սատրապների—որոնց հայերն ընդունեցին և դարձրին իրեւ ազգային մի հարստութիւն—կառավարութեան տըւած օգուտները ստիպում էին հայերին նմանել իրենց տէրերին. և վերջապէս հայերն ստիպւած էին որոշ աջակցութիւն տալ հայերի նախնական պաշտամունքից. միւս կողմից՝ հայիշխաններից շատերի անունները պարսկական էր, նոյնպէս և սատրապների և Հայաստանի թագուարների շինած բոլոր քաղաքների անունները*): Մի խօսքով առաջնորդող դասակարգն ու բոլոր կազմակերպութիւնները Պարսկաստանից էին գալիս. ուրեմն՝ զարմանալի չէ, որ հայերի պաշտամունքներն ու բարքերը պարսից հակազդեցութեանն ենթարկւած լինէին:

Սկզբունքով Արամազդից սերւած աստւածների թիւը 7.ն էր, բայց՝ յետոյ սրան աւելացնուում են 8-րդը. ապա 9-րդը, այնպէս որ չհաշւած երկրորդական փոխառութիւնները, հայկական պանթէօնը բաղկացած էր տասը գլխաւոր աստւածներից. սակայն՝ հայոց աստւածներին

*) Հիւալշման. Հայ քերականութիւն, I, էջ 12.

Դի բաժանելու սովորութիւնն այնքան հաստատուն էր, որ Խոսրով թագաւորը-Տրդատի հայրը 226-ին և 230-ին պարսիկների դէմ յաղթութիւն տանելու համար Գավ տաճարում (փայտակարանի նահանգում, Կուրի և Երասխի խառնարանի վրայ) կամ Վաղարշապատում (Էջմիածին) 7 սեղանների վրայ է մեծ զոհ մատուցանում:

Տասերորդ աստւածը, որը յետագայում աւելանում է պանթէօնին, նոյնպէս իրանական ծագում ունի դա սպանդարամատն է, որը Լազարի կարծիքով Զօրօաստրի կրօնի Սպենտա Արմայիտին է։ Յայտնի չէ թէ հայերն ինչպէս և երբ են փոխ առել այս աստւածը. միջին պարսկերէնի կամ պեհլվիի ժամանակ հայերը փոխ են առնում Սպանդարամատին միենոյն անունով, սա «բարերար Արմայիտին է», անշահասէր, վեհանձն անձնազոհութիւնը. Արմայիտ բառը վեգական Արամատինէ, որը Երկրի և «կատարեալ իմաստութեան» անունն է. այս անունը ըստ փեհլեվիական աւանդութեան Պլուտարքոսը ճշտութեամբ թարգմանել է տօփաբառվ. Արամայիտի բառի իսկական նշանակութիւնն է «սիրելի, հաճելի բնաւորութիւն»։ Յայտնի չէ թէ ուր և ինչպէս էին պաշտում Սպենդարամատին, սա ժողովրդականութիւն չունէր, որովհետև Ազաթանգեղոս Գրիգոր Լուսաւորչի կործանած տաճարների թւում սրան չի յիշում։ Գու-

ցէ սրան պաշտում էին իբրև հողի, Երկրի աստւած. որովհետև Թովմա Արծրունին ասում է, որ Երկիրը նրա պանդոկն էր. Սպանդարամատը աւելացնում է նա—ուրիշից չի ստեղծւած, նա մնում է այնպէս ինչպէս եղել է, նա յարատելում է առանց փոփոխութեան. Երկրի, հողի բը-նաւորութեան գծերն էլ այսպէս են։ Սա Մանիտապ Հեփթաղացու (Հոնը) պատմած լէ գենդան է, որը սակայն ամբողջապէս Սպանդարամատին չի վերաբերում։

Խօսելով հայոց դիցաբանութեան կրած իրանական ազդեցութեան մասին՝ պէտք է երկու աղբիւր որոշել—պարսկական և պարթևական. այս վերջինը որը շատ ուշ է առաջացել, շատ կարևոր է։ Պարսիկների կրօնական ազդեցութիւնը համեմատաբար նւազագոյն չափի է հասնում. վերջին դարաշրջանում պարթևների ազդեցութեան հետքերն են, որոնք ընդհանրապէս նըկատելի են. Ս. Գելցերը նկատում է, «մինչդեռ կապահովվիկան իւր Անահիտի կողքին երկու պարսկական աստւածութիւններ ունէր (Մտրաբոն XIX, 735), մինչդեռ Լուտիան, որը պարսկական գաղութներ ունէր, պարսկական կրօնի տաճարներ ունէր և իւր Անահիտին պարսկական Արտէմիսի տեղն էր գնում, — Հայաստանում այդ տեսակ բան չկար»։ Մոգութեան կրօնը, որը իւր կրակի պաշտամունքով տարածւած էր կապահովվիկայում և

նոյն իսկ Լուտիայում, ոչ մի հետք չի թողել Հայաստանում։

Կասկած չկայ, որ Արամազդից սերւածների մեծ մասը իրանական ծագում ունի. և այդ պարզ կերևայ, երբ ամենից առաջ մանրմասն ուսումնասիրենք դրանց անունները, որոնցից երեքը իրանական են. այդ անուններն են Վանատուր, Միհր, Անահիտ, Նանէ, Բարշամին, Աստղիկ և Տիւր։ Նմանութիւն կայ այս եօթ աստւածների սիստեմի և ՇԱմիսհա Սպենտայի՝ պարսկական ոգիների սիստեմի մէջ. Խոսրով թագաւորի վերոյիշեալ զոհաբերութեան ձեւ—նաբաւականաչափ երկգունաւոր կենդանիներ է, զոհում—նման է Աւեստայի արարողութեան (ըստ Վ. Գէյգերի). այս նմանութիւնը հաստատում է նաև Ագաթանգեղոս պատմիչը ասելով, որ թագաւորը այս արարողութեամբ պահպանեց իւր նախնիքների՝ մոգերի ծիսակատարութիւնները, այն մոգերի, որոնք, ինչպէս տեսանք, պարթևարշակունիներից էին։ Հայ պատմիչները միաժամանակ խօսում են մի 8-րդ աստծու՝ Վահագնի պաշտամունքի մասին։ Արամազդի այս կեղծ որդին իրանական չի. այլ՝ Հնդեւրոպական. ժողովուրդը տարտամ, անորոշ զրութեամբ, պահել է այս տարբերութիւնը Հնայած որ Վահագնին էլ միացնում են իրանական ընտանիքին։ Եւ 8 աստւածներ ունենալու այս ձգտումն իսկ իրա-

նական է. հայերը հաշւելով Արամազդին էլ կամ Վահագնին ձգտում էին 8 աստւածներ ունենալ, որովհետև պարսկական պանթէօնում ևս 8 բարձրագոյն աստւածներ կային։ Կարելի է փիւնիկեան աստւածների հետ ևս մի այսպիսի նմանութիւն ստեղծել։ Նրանք ևս 8 տաճարներ ունին. սակայն՝ փիւնիկեան ազեցութիւնը իրանականի հետ համեմատած չնշին էր. այդ ազգեցութիւնը ոչ մի հետք չի թողել, միայն յայտնի է, որ Ասորիքի հելենացած բնակիները Պ. ա. I դարում որոշ ազգեցութիւն են գործել հայերի վրայ և կարելի է կարծել, որ փիւնիկեան որոշ աւանդութիւններ սրանց միջոցով անցել են հայերին։ Այս թւականից առաջ և միշտ էլ այս երկու ազգերի մէջ յարաբերութիւններ եղել են. ուստի կարող էին մէկից միւսին անցնելնախնական որոշ հաւատալիքներ. յամենայն գէպս շատ աստւածաբաններ ընդունում են, որ այս 8 թւի նմանութիւնը կարող է պատահական զուգադիպութիւն լինել։ Ինչ և է, Վահագն միւս եօթն աստւածների չափ յարգանք էր վայելում, որովհետև Գրիգոր Լուսաւորիչն ու Տրդատը քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ կործանեցին սրա և իւր անդրանիկ եղբօր տաճարները, Վահագն և իւր այս եղբայրը համարում էին Արամազդի որդիներ։

Միւս կողմից՝ Հայաստանի որոշ մասերը՝ ա-

ուանց մերժելու այս բաժանումը, Արամազդիան ընտանիքից վերցրած երրորդութիւններ էին ստեղծել, օր, Վահագն—Անահիտն ու Աստղիկը. սրանը պաշտուում էին Հայաստանի հարաւարեւելեան մասում, որոնց պաշտամունքի կեղրոնը Տարօնի Աշտիշատն էր (Մշի նահանգում): Այս կերպ ամբողջ Հայաստանը նւիրւած էր Արամազդ-Անահիտ-Վահագն երրորդութեանը:

Ազգային այս աստւածներին յունականի հետ նոյնացնելն երբէք կտարեալ, ամբողջական չի եղել. հայերն այս յունական աստւածներին հասկանում էին իրենց ձևով և աշխատում էին յարմարեցնել իրենց սովորական գաղափարներին: Յունական ազդեցութիւնն առաջ եկաւ Արտաշէսի և Տիգրան Մեծի ժամանակ, որոնք մեծ քանակութեամբ յունական արձաններ բերին Հայաստան: Հայ ժողովրդի յիշողութեան մէջ միշտ էլ կենդանի էր մնում ազգային աստւածութեան տրւած յատկութիւնների որոշ մասը. այս յունական արձանները տեսնելով հայերը միայն շը-փոթեցին Զես-Իւպիտերին Արամազդի հետ, Միհր՝ Հեփիստոս-Վուլգենի, Անահիտը՝ Դիանա-Արտեմիսի, Նուռէն կամ Նանէն՝ Աթենաս-Միներվի, Աստղիկը՝ Աֆրոդիտէ—Վենուսի, Տուրը՝ Ապոլոնի և Վահագն՝ Հերկոլէսի հետ: Այս շփոթութիւնն ու յետագայում կատարւած ջոկողութիւնը բա-

ցատրւում է նախնական նմանութեամբ, որը պարզ կերևայ երբ առանձին առանձին յաջորդաբար ուսումնասիրենք այդ աստւածները:

Արամազդը Ահուրամազդայի աղաւաղումն է. այս վերջինն էլ նախնական Օհրամազդ և Օրմիզդ ձեւերից է, որոնք իրանական լեզուներում նշանակում են «Խմաստուն Տէր»: Հայերը սրան տւել են կարող և մեծ տիազոսներ. պարսիկներն էլ այդպէս էին անւանում նրան, բայց՝ Երկրորդաբար: Սրանից զատ՝ հայերը Արամազդին դարձնում են երկնքի և երկրի ստեղծողը, բոլոր աստւածների հայրը, երկրի պաղաբերութեան և բախտի պարգևողը: Հայ թագաւորներն իրենց Արամազդի սերնդից էին համարում. Արամազդի պաշտամունքի ամենագլխաւոր վայրը Անին էր, ոչ թէ Արաքսի հիւսիսային կողմում գտնւած Անի քաղաքը, որը քրիստոնէութեան ժամանակ մայրաքաղաք դարձաւ, այլ՝ այն Անին, որը Ք. ա. VI դարուց ի վեր շինւած էր Դարանաղիում (Երզնկանի և Ակնի միջն, այժմ Կամախ). Արամազդը պաշտուում էր և մի ուրիշ տեղ-Պաղատում (և ոչ թէ Պաշար ինչպէս Պ. Վիպերն է գրում, որին մենք հետեւում ենք. սա գտնւում է հայկական Տաւրոսի հանդիպագօտու վրայ): Վերջապէս՝ նա պաշտուում էր և ուրիշ ցեղերից, յատկապէս վրացիներից և իվերներից:

Սկզբներում Արամազդն միայն մի տղայ և

մի աղջիկ ունէր-Միհր և Անահիտ կամ Նանէ. յետագայում սրանից ծնեցնում են Աստղիկին և միւս աստւածներին։ Արամազդը մենակ էր ձընում, առանց մի մօր գործակցութեան, ինչպէս պարսիկներն էին պատկերացնում. այս բանը հաստատում են հայ քրիստոնեայ պատմիչները. Եղիշէն ու Եզնիկը, որոնք V դարու պատմիչներ են. գրի են առել պարսից թագաւոր Յազկերտ Բ.-ի, 439—457, մի նամակը, որով Յազկերտը մեղադրում էր հայերին մի կոյսից ծնւած աստծուն պաշտելու համար. այս պատմիչները պատասխանում են նրան, որ Միթրան նոյնպէս հրաշքով է ծնւել առանց մայր ունենալու։

Պարսից Միթրան հայկական Միհրն է. որի մասին բացի Արամազդից ծնւելուց ուրիշ բան չգիտեն հայ Քրիստոնեայ պատմիչները. սրա մասին մենք էլ ուրիշ ոչ մի աղբիւր չունենք, որոնց կարելի լինէր զիմել։ Բատ Ագաթանգեղոսի Միհրի տաճարը Բագայառիճումն էր (այժմ՝ Պակերիճ, Երգնկեանի մօտ)։ Իրը Հեփիստոսի համարժէք աստւած կարելի է Եզրակացնել, որ նա արեի և կրակի աստւածն էր. Պարսկաստանում Միթրան արդէն արեի աստւած էր. սրա պաշտամունքը ինչպէս Պարսկաստանում այնպէս էլ ամբողջ Առաջաւոր-Ասիայումն էր տարածւած։ Եղիշի և Խորենացու ասելով Երգումը Միհրի անունով էր լինում, ուրեմն՝ նա ներ-

կայ էր լինում երդումով կնքւած գործողութիւններին. նա քննում էր մարդկանց սրբաւերը, վըէժխնդիր լինում երդմնազանցութեան համար և ճշմարտութիւն ու արդարութիւն հաստատում։ Սրա պաշտամունքը արիւնալի էր. ըստ Քսենոֆոնի (Անաբագիս. IV, 5, 35) սրան ձիեր էին զոհում և երբեմն էլ Դիլման գաւառի Բագայառիճում գտնւած սրա տաճարի մօտերքը մարդկային զոհեր էին մատուցանում։

Սրան Հերկուլէսի հետ նմանեցնելով պէտք է նմանեցնել նաև Ապոլլօնի՝ արևի աստծու հետ։ Այս բոլորը մենք հանում ենք հայ ազգային առասպեկներից, որոնք կարող են կազմւած լինել գեռ Փոփոգիայում եղած ժամանակ (Սև ծովի երկարութեան վրայ)։ Մովսէս Խորենացին լսել է թէ ինչպէս էին երգում այս առասպեկները բամբուռ կոչւած լարաւոր գործիքի ընկերակցութեամբ։

Վահագն այնքան ժողովրդականացել էր, որ իւրաքանչիւր ամսւայ 27.րդ օրը նրան էր նըւիրւած։ Աշտիշատում, Վահագնի տաճարում զետեղեցին Յովհաննէս Մկրտչի և Աթանագինէի մասունքները։

Ժողովրդական պաշտամունքի մէջ Անահիտ աստւածունին առաջին տեղն էր բռնում. քրիստոնեայ պատմիչները սրան նմանեցնում են Արտեմիսի և երբեմն էլ Աթենասի հետ։

ւեց։ Այս տաճարներից յայտնի էր Երկուսը. մէկը Ծոփաց աշխարհում, Աթորանաթա կոչւած լերան վրայ, «Անահիտի գահը» (որը հիմա յայտնի չէ թէ որ տեղն է), ուր ապրում էր միայնակեաց Եպիփանոս Վ դարում (Հստ Փաւատոս Բիւզանդացու)։ միւսը՝ Տերինկատոր կոչւած վայրում, արեւելեան Տաւրոսի վրայ (Տարօնում)։ Երկայի սրբութիւնը անշուշտ այն է, որի մասին ակնարկում է Կիկերոնը Խօսելով «fanum locupletissimum et religiosissimum» ի մասին իւր De Imperio Romaeu գրւածքի մէջ (Էջ 23)։ Մենք տեսանք, որ Լուկուլլոսի արշաւանքը չափազանց գրգռեց հայերին, որոնք կարծում էին թէ հոռմայեցիների նպատակն է կողոպտել իրենց տաճարները և յատկապէս այս տաճարը։ Եւ այս վախը զուր չէր, որովհետև հոռմայեցիները յաճախ կողոպտում էին տաճարներում դիզւած ահազին գանձերը, որոնք նւիրւած էին աստւածներին։ Այսպէս է վարւել Անտոնիոսը, ինչպէս Պլինին է վկայում ։ «Անահիտի արձանը զուտ ոսկուց էր ձուլւած։ նա դրւած էր տաճարում, որը աստւածունու անունը տարածեց ամբողջ գաւառի վրայն էր։ Մի ուրիշը շինւած էր Արմաւիրում (Էջմիածնի մօտ)։ Արտաշատում (Արաքսի վրայ), Աշտիշատում (Տարօնում), Դարենաց քար լեռան վրայ (Անձեացեաց նահանգում, հայկական Տաւրոսի վրայ, գարբնաց քար բառը նշանակում է «գարբնի քար») շինւած էին ուրիշ տաճարներ. այս վերջինը, ըստ հայկական քրիստոնէական լեգէնդայի, Բարդողեմէսոսից կործան-

Տըդատ Գ-ը Ս. Գրիգոր Լուսաւորչին ուղղած իւր ճառում հետեւեալ կերպով է բնորոշում նըրան. ռսա Մեծ Տիկինն է, ազգի փառքը. նա է, որ կեանքի բարիքներն է բաշխում. բոլոր թագաւորները պաշտում են նրան, յատկապէս Յունաստանի թագաւորը. նա մայր է ամբողջ իմաստութեան, մարդկային սեռի բարերարուհին է. Նա բարձրագոյն Արամազդի աղջիկն է. նրա շնորհիւ է ապրում և բարգաւաճում հայոց երկրը, որին իւր պաշտպանութեան է արժանացը և Հայոց քրիստոնէական գրականութեան շըրջանում Անահիտը ցոյց է գրւած իրեն Արամազդի ամուսին, իրեն հայերի մայր և գերիշխանունի։ Սակայն՝ սա մի սխալ հասկացողութիւն է. Անահիտը Արամազդի ամուսին չէր, ոչ էլ հայերի մայրը, այլ աղքիւր կանացի բոլոր առաքինութիւնների։ Նրա զլխաւոր տաճարը գտընում էր Երիգայում (Երգինան), Աղձնեաց գաւառում, սա Հայաստանի ամենահոչակաւոր սրբավայրն էր։ Մի ուրիշը շինւած էր Արմաւիրում (Էջմիածնի մօտ)։ Արտաշատում (Արաքսի վրայ), Աշտիշատում (Տարօնում), Դարենաց քար լեռան վրայ (Անձեացեաց նահանգում, հայկական Տաւրոսի վրայ, գարբնաց քար բառը նշանակում է «գարբնի քար») շինւած էին ուրիշ տաճարներ. այս վերջինը, ըստ հայկական քրիստոնէական լեգէնդայի, Բարդողեմէսոսից կործան-

նացի միազնւական—աստւածային Օգոստոսի բարի գալութեան առթիւ մի խնձոյք է կազմում, այս խնձոյքի ժամանակ խօսք է լինում այն լեզէնդի մասին, որի համաձայն այս տաճարի առաջին սրբաբաղծողը, կողոպտողը անդամալուծում, կուրանում է. այս վիտերանը ասում է, որ այս խնձոյքի ծախոր աստւածուհու ոտքն է հոգում, և իր ամբողջ հարստութիւնը այդ տաճարի կողոպուտից է կազմւած»: Սակայն՝ արձանը նորից են շինում նրան երկրպագողները: Գրիգոր Լուսաւորիչը Երիզայում մի ուրիշ ոսկեայ Անահիտ գտաւ (ըստ Ագաթագեղոսի, էջ 591): Այս միենայն աստւածուհու ոսկեայ արձանը դրւած էր նաև Տարօնի Աշտիշատ քաղաքում: Արտաշատում սրա տաճարը ամրացրած էր և աստւածների քրմերը այստեղ պաշտպանւեցին թագաւորական բանակի դէմ: Ժողովուրդը դիմում էր Անահիտին նրան անւանելով «ոսկեմայր»: Ի պատիւ այս աստւածուհուն տարին երկու անգամ, գարնան և աշնան, փառաւոր տօներ էին սարքում: Մարաքոն յիշում է, որ սրա պաշտամունքի ծիսակատարութիւններից մէկն էլ տաճարում ազնւական օրիորդների անառականալն էր: Կարծում են, որ այս սովորութիւնը քրիստոնէութեան ժամանակ այլևս գոյութիւն չունէր, որովհետեւ Գրիգոր Լուսաւորիչը Տրդատին ուղղած մեղադրանքների մէջ չի յիշում այդպիսի մի սովորութիւն: Ճիշտ է,

որ Ագանթանդեղոսի գրած Լուսաւորչի ձառը իսկական է, սակայն՝ այնուամենայնիւ Անահիտի պաշտամունքը այնքան ժողովրդականութիւն ունէր, որ չնայած քրիստոնէութիւն ընդունելուն՝ հայերը Տիրան թագաւորի ժամանակ (IV դար Ք. յ.) գաղտնի կերպով դարձեալ պաշտում էին Անահիտին: Մեր թւականութեան III դարում Երզնկանի տաճառում հետեւեալ կերպով էին կատարում սրա պաշտամունքը, աստւածուհուն զոհ էին մատուցանում, ուխտ գնում մօտակայ Գայլ գետը, թագաւորական մի խնձոյք սարքում, ուր յարբում էին, աղա տաճարը պսակում էին ճիւղերով ու փնջերով։ Վերջապէս՝ պէտք է ասել և այն, որ եթէ Անահիտի համար ոսկի արձան էին ձուլում այդ նրա համար էր, որ ըստ հաւատալիքի նա ծնւել էր ոսկի մարմնով. այսպէս՝ նըրան անւանում էին «ոսկեմայր» (ոսկի և մայր բառերից կազմւած):

Նանէ (Նանայ, Նանէա, Նունէ) գիցուհին շփոթւեց Աթինասի հետ, երբ Արտաշէսը վերջինիս արձանը Հայաստան բերեց և Տիգրան Մեծը այդ արձանը դրեց Թիլ աւանի տաճարում: Մենք ոչ այս սրբավայրի տեղը գիտենք և ոչ էլ մի ուրիշ անուն: Անահիտը մայրական, մայր աստւածուհի էր, իսկ Նունէն թւում է, որ իբրև պատերազմի կոյս աստւածուհի պէտք է եղած լինի: Սակայն Նանէն Պարսկաստանում ևս ձա-

կտուամարտի աստւածուհին էր։ Բնդիանը ապէս հայկական աւանդութիւնների մէջ նունէն շատ քիչ է տարբերում Անահիտից։ Սա պաշտուում էր Ելամիտներից և հրէաներից տարբերող սեմիտական զանազան ցեղերից—օր։ Փիւնիկեցիներից, Ասորեստանցիներից և Ասորիքի ժողովրդից։

Բարշամը Ասորիքից էր փոխ առնւած (ասորերէն Բել-Շամին կամ Բաալ-Շամին)։ Սա երկնքի և երկրի աստւածն էր, սակայն՝ հայերն այս յատկութիւնը վերագրեցին Արամազդին։ Սըրան արծաթից, փղոսկրից և բիւրեղից մի արձան էին շինել, որը կոչւում էր «սպիտակափառ»։ Յայտնի չէ թէ ինչու Ագանթանկեղոսի յունարէն թարգմանութեան մէջ Բարշամին դարձրել են աստւածուհի։ Քանի որ իրանցիները հայերին ներշնչում էին արեին պաշտել և այս երկու ազգերն էլ արեին պաշտում էին, ուստի տարօրինակ չէ, որ հայերը Ասորիքից արեի մի աստւած փոխ առած լինեն, երբ նրանց հետ սկսեցին սերտ յարաբերութեան մէջ մտնել։ Եւ իսկապէս սիրիական քաղաքակրթութիւնը շատ բարձր էր հայերից յատկապէս կրօնական գաղափարների զարգացման տեսակէտից*）։ Հին ժամանակներից ի վեր հայերը Ասորիքի հետ յարաբերութեան մէջ էին գնալով աւելի ու աւելի էր սերտանում այդ

*) Ստրաբոն XI, 128.

յարաբերութիւնը, որովհետեւ սրանք իրար պատահեցին մի բնակավայրում կատաօնիայում (Կապագովկիտայի հարաւում), որը տարածւում էր մինչև Աղձնիք և Տարօնիտետ (Տարօնիտետը այս մինոյն շրջանի նահանգներից է, որը չպէտք է շրփոթել Մշի Տարօնի հետ)։ Արանից գատ հայերը բաւականաչափ սիրիական բառեր փոխ առան և Տիգրան Մեծի ժամանակ այս շրջանի սիրիական ժողովրդները ձուլւեցին հայերի հետ, որոնք բռնի իրենց լեզւին ու կառավարութեան ենթարկելով պարտածներին այնուամենայնիւ նրանցից որոշ գաղափարներ և սովորութիւններ փոխ առան *）։

Աստղիկ անունը նշանակում է «փոքրիկ աստղ» ինչպէս սիրիական «Կառւկաբտա» անունը. ուրեմն հայերը այս աստւածուհուն փոխ առնելով բաւականացել են միմիայն անունը թարգմանելով։ Սա պաշտուում էր զլիխաւորապէս Աշտիշատում (Տարօնում), յետոյ Բաղատում (և ոչ թէ Պաշտում), ուր ինչպէս տեսանը Արամազդն էր **）։ Արտաշէս Բ-ը Վանայ լիի ափին սրա համար մի տաճար շինեց, իսկ Սաթինիկը, այս թագաւորի ամուսինը, չուղեց թողնել Աստղիկի պաշտամունքը՝ չնայած որ քրիստոնէութիւնը արդէն յաղթանակել էր։ Հայոց դիցաբանութիւնը սրան դարձրել է Վահագնի սիրուհին։ Աշտիշատի սրա

*) Գելցեր.

**) Ալիշան.

տաճարը այդ տիտղոսն էր կրում։ Աստղիկը հեշտանքի աստւածուհին էր և ի պատիւ սրան հայոց թւականութեան վերջերին մեծ տօներ էին սարքում։ Սրան երբեմն շփոթում էին Անահիտի հետ, ուստի սա ևս դառնում է Արամազդի աղջիկը. վերջում սա նոյնացւում է Վենուս-Աֆրոդիտի հետ։

Տիւր կամ Տիրը Մերկուր մոլորակի ձեն է և ծագումսվ պարսկական պէտք է լինի, որովհետեւնա կոչւում էր քրմերի*) գիտութեան յայտնողը։ Սրա տաճարը գտնւում էր Երազամունում, ուր հասնում է Տրդատը, որը հեթանոսական տաճարները կործանելու համար Վաղարշապատից անցնելով պէտք է գնար Արտաշատ։ Ուրիշները Տիւրին նոյնացնում են Ապօլօնի հետ, որը աւելի է համապատասխանում հայկական աւանդութեան։ Տիր բառը հայերէն նշանակում է «կարողութիւն, ոյժ»։ սա պատզամների, իմաստուն խորհուրդների և ճարտարախօսութեան աստւածն էր, նա ապահովում էր երկրաւոր յաջողութիւններն ու շնորհքները։

Վահագն հայոց բոլոր աստւածներից ամենասժողովրդականն էր. նա էր, որ խեղում էր վիշապներին, քաջութիւն պարզեցում, այնպէս որ երբեմն սրան համարում էին պատերազմի միակ

*) Ազանթանգիղոս.

աստւածը և նոյնացնում էին Արէս-Մարսի հետ. ուրիշները կարծում են, որ յոյն աստւածներից միայն Հերկուլէսը կարող է համեմատել որպահետ։ Սրա անունը չի կարելի համեմատել իրանական պատերազմի ողի Վերետրագնայի հետ, չընայած որ վանկերը նման են։ Հնչական աւելի սերտ կալ կայ թէ Վատակնայի թէ Վայուի կամ Վաղիվեհի, բարձրագոյն իազատասի հետ *): ստուգաբանօրէն վահնի=կրել, ակնի=կրակ, այստեղից Վահագն կլինի կրակի աստւած։

Սակայն՝ կան ուրիշ ստուգաբանութիւններ, որոնք աւելի ճիշտ են երևում. Զենդ-Ավեստի Վերետրա=յաղթել և գնա=խփել բառերից կազմել են Վերետրագնա յատուկ անունը=«յաղթութեան ողի» կամ Բահրամ, որը նոյնպէս իրանցիների մօտ յաղթութեան աստւած է. այս աստւածը հայերը փոխ են առել և դարձրել Վահագն և Վահրամ **): Սրա համար է, որ Ազանթանգեղոսը սրան համարում վիշապներին սպանող, քաջութեան աստւած. որը քաջութիւն է պարզեցում. իբրև օդերևոյթաբանական աստւած Վահագնի օրհներգը ցոյց է տալիս, որ նա ծնւել է ծովի եղէգներից, որոնք վառում էին. սրանց ծուխը ծնում է այս երեխային, հուր աշ-

*) Վերել.

**) Այս ստուգաբանութիւնը տւել է Լակարդը, սրան համամիտ է Հիւրցմանը. վերջերում համաձայնւել է նաև Ա. Վ. Իակոսնը։

քերով և մազերով։ Վահագն ծնւած է երկրից և երկնքից, ծովու ծերունուց (աւելի շուտ ամպերից, եթէ համեմատենք Հինդրայի և Ակնիի հետ) և վերջապէս երկնային եղէդներից (աւելի շուտ ծովային եղէդներից), որոնք այրւում են հորիգնում, ծովի մէջ։

Վահագնի կոխուը ոգիների հետ փոթորկի և կայծակի սարսափների դէմ է. այս տեսակէտից նա քաջ է և քաջութիւն է ներշնչում, ուրեմն իբրև պատերազմի աստւած չէ, որ քաջութիւն է տալիս. սակայն այս օդերևոյթաբանական յառկութիւնները վերցւում են վերետրագնայի նոյնպիսի յատկութիւններից։

Այս տեսակէտից էլ Վահագն արկի աստւած է. այս իմաստով միայն կարելի է բացատրելնը ավիշապաքաղ մականունը։ Այս մականունը չի նշշանակում «սպանել վիշապին», ինչպէս այդ ընդունում է վերերը, այլ՝ «վիշապներին հաւաքող», այսինքն՝ մետկօրե=վիշապ, որը նշանակում է նաև «փոթորիկ», ցիկլօն, կայծակ, ընդհանրապէս օդերևոյթաբանական երկոյթ. և քաղ, քաղեմ բառից, որը նշանակում է «հաւաքել»։ Վահագն նոյնպէս մեր յիշատակած երրորդութեան անդամն է, վերջապէս սա պաշտում էր «Վահեվահ տաճարում», այս բառը միևնույն անւան մի նոր դարձւածքն է, «նման այն ձևին, որ գտնուում է Հիմէն Հիմինէ» դարձւած-

քի մէջ։ Այս տաճարը շինւած էր Աշտիշատում-քաղաք հարուստ յընծայաբերութեանս ոսկի և արծաթ» ասում է Ագանթանգեղոսը։ Յունական տեկստը նոյնացնում է Վահագն Հերկուլեսի հետ. լեդէնդաներն էլ Վահագնի մասին պատմում են յունական հերոսի քաջագործութիւնների նման քաջութիւններ։ Մի ուրիշ տաճար գտնուում էր Ահեղական Տօսպի գաւառում, ինչպէս Թովմա Արծրունին է պատմում. այս պատմիչը ցոյց է տալիս մի ուրիշ տաճար ևս Փոքր-Աղբակում, Մեծ—Զաբի վրայ։

Հստ Եվհեմերի տեսութեան—այս հանձարեղ յոյնը Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակ բոլոր աստւածներին ծագումով աստւածացրած հերոսներ էր համարում։ Վահագն ևս մի հերոս է աստւածացրած. կարելի է ընդունել, որ արեւելքում մի առժամանակ այս գաղափարը ընդունուել է, որովհետև Մովսէս Խորենացին ասում է, որ վրացիները նրան մի արձան էին կանգնեցրել, իսկ այդ արձանը պարզապէս հայոց Վահագն թագաւորին՝ պէտք է լինի, որը գնալով Ասորիք Բարձամ հերոսից յարդ է գողանում. այս յարդը ճանապարհին թափւում է Հայաստանում և յետոյ երկինք թոշելով կազմում կաթի ճանապարհը, որը մինչև հիմա էլ հայերից կոչւում է «յարդգողի ճանապարհ»։

Գ Ա Ռ Խ Ա Յ Ե .

ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Այս բոլորից զատ՝ ինչ որ ասացինք հայերի սօցիալական կազմակերպութեան մասին Հիդդիմների, խաղղերի և պարսիկների օրինակից հետեցնելով՝ կան նաև ուրիշ կէտեր, որոնք թէն կատարելապէս չեն լուսաբանում հայերի կուտուրայի վիճակը, սակայն՝ կարող են հնարաւորութիւն տալ մեզ մօտաւորապէս հասկանալու այդ՝ գոնէ այն շրջանից սկսած երբ հայերը հանդէս են գալիս պատմութեան մէջ *):

Հայոց թագաւորը բացարձակ իրաւունքի

*) Մեր այս տեղեկութիւնները քաղում ենք հայ պատմագրներից, որոնք բոլորն էլ IV դարուց յետոյ են գրել. նոյնիսկ Արանթանգեղոսն ու Խորենացին էլ յետագայ գրողներ են, որոնց շատերը համարում էին աւելի հին: Չնայած որ այս շրջանը ժամանակի մեծ տարածութեամբ բաժանւում է հնութիւնից, սակայն՝ ձիշտ կարելի է ասել, որ հայերի մէջ նոյն են մնացել նրանց բարքերն ու զանազան կազմակերպութիւնները: Հայերի մէջ աւանդութիւնները այն աստիճան կենդանի են մնում, որ հէնց այսօր պահել են այնպիսի աւանդութիւններ, որոնք V դարում են գոյութիւն ունեցել ինչպէս եզնիկն է վկայում (Եղծ Աղանդոց):

տէր էր. նրա բոլոր կարգադրութիւնները, հրամանները օրէնքներ էին. ուրիշ ոչ մի իշխանութիւն օրէնսդրական իրաւունք չունէր: Ինչ էլ որ լինէր միապետի քմահաճոյքը ոչ ոք չէր համարձակւում հակառակել նրան, նոյնիսկ եթէ մի հրէշային, այլանդակ կարգադրութիւն լինէր այդ. այսպէս՝ IV դարում քրիստոնեայ թագաւոր Տիրանը հրամայում է Յուսիկ կաթողիկոսին բըրածեծ անել. կաթողիկոսը հարւածների տակ մեռնում է: Ազնւականութիւնը սրա տեղ կաթողիկոս է ընտրում Դանիէլին, որը յանդիմանում է Տիրանին իւր այդ վարւեցողութեան համար. թագաւորը իսկոյն ևեթ հրամայում է կախել կաթողիկոսին: Այսպէս ուրեմն բոնակալը կեանքի ու մահւան իրաւունք ունէր իւր հպատակների վրայ, որոնց իւր ցանկութեան համաձայն ազնւականութիւն էր շնորհում, զանձեր բաշխում մէկից խլելով միւսին տալով: Այս Տիրանի յաջորդ Արշակը հրամայում է զօրքի հրամանատար իշխանեղօր Վարդան Մամիկոնեանին՝ սպանել թագաւորի հարազատ եղբօր որդուն՝ Գնէլին. հրամանը իսկոյն կատարւում է: Այս թագաւորը հրամայում է Վասակ զօրավարին սպանել իւր եղբայր Վարդանին. հրամանը նոյնպէս կատարւում է: Այսպիսի շատ օրինակներ կան և ոչ ոք չեմտածել հակառակել իւր տիրոջ կողմից հրամայւած ոճրագործութիւններին. թագաւորի հրա-

մանները կատարելը մի սուրբ պարտականութիւն էր, որի դէմ չէին վիճում եթէ նոյնիսկ պէտք լինէր մի ամբողջ ընտանիք, մի ամբողջ ցեղ կամ նոյնիսկ մի ամբողջ ժողովուրդ բնաջինջ անել։ Հայ թագաւորների օրով երկիրը, ըստ լեռնագրութեան, բաժանում էր փակնահանգների, որոնք կառավարում էին համարեա թէ անկախ կերպով մի նախարարի կամ տանուաիրոջ դեկավարութեամբ (առաջին տիտղոսը ցոյց է տալիս այն յարաբերութիւնը, որ այս իշխաններն ունեին թագաւորի հետ. երկրորդը՝ որոշում է գլուրանց գիրքը ցեղի հանգէպ, միենոյն սեպուհի միւս անդամների հանգէպ, որոնցից անդրանիկը դառնում էր յաջորդ և նշանակում է «ընտանիքի գլխաւոր»): Այս իշխանները թագաւորի վերաբերմամբ միայն երկու պարտաւորութիւններ ունեին. հարկ էին վճարում և զինւորական ծառայութիւն մատուցանում։ Սա բացարձակ աւատական (ֆէօդալական) մի բեժիմ կարելի է համարել եթէ ի նկատի չունենանք այն հանգամանքը, որ իշխանները սովորութիւն չունէին թագաւորին հաւատարմութեան երդում տալու։ Սակայն չնայած որ նորագոյն շրջանը լիքն է դաւադրութիւններով, ինչպէս այդ ճակատագրօրէն պատճում է լեռնական աւատականութեան մէջ, այն նուամենայնիւ թագաւորի անձնաւորութիւնը այն աստիճան սրբագրծւած էր, որ ոչ մի օրինակ

չկայ որով հայերն իրենց թագաւորի կեանքի դէմ դաւադրական փորձ արած լինէին *): Հայաստանում չկան այն անընդհատ դաւադրութիւնները, որոնցով լիք են Ասորեստանի, Պարսկաստանի և համարեա արեւելեան միւս բոլոր ազգերի պատմութիւնները։ Միակ դէպքը, որը արիւնով էլ չփերջացաւ, վերջին հայ Արշակունի թագաւոր Արտաշէս Գ.ին գահընկեց անելն է 428-ին Ք. յ.։ Թագաւորի պալատում այս ազնւականութիւնը բաժանում էր երկու խմբի. այստեղ ամէն մի նախարար ունէր իւր հաստատուն բարձը և նայած իւր կարգին՝ այդ բարձը գրւած է լինում որոշ տեղում. երբեմն միենոյն սրահում 900 այսպիսի բարձեր էին լինում. եթէ մի նախարարի բարձը իւր տեղում չէր լինում այդ նըշանակում էր, որ այդ տեղի տէր նախարարը զըրկւել է իւր պատւից։ Յաճախ թագաւորը տեղափոխ էր անում այն նախարարին, որին ուզում էր վարձատրել կամ պատժել։ Այս բոլոր իշխանները ըստ պարսկական սովորութեան «ծառայ արքայի» էին։ Սրանցից չորսը փոխարքաներ էին, թիջախ (πιτιάΕης), որոնց յանձնաւած էր երկրի սահմանների պահպանութիւնը. հէնց այս պաշ-

*) Ճիշտ է, Մովսէս Խորենացին կարծում է, որ հայերը Տրդատին, առաջին քրիստոնեայ թագաւորին, թունաւորել են, սակայն դա միակ լեզնդան է, որ գոյութիւն ունի:

տօնի պատճառով էլ նրանց անւանում էին սահմանապահ: Առաջին գլխաւոր սահմանապահութիւնը Աղձնիքն էր (Տաւրոսի նահանգը, Ծոփաց աշխարհի և Կորդւաց երկրի միջև), յետոյ գալիս էր Ծոփաց աշխարհըն, յետոյ Կորդւաց երկիրը, վերջապէս Գուգարքն (հիւսիսում, վրացիների դէմ, կուր գետի հովտի Հարաւարեկմտեան կողմում): Մինչև հիմա յայտնի չի եղել թէ երբ է հաստատւել այս հիերարխիան, սակայն՝ այսքանը միայն հաստատ է, որ այս կարգը խիստ հաստատուն է եղել. այնպէս որ քրիստոնէական թւականութեան սկզբի տարիներում պատմիչներն անդադար յիշում են այդ մասին:

Պալատն ապրում էր երկու տեսակ եկամուտներով. նախ թագաւորական կալւածների հասոյթով. երբեմն այս կալւածքներն ամբողջ նահանգներ էին կազմում, այսպէս Արարատ գաւառը, որը չափազանց ընդարձակ էր, պատկանում էր Արշակունեաց ընտանիքին և մասնաւոր նախարար չունէր. այս կալւածքների հասոյթներն ահազին էին: Երկրի միւս բոլոր բաժանմունքներում էլ թագաւորական հողեր կային. մի յատուկ մինիստր կառավարում էր այս հողերը. նա մարդպետ տիտղոսն էր կրում (մարդ և պետ բառերից): Երկրորդ եկամուտը հարկերն էին կազմում, որոնք կոչւում էին հաս, մուտ, սակ, բաժ: Այս վերջինը պարսկական է և նշա-

նակում է մաքսի իրաւունք, իսկ միւս բառերի նշանակութիւնը յայտնի չէ. նոյնիսկ յայտնի չէ թէ հայ թագաւորների ժամանակ տօւրքերի ընդհանուր գումարը որքան էր, այնինչ Դարէնի ժամանակ կարելի է իմանալ այդ:

Հայկական դրամը մեզ յայտնի է միայն Տիգրան Մեծի ժամանակւանից, յետպայ իշխանների դրամներից շատ կան, մինչև Երատօն համարեա թէ բոլորն էլ նկարւել են իրենց փողերի կամ մեղալների վրայ և միշտ էլ յունարէն մակագրութեամբ:

Քաղաքական յանցաւորների վերաբերմամբ Հայտատանի թագաւորները անողոք էին: Որոշ ամուս գղեակներում, ինչպէս Արտաշատն է, մահապարտների համար վիրապներ էին փորւած. Արտաշատում այսպիսի մի վիրապի մէջ ձգեցին Գրիգոր Լուսաւորչին, որը առաջին անգամ քրիստոնէութիւն քարոզեց, սակայն՝ իբրև Խոսրով թագաւորին սպանողի որդի: Սա պարթէ էր և ոչ թէ հայ: Կային ղահիներ, որոնց գլխաւորը կոչւում էր գահճապետ. սրանք դատապարտեալին մահացնում էին մի որոշ աեղում— Կառուպնարանում: Յաճախ սոսկալի պատիմներ էին տալիս քաղաքական թշնամիներին. կենդանի մորթագեսծ էին անում, աչքերը հանում, շիկացած երկաթով այրում կոպերը, մորթում էին ամբողջ ընտանիքը հօր աչքի առաջ, որին ամենից վերջն

էին սպանում. երբ սաստիկ գայլացած էին լինում պատերազմում բռնւած բանտարկեալի վերայ՝ նրան կենդանի այլում էին կամ մորթազերծ անում. և մորթին յարդով լցնում. նոյնիսկ դաւադիրների եղբայրները, եթէ մինչև անդամ նորդած լինէին աստւածներին իբրև քըրմապետներ, դարձեալ գետն էին ձղւում պարանոցից մի մեծ քար կտալւած ունենալով: Թագաւորական կալւածքների մի մինիստր թագուհու հետ վատ է վարւում և պարսիկներին մատնութիւն անում. այս բանը իմացւում է. մերկացնում են մինիստրին, ձեռները կապում կողքերին և ձմռան սաստիկ ցուրտ զիշերը մերկ ձգում են դուրս. հետևեալ օրը ուղեղը թթից վար էր հոսել և մեռել էր *): Գալով քաղաքական օրէնքների դէմ մեղանչողներին՝ նրանք դատւում էին կանոնաւոր դատարաններում. այս բանը կարելի է եղբակացնել Փաւստովի այն յատւածից, ուր նկարագրւած է թէ ինչպէս Արշակաւան քաղաքի (Արարատի մօտերքում, Կոգովիտ կամ կոդ հովտի գաւառում, Բայազիտի հիւսիսային կողմում) ազնւականները բողոքում են Արշակ Բ-ի (352—366) այն վճռի դէմ, որով այդ քաղաքը վերածւում էր ապաստարանի. ազնւականները բողոքում էին ասելով, որ արդարութիւնը մե-

ռել է, հրաժարւում էին ընդունել պալատի այդ վճիռը, չնայած որ թագաւորը իրաւունք ունէր իւր այդ սեփական քաղաքը այդ բանի համար յատկացնել: Այս քաղաքում ապաստանում էին պարտքերի տակ ճնշւածները, իրենց դրացիներին վլասողները, արիւն թափողները, շնացողները, գողերը. եթէ պարտատէրը իւր պարտապանի ետևից ընկնելով գնար այս քաղաքը նրան դուրս կվննտէին: Այսպէս Արշակաւանը շուտով լցւում է աւագակներով, գրպանհատներով, մարդասպաններով, գողերով, շնացողներով, անհաւատարիմ աղախիններով, յափշտակութիւն անողներով, դոներ կոտորողներով:

Պալատում մեծ պաշտօնատարների շարքում առաջին տեղն էր բռնում հազարապետը, որը յոյները ուղղակի «հազարի գլխաւոր» շնէարջօս են թարգմանել. սակայն՝ Պարսկաստանում սանախ ներքին գործերի մինիստրն էր, յետոյ դարձաւ ամեն բան անող մինիստր. պետութեան մէջ երկրորդ տեղն էր բռնում այս պաշտօնատարը: Հայերի մէջ այս մինիստրը միշտ էլ յատկապէս ֆինանսների և երկրագործութեան համար էր: Այս պատճառով է, որ յոյները թարգմանելով անւանել են սրան էպէտոս և օնկօնօլոս *): Սովորական ընթացիկ լեզւով սրան աշխարհաշէն տիտղոսն էին տալիս. նա ապարակներ էր շինում,

*) Հիւղման Arm. Gram. էջ. 147.

քաղաքի փողոցները, կամուրջները, ճանապարհները, մի խօսքով նա հսկում էր ազգի նիւթական բարգաւաճութեան վրայ: Երկրորդ տեղը բռնում էր Սպարապետը ձրշւութեան վրայ: Ենչպէս յոյներն են ասում. այսպէս Մամիկոնեանը, որի մասին կիսուենք, սպարապետ էր, նա պէտք է առաջնօրդէր զօրքը երբ թագաւորը պատերազմ էր յայտարարում. սակայն՝ երեք ընդհանուր հրամանատարութեան, ընդհանուր ուղղութիւն տւողի գեր չէր կատարում, օր. Արշակ Բ ի որդի Պապը պատերազմի դուրս եկաւ պարսից Սապոր Բ. ի դէմ Զիրաւդաշտում. Սպարապետ Մուշեղ Մամիկոնեանը ասում է Պապին. «Լաւ է, որ դուք մի ապահով տեղում սպասէք, իսկ մենք կուենք Զեղ համար, ուրեմն Դուք հեռուում հանգիստ դիտեցէք և աղօթեցէք Աստծուն, մենք կյաղթենք»*). Չնայած որան հայաստանի թագաւորները չեն ձգտել իրենց բացարձակապէս պաշտել տալ, ինչպէս հին ժամանակներում շատ ուրիշ թագաւորներն էին անում: Տիգրան Մեծը միակն է, որ թոյլ է տւել իրան աստւածային պատիւներ տան, աստծու պէս պաշտեն. ճիշտն ասած միւս թագաւորներն էլ պէտք է յարգւած լինէին իբրև աստւածային ծագում ունեցողներ, ովորհետեւ լիգենդաները սրանց Արամագդից են

*) Փաւստոս V, 4.

ժնեցնում: Բոլոր հայ հեթանո՞ս թագաւորները թաղւում էին Անխում, աստւածների հօր Արամագդի տաճարի մօտ. Երբ Սասանեան Սապօր Բ. թագաւորը յաղթեց հայերին այստեղից վելցրեց թագաւորների ոսկրստիները, սակայն՝ Արարատեան դաշտում հայոց սպարապետից յաղթւելով ստիպւեցաւ յանձնել յաղթողին: Այս ոսկրստիքը թագւեցին Աղփառքում (Ալագեազի մօտ): Պարսիկները ուզում էին հայոց թագաւորների ոսկրստիքը Պարսկաստան տանել, որպէսզի, իրենց կարծիքով, թշնամի հայերի պատիւր, փառքը և քաջութիւնը նոյնպէս Պարսկաստան տանեն:—Պալատում կար մի ուրիշ անձնաւորութիւն, որը թագաւորին պատկրողն էր. նա թագադիր ասպետ տիտղոսն էր կրում: Արտաշէս Ա. ից սկսած այս պաշտօնը հաւանորէն ժառանգական էր դարձել Բագրատունեաց ընտանիքի մէջ. ժողովրդի աչքում այնքան մեծ նըշշանակութիւն էր ստացել այս պաշտօնը, որ Վրացի Ռադամիզտի և Միհրդատի կուի ժամանակ թագադիր ասպետը հրաժարւեց թագ դնելու Միհրդատագի գլխին և այդ պատճառով էլ ժողովուրդը նրա վրայ նայում էր իբրև յափշտակողի, անհարազատ թագաւորի: Սրա հետ միասին կար մարդաբնութիւնը, որը թագաւորական ինչքն էր կառավարում, պալատը՝ կազմակերպում, նրա հոգսերը քաշում, գանձարանի ու հարեմի վրայ

հսկում։ Այս պաշտօնատարին անւանում էին նաև
հայր մարդպետ—«մարդկանց գլխաւորի հայր»։
Յայտնի է, որ այս մարդը ներքինի, «նելսի
մարդ» էր։—Այս հարեմների կազմակերպութեան
մասին մենք ոչինչ չգիտենք։—Մաղլսազութիւ-
նը նոյնապէս մի մեծ պատիւ էր. դժբախտաբար
մենք ոչինչ չգիտենք այս պաշտօնի մասին. նոյ-
նիսկ այդ կոչումը մութին է, հաւանօրէն սեմի-
տական ծագում ունի. Եթէ մենք պ, Բելկի նը-
ման այս մաղլսաս բառը «քաղաք» բառով թարգ-
մանէնք, այն դէպքում այս պաշտօնատարը կլի-
նի մայրաքաղաքի գլխաւորը, շէֆը. սակայն՝ մենք
այսքանը գիտենք, որ երբ թագաւորը առաջին
կարգի իշխաններից բաղկացած մի դեսպանու-
թիւն էր ուղարկում, Մաղլսազը միշտ էլ դրանց
ընկերակցում էր *): Պալատում կային ուրիշ
պաշտօնեաներ ևս. սրանցից ոմանք թագաւորի շո-
րերը պէտք է մատուցանէին, կար թիկնապահ-
ների մի գունդ, իրերը կարգի բերելու համար
հանդերձապահներ, մէկը արծւէնշան դրօշակն էր
կրում թագաւորի առջեցից, երբ նա դուրս էր գա-
լիս. մէկը որսի վրայ էր հսկում, մէկը սպան-
դանոցների շէֆն էր, մի ուրիշը մեծ բազէներ
տանողը։ Պալատը մանրակրկիտ կերպով կարգա-
ւորած էր. թագաւորն ինքն անձամբ որոշում

*) Փաւստոս III, 12, IV, 11, V, 38.

էր ծիսակատարութիւնները, որոշ ժամեր ընդու-
նելութիւնների համար էր որոշել, որոշ ժամ՝
խորհրդի, որոշ ժամ՝ հանդստութեան։ Երկու բան
կայ խիստ աչքի ընկնող—մի մեծ իշխան թա-
գաւորին գրում, յիշեցնում էր այն պարտակա-
նութիւնները, որոնք մոռացութեան էին տրուում
թագաւորի կողմից. միւս կողմից՝ զգուշացնում
էր բարկութեան ժամանակ՝ արձակած վճիռնե-
րից, իսկ երկրորդը՝ նորին Մեծութեան յիշեց-
նում էր այն վրէժինդրութեան մասին, որը
պէտք է իրագործւէր *): Թագաւորը դատաւոր-
ներ էր նշանակել պալատում, քաղաքներում և
գիւղաքաղաքներում. թագաւորներն ուզում էին,
որ քաղաքացիներին պատեն գիւղացիները, սա-
կայն՝ արգելում էին, որ առաջինները չհպարտա-
նան. պէտք է իրեկ եղբայր ալրէին աղքատնե-
րի, խոնարհների հետ։ Ընտանիքում կոիւները
կանխելու համար թագաւորի մօտ մնում էր մի-
այն անդրանիկ որդին, միւսները բոլորն էլ, աղ-
ջիկ թէ տղայ, պալատի ծախքով պահուում էին
մայրաքաղաքից հեռու **):

*) Մովսէս Խորենացի II, 8.

**) Մովսէս Խորենացին այս բոլոր մանրամաս-
նութիւնները վերագրելով Վաղարշակին, միայն անձ-
նաւորութեան վերաբերմամբ սիմալում է. այդտեսակ
սովորութիւններ, կազմակերպութիւններ գոյութիւն ու-
նեցել են և շարուանակւել են նաև քրիստոնէութեան
ժամանակներում։

Պալատի բոլոր ամանեղէնները ոսկուց ու
արծաթից էին. թագաւորը թագ (տիար) էր կը-
րում, մի մեծ շապիկ հազնում, նոյնպէս էլ ծի-
րանի վերարկու։ Մեծ վրանը նոյնպէս ծիրանի
էր և բաժանւած սենեակների. վրանի վրայ մի
արծիւ էր տնկւած։ Թագաւորի կօշիկները կար-
միր էին և միայն նա իրաւունք ունէր այդպիսի
կօշիկներ հազնելու. եթէ թագաւորն ուզենար իւր
սիրելի իշխաններին պատել՝ նրան իրաւունք էր
տալիս մի ոտքին կարմիր կօշիկ հազնելու։ Թա-
գաւորական հարսանիքի ժամանակ ոսկի էին շաղ
տալիս փեսի գլխին, իսկ հարսի վրայ մարգարտի
անձրե էր տեղում։

Միջին թւով հայոց բանակը 120,000 հո-
գուց էր բաղկացած. իւրաքանչիւր նախարար
զօրք էր հանում և ինքը առաջնորդում։ Այս զօր-
քի կէսը հեծելազօրք էր, կէսը ոտաւոր, որոնք
զինւած էին պարսկական ձեռվ. մենք տեսանք
թէ ինչպէս էր կուռւմ հայոց զօրքը։ Բացի այս
զօրքից, որը պատերազմի ժամանակ էր ոտքի
կանգնում, թագաւորը պահում էր մշտական մի
փոքրիկ գունդ. այս գունդը ամառը թագաւորի
հետն էր լինում Շահաբիվանում (Աստրապների
բանակատեղին), որը գտնւում Արեւելան Եփ-
րատի ակունքի մօտերը, Բայազիտի մօտ)։

Ամեն մի իշխան (սինեօր) ունէր մի կամ
մի քանի բերդեր, ուր կային ամուր, ապահով

գղեակներ շրջապատւած պարտէզներով; Ինչպէս
տեսանք այս մարդիկ սարսափելի չէին. սրանք
անկարող գտնւեցին դիմադրել այն անընդհատ-
արշաւանքներին, որոնք լեցնում են այս սլատ-
մութիւնը։

Մենք շատ քիչ տեղեկութիւններ ունենք
հին հայերի մասնաւոր կեանքից։ Ժողովուրդին
բանի տեղ չէին գնում, նա ոչ մի հետք չի թո-
ղել պատմութեան մէջ, բացի Քսենոֆոնի նըկա-
րագրած մասնաւոր դէպքերից։

Երբ 452 թւին, Յազկերտ Բ-ը հայ ազնւա-
կաններին կապւած Պարսկաստան տարաւ, սրանց
կանայք, որոնք մնացել էին Հայաստանում, շատ
խիստ պայմանների մէջ ապրեցին մինչև որ ի-
րենց ամուսինները աքսորից վերադարձան։ Աղ-
նուական կանանց այս զրութիւնը համեմտե-
լով առաջւայ հետ, Եղիշէն մեղ ծանօթացնում է
վերջինիս հետ գլխաւոր մանրամասնութիւննե-
րով։ Հեղինակը գովում է թէ ինչպիսի առաքի-
նութեամբ սրանք տանում են իրենց ճակատա-
գիրը։ «Ինչպէս սովորութիւն էր ամէն մի ազ-
նւական կին ունէր իւր աղախինը, որը մանկութիւ-
նից մեծանում էր այդ ազնւական փարթամ ըն-
տանիքում. բայց՝ այժմ ոչ աղախինն էր ջոկուում
և ոչ տիկինը»։ Քանի որ Բոլորն էլ միւնոյն ա-
ռաքինի, չարքաշ կեանքն էին փարում «ոչ ոք
միւսի համար անկողին չէր զցում, որովհետե-

այլիս ոչ ոք անկողին չունէր»։ Այդ ժամանակից ի վեր փափուկ կեանքի բոլոր առաւելութիւնները ոչնչացան. «Հկան այլիս ընտիր խորտիկներ, զանազան համեմերով պատրաստած յատկապէս կանանց համար. այլիս ագնւական տների համար հացթուխներ չկան... Ոչ ոք ջուլ չէր ածում ազնւական տիկնոջ ձեռքը լւացւելու համար, նաժիշտներն այլիս նուրբ սրբիչներ չէին դուրս բերում սրբւելու համար։ Տիկինները դադարեցին անուշահոտ սապոններով լւացւելու սովորութիւնը, ինչպէս նաև տօն օրերին անուշահոտ իւղերով օծւելու սովորութիւնը։ Գեղեցիկ ամաններն այլիս չէին երևում սեղանի վըրայ. սեղանից վերացել էին շքեղ բաժակները, որոնց տակն է թագնւած ուրախութիւնը, հանդէսների կառավարիչն այլիս չէր կանգնում նըրանց փարթամ սրահների շէմքում հրաւիրւածներին ընդունելու համար... Պատուի բարձերը և նրանց ամպհովանիները կործանւել էին... Թագաւորի հրամանով նրանց զղեակները կործանւել էին, պարտէզների քաղցրահոտ ծաղիկները թառամել էին, խաղողի ազնիւ պտղաւէտ որդերը՝ արմատախիլ եղել. բոլոր գանձերը, կանանց բոլոր զարդարանքները յարքունիս գրաւեցին յօդուտ բռնակալին. չմնաց ոչ մի մարդարիտ ականջներից կախ տալու համար և ոչ մի թանգին քար ճակատների համար... Նրանք, ո-

րոնք մանուկ հասակից սովորել էին ամենաթարմ և ամենից մատղաշ որսի երիներով և հորթերի ուղեղով սնւել, այժմ խոտով էին իրենց քաղցր յագեցնում։ Որսի շներն իրենց ազնւական տէրերի երկար բացակայութեան պատճառով աստիճանաբար կորսւեցին... Ազնւական տիկինները չէին կարող զապել իրենց արտասուքները երբ իրենց ամուսինների խնձոյքների սրահներովն անց էին կենում։ Այդ սրահները կոչում էին իրենց ամուսինների անունով, որովհետև դրել էին նրանց արձաններ, որոնց վրայ գրել էին գերի գնացած ամուսինների անունները և որոնք նրանց յիշատակի համար էին*»։

*) Եղիշէ, Վարդանանց պատերազմ.

ՅԱԻԵԼԻԱԾ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ.

Կարող է տարօրինակ թւալ, որ մենք հայոց այս պատմութիւնը գրելիս չենք օգտւել հայ պատմագիրներից. սակայն՝ այդ այն պատճառով է, որ գրանք ճշմարտութիւններ, ստոյգ տեղեկութիւններ չեն տալիս մեզ:

Առաջ կարծում էին, որ Փաւստոս Բիւզանդացու գրւածքը IV դարու գործ է. սակայն՝ օտար քննադատները ցոյց տւին, որ անհնարին է ընդունել այդ աւանդութիւնը, ինչպէս անիրաւացի կերպով գեռ մի քանի նորագոյններ և ընդունում են: Օտար քննադատները ցոյց են արւել, որ V դարուց առաջ ոչ մի պատմական գըրւածք չի եղել հայերէն, հայոց այբուբենն էլ V դարու առաջին տարիներումն է գտնւել: Ճիշտ է կարելի է առարկել, որ մի հայ հեղինակ կարող էր IV դարում գրել օտար տառերով, սակայն՝ Փաւստոսի քննութիւնը ցոյց է տալիս, որ նա էլ ներշնչւած է Եւսեբոս Կեսարացուց, Բարսեղ Կեսարացուց և V դարում հայերէն թարգմանւած Սուրբ գրքից: Սրանից զատ՝ այս պատմութիւնը

որը ընդհանուր առմամբ մի պատմական հեքիաթ է Տրդատի և Գրիգոր Լուսաւորչի մահից սկսած խառն է ժողովրդական լեզենդաներից վերցըրւած բազմաթիւ առասպելներով, հեքիաթներով:

Ագաթանգեղոսի վրայ էլ պէտք է նոյն տեսակէտով նայել. նա IV դարու պատմիչ չէ, այլ V դարու, որովհետև օգտւում է V դարու գըրւածքներից:

Մենք աւելի երկար կանգ կառնենք Մովսէսի Խորենացու վրայ, որը հնութեան տեսակէտից շատ աւելի կարեոր է:

Պ. պ. Կարըիերի, Գելցերի, Վետտերի, Մ. Աբեղեանի և շատ ուրիշների նորագոյն հետազոտութիւններից գիտենք, որ Մովսէս Խորենացին իւր պատմութիւնը գրելիս օգտւել է ժողովրդական երգերից, ժողովրդական աւանդութիւններից, հեքիաթներից: Նա կարծում է, որ այս աղբիւրները բոլորն էլ ճշմարտութիւններ են պարունակում, ուստի ձգտում է գտնել այդ ճշշմարտութիւնները. բայց՝ Խորենացին իւր այդ աշխատանքը կատարում է առանց մեթոդի, առանց քննադատութեան՝ այնպէս որ մենք չենք կարող որևէ ճշմարիտ բան գտնել այդտեղ: Զնայած դրան Խորենացու խառնուփնթոր պատմութեան մէջ կան բաւականաչափ բնորոշ, ստոյգ մահրամասնութիւններ. այսպէս՝ նա խօսում է մի Տիգրան Ա-ի մասին, որը Կիւրոսի ժամանա-

կակիցը պէտք է լինի. մենք տեսանք, որ իրօք այդպիսի մի Տիգրան եղել է, սակայն՝ Խորենացին դրան վերագրում է այնպիսի գործեր, որոնք Տիգրան Մեծին են վերաբերում և պատմուած են նոյնպէս հռոմայեցի հեղինակների գրւածքներում:

Ինչպէս տեսանք պարթեներն եկել են 66 թւին Ք. յ., այն ինչ Մովսէս Խորենացին դրանց բերել է տալիս 150 թւին Ք. ա.: Այսպիսի սլխալներ առաջ են գալիս այն հասկացողութիւնից, որ նա ունի պատմական շրջանների մասին: Առաջին շրջանն անւանում է Հայկացիան և սկսում է պատմիմ Հայկով՝ վերջացնում առասպելական Արայով, որը Շամիրամի ախոյեանն էր, երկրորդ շրջանը համում է մինչև Պարոյը, որն իբր թէ Հայաստանի առաջին թագաւորն է լինում. այս շրջանում Ասորեստանցիք տիրում են Հայաստանին և նբա վրայ կառավարիչ նշանակում երբեմն ասորեստանցիներին, երբեմն էլ հայերին. երրորդ շրջանը ձգւում է մինչև Վահէն, որին սպանել է տալիս Աղէքսանդր Մակեդոնացու դէմ մղւած մի կուռում: Ահա այս շրջանում, Պարոյ սկսած հայոց թագաւորները կատարեալ անկախութիւն են ձեռք բերում: Խորենացին խոստովանում է, որ Աղէքսանդրից սկսած մինչև առաջին Արշակունի թագաւոր Վաղարշակը ոչինչ չունի ասելու, բացի այն՝ որ Հայաստանում ա-

մէն ինչ տակն ու վրայ էր եղել և ամէն ոք աշխատում էր ինքը տէր դառնալ երկրին: Սրանից յետոյ ուրեմն անցնում է երկրորդ շրջանին, Սրցակունիներին, որոնց օտարներ է անւանում: Խորենացու այս ասածները համեմատելով իսկական, ճիշտ պատմութեան հետ՝ տեսնում ենք, որ որոշ համաձայնութիւն կայ երկուսի մէջ: 525-ից սկսած մինչև 320 թւականը Աքեմինիանելը իսկական հայեր էին: Սելևկեանները 320—200 կազմեցին մի երկրորդ շրջան. այս շրջանում Հայաստանի կառավարիչները երբեմն տեղացիներն էին, երբեմն օտարները: Սրանից յետոյ գալիս է երրորդ շրջանը Սրտաշխան հարստութեան (200—10 Ք. յ.), ազգային գերիշխանների շրջանը, — այս գերիշխանները սերւում էին հայացած հին պարսիկներից: Օտարների գարը (11—60 Ք. յ.) կազմում է միանցում, որից յետոյ սկսում է հինգերորդ շրջանը, Արշակունիների շրջանը, որը տեսում է 60-ից մինչև 300 թւականը: Այս անգամ արդէն ժողովուրդը յամառօրէն պնդում է, որ Արշակունիները օտարներ են:

Այսպէս՝ մենք տեսնում ենք, որ ազգային աւանդութիւնները ստոյդ տեղեկութիւններ են պահպանել հնում եղած զանազան տիրապետութիւնների մասին: Խորենացին ասում է, որ առաջին ժամանակների հայաստանի վրայիշխող-

ները իսկական հայեր էին, յետագայ դարձում հայերն ենթարկվեցին օտարներին. երբորդ շըլջանում հայերը դարձեալ իշխում են, որից յետոյ արշաւանքների պատճառով առաջացած սոսկալի խառնաշփոթութիւնները մթնացնում են պատմութիւնը, ոչինչ յայտնի չէ. վերջապէս՝ վերջին շրջանում դարձեալ օտարներն են իշխում: Այստեղ պէտք է նկատել, որ պատմիչը ժամանակագրական սխալ հիմք ունի, նա իւր ձեռքի տակ ունեցել է Եւսեբոս Կեսարացու գրւածքը (Եկեղ. պատմ. և ընդ. ժամանակագր.) և հետեւել է Սուրբ գրքին իբրև անսխալ մի պատմութեան: Այս պատճառով Հայկին բերել է տալիս Բարելոնի Աշտարակից, ապա իրար դիմաց է շարում հրէա և քաղէացի թագաւորներին, որոնք Հայաստանի կարծեցեալ թագաւորներն են եղել և որոնց Խորենացին գտնում էր յիշատակւած իւր ժամանակւայ Ֆոլկլորէի մէջ: Այսպիսով դուրս է գալիս, որ Տիգրան Ա-ին է վերագրւած Տիգրան Մեծի քաջագործութիւնները: Զուր Մովսէս Խորենացին հիմնելով Մարաբաս Մծուրնացու կամ աւելի շուտ անանունի ցուցակի վըրայ, սրանից օգտառում էր և կարծում, որ ստոյգ, իսկական է—կարծում էր, որ այս Տիգրանը Արշակունի է եղել, որովհետև լեզենդաներն պարզ ցոյց են տալիս, որ Տիգրան Մեծը իսկական հայ է եղել: Հիմնելով այս լէզենդաների վրայ ևս

Խորենացին ստուգութեան ուրիշ միջոց՝ չի գլունում բացի Տիգրան Ա-ինին վերագրելու Տիգրան Մեծի քաջագործութիւնները, որը իսկապէս հայէր և ոչ թէ Արշակունի:

Խորենացին երբ խօսում է Հայաստանի Վաղարշակ անունով թագաւորի մասին, նա ամբողջապէս իրանից չի ստեղծում այդ թագաւորին, որովհետև աւանդութիւնը ասում էր, որ իրօք Վաղարշակը Հայաստանում մի հարստութիւն է հիմնել: Այստեղ սխալը նրանումն է, որ ինքը Վաղարշակը չէր, որ թագաւոր դարձաւ, այլ նա թագաւորեցրեց իւր Տրդատ եղբօրը:

Մովսէս Խորենացին իւր պատմութիւնը գրելիս հետեւում է Թլավիանոս Յովաէփին մինչև Տիգրան Մեծի որդին Արտաւազը (34 թւին Ք. ա.), սրանից յետոյ երբ այս մատենագիրը թողնում է իւր պատմութեան թելը 60 տարի յետոյ վերսկսելու նպատակով, Խորենացին արդ շրջանում հետեւում է Եւսեբոս Կեսարացուն (Եկ. պատմ.) և Լաբուբնային. վերջինս Եղեսիայի թագաւոր Արգարի դիւանապետն էր (Արգար IX, քրիստոնէութիւն ընդունեց 212 թւին), հետեւար Եղեսիայի թագաւորներին համարում է հայոց թագաւոր: Խորենացու այս սխալն առաջ է գալիս նրանից, որ Բար Հեթրիուսը պարթևներին, Եղեսացիներին և հայերին նոյնացնում է *): Ախալի

*) Վիպեր Կաթ. Եկ. Հայաստանում. 63 էջ.

մի ուրիշ աղբիւը է դառել նաև այն հանգա, մանքը, որ սխալ է կարգացել Արգար Վ-ի տիտղոսը, այս Արգարը կոչւում էր «Շիլամա»=սե, Խորենացին կարգացել է Սըշամա, ոեռական հոլով, որը նշանակում է «Արշամի որդի», եթէ այս Արշամը իսկապէս գոյութիւն է ունեցել իր բական անձնաւորութիւն, այնուամենայնիւ երբէք նա Արգարի հայր լինել չի կարող: Այսպիսով այս Արշամին նա մտցնում է Եղեսայի հարստութեան շարքը, առանց ուշադրութիւն դարձնելու այն հանգամանքի վրայ, որ Բար Հերութիւնը այդ բանը չի անում. որանից յետոյ Խորենացին նոյնպէս նոյնացնում է Եղեսացիներին ու հայերին: Խորենացին կարծում է, որ այս Արգարի յաջորդն ու որդին է Եղել Անահուն անունով մէկը: Արգարների ընտանիքում իրօք Մանուներ կան, սակայն սխալ է Մ-ն Ան կարգալը, որը բացատկան մասնիկ է և ըստ Քամհաճոյքի մի ն էլ աւելացնել վերջում, որ պէսզի մի նշանակութիւն ստացւի, այսինքն՝ դառնայ («անահուն»):*

Երբեմն էլ Խորենացին սխալւել է սիրիական թարգմանութեան պատճառով, որը Արգար IX-ին (176 – 218) շփոթում է Արգար Վ Ռիմայի հետ

(4—7 թ. ա. և 13—5). այս շփոթութիւնը նախ մտնում է Լաբուբնայի մէջ, որին հետևում է Եւսեբոս Կեսարացին, ապա՝ Մովսէս Խորենացին արտագրում է թէ մէկը և թէ միւսը: Այստեղից առաջ է գալիս երկու անախօնիզմ: նախ՝ գիտենալով որ Սանատրուկը մի Արգարի ժամանակակից է, կարծում է որ այդ Արգարը Արգար Վ է, այն ինչ պէտք է Արգար IX-ինէր. երկրորդ՝ ասում է, որ այս Սանատրուկը սպանել տւեց Թագէսս և Բարթողիմէսս առաքեալներին: Այս բանը անհնարին էր, որովհետև Սանատրուկը երկու դար ուշ է զրանցից, այսպիսի մի սխալ հնարաւոր կլինի եթէ ժամանակի մասին տեղեկութիւն չունենան, որովհետև իրօք Սանատրուկը հալածեց քրիստոնեաներին, որոնք սկսել էին տարածւել հայաստանում:

Մի խոսքով՝ ընդհանրապէս ճիշտ է և արդի քննադատութեան կողմից հիմնաւորւած Պ. Թ. Ռայնախի կարծիքը թէ հայոց պատմագրները բացարձակապէս ոչինչ են, սակայն՝ պէտք է նկատի ունենալ, որ զրանց սխալները կարելի է բացատրել ժամանակի պայմաններով: Աւելի նորագոյն ուսումնասիրութիւնները մեզ թելադրում են զրանց վրայ նայել իբրև աւելի բարեխիղճ պատմագրների քան թէ հէնց առաջին հայեցքից է թւում. զրանց ամենամեծ յանցանքը այն պարզամտութիւնն է, որը օտար ժամանակագրների բաժին էլ էր ընկել:

*) Յ. իւստի Grundriss. և Ա. Վ. Գուտըմեր. Mem. de l' Acad. de st. Péter.

422

9144



7493

